



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5659

и. 73 н. н.

Энцикл. Периодика  
1878 г.  
З. 7. 8. 1876 г.

84

17-60

ի 4րոյն յայնպէս յիշուցնելու

84-31

ԱՆՔԱՆՔԻ ՏԻՐԱ

7-72

© 1876

ԲՈՒՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

# ԺՕՁԷՑ ՊԱԼՍԱՄՐՕ

ԹԱԳՄԱՆԵԱՑ

Կ. ԵԱԶՄԱՃԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՇԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

ՀԱՏՈՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Զմիշտնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1876

( 1008 / 35.403 )

31704-42

# ԺՕՁԷՑ ՊԱԼԱՄՄՕ



ԹԷ ԻՆՉ ՊԵՏԶ ԷՐ ԱԼԹՕԻՄՈՒ ԿԵՆՍԱՑՈՒ  
ՑՔԻՆ ԼՐԱՑԸՆԵԼՈՒ ՀՄՄԱՐ



**Մ**ՈՅՆ խօսակցութեան երկրորդ օրը, կէսօրէն ետք ժամը չորսին ատենները, Պալամմո Սէն-Գլոս փողոցի սենեակը՝ Ֆրիցի տուած մէկ նամակը կարդալու զբաղած էր: Ստորագրութիւն չկար նամակին մէջ. ձեռքին մէջ աս-  
գին անդին կը դարձընէր:

— Այս գիրը կը ճանչնամ, կ'ըսէր, երկայն, անկանոն, քիչ մը զողալով գրուած, և ուղղագրական խել մը սխալներով:  
Եւ վերստին կը կարդար,

«Պարոն: Կոմս,

«Վերջին պաշտօնէութեան անկումէն առաջ ձեզի խորհուրդ հարցընող անձ մը՝ որ արդէն շատ ատեն առաջ ալ ձեզի խորհուրդ հարցընէրու պատահութիւնն ունեցած էր՝ այսօր ձեր տունը պիտի ներ-

14931-58 g



կայանայ, որպէս զի իրեն նոր խորհրդակցութիւն մը շնորհէք :  
Արդեօք ձեր բաղմազան զբաղմանց մէջ կրնա՞ք իրեն կէս ժամ շնոր-  
հել երեկոյեան ժամը չորսէն հինգի միջոցին : »

Սոյն նամակը երկու երեք անգամ կարդալէն ետք Պալսամօ նոյն  
խուզարկութիւնը կ'սկսէր վերստին :

— Այսչափ չնչին բանի մը համար Լօրէնցաի խորհուրդ հար-  
ցընելը չարժէր, միթէ ես ալ չեմ կրնար գուշակել : Գիրը եր-  
կայն է՝ ազնուապետական նշան, անկանոն և գողալով գրուած՝  
ծերութեան նշան, լի ուղղագրական սխալներով, սպալատական մ'է  
գրողը : — Ա՛հ, ինչ անմիտ եմ, Պ. տը Ռիշլիէօ դբսէն է այս  
նամակը : Անշուշտ ձեզի համար կէս ժամ կը գրհեմ, պարոն գուքս .  
եթէ կ'ուզէք՝ ժամ մը, օր մը : Իմ ժամանակս ձերն է : Միթէ  
անդիտութեամբ իմ գաղտնի գործակալներէս մին չէք, իմ մտե-  
րիմ սատանաներէս մին չէք գուք, երկուքս ալ միևնոյն նպատա-  
կին չե՞նք ծառայեր, միևնոյն ճիգով չե՞նք դըրդեր միապետութիւնը,  
դուք անոր հողի՞ և ես թշնամի ըլլալով : Եկէք, պարոն գուքս,  
եկէք :

Եւ Պալսամօ ժամացոյցը հանեց տեսնելու համար տակաւին որ-  
քան ատեն պիտի սպասէր դքսին :

Նոյն միջոցին ձեղունի քիւին մէջ հնչակի մը ձայն լսուեցաւ :

— Արդեօք ի՞նչ կայ, ըսաւ Պալսամօ սարսուելով : Լօրէնցա զիս  
կը կոչէ, Լօրէնցան : Զիս տեսնել կ'ուզէ : Արդեօք ձիւն մ'եկեր  
է գլխուն, կամ արդեօք անոր քնաւորութեան այն փոփոխութիւն-  
ներէն մին վերստին տեղի ունի՞ որոց շատ անգամ ականատես՝ և  
երբեմն զո՞հ եղած եմ : Երէկ կարի մտախոհ, համակամ, քաղցր  
էր, երէկ իմ ուզածիս պէս էր : Խեղճ աղջիկ, երթամ տեսնեմ  
զինքը :

Այս ըսելով բանուած շապիկը գոցեց, շապիկն տանդէլայէ պա-  
րանոցը պարեգօտին ներքև ծածկեց, անգամ մը հայելին նայե-  
ցաւ որ վրան գլուխը շատ անկարգ չըլլայ, և Լօրէնցաի տուած  
ձայնին ինքն ալ նոյնպէս հնչակի հարուածով մը սպատասխան տա-  
լով գէպ ՚ի սանդուխը գնաց :

Բայց իւր սովորութեան համեմատ, Լօրէնցաի սենեակէն առաջ  
զանուած սենեակը կեցաւ, ձեռները խաչաձև կուրծքին վրայ դնե-  
լով դարձաւ այն կողմը ուր կը կարծէր թէ Լօրէնցան կը գտնուի,  
և ամեն խոչ և խութ առ ոչինչ գրող զօրաւոր կամբովը՝ քնա-  
նալ հրամայեց անոր :

Յետոյ, տախտակամածին մէկ աննշմարելի ճեղքէն ներս նայե-  
ցաւ, այնպէս որ կարծես թէ իւր վրայ կը կասկածէր կամ զգու-  
շութիւնն աւելցընելու հարկ կը տեսնէր :

Լօրէնցա բաղմոցի մը վրայ քնացեր էր՝ ուր յենարան մը փըն-  
տուած ըլլալու էր անշուշտ իրեն տիրողին կամաց ներքև գողգո-  
ջելով : Ստուգիւ պատկերհան մը աւելի բանաստեղծական դիրք մը  
չպիտի կարենար դնել անոր : Պալսամօի իրեն արձակած արագա-  
հոս հեղանիւթին ծանրութեան ներքև շարչարուելով և շնչասպառ՝  
կը նմանէր Վանթի\* յօրինած այն գեղանի Արիադնէներէն\*\* միոյն  
որուն կուրծքն ուռած է, իրանը կը ծփայ ու կը ցնցուի, վհա-  
տութենէ կամ աշխատութենէ խեղքը գլխէն դացած է :

Պալսամօ իւր սովորական անցքէն մտաւ և անոր առջև կեցաւ  
զինքը նկատելու համար, բայց խկոյն արթնցաւ զան, շատ վտան-  
գաւոր էր այն դիրքին մէջ :

Լօրէնցա աչքը բանալուն պէս՝ ըիբերէն փայլակ մը ցայտեց,  
յետոյ, իւր ծփուն զաղափարներուն գողցես յոյզն հանգարտեցր-  
լու համար՝ երկու ձեռքովը մազերը կոկեց, սիրով տամուկ շրթե-  
րը սրբեց, և խորունկ մտածելով յիշողութիւնն ամփոփեց :

Պալսամօ տեսալ մ'անձկութեամբ անոր կը նայէր : Շատ ատե-  
նէ ՚ի վեր վարժուած էր անոր սիրազեղ քաղցրութենէն յանկարծ  
բարկութեան և ատելութեան անցնելը տեսնելու : Լօրէնցայի նոյն

\* Վանցօ ծնար ՚ի Նիս (բաղաք Սարսէնիս) 1705ին եւ մե-  
ռար, 1765ին : Նոյն արեւմի ամենէն երեսելի պատկերահան  
ներէն մին եղաւ :

\*\* Ըստ առասպելաց, Արիադնէ՝ դուստր Մինոսայ՝ Թեսէո-  
սի առար, այն թելով կճիկը որուն առաջնորդութեամբ բաւի-  
ղէն դուրս ելաւ Մենոտաւրոսի յաղթելէն ետք :

օրուան մտմտութեն որ սովորական չէր անոր, սովորաբար ցոյց տուած ատեւութեան փոխարէն՝ պաղ արեամբ ըրած ընդունելութենէն Պալսամօ իմացաւ որ մինչև այն ատեն տեսածներէն թերևս շատ աւելի լուրջ բան մը կայ :

Լօրէնցա շտկուեցաւ, և գլուխը ցնցելով ու թաւշանման աչքը Պալսամօի դարձրնելով,

— Կ'աղաչեմ շնորհ ըրէք և քովս նստէք, ըսաւ անոր :

Պալսամօ անսովոր քաղցրութեամբ մը հնչուած սոյն ձայնէն սարսուեցաւ :

— Նստիմ, ըսաւ : Գու քաջ դիտես, իմն Լօրէնցա, թէ միակ փափաք մ'ունիմ, այն է կեանքս քու ծնդանցդ քով անցընել :

— Պարոն, կրկնեց Լօրէնցանոյն եղանակաւ, կ'աղաչեմ նստէք, թէև խօսքս երկայն չէ. բայց երբ նստած ըլլաք՝ ինձ կը թուի թէ աւելի հանգիստ կրնամ խօսիլ :

— Այսօր ինչպէս միշտ քու ուզածիդ պէս պիտի ընեմ, սիրեցեալդ իմ Լօրէնցա, ըսաւ Պալսամօ :

Եւ թիկնաթոռի մը վրայ նստաւ Լօրէնցայի քով մինչդեռ նէ բազմոցի մը վրայ նստած էր :

— Պարոն, ըսաւ Լօրէնցա հրեշտակի մը նայուածքով Պալսամօի վրայ յառելով աչերը, շնորհ մը խնդրելու համար ձեզ կու չեցի :

— Ա՛հ, իմն Լօրէնցա, գոչեց Պալսամօ հետզհետէ դիւթուելով, ինչ որ կ'ուզես, ըսէ, ինչ որ կ'ուզես :

— Միայն բան մը, բայց զիտցած եղէք որ շատ կը փափաքիմ անոր :

— Խօսէ, Լօրէնցա, խօսէ, բոլոր հարստութիւնս ալ վրայ տամ, կենացս կէսն ալ կորուսեմ :

— Բան մը չպիտի կորուսէք, պարոն, միայն ձեր ժամանակէն վայրկեան մը, պատասխանեց նորատի կինը :

Պալսամօ խօսակցութեան առած հանդարտ ձևին շատ հաւնելով, ժիր երևակայութեանը շնորհիւ մտքին մէջ կը շարէր այն փափաքները զոր Լօրէնցա ունեցած կրնար ըլլալ, և մանաւանդ անոնք զորս ինքը կրնար կատարել :

— Ինէ սպասուհի մը կամ ընկերուհի մը պիտի ուզէ, կ'ըսէր : Լաւ ուրեմն, սոյն ահագին զոհողութիւնը որ իմ գաղանկքս ու բարեկամներս վտանգի կ'ենթարկէ՝ սոյն զոհողութիւնը պիտի ընեմ, ինչու որ խեղճ աղջիկը կարի թշուառ է սոյն առանձնութեան մէջ :

— Հուտ խօսէ, իմն Լօրէնցա, ըսաւ սիրազեղ ժպիտով մը :

— Պարոն, ըսաւ, գիտէք որ տիրութենէս և տաղտուկէս կը մեռնիմ :

Պալսամօ 'ի նշան հաւանութեան հառաչ մը հանելով գլուխը ծռեց :

— Ծաղիկ հասակս կը թառամի, շարայարեց Լօրէնցա. ցերեկները լալով և հեծելով կ'անցընեմ, զիշերները սոսկալով և դողալով : Միայնութեան և վշտի մէջ կը ծերանամ :

— Գու քեզի ստեղծեր ես այսպիսի կեանք մը, Լօրէնցա, ըսաւ Պալսամօ, և այս կեանքը զոր դու այսչափ տիրութեամբ կը ընուս՝ թագուհոյ մ'անդամ նախանձելի կրնայ ըլլալ :

— Այնպէս թող ըլլայ : Ուստի կը տեսնէք որ ձեզի կը դիմեմ վերստին :

— Շնորհակալ եմ, Լօրէնցա :

— Ինձ ըսած էք թէ բարի քրիստոնեայ մ'էք, թէև . . .

— Թէև կորսուած հոգի մը կը կարծես զիս, ըսել կ'ուզես : Մտքէդ անցածը ես կը լրացընեմ, Լօրէնցա :

— Գուք միայն ըսածիս ուշ գրէք, պարոն, և ենթադրութիւն մի ընէք, կ'աղաչեմ :

— Հարունակէ ուրեմն :

— Լաւ ուրեմն, փոխանակ իմ բարիութեանցս և յուսահատութեանցս մէջ զիս թողելու՝ շնորհէ ինձ, քանի որ օգուտ մը չունիմ ձեզի . . .

Հոս կեցաւ Լօրէնցա Պալսամօի նայելու համար, բայց Պալսամօ ինքզինքը ժողված ըլլալով պաղ նայուածք մը և պուստած յօնք մը տեսաւ անոր վրայ :

Լօրէնցա այն գրեթէ սպառնալից նայուածքին ներքև ոյժ առաւ :

— Շնորհեցէք ինձ, շարայարեց Լօրէնցա, ոչ թէ աղատութիւն, զիտեմ որ Աստուածային վճիռ մը կամ լաւ ևս ձեր կամ

քը որ ամենակարող կը թուի ինձ՝ բոլոր կեանքս դերութեան դատապարտած է, շնորհմ'ըբէք ինձ որ մարդկային դէմքեր տեսնեմ, ձեր ձայնէն զաւուրիշի մը ձայնը լսեմ, դուրս ելնեմ, քայլեմ, շարժիմ:

— Այդ փափաքը դուշակեր էի, Լօրէնցա, ըսաւ Պալսամօ անոր ձեռքը բռնելով, և դիտես որ շատուց 'ի վեր ես ալ կ'ուզեմ:

— Ուրե՞նք . . . գոչեց Լօրէնցա:

— Բայց, կրկնեց Պալսամօ, դու արդէք եղար. անմիտ մէկու մը պէս, որ և է մարդ մը որ կը սիրէ անմիտ է, գիտութեան և քաղաքականութեան մասին ունեցած գաղտնիքներէս մէկ մասը քեզի յայտնեցի: Գիտես թէ Ալթօդաս փիլիսոփայական քարը դտած է և կենսատու ցբին կը փնտռէ. ահա գիտութեան մասին յայտնածս: Գիտես թէ ես և բարեկամներս աշխարհիս միապետութեանց դէմ կը դաւաճանենք. ահա քաղաքականութեան մասին յայտնածս: Սոյն երկու գաղտնիքներէն մին երեւան ելած ատեն՝ իբրև կախարգ՝ զիս կ'այրեն, միւսն երեւան ելած ատեն՝ իբրև քրէական յանցանք գործող մը զիս պատժանիլի կը դատապարտեն: Արդ, Լօրէնցա, դու ինձ սպառնացիր, դու ինձ ըսիր որ ամեն ջանք 'ի գործ պիտի դնես ազատութիւնդ ձեռք անցընելու համար, և անդամ մը ձեռք անցընելուդ պէս առաջին ընելիքդ պիտի ըլլայ երթալ զիս Պ. տը Սարգիսի մասնել: Ըսիր այս խօսքը:

— Ի՞նչ ընեմ, երբեք համբերութիւնս կը հասնի, և այն ատեն . . . Է՛հ, այն ատեն խելքս զլիւէս կ'երթայ:

— Հիմա հանդարտ ես, խելքդ զլուխդ է, Լօրէնցա, կրնանք խօսակցիլ:

— Կը յուսամ:

— Եթէ քու ուզած ազատութիւնդ տամ քեզի, անձուէք և հնազանդ կին մը պիտի ըլլամ, անյողգողդ և հեզ հողի մը պիտի ունենամ: Գիտես որ ամենամեծ բաղձանքս այս է, Լօրէնցա: Նորատի կինը ձայն չհանեց:

— Պիտի սիրես զիս վերջապէս, խօսքն աւարտեց Պալսամօ հառաջ մը հանելով:

— Միայն կրցածս կ'ուզեմ խոստանալ, ըսաւ Լօրէնցա. ոչ սէրը և ոչ ատելութիւնը մեր ձեռքը չեն: Կը յուսամ որ Աստուած ձեր բարի ընթացքին փոխարէն պիտի շնորհէ որ ատելութիւնն անցնի և սէրը զայ:

— Գժբաղդարար այսպիսի խօստում մը բաւական չէ, Լօրէնցա, որ ինքզինքս քեզի վստահիմ: Ինձ բացարձակ, նուիրական երդում մը պէտք է, զոր չբռնած ատենդ սրբապղծութիւն մը գործած ըլլաս, երդում մը որ զքեզ կապէ թէ այս աշխարհիս մէջ և թէ միւսին մէջ, երդում մը զոր չբռնած ատենդ մահ ըլլայ պատիժդ այս աշխարհիս մէջ, և յախտեանական դատապարտութիւն միւսին մէջ:

Լօրէնցա ձայն չհանեց:

— Այս երդումը կ'ընես:

Լօրէնցա զլուխը երկու ձեռքով մէջ ձգեց, և կտրծքը իրարու ներհակ զգացումներէ ճշշուելով ուռեցաւ:

— Լօրէնցա, իմ ըսածիս պէս, իմ ուզած հանդիսաւոր ձեռքովս ըրէ սոյն երդումը և ազատ ես:

— Ի՞նչ երդում ընեմ, պարոն:

— Երդուիր որ երբէք Ալթօդասի գիտութեան մասին գիտցածէդ բան մը չպիտի ելնէ բերնէդ:

— Այո, կ'երդնում այդ:

— Երդուիր որ մեր քաղաքական նպատակներ ունեցող զուամբումներու մասին գիտցածդ բնաւ երեւան չպիտի հանես:

— Այդ ալ կ'երդնում:

— Իմ ըսած երդումս և ցոյց տուած ձեռքովս:

— Այո, ամենն այս է:

— Ոչ, երդուիր, — և այս զլխաւորն է, Լօրէնցա, վասն զի միւս երդումներէն կեանքս միայն կախում ունէր, մինչդեռ ըսելիքէս երջանկութիւնս կախում ունի — երդուիր որ երբէք ինէ չպիտի բաժնուիս, Լօրէնցա: Երդուիր, և ազատ ես:

Նորատի կինը սարսուեցաւ այնպէս որ կարծես թէ սառուցեալ երկաթ մը մինչև սիրտը թափ անցաւ:

— Եւ ի՞նչ ձեռով պիտի ըլլայ այդ երդումը:

— Միասին եկեղեցի մը կ'երթանք, Լօրէնցա. հաղորդութեան մի և նոյն նշխարէն կը ճաշակենք միասին: Այն ամբողջ նշխարին վրայ կ'երդնուս որ երբէք բան մը չպիտի յայտնես Ալթօդասի և իմ ընկերացս նկատմամբ: Կ'երդնուս որ երբէք ինէ չպիտի բաժ-

նուիս : Կշխարը երկուքի կը բաժնենք , կեսը իւրաքանչիւրս կը ճաշակենք՝ Աստուծոյ վրայ երդում ընելով որ երբէք զիս չպիտի մատնես , ես ալ քեզ երջանիկ պիտի ընեմ միշտ :

— Ոչ , ըսաւ Լօրէնցա , այդպիսի երդումը սրբապղծութիւն մ'է :

— Լօրէնցա , կրկնեց Պալսամօ տրտմաղին , երդումը այն ատեն միայն սրբապղծութիւն է՝ երբ մէկը զայն չբռնելու դիտաւորութեամբ կ'ընէ :

— Ես այդ երդումը չեմ ընեք , ըսաւ Լօրէնցա : Շատ կը վախնամ որ հողիս կը կորսնցընեմ :

— Գարձեալ կ'ըսեմ , ըսաւ Պալսամօ , չէ թէ երդում ընելով՝ այլ երդումը չբռնելով հողիդ կը կորսնցընես :

— Չեմ ընեք :

— Ուրեմն համբերէ , Լօրէնցա , ըսաւ Պալսամօ առանց բարկանալու՝ սակայն խորին տխրութեամբ մը :

Լօրէնցայի ճակատը մթաղնեցաւ ինչպէս որ ծաղկազարդ մարդադետին մը կը մթաղնի՝ իւր և երկնից մէջ տեղէն ամպ մ'անցած ատեն :

— Ուրեմն կը մերժէք , ըսաւ :

— Ոչ , Լօրէնցա , ընդհակառակը դու կը մերժես :

Անոր ջղային մէկ շարժումէն տեսնուեցաւ թէ անհամբերութիւնն էր կը զսպէր այս խօսքին վրայ :

— Մտիկ ըրէ , Լօրէնցա , ըսաւ Պալսամօ , տես ինչ կ'ընամ ընել քեզի համար , և այս ալ շատ է , հաւատա ըսածիս :

— Ըսէք , պատասխանեց նորատի կինը դառն ժպիտով մը , տեսնենք մինչ ո՛ւր պիտի բարձրացընէք այդ վեհանձնութիւնը :

— Աստուած , դիպուածը կամ ճակատագիրը , ինչպէս որ կ'ուզես այնպէս ըսէ , անլուծելի կապերով մեզ իրարու կապած են . ուստի ջանք չընենք այս կենաց մէջ այն կապերը լուծելու՝ քանի որ մահը միայն կրնայ զանոնք ջախջախել :

— Այդ գիտեմ , ըսաւ Լօրէնցա անհամբեր :

— Լաւ ուրեմն , Լօրէնցա , ութ օրէն , որքան ծանր ալ թուի ինձ , և որքան վտանդ ալ ըլլայ առջևս այս ընելով ութ օրէն ընկերուհի մը կ'ունենաս :

— Ո՛ւր , հարցուց :

— Հոս :

— Հոս , դուչեց Լօրէնցա , այս երկաթէ ձողերուն ետև , այս անողորբելի դրանց ետև , այս արուրէ գոնեքուն ետև , բանտակից մը : Ո՛հ , չէք մտածեք , պարոն , խնդրածս բնաւ այդ չէ :

— Սակայն ասկէ աւելի բան մը չեմ կրնար ընել , Լօրէնցա : Նորատի կինն աւելի յայտնի անհամբերութեան նշան մ'ըրաւ :

— Սիրելիս , սիրելիս , կրկնեց Պալսամօ քաղցրութեամբ , աղէկ մտածէ , երկու եղած ատեննիդ աւելի դիւրութեամբ կը կրէք տոյն անհրաժեշտ թշուառութեան ծանրութիւնը :

— Ար սխալիք , պարոն . մինչև հիմա ես միայն իմ վիշտս կրեցի և ոչ թէ ուրիշինը : Այս փորձը կը պակսի ինձ , կ'երևի թէ այն վիշտն ալ կրել տալ կ'ուզէք ինձ : Այո , քովս պիտի գնէք ինձի պէս զօհ մը , որուն ծիւրիւր , գոնատիւր , ինձի պէս ցաւէն հողին ելնելը պիտի տեսնեմ . պիտի լսեմ որ ինձի պէս պիտի զարնէ այս սրտին , դարձելի գուռ մը՝ որուն օրն հազար անգամ կը նայիմ՝ տեսնելու համար թէ ուրիշ կը բացուի ձեզի ճամբայ տուած ատենը . և երբ զոհը , իմ ընկերուհիս ինձի պէս եղունդները փայտին կամ մարմարինին վրայ մաշեցընէ զայն փլցընելու կամ անջատելու ջանքով , երբ ինձի պէս լալով արտեանունքը մաշի , երբ ինձի պէս մեռնի և միոյն տեղ երկու դիակ ունենաք ձեր առջևը՝ ձեր դժոխային բարութեամբ պիտի ըսէք , «Այս երկու աղջիկները իրար կը զուարճացընեն , իրարու հետ ժամանակ կ'անցընեն , երջանիկ են :» Ո՛հ , ոչ , ոչ , հազար անգամ ոչ :

Եւ ոտքը խստիւ տախտակամածին զարկաւ :

Պալսամօ ջանաց վերստին զինքը հանդարտեցընելու :

— Ի՛ , Լօրէնցա , ըսաւ , քաղցր , հանդարտ եղիր . կ'աղբսեմ քեզ , տրամաբաններ :

— Ինէ հանդարտութիւն կը պահանջէ , արամախոհութիւն կը պահանջէ : Գահիճը քաղցրութիւն կը պահանջէ իւր շարժարած անձէն , հանդարտութիւն կը պահանջէ իւր մարտիրոսած անմեղէն :

— Այո , քենէ հանդարտութիւն և քաղցրութիւն կ'ուզեմ , Լօրէնցա , ինչու որ քու զայրոյթդ մեր ճակատագիրը բնաւ չփոխէր :



այլ միայն անոր ցաւը կ'աւելցընէ : Քեզի բրածս ընդունէ , Լօրէնցա . քեզի ընկերուհի մը կու տամ , ընկերուհի մը՝ որ գերութիւնը պիտի սիրէ՝ անով քու բարեկամութիւնդ ստանալուն համար :

— Այսինքն քովս վարձկան կին մը պիտի դնէք և անոր պիտի ըսէք թէ վերը յիմար կին մը կայ , հիւանդ խեղճ կին մը որ պիտի մեռնի . հիւանդութիւն մը կը հնարէք : «Այն յիմար կնոջ քով կեցիր , անձնուէր եղիր , և ես քու աշխատութիւնդ կը վճարեմ՝ յիմար կինը մեռնելուն պէս :»

— Ո՛հ , Լօրէնցա , Լօրէնցա , մըմնջեց Պալսամօ :

— Ոչ , այսպէս չէ , կը սխալիմ , այնպէս չէ՛ , շարայարեց Լօրէնցա հեղնութեամբ , աղէկ չեմ գուշակեր , ինչ ընեմ , ես սպէս եմ . աշխարհն ու աշխարհի սիրաը աղէկ չեմ գիտեր : Է՛հ , այն կնոջ պիտի ըսէք . «Հսկէ , կնոջ յիմարութիւնը վտանգաւոր է . բուլոր իւր գօրծերը , բոլոր իւր մտածմունքն ինձ իմաց տուր , հսկէ իւր կեանքին վրայ , հսկէ իւր քնոյն ատեն :» Եւ դուք իրեն ոսկի պիտի տաք ուղածին չափ . ոսկին ձեզի համար արժէք մը չունի , դուք ոսկի կը շինէք :

— Լօրէնցա , կը մոլորիս . յանուն Աստուծոյ , Լօրէնցա , աւելի լաւ կարգա սրտիս մէջ : Սիրելիս , քեզի ընկերուհի մը տալով այնպիսի մեծ շահեր վաանգի կը դնեմ որ եթէ զիս չատէիր՝ պիտի սարսափէիր . . . : Ինչպէս որ ըսի՝ քեզի ընկերուհի մը տալով՝ ապահովութիւնս , ազատութիւնս , կեանքս վտանգի կը դնեմ . և սակայն , այս ամենն աչքս կ'առնեմ քու տաղտուկ քիչ մը թեթեւցընելու մտօք :

— Տաղտուկ , գոչեց Լօրէնցա խնկալով այն վայրենի և ահուելի ծիծաղով որմէ կը սոսկար Պալսամօ : Տաղաւնկ կ'ըսէ :

— Լաւ ուրեմն , ցաւ ըսեմ , այո , իրաւունք ունիս , Լօրէնցա , դաւնակակիծ ցաւ է : Այո , Լօրէնցա , այնպէս է , սակայն , վերստին կ'ըսեմ , համբերէ , և օր մը պիտի գայ որ բոլոր այս ցաւերը պիտի վերջանան , օր մը պիտի գայ որ ազատ պիտի ըլլաս , օր մը պիտի գայ որ երջանիկ պիտի ըլլաս :

— Ըսէք նայիմ , թոյլ կու տամ որ վանք մը մտնեմ և հոն ուխտ ընելով ձեռքս աշխարհէ քաշեմ :

— Վանք մը :

— Հոն նախ ձեզի համար կ'աղօթեմ , յետոյ ինծի համար : Հոն չը փակուիմ կը մնամ՝ բայց կ'ունենամ պարտէզ մը , օդ , բաց տեղ , գերեզմանատուն մը՝ ուր շրջելով իմ դամբանս կանխաւ կը փնտռեմ : Հոն ընկերուհիներ կ'ունենամ որոնք միայն իրենց թշուառութեամբը և ոչ թէ իմ թշուառութեամբս կը տառապին : Թոյլ տուէք որ վանք մը քաշուիմ՝ և ինչ երդում որ կ'ուզէք կ'ընեմ : Վանք մը , Պալսամօ , վանք մը , ձեռնամած կը խնդրեմ ձեռնէ :

— Լօրէնցա , Լօրէնցա , չենք կրնար իրարմէ զատուիլ : Կապուած , այս աշխարհիս մէջ իրարու կապուած ենք , կը լսեմ : Այս տանս սահմանէն անդին անցնող բան մը մի խնդրեր ինէ :

Եւ Պալսամօ այնպիսի յստակ ձայնով մը , այնպիսի վճռական բայց նաև դգուշաւոր կերպով մը արտասանեց այս խօսքը՝ որ Լօրէնցա այլ ևս ընդդիմութիւնը չշարունակեց :

— Ուրեմն խնդիրս չէք ուզեր կատարել , հարցուց Լօրէնցա նկուն ,

— Չեմ կրնար կատարել :

— Անդառնալի է ձեր որոշումը :

— Անդառնալի , Լօրէնցա :

— Ուրեմն ուրիշ բան մը ըսեմ , ըսաւ Լօրէնցա ժպտելով :

— Ո՛հ , սիրելի Լօրէնցաս , դարձեալ ժպտէ , դարձեալ այնպէս , և այդպիսի ժպտով մը ինչ որ ուզես կրնաս ընել տալ ինձ :

— Այո , այնպէս չէ՛ , ուղածս ընել կու տամ ձեզի , միայն թէ ես ձեր ուղածն ընեմ : Թող այնպէս ըլլայ : Կարելի եղածին չափ խելօք պիտի վարուիմ :

— Խօսէ , Լօրէնցա , խօսէ :

— Քիչ մ'առաջ ինձ ըսիք , «Պիտի գայ օր մը , Լօրէնցա , որ ազատ պիտի ըլլաս , վիշտ չպիտի ունենաս , երջանիկ պիտի ըլլաս :

— Այո , ըսի այդ խօսքը , և Աստուծոյ վրայ կ'երգնում որ քեզի չափ անհամբերութեամբ այն օրուան կ'սպասեմ :

— Լաւ ուրեմն , այն օրն անմիջապէս կրնայ հասնիլ , Պալսամօ , ըսաւ նորատի կիներ սիրուն կերպով մը՝ զոր միայն քնոյն ատեն անոր վրայ տեսած էր ամուսինը : Ա՛լ տաղտկացած եմ , կը հասկընա՞նք , շատ տաղտկացած եմ , այս ծաղիկ հասակիս մէջ շատ վիշտ կրեցի : Ուստի բարեկամ , — վասն զի կ'ըսէք թէ բարեկամս էք :

— Մտիկ ըրէք ինձ , այն երջանիկ օրն տուէք ինձ անմիջապէս :

— Ահանջս քեզի է, ըսաւ Պալսամօ անբացատրելի խռովութեամբ մը :

— Խօսքս կը վերջացընեմ այն խնդիրով՝ զոր խօսքս սկսելու առանձն ընելու էի, Աշարա :

Նորատի կնոջ վրայէն սարսուռ մ'անցաւ :

— Խօսէ, սիրելիս :

— Հատ անգամ նշմարեցի, երբ խեղճ կենդանիներու վրայ փորձեր կ'ընէիք և կ'ընէիք թէ այն փորձերը մարդկութեան կարևոր էին, շատ անգամ նշմարեցի որ մահուան գաղտնիքը գիտէք և ՚ի գործ կը դնէք կաթիլ մը թոյնով կամ երակ մը բանալով, և այն մահը քաղցր էր, կայծակի մ'առագութիւնն ունէր, և այն խեղճ ու անմեղ արարածները ինձ նման թշուառ դերութեան դատապարտուած՝ յանկարծ մահուամբ կ'ազատէին, միակ բարիք մը զոր ծնած ատեննին կրնային ստանալ : Ուստի . . .

Լօրէնցա կայ առաւ գունատելով :

— Ուստի, Լօրէնցա, կրկնեց Պալսամօ :

— Ուստի, ինչ որ երբեմն խեղճ կենդանիներուն կ'ընէք դիտութեան օգտին համար՝ զայն իմ վրայ կատարեցէք մարդկութեան օրինաց հնազանդելու համար. կատարեցէք զայն բարեկամ կնոջ մը վրայ որ զձեզ ՚ի բոլոր սրտէ պիտի օրհնէ, անսահման երախտագիտութեամբ ձեր ձեռները պիտի համբուրէ՝ եթէ իւր խնդրածն իրեն շնորհէք : Իմ վրաս կատարեցէք զայն, Պալսամօ, իմ վրաս՝ որ ծնողանցդ կը փարիմ և յետին շունչս եղնելու ատեն ձեզ սէր և զուարթութիւն կը խոստանամ՝ կենացս միջոցին ձեր ազգել չկրցածէն շատ աւելի, համարձակութիւն և ուրախութիւն կը խոստանամ ձեզ աշխարհէս մեկնած վայրկենիս : Պալսամօ, մօրդ հոգոյն վրայ, մեր Աստուծոյ արեան վրայ, կենդանեաց և մեռելոց մէջ գտնուող ամեն քաղցր, հանդիսաւոր, նուիրական իրերուն վրայ երգում կու տամ ձեզի, սպաննեցէք զիս, սպաննեցէք զիս :

— Լօրէնցայ, գոչեց Պալսամօ բազկայր մէջ առնելով նորատի կինը որ այն վերջին խօսքին վրայ ոտք ելեր էր, Լօրէնցայ, կը զատանցես. ես զքեզ սպաննեմ, դու իմ սէրս, դու իմ կեանքս :

Լօրէնցա սաստիկ ճիղ մ'ընելով Պալսամօի գրկէն ելաւ և ծունր գրաւ :

— Ոտքի վրայ չալիտի ելնեմ, ըսաւ Լօրէնցա, մինչև որ խնդիրս չկատարես : Առանց սարսուռ, ցաւ, հոգեվարք տալու սպաննէ զիս. ըրէ ինձ այս շնորհը՝ քանի որ կ'ըսես թէ զիս կը սիրես. քնացուր զիս՝ ինչպէս որ ստէպ կը քնացընես, միայն թէ մի արթնցըներ, արթննալը յուսահատութիւն կը բերէ :

— Լօրէնցա, սիրելիս, ըսաւ Պալսամօ, ա՛հ, չնո տեսներ թէ որքան սիրտս կը ծակիս : Ինչ, միթէ այդ աստիճան թշուառ ես : Ի՛հ, Լօրէնցա, հանդարտէ, յուսահատութեան մէջ մի իյնար : Աւա՛ղ, ուրեմն շատ կ'ատես զիս :

— Գերութիւնը, նեղութիւնը, առանձնութիւնը կ'ատեմ. և որովհետև դու զիս գերի, թշուառ և առանձնակեաց կ'ընես՝ կ'ատեմ զքեզ :

— Բայց ես զքեզ այնչափ կը սիրեմ որ չեմ կրնար մեռնիլք ատենել : Ուստի, Լօրէնցա, չալիտի մեռնիս, և ես մինչև հիմա կատարած բժշկութիւններէս աւելի դժուարը պիտի կատարեմ, Լօրէնցա. կեանքը սիրել պիտի տամ քեզի :

— Ոչ, ոչ, անկարելի է. մահը սիրել տուիր ինձ :

— Լօրէնցա, դիժա, իմա Լօրէնցա, կը խոստանամ թէ քեզ ատենէն . . .

— Աեանք կամ մահ, գոչեց նորատի կինը որ աստիճանաբար կը մնչորէր բարկութենէն : Գերազոյն օրն այս օր է, պիտի տասն ինձ մահ, այսինքն հանդիստ :

— Աեանք, սիրելի Լօրէնցաս, կեանք :

— Ուրեմն աղատութիւնն է այն :

Պալսամօ լուռ մնաց :

— Ուրեմն, մահ, անուշ մահ մը օշարակով մը, ասեղով մը, քնացած ատենս, հանդիստ, հանդիստ, հանդիստ :

— Աեանք և համբերութիւն, Լօրէնցա :

Լօրէնցա սոսկալի ծիծաղով մը խնդաց և յետոս ոտտում մ'ընելով կուրծքէն սուր ու նուրբ դանակ մը հանեց՝ որ կայծակի մը նման անոր ձեռքին մէջ փայլեցաւ :

Պալատն արձակեց՝ բայց ոչ էր. երբ Պալատն նե-տուեցաւ, երբ ձեռքը բռնեց՝ վէնքն արդէն ճամբայ առեր և Լօ-րէնցայի կուրծքին վրայ իջեր էր: Պալատն աչքը շրջեց էր դա-նակին փայլէն. արիւն սեմնելով կուրցաւ:

Պալատն սոսկալի աղաղակ մ'արձակեց, Լօրէնցայի փաթտուելով գեանէն վերցոյց, և վազելու ատեն կը փնտռէր երկրորդ անգամ մ'ալ իջնելու պատրաստ վէնքը. գտաւ և ձեռքովը բռնեց:

Լօրէնցա սաստիկ ճիգով մը դանակը քաշեց, և սուր բերանը Պալատնի մատներուն միջև սահեցաւ:

Կտրուած ձեռքէն արիւնը ժայթքեց:  
Այն ատեն Պալատն փոխանակ վէզը շարունակելու՝ այն արիւնա-թաթաւ ձեռքը նորատի կնոջն երկնցոյց և անդիմադրելի ձայնով մը,

— Քնացիր, Լօրէնցա, քնացիր, այնպէս կ'ուզեմ:

Բայց այս անգամ այնքան գրգռեց էր սր զիւրաւ չհնազանդեցաւ ըստ սովորականին:

— Ո՛չ, ո՛չ, մեմնաց Լօրէնցա գողգոջելով և ճիգ ընելով որ կրկին անգամ ինքզինքը զարնէ: Ո՛չ, չպիտի քնանամ:

— Քնացիր, կ'ըսեմ քեզի, գոչեց Պալատն երկրորդ անգամ՝ դէպ' անոր քայլ մը յառաջանալով, քնացիր, այնպէս կը հրա-մայեմ:

Այս անգամ Պալատնին կամքն այնքան զօրաւոր եղաւ որ ամեն հակադրեցութիւն յաղթուեցաւ. Լօրէնցա հառաչ մ'արձակեց, դա-նակը ձեռքէն ինկաւ, ինքը գողգոջեց և դնաց բարձերու վրայ թաւալեցաւ:

Միայն աչերը բաց էին, բայց անոնց սոսկալի հոբն սկսաւ հետզ-հետէ դեղնիլ և գոցուեցան: Զիպ պարանոցը թուլցաւ, գլուխը ուսին վրայ ձուեցաւ՝ ինչպէս որ վերաւոր թուղուն մը գլուխը կը ծռէ, ջրային սարսուռ մը բոլոր մարմինէն անցաւ: Լօրէնցա քնա-ցեց էր:

Այն ատեն միայն Պալատն կրցաւ Լօրէնցայի զգեստները մէկ-գի ընելով վէրքը քննել՝ որ թեթեւ երնցաւ իրեն: Սակայն արիւնը առատօրէն կը վաղէր:

Պալատն առիւծին աչքը մղեց, զսպանակը տեղի տուաւ, տախ-տակը բացուեցաւ. յետոյ Ալթօգասի կափոյցը վար իջեցնող հա-կակշիւռը քակեց, կափոյցին վրայ ելաւ և ծերունւոյն գործանոցը վերացաւ:

— Ա՛հ, դո՛ւ ես, Աշարա, ընտաւ ծերունին թիկնաթոռին մէջէն: Գիտես որ ութ հարիւր տարու կ'ըլլամ: Գիտես որ մինչև այն ատեն տղու մը կամ կոյսի մ'արիւնը պէտք է ինձ:

Սակայն Պալատն բնաւ չէր լսեր անոր ըսածը. վաղեց-բացաւ այն սպահարանը ուր կը գտնուէին մոզական բալասանները, առաւ այն շիշերէն մին՝ որոց աղբեցուծիւնը շատ անգամ փորձած էր. գնաց կափոյցին վրայ կեցաւ, ոտքը զարկաւ և վար իջաւ:

Ալթօգաս թիկնաթոռը մինչև կափոյցին բերանը թնալեց՝ Պալ-տատնի զոտաներէն բռնելու մտօր:

— Կը լսես, թշուառական, ըսաւ անոր. կը լսես, եթէ մինչև ութ օր տղայ մը կամ կոյս մը ձեռք չսնցընեմ ցքիւ աւարտելու հա-մար՝ պիտի մեռնիմ:

Պալատն ետեւը դարձաւ. ծերունւոյն աչերը երեսին անշարժ դնդերներուն մէջ գողգոջեց կը վառէին. կարծես թէ միայն աչերը ողջ էին:

— Այո, այո, պատանխանեց Պալատն. այո, անհոգ եղիր, ուղածդ պիտի տրուի քեզ:

Յետոյ զսպանակը թոյլ տալով կափոյցը վեր հանեց՝ որ զարդի մը պէս գնաց ձեղունին վրայ կեցաւ:

Այս ընելէն ետք՝ վաղեց դիմեց Լօրէնցայի սենեակն ուր մտաւ չմտա՝ Քրիցի հնչակը զարնուեցաւ:

— Պ. տը Ռիչիլէօ, մըմնջեց Պալատն. ո՛հ, ճշմարիտ, դու քա- և առնական ըլլալովն հանգերձ պիտի սպասէ:

*Handwritten signature*



23031-59

Պ. ՏԸ ՌԻԶՆԻԷՑԻ ԵՐԿՈՒ ԿԵԹԻԼ ԶՈՒՐԸ

Պ. տը Ռիշլիէօ դուքսը ժամը չորս ու կէսին Սէն-Գլօտ փողոցի տնէն դուրս ելաւ :

Պալամօի տունն ինչ ընելու համար եկած ըլլալը բնականաբար կը բացատրուի հետեւեալը կարդալով :

Պ. տը Գալէրնէյ աղջկանը տունը ճաշեր էր . տիկին արքայորդին արձակուրդ շնորհեր էր այն օրն Անտրէին որպէս զի հօրն այցելութեանը պատրաստ գտնուի :

Միտքն ուտելու վրայ էին Պ. տը Ռիշլիէօի ներս մտած ատենը . միշտ աւետարներ՝ եկեր էր իւր բարեկամին իմացընելու՝ թէ թաղաւորն առտուն իսկ ըսեր էր որ միտք ունի Փիլիպին ոչ թէ ջոկատ մը՝ այլ դռնդ մը տալ :

Գալէրնէյ սաստիկ ուրախութիւն ցոյց տուաւ , Անտրէ կրկին և կրկին շնորհակալութիւն մատոյց մարաջախտին :

Այսպիսի անցքէ մ'ետք ինչոր պէտք էր խօսուիլ՝ այն խօսուեցաւ Ռիշլիէօ միշտ թագաւորին վրայ խօսեցաւ , Անտրէ միշտ եղբօրը վրայ , Գալէրնէյ միշտ Անտրէի վրայ :

Խօսքին կարգը դալով՝ Անտրէ ըսաւ թէ այն օրը կատարելու պաշտօն մը չունէր տիկին արքայորդոյն քով . թէ Կորին արքայադէմ Քարձրութիւնը իւր ընտանիքէն երկու Գերմանացի իշխան կ'ընդունէր , և քանի մը ժամ ազատ մնալով Ֆիէննաի արքունեաց վրայ մտածելու համար՝ բնաւ քովը ծառայող չէր ուզեր , և ոչ իսկ պատուոյ տիկինը . ասոր համար այնքան դողացեր էր տիկին տը Նօայլ որ գացեր թաղաւորին ոտքն ինկեր էր :

Գալէրնէյ շատ ուրախ եմ , կ'ըսէր , Անտրէ այն օրն ազատ ըլլալուն համար , ինչու որ մեր բաղդին ու համբալին օգտակար բաներու վրայ սխտի խօսիմ հետը : Այս զիտողութեան վրայ Ռիշլիէօ

առաջարկեց որ ինքը քաշուի հայրն ու աղջիկը առանձին թողելու համար . սակայն օրիորդ տը Գալէրնէյ դէմ կեցաւ և Ռիշլիէօ մնաց :

Ռիշլիէօ բարոյականի վրայ խօսելու տրամադրութիւն մ'ունէր . կարի պերճախօսութեամբ նկարագրեց այն թշուառ վիճակն ուր ինկեր էր Գաղղիոյ ազնուականութիւնը՝ կրել ստիպուելով դիպուածական սիրուհիներու , կեղծ թագուհիներու նուաստացուցիչ լուծը փոխանակ ինկարկելու այն հին ատենի սիրուհիներուն պէս սիրուհիներ՝ որոնք իրենց օգոստափառ տարփածուին չափ գրեթէ ազնուականներ՝ իրենց զեղեցկութեամբն ու սիրով իշխանին վրայ կը տիրէին , և իրենց ծննդեամբը , հանձարովը և անխառն հայրենասիրութեամբը հպատակաց վրայ :

Անտրէ շատ զարմացաւ տեսնելով որ Ռիշլիէօի խօսքերը շատ կը նմանին տը Գալէրնէյ սեպուհին քանի մ'օրէ 'ի վեր ըրած խօսքերուն :

Յետոյ Ռիշլիէօ առաքինութեան վրայ այնպիսի հանձարեղ վարդապետութիւն մը սկսաւ՝ որ օրիորդ տը Գալէրնէյ ստիպուեցաւ մտածելու՝ թէ Պ. տը Ռիշլիէօի վարդապետութեանցը նայելով , ինքը քնաւ առաքինի չէր , և ճշմարիտ առաքինութիւնը՝ Պ. տը Ռիշլիէօի ըսածին նայելով՝ տիկին տը Շադօրուի , օրիորդ տը լա Վալիէրի , և օրիորդ տը Ֆօսէօզի առաքինութիւնն էր :

Հետևութենէ հետևութիւն , փաստէ փաստ Ռիշլիէօ այնքան բացայայտ սկսաւ խօսիլ՝ որ Անտրէ բան մը չհասկըցաւ :

Երեկոյեան ժամը մինչև եօթը գրեթէ նոյն խօսքն ըրին :

Երեկոյեան ժամը եօթին մարաջախտը ոտք ելաւ՝ ըսելով որ թաւաւորին այցելութիւն ընելու ստիպուած էր :

Ռիշլիէօ գլխարկը առնելու համար սենեակը մտած ելած ատենը Նիգօլին պատահեցաւ՝ որ միշտ ընելու բան մը կ'ունենար ուր որ Պ. տը Ռիշլիէօ կը գտնուէր :

— Աղջիկ , ըսաւ Պ. տը Ռիշլիէօ անոր ուսին զարնելով , սուսջնորդէ ինձ . կ'ուզեմ որ դուն տանիս այն փունջը՝ զոր տիկին տը Նօայլ իւր պարտէզին ծաղիկներէն կտալել տուաւ՝ տիկին աղջկան կոմսուհուոյն յղելու համար :

22-1808

Նիզով՝ Պ. Ռուսօի շինած գուսաներգութեանց զեղջկուհիներուն նման խոնարհութիւն մ'ըրաւ :

Յետոյ մարաջախտը երթալու հրաման խնդրեց Տօրմէն և աղջիկէն , նշանակական ակնարկ մը փոխանակեց Գաղէրնէյի հետ , երիտասարդի մը պէս խոնարհութիւն ըրաւ Անտրէի՝ և դուքս ելաւ :

Եթէ ընթերցողը հաճի մեզի թոյլտուութիւն ընել՝ սեպուհն ու Անտրէն կը թողունք որ Փիլիպի եղած նոր շնորհին վրայ խօսակցին , և մարաջախտին ետեւէն կ'երթանք : Ասով կրնանք իմանալ թէ ինչ ընելու գացեր էր Սէն-Գլօս փողոցը ուր ինչպէս որ կը յիշենք՝ ստակալի վայրկենի մը հասեր էր :

Ասկէ զատ սեպուհին խօսած բարոյականը իւր բարեկամին խօսած բարոյականէն գերազանց ըլլալով՝ կրնար զայրոյթ պատճառել ուրիշ անձի մը՝ որ Անտրէէն նուազ անմեղ՝ այն խօսքերէն բան մը հասկընար :

Ռիշլիէօ սանդուխէն իջաւ՝ Նիզովի ուսին յեցած , և պարտեզը հասնելուն պէս ,

— Հէ , աղջիկ , ըսաւ կենալով և երեսը նայելով , սիրահար ալ ունիս :

— Ե՛ս , պարոն մարաջախտ , զոչեց Նիզով կաս կարմիր կտրած և քայլ մը ետ քաշուելով :

— Ի՛նչ , ըսաւ մարաջախտը , միթէ դու Նիզով Լըկէյը չես :

— Այո , պարոն մարաջախտ :

— Լաւ ուրեմն , Նիզով Լըկէյ սիրահար մ'ունի :

— Ո՛հ , այն պակաս էր :

— Այո , ճշմարիտ , բաւական շնորհքով մէկը՝ որուն հետ Գօք-Հէրօն փողոցը կը տեսնուէր , և որ հիմա Աէրայլի շուրջն եկած է անոր ետեւէն :

— Պարոն դուքս , կ'երգնում որ . . .

— Տեսակ մը զինուոր՝ որուն անունն է . . . : Աղջիկ , կ'ուզէս որ օրիորդ Նիզով Լըկէյի սիրահարին անունն ըսեմ :

Նիզովին յետին յոյսն այն էր որ մարաջախտը այն գերերջանիկ մահկանացուն անունը չգիտէր :

— Իրաւ որ ըսէք , պարոն մարաջախտ , քանի որ սկսած էք :

— Անունը Պ. տը Պօզլը \* է , կրկնեց մարաջախտը , և արդարև անունը սուտ չհանէր :

Նիզով ձեռներն իրար կցեց՝ ամօթխածութիւն կեղծելու համար , սակայն մարաջախտը ուշ չդուրս :

— Կ'երևի թէ ժամագրութիւններ կ'ընէք Գրիանօնի մէջ : Ո՛րքան վտանգաւոր բան մ'է այդ թագաւորական դղեկի մը մէջ . մարդը կը վճռտեն այսպիսի երիտասարդական յանցանքներու համար , և Պ. տը Սարգին՝ թագաւորին դղեակներէն վճռաւած աղջիկները Սալբէզըրիէր \*\* կը յղէ :

Նիզով սկսաւ թունդ ելնել :

— Տէր իմ , ըսաւ Նիզով , կ'երգնում որ , եթէ Պ. տը Պօզլը կը պարծենայ թէ իմ սիրահարս է՝ ծանծաղամիտ և անպիտան է . ինչու որ , յիրաւի անմեղ եմ ես :

— Ես չէ չեմ ըսեր , ըսաւ Ռիշլիէօ , բայց ժամագրութիւններ տուիր :

— Պարոն դուքս , ժամագրութիւն մը փաստ չէ :

— Ժամագրութիւն տուիր , այո կամ ոչ : Պատասխան տուր :

— Տէր իմ . . . :

— Ժամագրութիւն տուեր ես , շատ աղէկ . ասոր համար քեզ չեմ մեղադրեր . ասկէ զատ ես կը սիրեմ այն գեղեցիկ աղջիկները որոնք իրենց գեղեցկութիւնը շրջաբերութեան կը հանեն , և ես միշտ ձեռքէս եկածին չափ օղնած եմ սոյն շրջաբերութեան . միայն թէ իբրև քու բարեկամ , իբրև քու պաշտպանդ՝ վրադ դիմալով իմաց կու տամ :

— Ուրեմն տեսե՛ր են զիս , հարցոյց Նիզով :

— Այնպէս ըլլալու է , քանի որ ես գիտեմ :

— Տէր իմ , ըսաւ Նիզով հաստատուն եղանակաւ մը , զիս տեսած չեն , անկարելի է :

— Չեմ գիտեր , սակայն այսպիսի զրոյց մը կայ , և ասով աղէկ :

\* Պօ Գաղղիերէնի մէջ գեղեցիկ կը նշանակէ :

\*\* Հիւանդանոց 'ի Բարիզ պատուաւ , եւ իխուանդոս կամանց Բամար :

գաղափար մը չեն ունենար տիրուհւոյ վրայ . զիտեն որ անելի Գա-  
վէրնէյի ընտանեաց՝ քան թէ Լըկէյի ընտանեաց բարեկամ ըլլալով՝  
կը պարտաւորիմ անցած դարձածին վրայ սղտիկ տեղեկութիւն մը  
տալ սեպուհին :

— Ա՛՛՛՛՛՛՛, տէր իմ, գոչեց Նիգօլ խօսակցութեան առած՝ ձեռն  
ստորստիւնով, զիս ՚ի կորուստ կը մատնէք . անմեղ ըլլալովս հան-  
դերձ, թէ որ փոքր կասկած մ՝ ունենան՝ զիս կը վճնտեն :

— Է՛՛՛՛՛՛՛, խեղճ աղջիկ, ուրեմն պիտի վճնտուիս, ինչու որ այս  
միջոցիս, չգիտեմ որ բանսարկուին մէկը այս ժամագրութեանց վրայ  
ըսելիքներ ունենալով, որչափ որ անմեղ ալ են սոյն ժամագրութիւն-  
ները, տիկին տը Նօայլի իմաց տուած ըլլալու է :

— Տիկին տը Նօայլի, տէր Աստուած :

— Այո, կը տեսնես որ դործը կը ծանրանայ :

Նիգօլ ձեռներն իրար զարկաւ յուսահատութեամբ :

— Գիտեմ որ ձախորդութիւն մ՛է այս, ըսաւ Ռիշլիէօ, բայց  
ինչ ընելու է :

— Եւ դուք որ քիչ մ՛ առաջ իմ պաշտպանս էք կ'ըսէիք, ու այն-  
պէս ըլլալնիդ ալ փորձով ցոյց տուիք, չէք կրնար պաշտպանել զիս  
այլ ևս, հարցուց Նիգօլ երեսնամեայ կնոջ մը թոյլ խորամանկու-  
թեամբ :

— Կրնամ, ինչո՞ւ չէ :

— Ուրեմն, տէր իմ . . . :

— Այո, բայց չեմ ուզեր պաշտպանել :

— Ո՛՛՛՛՛՛՛, սլարոն դուքս :

— Այո, դու աղւոր ես, զիտեմ. և քու գեղեցիկ աչերդ շատ  
բաներ կ'ըսեն ինձ . բայց կարելի եղածին չափ չեմ նայիր, խեղճ  
Նիգօլս, և այլ ևս չեմ հասկընար գեղեցիկ աչերուն խօսած լեզուն :  
Ժամանակաւ, այսպիսի պարագայի մը մէջ, քեզի պիտի առաջար-  
կէի ասպատանարան մը տալ Հանօվրի բերկրանոցիս մէջ . բայց այս-  
օր, ինչ օգուտ ունի այն, անոր խօսքն անգամ չպիտի ընեն :

— Սակայն անգամ մը տարիք զիս հոն, Հանօվրի բերկրանոցը,  
ըսաւ Նիգօլ զայրալիբ :

— Ա՛՛՛՛՛՛՛, Նիգօլ, ինչպէս ալ կ'ընես երեսիս կու տաս քեզ իմ

ապարանքս տանելս՝ մինչդեռ քեզի բարիք մ'ընելու համար ըրի .  
վասն զի, դու ըսէ որ եթէ Պ. Ռաֆիգէին ջուրը չըլլար՝ որով թխա-  
ղեղ կին մ'եղար, Գրիանօն չպիտի մտնէիր . թերեւ աւելի աղէկ  
էր որ բնաւ չմտնէիր՝ քան թէ հիմա վճնտուէիր . բայց ըսէ նայիմ,  
ինչո՞ւ ժամագրութիւն կու տայիր Պ. տը Պօզիրին, և այն ալ ակոու-  
նեբուն վանդակապատներուն քով :

— Ուրեմն այդ ալ գիտէք մինչև անգամ, ըսաւ Նիգօլ՝ որ քաջ  
տեսաւ թէ պէտք էր ընթացքը փոխել և բոլորովին մարաջախտին  
խորհրդապահութեանը յանձնել ինքզինքը :

— Է՛՛՛՛՛՛՛, այդ ալ խօսք է, զիտեմ. տիկին տը Նօայլն ալ զիտէ :  
Քեզի ըսեմ, այս իրիկուն ալ ժամագրութիւն ունիս . . .

— Ստոյդ է, սլարոն դուքս . բայց, ճշմարիտ, չպիտի գտնուիմ  
ժամագրութեան :

— Տարակոյս չկայ, ինչու որ պէտք եղածն իմացար . բայց Պ.  
տը Պօզիր իմացած չըլլալով պիտի գտնուի ժամագրութեան, և զին-  
քը պիտի բռնեն : Այն ատեն, որովհետեւ բնականաբար չպիտի ու-  
ղէ դող մը համարուիլ՝ զոր կը կատեն, կամ լրտես մը՝ զոր կը դա-  
նակոծեն, լաւագոյն պիտի համարի ըսել, քանի որ քաջուելու խօսք  
մ՛ալ չէ . «Թոյլ տուէք զիս, ես Նիգօլիկին սիրահարն եմ» :

— Պարոն դուքս, ես հիմա կ'իմացընեմ իրեն :

— Անկարելի է, խեղճ աղջիկ . որո՞ւ միջոցաւ, կը հարցընեմ  
քեզի . թերեւ այն մարդուն միջոցաւ որ զքեզ մասնած է :

— Աւաղ, ճշմարիտ է, ըսաւ Նիգօլ յուսահատութիւն ձեայը-  
նելով :

— Ինչ աղւոր բան է խղճի խայթը, գոչեց Ռիշլիէօ :  
Նիգօլ երկու ձեռներովը երեսը ծածկեց, սակայն հող տարաւ  
որ մատներուն մէջ տեղերը բաւական միջոց գտնուի՝ որպէս զի Ռիշ-  
լիէօի և ոչ մէկ շարժումը և ոչ մէկ նայուածքը չփախցընէ :

— Յիրաւի, պաշտելի աղջիկ մ'ես, ըսաւ դուքսը որուն աչքէն  
չէր վրիպեր այս կանացի խորամանկութիւններէն և ոչ մին : Ինչո՞ւ  
յիսուն տարու աւելի փոքր չեմ : Բայց ինչ և է, Նիգօլ, քեզ այդ  
վիճակէդ ազատել կ'ուզեմ :

— Ո՛՛՛՛՛՛՛, սլարոն դուքս, եթէ ըսածսիդ ընէք, իմ երախտաղի-  
տութիւնս . . . :

— Ես երախտագիտութիւն չեմ ուզեր, Նիզօլ: Ընդհակառակը, առանց որ և է շահ մը սպասելու՝ ձեռքէս եկած բարիքը պիտի ընեմ քեզի:

— Ա՛հ, մեծ վեհանախութիւն մ'է՛ ձեր ըրածը, տէր իմ, և ես 'ի բոլոր սրտէ շնորհակալ եմ ձեզի:

— Տակաւին շնորհակալ մի ըլլար: Բան մը չզիտես: Նզովից արմատ, կեցիք որ ըսեմ:

— Ի՛նչ որ ալ ըլլայ՝ ինծի համար աղէկ է, պարոն դուքս, միայն թէ Անտրէ զիս չվճտէ:

— Ա՛հ, ուրեմն շատ կը փափաքիս Գրիանօն մնալ:

— Ամեն բանէ աւելի, պարոն դուքս:

— Լաւ ուրեմն, Նիզօլ, աղւորիկ աղջիկս, այդ քու տետրակիդ մէջէն աւրէ:

— Սակայն եթէ չյայտնուիմ, պարոն դուքս:

— Յայտնուիս թէ ոչ՝ դարձեալ Գրիանօնէն պիտի երթաս:

— Ա՛հ, ինչո՞ւ:

— Հիմա պիտի ըսեմ. վասն զի, եթէ տիկին տը՝ նոյն իմացեր է՝ մէկը չկրնար զքեզ ազատել, և ոչ իսկ թագաւորը:

— Ա՛հ, եթէ կարենայի թագաւորը տեսնել:

— Յիրաւի, աղջիկ, այդ միայն կը պակսի: Յետոյ, վասն զի ես պիտի ստիպեմ զքեզ երթալ՝ եթէ իմացած չեն:

— Դո՞ւք:

— Անմիջապէս:

— Յիրաւի, պարոն մարաջախտ, բան մը չեմ հասկընար:

— Այս այսպէս է:

— Այս է ձեր սլաշտպանութիւնը:

— Եթէ իմ պաշտպանութիւնս չես ուզեր՝ ըսէ, Նիզօլ:

— Ա՛հ, չէ, կ'ուզեմ, պարոն դուքս:

— Ես ալ իմ պաշտպանութիւնս քեզի կ'ընծայեմ:

— Ուրեմն:

— Ուրեմն ահա ընելիքս, մտիկ ըրէ:

— Խօսեցէք, տէր իմ:

— Փոխանակ թոյլ տալու որ զքեզ վճնտեն և բանտարկեն՝ զքեզ ազատ և հարուստ պիտի ընեմ:

— Ազատ և հարուստ:

— Այո:

— Ազատ և հարուստ ըլլալու համար ի՛նչ ընելու է, շուտ շտեղծ, պարոն մարաջախտ:

— Գրեթէ ոչինչ:

— Բայց վերջապէս . . . :

— Ինչ որ քեզի պիտի պատուիրեմ:

— Դժուարի՛ն է:

— Տղու մը դորձ է:

— Ուրեմն, ըսաւ Նիզօլ, ընելու բան մը կայ:

— Ա՛հ, ինչպէս ըսեմ . . . աշխարհիս նշանաբանը զիտես, Նիզօլ, ոչինչի փոխարէն ոչինչ:

— Ընելիքս ինծի՛ համար է թէ ձեզի համար:

Դուքսը Նիզօլին նայեցաւ:

— Նզովից արմատ, ի՛նչ խորամանկ է այդ պզտիկ երեսը:

— Վերջապէս, աւարտեցէք ըսածիդ, պարոն դուքս:

— Լաւ, քեզի համար է, պատասխանեց դուքսն արխարար:

— Ա՛հ, ա՛հ, ըրաւ Նիզօլ որ արդէն հասկընալով թէ մարաջախտն իրեն պետք ունէր՝ ալ չէր վախնար անորմէ և իւր սրամտութեամբը կ'աշխատէր ճշմարտութիւնը երևան հանել այնքան դարձուածներուն մէջէն զոր իւր խօսակիցն 'ի դորձ կը դնէր սովորութեանն համեմատ. ուրեմն ի՛նչ պիտի ընեմ ինծի համար, պարոն դուքս:

— Ահա. ասիկ ընելիքդ. Պ. տը Պօղիք ժամը եօթն ու կէսին կու գայ:

— Այո, պարոն մարաջախտ, սովորական ժամն այն է:

— Հիմա ժամը եօթը տասն կ'անցնի:

— Այդ ալ ճիշդ է:

— Եթէ ուզեմ՝ կը բռնուի:

— Այո, բայց չէք ուզեր:

— Ոչ, կ'երթաս զինքը կը գտնես ու իրեն կ'ըսես . . .

— Իրեն կ'ըսեմ:

— Բայց նախ ըսէ ինձ, կը սիրես այն սղան, Նիզօլ:

— Բանի որ ժամագրութիւններ կու տամ . . . :

— Այս պատճառ մը չէ, կարելի է որ կ'ուզես հետն ամուսնանալ, կիններն ինչ տարօրինակ մտահաճոյքներ ունին :

Նիգօլ քրքիջ մ'արձակեց :

— Ե՞ս ամուսնանամ անոր հետ, ըսաւ : Հան, հան, հան :

Ռիշլիէօ յայտուշ կրթեցաւ . նոյն իսկ արքունիքը այսպիսի խորամանկ կանանց շատ պատահած չէր :

— Լաւ, այնպէս թող ըլլայ, չես ուզեր ամուսնանալ, բայց կը սիրես ուրեմն, աւելի աղէկ :

— Այնպէս թող ըլլայ : Պ. տը Պօզիրը կը սիրեմ, այս մէկդի դնենք, տէր իմ, շարունակենք :

— Շուտիկ, ինչ ոստող մ'ես :

— Անշուշտ : Ինձ կարևոր եղածը . . .

— Ետքը :

— Ինչ ընելիքս գիտնալն է :

— Նախ կ'ըսեմ թէ, որովհետեւ զան կը սիրես, պէտք է որ անոր հետ խոյս տաս :

— Հողի, թէ որ անպատճառ այնպէս կ'ուզէք՝ կ'ընենք :

— Օ՛, օ՛, ես բան մը չեմ ուզեր, քիչ մը կեցիր, աղջիկ :

Նիգօլ տեսաւ որ շուտ կը վաղէ, և տակաւին իւր զօրեղ հասկաւորդին ոչ զաղտնիքը ձեռք անցուցեր էր և ոչ դրամը :

Ուստի խոնարհեցաւ՝ ետքէն կանգնելու համար :

— Տէր իմ, ըսաւ, ձեր հրամանացը կ'սպասեմ :

— Լաւ, կ'երթաս Պ. տը Պօզիրը կը գտնես և իրեն կ'ըսես . «Յայտնուեր ենք, բայց պաշտպան մ'ունիմ որ մեզ կ'աղատէ, քեզ Ահն-Լաղարէն՝ զիս Սալբէզրիէրէն : Մեկնինք : »

Նիգօլ Ռիշլիէօին նայեցաւ :

— Մեկնինք, կրկնեց :

Ռիշլիէօ այն նուրբ ու նշանակական նայումքը հասկըցաւ :

— Հասկըցայ մտքէդ անցածը, ուղևորութեան ծախսոց ես հող կը տանիմ :

Նիգօլ ուրիշ բացատրութիւն չուզեց . անշուշտ ամեն բան գիտեր՝ քանի որ իրեն կը վճարէին :

Մարաջախտը Նիգօլին առած քայլն զգայ, և ինքն ալ աճապարեց ըսելիքն ըսելու՝ ինչպէս որ մարդ խաղի մէջ կորուսած ատեն անմիջապէս կը վճարէ՝ վճարելու տհաճութիւնը չզղալու համար :

— Գիտես, Նիգօլ, ինչ բանի վրայ կը մտածես, հարցուց :

— Ճշմարիտ ոչ, պատասխանեց նորատի աղջիկը . բայց դուք սր այնչափ բան գիտէք, պարոն մարաջախտ, դրաւ կը դնեմ որ գուշակած էք :

— Նիգօլ, ըսաւ, կը մտածես թէ եթէ փախչիս՝ կրնայ ըլլալ որ տիրուհիդ զիպուածաւ քեզի պէտք ունենալով՝ զիշե՛րը քեզ կը կանչէ, և քեզ չգտնելով՝ ամենը ոտք կը հանէ, և ասով բռնուելու վտանգին մէջ կ'իյնաս :

— Ոչ, ըսաւ Նիգօլ, բնաւ ասոր վրայ չէի մտածեր, վասն զի ամեն բան մտածելէ ետք, պարոն մարաջախտ, աւելի լաւ ունիմ հօս մնալ :

— Բայց թէ որ Պ. տը Պօզիրը բռնեն :

— Է՛հ, թող բռնեն :

— Բայց թէ որ քեզ բերան տայ :

— Թող բերան տայ :

— Ա՛հ, ըրաւ Ռիշլիէօ թունդ ելնել սկսելով, ուրեմն պիտի կորսուիս :

— Ոչ, վասն զի օրիորդ Անտրէն բարեսիրտ է, և որովհետեւ զիս սրտանց կը սիրէ՝ ինձի համար թաղաւորին կը բարեխօսէ . և եթէ Պ. տը Պօզիրին բան մ'ընեն՝ ինձ բան մը չեն ըներ :

Մարաջախտը շրթերը խածաւ :

— Նիգօլ, ես ալ քեզի կ'ըսեմ որ դու տխմարին մէկն ես, թէ Անտրէ թաղաւորին հետ աղէկ չէ, և թէ քեզ հիմա պիտի առեանգել տամ՝ եթէ ուզածիս պէս զիս մտիկ չընես . կը լսես, ի՞՞՞՞ աղջիկ :

— Օ՛, օ՛, տէր իմ, ոչ անմիտ եմ ոչ անբան . մտիկ կ'ընեմ՝ նակայն զգոյշ կը մնամ :

— Լաւ : Հիմա կ'երթաս Պ. տը Պօզիրի հետ փախտեան ծրագիրդ կ'որոճաս :

— Բայց ինչպէս ինքզինքս այդ վտանգին ենթարկեմ, պարոն :



մարտիկացի, քանի որ դուք իսկ կ'ըսէք թէ կրնայ ըլլալ որ օր  
բիրորն արթննայ, զիս ուզէ, զիս կանչէ, ինչ զիսնամ, շատ մը  
բաներ՝ որոց վրայ ես խորհած չունէի առաջ, բայց դուք նախա-  
տեսեր էք, աէր իմ, դուք որ փորձառու անձ մ'էք :

Ռիշլիէօ երկրորդ անգամ մ'ալ շրթերը խածաւ՝ բայց առաջի-  
նէն աւելի սառտիկ :

— Լաւ, եթէ ասոր վրայ խորհեցայ, անօրէն սղջիկ, ասոր  
առաջքն առնելու վրայ ալ խորհեցայ :

— Եւ ինչպէս պիտի արդիւնէք օրիորդը որ զիս չկոչէ :

— Արթնալը արդիւնելով :

— Բա՛, զիշերը տասն անգամ կ'արթննայ, այդ անկարելի է :

— Նէ՛ ալ իմ հիւանդութիւնս ունի, ըսաւ Ռիշլիէօ հանդարտ  
կերպարանքով մը :

— Չեր հիւանդութիւնը, կրկնեց Նիզօլ ինդալով :

— Անշուշտ, ինչու որ ես ալ զիշերը տասն անգամ կ'արթննամ :

Միայն թէ ես դարման կը փնտրեմ այս քնատու թեանց : Նէ՛ ալ  
պէտք է որ ինձի պէս ընէ, ասպ թէ ոչ՝ դու ընել կու տաս իրեն :

— Ըսէք նայիմ, ինչպէս, կ'ազաչեմ, տէր իմ :

— Իրիկունները ինչ կը խմէ տիրուհիդ չպատկած :

— Ինչ կը խմէ :

— Այո, այսօր այս կերպ նորաձեւութիւն մը կայ ծարաւն ան-  
ցընելու համար. ոմանք նարնջաջուր կամ լեմոնաջուր կը խմեն,  
այլք թուրինջ խոտին ջուրը՝ ոմանք ալ . . .

— Օրիորդը իրիկունը պատկած ատեն դաւաթ մը սպորդ ջուր  
կը խմէ, երբեմն մէջը քիչ մը շաքար և նարնջի ծաղիկ դնելով  
եթէ ջրդերը հիւանդ են :

— Ո՛հ, շատ աղէկ, ըսաւ Ռիշլիէօ, ինձի պէս է, ուրեմն իմ  
դեղս անոր լիովին պիտի յարմարի :

— Ինչպէս :

— Անշուշտ. տեսակ մը հեղուկէ կաթիլ մը կը դնեմ իմ ըմ-  
պելիքիս մէջ, և ամբողջ զիշերը կը քնանամ :

Նիզօլ կը փնտռէր, կը մտածէր թէ ո՞ր կրնար յանգիլ մա-  
րաջախտին սոյն դեսպանագիտութիւնը :

— Պատասխան չեն տար, ըսաւ :

— Ար մտածեմ թէ օրիորդը ձեր ջրէն չունի :

— Ես կու տամ քեզի :

— Ա՛հ, ա՛հ, ըսաւ Նիզօլ մտքէն, որ վերջապէս լոյս մը կը  
նշմարէր :

— Անկէ երկու կաթիլ կը դնես տիրուհիդ դաւաթին մէջ,  
երկու կաթիլ, կ'իմանաս, ոչ աւելի, ոչ պակաս, և տիրուհիդ պի-  
տի քնանայ, այնպէս որ քեզ չպիտի կոչէ և հետևաբար խոյս  
տալու ժամանակ պիտի ունենաս :

— Ո՛հ, եթէ ընելիքս միայն այդ է՝ դժուարին բան մը չէ :

— Ուրեմն այն երկու կաթիլը պիտի լեցընես :

— Այո :

— Խօսք կու տամ :

— Բայց, ըսաւ Նիզօլ, կարծեմ թէ ես շահ մ'ունիմ այն՝ ս  
ընելու, և, ասկէ զատ, օրիորդին վրայէն այնպէս պիտի գոցեմ . . .

— Չէ, ըսաւ Ռիշլիէօ աշխուժիւ : Ահա այդ բնաւ պէտք չէ  
որ ընես : Ընդհակառակը՝ անոր սենեկին դուրս բաց պիտի թողուս :

— Ա՛հ, ըրաւ Նիզօլ ներսէն պայթելով :

Նիզօլ հասկցեր էր : Եւ Ռիշլիէօ քաջ զղաց :

— Ամենն այս է, հարցոց Նիզօլ :

— Ամենն այս է : Հիմա զրնաս երթալ զինուորականիդ ըսել որ  
իւր ծրարը պատրաստէ :

— Գծրազդարար, տէր իմ, պէտք չունիմ անոր ըսելու որ քսակն  
հետն տունէ :

— Գիտես որ այդ ինձ կը վերաբերի :

— Այո, կը յիշեմ, տէր իմ, որ բարեսիրարար . . .

— Ըսէ նայինք, որչափ կ'ուզես, Նիզօլ :

— Ինչ ընելու համար :

— Այն երկու կաթիլ ջուրը լեցընելու համար :

— Այո երկու կաթիլ ջուրը լեցընելու համար, տէր իմ, քա-  
նի որ դուք կը վստահացընէք զիս թէ իմ շահու համար պիտի ը-  
նեմ՝ արդարութիւն չէ որ ինձ վճարէք իմ շահու համար ընելիք մէկ

գործիս պատճառաւ : Բայց օրիորդին դուռը բաց թողլու համար  
տէր իմ, զիտցած եղիբ որ կըր գումար մը պէտք է ինձ :

— Լմացուր, թիւդ ըսէ :

— Ինձ քսան հազար ֆրանք պէտք է, տէր իմ :

Ռիշլիէօ սարսուեցաւ :

— Նիգօլ, հեռուն պիտի երթաս, ըսաւ հառաչելով :

— Այնպէս պիտի ըլլայ, տէր իմ, վասն զի կ'սկսիմ կարծե-  
լու ձեզի պէս թէ ետեւէս պիտի իյնան : Բայց ձեր քսան հազար  
ֆրանքովը ճամբայ կ'առնեմ :

— Գնա Պ. աը Պօզիրին իմաց տուր, Նիգօլ. յետոյ դրամը  
կը համրեմ քեզի :

— Տէր իմ, Պ. աը Պօզիրը կարի դժուարահաւան է, և ըսա-  
ծիս չպիտի հաւտայ՝ եթէ ապացոյց չտամ իրեն :

Ռիշլիէօ զրպանէն ափ մը դրամատոմս հանեց :

— Ահա այս առ ձեռն (à compte), ըսաւ, և այս քսակին մէջ  
երկու հարիւր ոսկի կայ :

— Ուրեմն, տէր իմ, Պ. աը Պօզիրին խօսելէս ետք հաշիւը  
պիտի ընէք և մնացածը տմք :

— Ոչ, հիմա, անմիջապէս : Գու տնտեսագէտ աղջիկ մ'ըլլա-  
լով, Նիգօլ, երջանիկ պիտի ըլլաս :

Եւ Ռիշլիէօ զրամատոմսերով, ոսկիներով և կէս ոսկիներով  
խոստացած գումարը լրացուց :

— Է՛, ճիշդ չէ՛ :

— Ճիշդ ըլլալու է, ըսաւ Նիգօլ : Հիմա, տէր իմ, զլխաւոր  
բանը չունիմ :

— Զո՞ւրը :

— Այո, տէր իմ, անշուշտ շիշ մ'ըլլալու է քովերնիդ :

— Իմն քովս է զոր միշտ վրաս կը սլահեմ :

Նիգօլ ծպտեցաւ :

— Նաև, ըսաւ, ամեն իրիկուն Գրիանօնի դուռը կը գոցեն, ու  
ես բանալի չունիմ :

— Իբրև առաջին ազատորդի՛ ես ունիմ բանալի մը :

— Ա՛հ, իրա՞ն :

— Ահաւասիկ :

— Ո՛րքան յաջող կ'երթայ այս ամենը, ըսաւ Նիգօլ, կարծես  
թէ բոլորն ալ հրաշք են : Այժմ, մնաք բարեաւ, պարոն դուքս :

— Ի՞նչ, մնաք բարեաւ :

— Անշուշտ. ձեզ չպիտի տեսնեմ կրկին, տէր իմ, վասն զի  
օրիորդը քնացածին պէս պիտի մեկնիմ :

— Ճիշդ է : Երթաս բարեաւ, Նիգօլ :

Եւ Նիգօլ քթին տակէն խնդալով աներևոյթ եղաւ մութին մէջ  
որ կ'սկսէր թանձրանալ :

— Գարձեալ կը յաջողիմ, ըսաւ Ռիշլիէօ. բայց, ստուգիւ,  
կարծես թէ բաղլը շատ ծեր կը դտնէ զիս և ակամայ ինձ կը  
ծառայէ : Նիգօլ քթէս բռնեց. բայց ի՞նչ փոյթ՝ եթէ կարենամ  
վրէժս լուծել :

## ՃԺԹ

## Փ Ե Խ Ո Ի Ս

Նիգօլ խճամփա աղջիկ մ'էր. Պ. աը Ռիշլիէօէն դրամն ա-  
ռեր էր, կանխիկ առեր էր, պէտք էր արժանի ըլլալ այն վստա-  
հութեան :

Ուղղակի վանդակագատը վազեց, ուր ժամը եօթն քառասուն  
անցած հասաւ՝ փոխանակ եօթնուկէսին հասնելու :

Արդ, Պ. աը Պօզիր, զինուորական հրահանգի վարժուած ըլ-  
լարով ճշդատէր անձ մ'էր. տասն վայրկեանէն ՚ի վեր հոն կ'ըս-  
պատէր :

Գրեթէ տասն վայրկեանէն ՚ի վեր Պ. աը Գավէրնէյ ալ իւր աղ-  
ջիկէն զատուեր էր, և Պ. աը Գավէրնէյ մեկնելուն պէս՝ Անտրէ  
առանձին մնայեր էր : Առանձին մնալուն պէս՝ նորասի աղջիկը  
վարագործները դոյր էր :

Թիւլէր իւր սովորականին համեմատ վերնայարկէն Անտրէի կը նայէր կամ լաւ ևս՝ աչքով կը լսուէր զան : Միայն թէ դժուարին էր ըսել թէ նորատի աղջկան վրայ յառած աչերը սիրոյ թէ ասեւր թեան կայծեր կ'արձակէին :

Վարագայրները քաշուած ատեն՝ ալ Թիւլէրի տեսնելու բան մը չմնայ : Հետեւաբար ուրիշ կողմ նայեցաւ : Արիւշ կողմ նայած ասեն՝ Պ. տը Պօզիրի գարգմանակը տեսաւ և զինուորականը ճանչցաւ՝ որ սպասելով ապագուկը չյայտնելու համար փոքրիկ եղանակ մը կը սուլէր :

Տասն վայրկեան ետք՝ այսինքն ժամը եօթն քառասուն անցած Նիդօլ երեցաւ . Պ. տը Պօզիրի հետ քանի մը խօսք փոխանակեց՝ որ զլիսովը շարժում մ'ընելով ըսել ուզեց թէ լիովին հասկըցաւ ըսածը , և փոքր Գրիանօն սանող ծառուղոյն մէջէն հեռացաւ :

Նիդօլ ալ թռչունի մը թեթեւաշարժութեամբ ետ դարձաւ :

— Այ , բրաւ Թիւլէր , պարոն զինուորականը և օրիորդ սենեկապանուհին իրարու ըսելու կամ ընելու բան մ'ունին՝ որուն համար կը վախնան որ մէկը չտեսնէ . ըսա :

Թիւլէր այլ ևս հետաքրքիր չէր Նիդօլի մտին . միայն թէ ; զգալով որ այն աղջիկը բնական թշնամի մ'է իրեն՝ կը ջանար անոր բարոյականին դէմ խել մ'ապացոյցներ զիղելու՝ որոնցմով կարենար աներկբայ յաղթել Նիդօլի՝ եթէ Նիդօլ իւր վրայ յարձակէր :

Թիւլէր չէր երկրայեր որ քիչ ասինէն պատերազմ պիտի բացուէր , և իբր հեռաստես զինուոր՝ պատերազմի պաշարք կը գիզէր :

Նիդօլի ժամագրութիւնը մարդու մը հետ ; այն ալ նոյն իսկ Գրիանօնի մէջ՝ այնպիսի դէնք մ'էր որ Թիւլէրի պէս խեղացի թշնամի մը անփոյթ չգանուիր ձեռք ձգելու , մինչդեռ Նիդօլի բրածին պէս անխոհեմութեամբ իւր ստքը կը բերէին : Հետեւաբար Թիւլէր ուզեց ականջի վկայութիւնն ալ աչաց վկայութեան վրայ յաւելուլ , և անոնց խօսած ատեննին զիրենք վաանդի ենթարկող այնպիսի խօսք մը ձեռք ձգել՝ զոր կարենար նորատի աղջկան դէմ հանել յաղթանակաւ կուտին ատեն :

Աստի թեթեւօրէն վար իջաւ վերնայարկէն , խոհանոցին նրբանց-

յը մնաւ և մատուռին փոքր սանդուխէն պարտէզ հասաւ : պարտէզն հասնելուն պէս Թիւլէր ալ վախնալու բան մը չունէր , բոլոր թաքստոյնները զիտէր՝ ինչպէս որ աղուէսը իւր թառուտը զիտէ : Թմրիններուն ներքեւէն , յետոյ ծառերուն երկայնութեանը սահեցաւ . սպա թառուտ մը հասաւ որ քսան քայլ հեռի էր այն տեղէն՝ ուր Թիւլէր կը յուսար ու Նիդօլը գտնէ :

Արդարև Նիդօլ հոն էր :

Հաղիւ թէ Թիւլէր թառուտին մէջ տեղաորուեր էր՝ զարմանալի ձայն մ'եկաւ ականջին . քարին վրայ ոսկին հանած ձայնն էր , այն մետաղեայ հնչումն էր՝ որուն վրայ իրականութենէն զատ՝ ոչինչ կրնայ ճիշդ գողափար մը տալ :

Թիւլէր օձի մը նման սողակեցաւ տանեձև պատին վրայ ուր շեփորակներու ցանկ մը կար , որ մայիսի ամսուն մէջ անոյշ հոտը կը սփռէր և ծաղիկները կը ցնցէր անցորդներուն վրայ՝ որոնք մեծ Գրիանօնը փոքրէն զատող ծառուղոյն պատին երկայնութեանը կ'երթային :

Հոն հասած ասեն , Թիւլէրի աչքը մութի վարժուած ըլլալով , Նիդօլը տեսաւ որ վանդակապատին ներսի կողմը քարի մը վրայ և Պ. տը Պօզիրի ձեռքը չհասնելու շփ հեռու , Պ. տը Աիշլիէօի տուած քսակը կը պարպէր :

Խոշոր ոսկինները փայլելով փալփլելով կը ցաթկէին , մինչդեռ Պ. տը Պօզիր աչքը կրակ կտրած և ձեռքը դողալով ուշադիր կը նայէր Նիդօլի և ոսկիններուն , ու չէր հասկընար թէ ինչպէս Նիդօլ ձեռք անցուցեր էր զանոնք :

Նիդօլ խօսեցաւ :

— Սիրելիդ իմ , պարոն տը Պօզիր , ըսա , շատ անգամ ինձ առաջարկած ես որ զիս առեանդես :

— Եւ նոյն իսկ քեզի հետ ամուսնանամ , գուցեղ զինուորականը այլ յայլմէ եղած :

— Ա՛հ , սիրելիդ իմ՝ պարոն , ըսա նորատի աղջիկը , այդ կէտին վրայ ետքէն կը վիճինք . հիմա փախչիլը գլխաւոր կեան է : Երկու ժամէն կրնանք փախչիլ :

— Տասն վայրկեանէն՝ եթէ կ'ուզես :

— Ո՛հ, առաջ ընկեր ունիմ, և ընկերք երկու ժամէն կրնայ ըլլալ :

— Երկու ժամէն ըլլայ տասն վայրկենէն ըլլայ՝ քու հրամանացդ պատրաստ եմ, անուշիկս :

— Լա՛ւ, առ այս յիսուն ոսկին : Նորատի աղջկը յիսուն ոսկի համրեց և վանդակապատին մէջէն Պ. տը Պողիբի երկնցուց՝ որ առանց համրելու բաձկննակին դրպանը լեցուց, — և ժամու կէսէն, շարայարեց Նիգօլ, կառքով մը հոս գտնուէ :

— Բայց . . . , առարկեց Պողիբ :

— Ո՛հ, եթէ չես ուզեր՝ համարենք թէ խօսք մը չըրինք մէջերոնիս, և դարձուր ինձ յիսուն ոսկիս :

— Ես չեմ ընկրկիր, սիրելիդ իմ Նիգօլ, միայն թէ ապագայէն կը վախնամ :

— Որո՞ւ համար :

— Քեզի համար :

— Ինձի՞ համար :

— Այո : Յիսուն ոսկին հատած ատեն, և վերջապէս պիտի հատենի, ցաւալի վիճակ մը պիտի ունենաս, Գրիանօնը սիրտի փնտուես, պիտի . . .

— Ոհ, որչափ փափուկ սիրտ ունիս, սիրելիդ իմ պարոն տը Պողիբ : Օ՛ն, Օ՛ն, բանէ մը մի վախնար, ես այն կիներէն չեմ որ թշուառ կ'ընեն, թող խղճիդ չգպչի, ասկէ դատ, այս յիսուն ոսկիէն ետքն ալ կը տեսնենք :

Եւ Նիգօլ քսակին մէջ մնացած միւս յիսուն ոսկին ալ սկսաւ հնչեցընել :

Պողիբի աչերը փոսփորի պէս կը փայլէին :

— Քեզի համար ինքզինքս չկրակը կը նետեմ :

— Ո՛հ, կեցի՛ր, կեցի՛ր, այդչափը ուզող չկայ քենէ պարոն տը Պողիբ : ուստի որոշած ենք, մեկուկէս ժամէն կառքը, երկու ժամէն փախուստը :

— Այո, որոշեցինք, գոշեց Պողիբ Նիգօլին ձեռքէն բռնելով և վանդակապատին մէջէն քաշելով որպէս զի պագնէ :

— Չայն մի հաներ, ըսաւ Նիգօլ, խելքիդ եկաւ . . .

— Ոհ, սէրս է ընել տուողը :

— Հի՛մ, ըրաւ Նիգօլ :

— Չեն հաւտար ըսածիս, հողուոյս հատորը :

— Ինչո՞ւ չէ, կը հաւատամ : Նայէ որ ձիերը լաւ ըլլան :

— Ո՛հ, անհող եղիբ :

Ասոր վրայ զատուեցան :

Բայց որպէ մ'եսք Պողիբ ետ գարձաւ կերպարանքին վրայ վախ մ'ունենալով :

— Բըսք, բըսք, ըրաւ :

— Է՛, ինչ կայ, հարցուց Նիգօլ՝ որ արդէն հեռացած ըլլալով թաւական՝ ձեռքովը բերանը դոցեց որպէս զի ձայնն առանց տարածելու՝ ուզած հեռաւորութեանը հասցընէ :

— Հապա վանդակապատը, հարցուց Պողիբ, վրայէ՞ն պիտի անցնիս :

— Ինչ ապուշ է, մըմուաց Նիգօլ որ այս միջոցին Թիլպէրէն տասը քայլ հեռու կը գտնուէր :

Յետոյ, բաձր ձայնով,

— Բանալին քովս է, ըսաւ :

Պողիբ զարմանալով «՛՛ մը հանեց բերնէն և այս անգամ վաղելով գնաց :

Նիգօլ զլուխը ծռած և վաղելով տիրուհւոյն քով դարձաւ :

Թիլպէր առանձին մնալով հետևեալ չորս հարցումներն ըրաւ ինքնսիրեն .

« Ինչո՞ւ համար Նիգօլ խոյս կու տայ Պողիբին հետ զոր չսիրէր :

« Ինչո՞ւ համար Նիգօլ այնքան մեծ դումար մ'ունի :

« Ինչո՞ւ համար վանդակապատին բանալին Նիգօլի քողի է :

« Ինչո՞ւ համար Նիգօլ որ կրնայ անմիջապէս խոյս տալ՝ Աստրէի քով կը դառնայ :

Թիլպէր պատասխան մը կը գտնէր այս հարցման, « Ինչո՞ւ Նիգօլ դրամ ունի : » Բայց միւս հարցումներուն պատասխան չէր գտնէր :

Ուստի իւր սրամտութեամբ պատասխան չգտնելով, իւր բնական հետաքրքրութիւնը կամ ունեցած կասկածը այնքան շատցան որ օգին պարտութեանը չնայելով՝ որոշեց գիշերը բաց օդին մէջ անցընել :

խոնաւ ծառերուն ներքև , այս տեսարանին ելքին սպասելու համար որուն սկզբնաւորութիւնը տեսեր էր :

Անտրէ իւր հայրը մինչև Գրիանոնի դուռը տարեր էր : Առանձին և մտախոհ դարձած ատեն Նիգօլ վազելով դուրս ելաւ այն ծառուղիէն որ կ'առաջնորդէր այն երեւելի վանդակապատին քով՝ ուր Նիգօլ բոլոր պատրաստութիւններն՝ ըրեր էր քիչ մ'առաջ Պ. տը Պօգիւրի հետ :

Նիգօլ իւր տիրուհին տեսնելով կեցաւ , և Անտրէի ըրած նշանին վրայ՝ անոր ետեւէն վեր ելաւ և դէպ' անոր սենեակը գնաց :

Երեկոյեան ժամը ութուկէսն ըլլալու էր : Սովորականէն աւելի շուտ գիշեր եղեր և մութը թանձր էր , վասն զի մեծ սև ամպ մը հարաւէն հիւսիս վազելով՝ բոլոր երկինքը սպտեր էր , այնպէս որ Վերսայէն անդին մեծ անտառներուն վերեր , աչք առածին չափ կը տեսնուէր տխուր քողը որ հետզհետէ կը գոցեր քիչ մ'առաջ իրենց կապուտակ գմբէթին վրայ փայլող բոլոր աստղերը :

Ծայր ու տկար հով մը դետինը քսուելով կ'անցնէր տաք տաք փշելով ծարաւի ծաղիկներուն՝ որոնք գլուխնին կը ծռէին՝ դողցես երկնքէն խնդրելու համար անձրևի կամ ցօղի ողորմութիւնը :

Անտրէ մթնոլորտին այս սպառնալիքը տեսնելով՝ բնաւ չաճապարեց , ընդհակառակը՝ նորատի աղջիկը տխուր և խոր մտածման մէջ թաղուած՝ դողցես ահամայ ոտքը կը դնէր սանդուխին իւրաքանչիւր աստիճանին վրայ որ իւր սենեակը կ'առաջնորդէր , և իւրաքանչիւր պատուհանին առջև կենալով երկինքն կը նայէր՝ որ տիրութեան մասին իրեն շատ կը նմանէր , և այս կերպով սենեակը մանելը կ'ուշացընէր :

Նիգօլ անհամբեր , Նիգօլ զայրացած , Նիգօլ որ կը վախնար թէ իւր տիրուհոյն մէկ քմահաճոյից պատճառաւ ժամանակը չանցնի , ցած ձայնով այն յիշոցները կը մումուար՝ զորս անխնայ կ'ընեն սպասաւորները այն տերերուն՝ որոնք անխոհեմութեամբ շանոց քմահաճոյքը զօհելով՝ իրենցը՝ ի դորձ կը դնեն :

Վերջապէս Անտրէ՝ սենեկին դուռը մղեց , թիկնաթուռի մը վրայ իյնալով քան թէ նստելով , մեղմովին հրամայեց Նիգօլի որ բակին վրայ նայող պատուհանը կէս մը բանայ :

Նիգօլ հնաշանդեցաւ :

Յետոյ , տիրուհոյն քովը գալով՝ հողածու գէմքով մը զոր շատ աղէկ կը կեղծէր շողաքորթ աղջիկը ,

— Զըլլայ որ օրիորդը հիւանդ ըլլայ այս իրիկուն , ըսաւ : Օրիորդին աչերը կարմրած և ուռած են , թէև փայլուն : Արածեմ թէ օրիորդը շատ պէտք ունի հանդէլու :

— Այնպէս կը կարծես , ըսաւ Անտրէ որ մտիկ չէր ըրեր : Եւ ոտքերն անփութօրէն գորգի մը վրայ երկնցուց :

Նիգօլ տիրուհոյն այս դերքը՝ հանուեցընելու հրաման նկատելով սկսաւ անոր զլխադրին ժապաւեններն ու ծաղիկները լուծել , զորս ամենէն ճարտար քակող մը քառորդէ մ'առաջ չէր կրնար քակել :

Անտրէ այն միջոցին խօսք մը չհանց բերնէն : Նիգօլ իւր անձնիշխան կամաց թողուելով ինչպէս որ կ'ըսեն՝ գործը լափեց , և ուղածին պէս Անտրէի մաղերը քաշքշեց թէև՝ բայց Անտրէ բնաւ ձայն չհանց որովհետև սաստիկ մտախոհ էր :

Գիշերուան զարդարանքը աւարտած ատեն՝ Անտրէ երկրորդ օրուան համար հրամաններ տուաւ : Առաւօտուն կանուխ երթալու էր Վերսայէն բերելու էր քանի մը զրքեր զոր եղբայրը քրոջն համար բերել տուած ըլլալու էր , նաև իմաց տալու էր յարգարչին որ Գրիանոն գալով դաշնակը յարգարէր :

Նիգօլ հանդարտութեամբ պատասխանեց թէ եթէ զիշերը զինքը չարթնցընեն՝ առաւօտուն կանուխ կ'եղնէ՝ և օրիորդը տակաւին չարթնցած բոլոր պատուիրածները կը կատարէ :

— Վաղն ալ , շարայարեց Անտրէ ինքնիրենը խօսելով , վաղն ալ Փիլիպի նամակ կը գրեմ , ասով քիչ մը կը թեթևամ :

— Ի՛նչ որ ալ ըլլայ , ըսաւ Նիգօլ ինքնիրեն , նամակը տանողը ես չպիտի ըլլամ :

Եւ այս խորհրդածութեամբ նորատի աղջիկը որ տակաւին բոլորովին մոլորեալ չէր՝ սկսաւ տխրիլ որ առաջին անգամն ըլլալով պիտի զատուէր այս աղնիւ տիրուհիէն՝ որուն քով իւր միտքն ու սիրտը արթնցեր էին , Անտրէի յիշատակը այնքան ուրիշ յիշատակներ միտքը կը բերէր՝ որ զայն ճմլելով անցնիլը բոլորովին թօթափել էր այն շղթան՝ որ նոյն օրէն սկսելով մինչև իւր սողայութեան օրերուն կը հասնէր :

Մինչդեռ այս երկու աղջիկները, թէ՛ դիրքով թէ՛ բնատրու-  
թեամբ իրարմէ տարբեր, իրարու քով կը մտածէին իրարմէ շատ  
տարբեր առարկաներու վրայ, ժամանակը խոյս կու տար, և Ան-  
տրէի փոքրիկ ժամացոյցը որ միշտ Գրիանծնի ժամացոյցէն առաջ  
կըլլար՝ ինը կը զարնէր :

Պօզիր ժամանադրութեան տեղն ըլլալու էր, և Նիզօլ կէս ժամ  
ունէր միայն երթալու իւր սիրահարը գտնելու համար :

Արցածին չափ շուտ հանուեցուց իւր տիրուհին քանի մը հառաչ-  
ներ արձակելով՝ որոց ուշադրութիւն չըրաւ Անտրէ : Երկայն պարե-  
զօտ մ'անցուց անոր վրայ, և որովհետեւ Անտրէ միշտ մտախոհ ա-  
չերը ձեղունն յառած անշարժ կեցեր էր, Նիզօլ Ռիշլիէօի տուած  
շիշը կուրծքէն հանեց, գաւաթի մը մէջ երկու կտոր շաքար դրաւ,  
զայն լուծելու համար պէտք եղածին չափ ջուր դնելով . յետոյ առանց  
վարանելու և իւր ունեցած զօրաւոր կամքովը՝ շիշին հեղուկէն եր-  
կու կաթիլ կաթեցուց այն ջրին մէջ՝ որ իսկոյն յուզուեցաւ, և առջի  
բերան առած արեակնի գոյնը հետզհետէ անհետ եղաւ :

— Օրիորդ, ըսաւ Նիզօլ այն ատեն, ջուրը պարբառտ է,  
զգեսաները ծալած են, կանգեղը վառած է : Ինչպէս որ զիտէք  
վաղն առտու կանուխ պիտի ելնեմ, երթամ պառկիմ :

— Այո, պատասխանեց Անտրէ անմտադիր :

Նիզօլ խոնարհութիւն ըրաւ, վերջին հառաչ մ'ալ արձակեց  
որ միւսներուն նման անլսելի մնաց, և նախասենեակն առաջնոր-  
դող ապակեօր դուռը ետեւէն դոցեց : Բայց փոխանակ իւր սենեակն  
երթալու որ, ինչպէս որ զիտենք, նրբանցքին կից խուց մ'էր լու-  
սաւոր՝ Անտրէի նախասենեակին վրայ, թեթեօրէն վազեց նրբանց-  
քին դուռը իւր խուցին դրան շրջանակին գէմ մղեց որպէս զի  
Ռիշլիէօի տուած հրահանգը լիովին կատարած ըլլայ :

Յետոյ, դրացիներուն ուշադրութիւնը չըրգուելու համար, իւր  
փոքրիկ ոտից ծայրին վրայ կոխելով՝ պարտէզն առաջնորդող սան-  
դուխէն վար իջաւ, դրանդէն ոստեց, և վազելով գնաց վանդա-  
կապատին առջև Պ. ար Պօզիրը գտնելու :

Թիլպէր իւր զիտարանէն չէր դատուեր : Նիզօլէն լսած ըլլա-  
լով որ երկու ժամէն պիտի դառնար՝ կ'սպասէր : Սակայն, որովհե-

տև տան վայրկեան կ'անցնէր ժամանակը, սկսաւ կասկածիլ որ թե-  
րևս չգայ Նիզօլ :

Յանկարծ տեսաւ որ վազելով կու գայ, այնպէս որ կարծես թէ  
ետեւէն մէկն ինկած է :

Նիզօլ վանդակապատին մօտեցաւ, բանալին երկաթէ ձողերուն  
մէջէն Պօզիրի երկնցուց . Պօզիր դուռը բացաւ, Նիզօլ դուրս վա-  
զեց, և վանդակապատին դուռը ծանր ձռինչով մը դոցուեցաւ :

Յետոյ բանալին փոսին մէջ նետուեցաւ, Թիլպէրի գտնուած տե-  
ղին ճիշդ ստորոտը . երիտասարդն անոր թնդիւնը լսեց, և ինկած  
տեղը նշմարեց :

Նիզօլ և Պօզիր ճամբայ կ'առնէին նոյն միջոցին . Թիլպէր անոնց  
հեռանալը կը լսէր, և քիչ մ'ետք չէ թէ կառքի մը շառաչիւնը՝  
ինչպէս որ Նիզօլ ուզեր էր՝ այլ ձիւ մը գրնդիւնը, անշուշտ Նի-  
զօլի բրած յանդիմանութիւններէն քիչ մ'ատեն կորսուելէ ետք  
ըստ որում իբրև գքուհի դուրս ելնել պիտի ուզէր, ձիւ մը՝ ո-  
րուն չորս սլայտերուն ձայնը նախ հօղին՝ ասպա ճամբուն սալարկին  
վրայ լուեցան :

Թիլպէր շունչ առաւ :

Թիլպէր աղատ էր, Թիլպէրի գլխէն գացեր էր Նիզօլ, այս-  
ինքն իւր թշնամին : Անտրէ առանձին էր . թերևս երթալու ատեն  
Նիզօլ բանալին դրանը վրայ թողեր էր . թերևս Թիլպէր մինչև  
Անտրէին քով կրնար երթալ :

Այս գաղտնիքին վրայ կրակոտ երիտասարդը ոստեց՝ կասկածի  
և անստուգութեան, հետաքրքրութեան և տենչանաց բոլոր կատա-  
ղութեամբ :

Եւ Նիզօլի եկած ճամբուն հակառակ կողմն երթալով՝ սպասա-  
ւորաց բնակարանին կողմն սկսաւ յառաջանալ :

ճԻ՛

ԿՐԿՆԸԿԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անտրէ առանձին մնալով իւր վրայ եկած այն բարոյական թմրու-  
թեանէն տակաւ առ տակաւ սթափեցաւ, և մինչդեռ Նիզով Պօզի-  
րին ետեւ ձիուն դաւակին վրայ խոյս կու տար՝ Անտրէ ծունր  
գրած ջերմեւանդ կ'աղօթէր Փիլիպի համար, աշխարհիս մէջ այն  
միակ էակը՝ զոր ճշմարիտ սիրով և սրտանց կը սիրէր :

Յոյսը բոլորովին Աստուծոյ վրայ գրած կ'աղօթէր :

Սովորաբար Անտրէի աղօթքը քովէ քով շարուած բառերէ չէր  
բաղկանար, սեսակ մը երկնային յափշտակութիւն էր այն յորում  
հոգին մինչև Տիրոջը կը բարձրանար և անոր հետ կը խառնուէր :

Նիւթէն զատուած հոգւոյն եռանդուն պաղատանացը մէջ բնաւ  
անձնասիրութեան խառնուրդ չկար : Անտրէ ինքզինքը կերպով մը  
թողեր էր, նման այն նաւաբեկեալին՝ որ յոյսը կտրած՝ այլ ևս  
ոչ թէ իրեն՝ այլ որք մնալու սահմանուած կնոջն ու տղոյը հա-  
մար կ'աղօթէ :

Անտրէի այս անբաժան վիշտը եղբօրը մեկնեւէն ՚ի վեր երևան  
ելեր էր. և սակայն վիշտն անխառն չէր. աղօթքին նման երկու  
որոշ տարրերէ կը բաղկանար՝ որոց մին լաւ չէր հասկընար նորա-  
տի աղջիկը :

Մտալուտ աղէտի մը գողցես նախազգացումն էր այն : Սպիտա-  
ցեալ վէրքի մը երբեմն յանկարծ ազդած սուր ցաւին նման զգա-  
ծում մ'էր : Շարունակական ցաւն անցած է՝ բայց անոր յիշատա-  
կը երկար ատեն կը մնայ և ցաւին ներկայութիւնը՝ կ'իմացընէ՝  
ինչպէս երբեմն նոյն իսկ վէրքը կ'ընէր :

Անտրէ զբացածն ինչ ըլլալը դիտնալու փորձ անդամ չըրաւ .  
ինքզինքը բոլորովին Փիլիպի վրայ մտածելու տալով՝ զինքն յու-  
զող տպաւորութեանց ամենքն ալ այն սիրելի եղբօր վերադրեց :

Յետոյ ոտք ելաւ, իւր պարզ գրատունն կազմող գրքերէն հատ  
մ'առաւ, ճրագն իւր մօտը դրաւ և անկողին մտաւ :

Ընտրած գիրքը, կամ լաւ ևս՝ ըստ դիպաց՝ առած գիրքը բու-  
տաբանական բառգիրք մ'էր : Յայտնի է որ, այն գիրքը անոր ու-  
շը գրաւելու յարմար չըլլալով՝ ընդհակառակը զայն թմրեցուց :  
Իսկոյն՝ առ ջի բերան թափանցիկ բայց հետզհետէ թանձրացող ամպ  
մը աչերուն վրայ տարածուեցաւ : Նորատի աղջիկը սգահ մը քնոյ  
դէմ մաքառեցաւ, խուսափող գողափարը քանի մ'անդամ ձեռք  
անցուց՝ բայց վերատին խոյս տուաւ . յետոյ ճրագը մարելու հա-  
մար գլուխը երկնցուցած ատեն, Նիզովի պատրաստած ջրով դա-  
ւաթը նշմարեց . բաղուկն երկնցուց, մէկ ձեռքովն առաւ, և միւս  
ձեռքովը՝ կիսովին լուծեալ շաքարը զրգալով մը խառնեց, և ար-  
դէն զրեթէ կէս մը քուն՝ դաւաթը բերնին մօտեցուց :

Յանկարծ, և մինչդեռ շրթերն այն հեղուկին պիտի հպէին,  
տարօրինակ շարժում մը ձեռքը ցնցեց, նոյն ատեն տամուկ ծան-  
րութիւն մը ուղեղին վրայ իջաւ, և իւր ջիղերուն վրայ սրացող  
հոսանքի թէն Անտրէ զգաց սոսկալով թէ անձանթ զգայութեանց  
այն գերբնական արշաւանքն էր որ արդէն շատ անգամ իւր գորու-  
թեանը յաղթած և իմացականութիւնը խորտակած էր :

Գաւաթը պնակին վրայ դնելու միայն ատեն ունեցաւ, և զրեթէ  
իսկոյն, կիսաբաց բերնէն հառաչանք մը հանելէ՝ զատ ուրիշ տըր-  
տունջ մը չընելով, չկրցաւ ձայնը հանել, տեսնել, մտածել, և  
իբր շանթահար մնաց ինկաւ անկողնին վրայ՝ մահանման թմրու-  
թեան մը ճարակ ըլլալով :

Բայց այս տեսակ մը չքութիւնը մէկ գոյութենէ միւս գոյութեան  
անցնելու մէկ ժամանակաւոր անցքն եղաւ :

Գողցես ընդ միշտ գոցուած աչերովը մեռելի կերպարանք մ'ու-  
նենալով, յանկարծ ոտք ելաւ, աչերը բացաւ սոսկալի կերպով  
մը յառած, և դերեզմանէ իջնող մարմարէ արձանի մը նման ան-  
կողնէն իջաւ :

Այլ ևս կասկած չկար, Անտրէ այն հրաշալի քնովը քնացեր  
էր որ արդէն քանի մ'անգամ իւր կեանքն առկախեր էր :

Սենեկէն անցաւ, ապակեւոր դուռը բացաւ և կենդանի արձանի  
մը իրիտ ու հաստատուն կերպարանքովը նրբանցքն հասաւ :

Սանդուխը առաջին ելաւ, առանց վարանելու, առանց անապարհելու քայլ առ քայլ իջաւ. յետոյ դրանդին վրայ երեցաւ :

Մինչդեռ Անտրէ ոտքը սանդուխին վերի աստիճանը կը դնէր իջնելու համար՝ ժիլպէր ոտքը սանդուխին վարի աստիճանը կը դնէր ելնելու համար :

Ժիլպէր տեսաւ որ այն սպիտակ և հանդիսաւոր կինը կը յառաջանայ՝ զողոցես իւր դէմն ելնելու համար :

Ընկրկելով քաշուեցաւ առ ջեէն, և դնաց հովանոց մը մտաւ միշտ ընկրկելով :

Ժիլպէր կը յիշէր որ արդէն այնպէս տեսած էր Անտրէն Գաւերնէյի դղեակը :

Անտրէ ժիլպէրի առ ջեէն անցաւ, անոր քսուեցաւ իսկ՝ բայց չտեսաւ :

Պատանին ուժամասի, խուլած՝ կ'իթոտեալ ծնդանցը վրայ ինկաւ մնաց. կը վախճար :

Անտրէի այս տարօրինակ ելքը չկարենալով բանի մը տալ՝ աչքով անոր կը հետեւէր. սակայն միտքը տակն ու վրայ եղեր էր, արիւնը սաստկութեամբ քունքերուն կը զարնէր, աւելի յիմարուածեան մօտեցած էր քան թէ այն անտարբեր ողջմտութեան՝ որուն պէտք ունի դիտող մը :

Ուստի տերևներուն մէջ խոտին վրայ կ'ծկած մնաց և սկսաւ լրտեսել ինչպէս որ կ'ընէր այն աղէտալի սէրը սիրտը մտնելէն 'ի վեր :

Անտրէի դուրս ելնելուն դաղանիքն յանկարծ յայտնուեցաւ. Անտրէ ոչ յիմար էր և ոչ մոլորեալ՝ ինչպէս որ ժիլպէր կը կարծէր : Անտրէ այն պաղ ու դերեզմանական քայլովը ժամադրութեան մը կ'երթար,

Փայլակ մը երկինքն ահօսեց :

Ժիլպէր այն փայլակին կապուտադոյն լուսովը թմբխներու նսեմաստուեր ծառուղիին մէջ պահուած մարդ մը տեսաւ, և մրրկին բոցն որքան արագ սլ անցաւ՝ մութին մէջ այն մարդուն գունատ դէմքը և անկարգ զգեստները տեսաւ :

Անտրէ կը յառաջանար դէպ' այն մարդը որ մէկ ձեռքն երկնցուցած էր զողոցես զան իրեն ձգելու համար :

Արարած երկաթի պէս բան մը մտնելով ժիլպէրի սիրտը՝ ծնդանցը վրայ կանգնեցաւ աւելի լաւ տեսնելու համար :

Նոյն միջոցին ուրիշ փայլակ մ'անցաւ մութին մէջէն :

Ժիլպէր Պալամօն ճանչցաւ որ քրտնաթոր և փոշիով ծածկուած էր. Պալամօ՝ որ գաղտնի կերպով Գրիանօն մտեր էր, միով բանիւ Պալամօ՝ որ օձին թուչունը իրեն ձգելուն չափ անդիմադրելի կերպով Անտրէն իրեն կը ձգէր :

Պալամօն երկու քայլ մնացած՝ Անտրէ կեցաւ :

Պալամօ անոր ձեռքէն բռնեց : Անտրէ սարսուեցաւ :

— Կը տեսնես, հաբցոյ Պալամօ :

— Այո, պատասխանեց Անտրէ, բայց զիս այսպէս կոչելով քեզ մնաց որ զիս պիտի սպաննէիք :

— Ներեցէք, ներեցէք, ըսաւ Պալամօ. բայց պատճառն այն է որ խելքս զլուխս չէ, ինքզինքիս տէր չեմ, խելքիս կու գայ, կը մեռնիմ :

— Արդարև, վիշտ ունիք, ըսաւ Անտրէ Պալամօնի ձեռքին դպած ատեն անոր վիշտն հասկըցած ըլլալով :

— Այո, այո, վիշտ ունիմ, և կու գամ ձեռնէ սփոփանք գտնելու : Գուք միայն կրնաք զիս ազատել :

— Հարցուցէք :

— Գարձեալ կ'ըսեմ, կը տեսնէք :

— Ո՛հ, լիովին :

— Կ'ուզէք հետս իմ տունս գալ, կրնա՞ք :

— Կրնամ՝ եթէ ուզէք զիս մտքով առաջնորդել :

— Եկէք :

— Ա՛հ, ըրաւ, Բարիդ կը մտնենք, սյողոտային կը հետեւինք, փողոց մը կը մտնենք որ միայն մէկ կանգեղով մը լուսաւորուած է :

— Այն է. մտնենք, մտնենք :

— Նախասենեակ մը հասանք : Աջ կողմը սանդուխ մը կայ, բայց զիս պատին կողմը կը քշէք. պատը կը բացուի. սանդուխի աստիճաններ երևան կ'ելնեն . . .

— Ելէք, ելէք, մեր ճանքան այն է :

— Ա՛հ, սենեակ մը հասանք. առիւծի մորթեր, զէնքեր կայ՝ Տես, կրակարանին տախտակը կը բացուի :



- Անցնինք . ուր էք :
- Ջարմանալի սենեակ մը , անել սենեակ մը՝ որուն պատուհանները երկաթէ վանդակներ ունին , ո՛հ , ի՛նչպէս աակն ու վրայ է այս սենեակին մէջ ամեն բան :
- Բայց պարապ է , պարապ , այնպէս չէ :
- Պարապ է :
- Կրնա՞ք սենեակ այն անձն որ հոն կը բնակէր :
- Այո , եթէ կրնաք տալ ինձ բան մը որ անոր դպած ըլլայ կամ անորն ըլլայ :
- Առէք , ահաասիկ անոր մազերէն :
- Անտրէ մազերն առաւ և իրեն մօտեցուց :
- Ո՛հ , կը յիշեմ , ըսաւ , արդէն ես այս կինը տեսած եմ . Բարիզի կողմը խոյս կու տայ :
- Այն է , այն է , կրնա՞ք ըսել ինձ երկու ժամէ՛ ի վեր ըրածն ու ի՛նչպէս խոյս տալը :
- Կեցէք , կեցէք , այո , բազմոցի մը վրայ պառկեր է , կուրծքը կիսովին մերկ է վարի կողմը վէրքով մը :
- Նայեցէք , Անտրէ , նայեցէք , ալ մի դատուիք անորմէ :
- Քնացեր էր , կ'արթննայ , շուրջը բան մը կը փնտռէ , թաշկինակ մը կ'առնէ , աթուռի մը վրայ կե՛նէ , թաշկինակը պատուհանին երկաթէ ձողերուն կը կապէ : Ո՛հ , տէր Աստուած :
- Աւրեմն իրօք մեռնի՞լ կ'ուզէ :
- Ո՛հ , այո , այնպէս որոշեր է : Բայց այս մահէն կը սոսկայ : Թաշկինակը ձողերուն կապած կը թողու : Աւար իջի՛ր , ո՛հ , խեղճ կին :
- Ի՛նչ կայ :
- Ո՛հ , ի՛նչպէս յարգ արտասուք կը թափէ , սրբան վիշտ ունի , ի՛նչպէս բազուկները կը գալարէ , պատի մ'անկին կը փնտռէ որպէս զի գլուխը դարձնելով ջախջախէ :
- Ո՛հ , տէր Աստուած , տէր Աստուած , մրմնջեց Պալսամօ :
- Ո՛հ , կրակարանին կը դիմէ : Կրակարանը մարմարէ երկու առիւծ կը ներկայացընէ . գլուխը սլտի ջախջախէ՝ առիւծին գլխուն դարձնելով :

- Ետքը . . . ետքը . . . : Նայեցէք , Անտրէ , նայեցէք , այնպէս կ'ուզեմ :
- Կը կենայ :
- Պալսամօ շունչ առաւ :
- Կը նայի :
- Ինչի՞ կը նայի , հարցուց Պալսամօ :
- Առիւծին աչքին վրայ արիւն տեսաւ :
- Տէ՛ր Աստուած , տէ՛ր Աստուած , մրմնջեց Պալսամօ :
- Այո , արիւն , սակայն գլուխը հոն չզարկաւ : Ո՛հ , տարօրինակ բան . այս արիւնն անորը չէ , ձերն է :
- Այս արիւնն իմն , դուքեց Պալսամօ միտքը ցրուած :
- Այո , այո , ձերն է , ձերն : Գանակով մը , դաշոյնով մը մատերնիդ կտրեր էք , և ձեր արիւնոտ մատը առիւծին աչքին վրայ կոխեր էք : Կը տեսնեմ ձեզ :
- Ճշմարիտ է , ճշմարիտ է : Բայց ի՛նչպէս կը փախչի :
- Կեցէք , կեցէք , արիւնը կը դիտէ , կը մտածէ , յետոյ մատերնիդ կոխած տեղերնիւ նէ ալ կը կոխէ : Ա՛փ , առիւծին աչքը ետ կ'երթայ , զսպանակ մը կը շարժի : Կրակարանին տախտակը կը բացուի :
- Ի՛նչ խեղճ անխոհեմ մ'եմ եղեր , ի՛նչ խեղճ յիմար մ'եմ եղեր : Ես ինքզինքս մասնեցի :
- Եւ դուքս կ'ենէ , շարայարեց Պալսամօ , խոյս կու տայ :
- Ո՛հ , ներելու է այն խեղճ կնոջը , շատ թշուառ էր :
- Ո՛ւր է , ո՛ւր կ'երթայ , ետեէն գնա , Անտրէ , այնպէս կ'ուզեմ :
- Սպասեցէք , զէնքերու և մուշտակներու սենեակին մէջ պահ մը կը կենայ . պահարան մը բաց է . սովորաբար այն պահարանը պահուող արկղիկ մը սեղանի մը վրայ դրուած է : Արկղիկը ձանձնալով կ'առնէ :
- Ի՛նչ կայ այն արկղիկին մէջ :
- Կարծեմ ձեր թղթերը :
- Ի՛նչպէս է :
- Կասոյտ թաւիշով պատած , վրան ալ արծաթ դալեր , արծաթէ ձարմանդ , արծաթէ փականք :

— Ա՛հ, ըրաւ Պալսամօ սրտամուծեամբ ոտքը դետինը զարնելով, ուրեմն նէ՞ առեր է այն արկղիկը :

— Այո, այո, նէ : Կախասենեակը տանող սանդուխէն վար կ'իջնէ, դուռը կը բանայ, փողոցին դրան ետեի կոճիղ քաշելով դուռը կը բանայ և դուրս կ'երնէ :

— Շատ ո՛չ է :

— Ուշ ըլլալու է, վասն զի գիշեր է :

— Աւերի աղէկ, վերադարձէս քիչ մ'առաջ մեկնած ըլլալու է և թերևս ժամանակ կ'ունենամ անոր հասնելու : Ետեկն գնա, ետեկն գնա, Անտրէ :

— Տնէն դուրս ելնելուն պէս՝ յիմարի մը պէս կը վազէ. յիմարի մը պէս սլոզտան կը հասնի . . . : Կը վազէ . . . անգագար կը վազէ . . . :

— Ո՞ր կողմ :

— Պասգիլի կողմը :

— Միշտ կը տեսնեն զինքը :

— Այո, խելագարի մը կը հմանի. անցնողներուն կը զարնուի : Ձերջապէս կը կասի, ուր ըլլալը կ'ուզէ գիտնալ . . . : Կը հարցընէ :

— Ի՞նչ կ'ըսէ : Մտիկ ըրէ, Անտրէ, մտիկ ըրէ, Աստուծոյ սիրոյն, մէկ բառը չըլլայ որ կորսնցընես : Ըսիր որ կը հարցընէ :

— Այո, սեազգեստ մարդու մը :

— Ի՞նչ կը հարցընէ :

— Ոստիկանութեան տեղակալին հասցէն կը հարցընէ :

— Ա՛հ, ուրեմն զուր սպառնալիք մը չէ եղեր ըրածը : Ըսա՞ն հասցէն :

— Այո :

— Այժմ Ի՞նչ կ'ընէ այն կինը :

— Ետ կը դառնայ, խոտորնակի ճամբայ մը կը մտնէ. մեծ հրապարակէ մը կ'անցնի :

— Ռուսայալ հրապարակէն, ճամբան այն է : Մտքէն անցածը կը տեսնես :

— Շուտ վաղեցեք, շուտ. ձեզ պիտի մտանէ : Եթէ ձեռնէ առաջ հասնի, եթէ Պ. տը Սարգիսը տեսնէ՝ կորսուած էք :

Պալսամօ սոսկալի սղաղակ մ'արձակեց, թաւուտը դիմեց, փոքր գունէ մ'անցաւ՝ զոր բացաւ ու գոցեց տեսակ մը սառուեր, մէկ ուստուսով ճիւղիտի վրայ ելաւ որ դրանն առջև ոտքը հողին կը զարնէր :

Կենդանին թէ խօսքով թէ մտրակով խթուելով՝ դէպ 'ի Բարիդ մեկնեցաւ նետի մը պէս, և անկէ ետք միայն լսուեցաւ քարայտակին գրնդիւնը՝ որուն վրայէն կը թուչէր :

Իսկ Անտրէ անտարբեր, համր, գունատ և կանգուն կեցեր էր : Բայց կարծես թէ անոր կեանքը հետը տարաւ Պալսամօ, վասն զի Անտրէ ինքն իւր վրայ կ'գրելով ինկաւ :

Պալսամօ Լօրէնցաի ետեկն հասնելու աճապարանքով մոռցեր էր Անտրէն արթնցընելու :

### ՃԻԱ

### ԱՆՁԿԱՅԻՆԹԻՒՆ

Անտրէ ըսածնուս պէս յանկարծ չկեցաւ, բայց այնպիսի աստիճաններով զոր պիտի ջանանք նկարագրելու :

Առանձին, լքեալ, այն ներքին պաղն զգալով որ ջղային դուրս թեան բոլոր սաստիկ ցնցումներուն կը յաջորդէ, Անտրէ իսկոյն սկսաւ դողդոջել և դողալ՝ լուսնոտութեան սկզբնաւորութեան պէս :

Թիւլէր միշտ հոն էր՝ ձիգ, անշարժ, յառաջ ծռած և միշտ Անտրէն դիտելով : Բայց յայտնի է թէ Թիւլէրի համար՝ որ անդէտ էր մազնիսական երևութից՝ ոչ քուն կար և ոչ բռնութեան մը հնազանդութիւն : Գրեթէ բան մը չէր խնացեր Պալսամօի հետ ըրած խօսակցութենէն : Երկրորդ անգամն ըլլալով միայն, 'ի Գրիանօն ինչպէս 'ի Գալէրնէյ, Անտրէ կ'երևէր թէ այս մարդուն ձայնին հնազանդեւր էր՝ որ իւր վրայ այնքան ահարկու և տարօրի-

նակ՝ աղղեցութիւն մ'ունեցեր էր . միով բանիւ , թիւրերի համար ամեն բան այս խօսքին մէջ կը համառօտուէր . «Օրիորդ Անտրէ սիրահար մը , գէթ մարդ մ'ունի զոր կը սիրէ , և որուն հետ ժամադիր կ'ըլլայ զիշերը :»

Անտրէի և Պալսամօի մէջ անցած խօսակցութիւնը՝ թէև ցած ձայնով բոլորովին կուռի մը կը նմանէր : Պալսամօ խոյս տալով , խելքը դիտէն դացած՝ յուսահատ սիրահարի մը կը նմանէր . Անտրէ առանձին , անշարժ , համը մնացած՝ լքեալ սիրուհւոյ մը կը նմանէր :

Նոյն միջոցին էր որ թիւրեր տեսաւ թէ նորաստի աղջիկը կը դողդոջէ , բազուկները կը գալարէ և իւր վրայ կը դառնայ , յետոյ քանի մը խորդիւններ հանեց որ իւր ճնշուած սիրտը ծակեցին , ջանաց , կամ մանաւանդ բնութիւնը ջանաց ՚ի բաց վանել այն անկշիւ հոսանիւթը որ մագնիսական քունին ատեն անոր տուեր էր՝ այն կրկնակի տեսութիւնը որուն երևոյթները նախընթաց դիտոյն մէջ տեսանք :

Բայց բնութիւնը յաղթուեցաւ , Անտրէ չկրցաւ իւր վրայէն թօթափել Պալսամօի իւր վրայ մուցած կամաց այն մնացորդը : Չկրցաւ քակել այն խորհրդաւոր , անլոյծ կապերը՝ որ բոլորովին կապեր էր զինքը և շատ մը մաքառելով՝ այն ջղաձգութեանց մէջ ինկաւ զոր Պիւթիները երբեմն կը կրէին մեհենին գաւթին մէջ բզզացող կրօնաւորներու ամբոխին առջև :

Անտրէ հաւասարակշուութիւնը կորսնցուց , և ցաւազին հեծեծանք մ'արձակելով , աւազին վրայ ինկաւ՝ նոյն ատեն երկինքն հերձող որսորդի մէջ զոգցես շանթահար եղած :

Բայց գետնին չդպած՝ թիւրեր վազրի մը դիւրաշարժութեամբ և կորովով անոր կողմը դիմեց , բազկացը մէջն առաւ և առանց նկատելու թէ ծանր բեռ մ'է կրածը , իւր սենեակը արարաւ՝ ուր ճրագը տակաւին կը վառեր աւրուած անկողնին քով :

Թիւրեր Անտրէի ձգածին պէս բայց դատաւ բոլոր դռները :

Սենեկէն մտնելու ատեն բազմոցին զարնուեցաւ , և բնականաբար հոն դրաւ պաղած ու անկենդան աղջիկը :

Այն անկենդան մարմնոյն դպած ատեն թիւրերի մարմնոյն սաստիկ դող մը փրեց , ջիղերը կը սարսուէին , արիւնը կ'այրէր :

Սակայն առաջին խորհուրդն սուրբ ու անրիժ էր . ամեն բանէ

առաջ կեանք տալու էր վերստին այս պեղեցիկ արձանին . աչքով յուրանը կը վնասէր՝ Անտրէի երեսին քիչ մը ջուր սրսկելու համար :

Բայց նոյն վայրկեանին , և մինչդեռ ձեռքը յուրանին կ'երկնցներ , իրեն այնպէս երեցաւ թէ Անտրէի սենեակն առաջնորդող փայտէ և աղուսէ շինուած սանդուխը թեթեւ և միանգամայն հաստատուն քայլէ մը կը ճռնէ :

Նիդօլը չէր , ինչու որ Նիդօլ Պ. ար Պօղիբի հետ խոյս տուեր էր . Պալսամօն ալ չէր , ինչու որ Պալսամօ ճիւղիտի վրայ նետուելով սրարշաւ մեկնեց էր :

Օտարական մ'ըլլալու էր : Թիւրեր հոն տեսնուած ատեն կը վճռուէր : Անտրէ թիւրերի համար այն Սպանիոյ թագուհիներէն էր որոց չկրնար դպչիլ հպառտակ մը՝ նոյն իսկ անոնց կեանքն աղատելու համար :

Այն աղետալի քայլը տակաւին միւս ատիձանին վրայ չկոխած՝ բոլոր այս զաղափարները , սրածն կարկուտներու յորձանքին նման եկան թիւրերի մտքին զարնուեցան :

Թիւրեր այս քայլին — այս քայլին՝ որ հետզհետէ կը մօտենար — ճիշդ հեռաւորութիւնը չէր կրնար հաշուել՝ նոյն միջոցն երկնից մէջ մըրիկը սաստիկ դողալուն պատճառաւ , բայց պրօպագանդաւ ըլնուածութիւն մը և խոհեմութիւն մ'ունենալով՝ պատանին հակըցաւ որ իւր տեղը հոն չէ , և թէ ամեն բանէ առաջ՝ շտեմնուիլն է կարևոր :

Իսկոյն ճրագը մարեց և այն խոյը նետուեցաւ՝ որ Նիդօլին սենեակի տեղ կը ծառայէր : Հոն կեցած , խոյին ապակի որ դրանն ետէն թէ Անտրէի սենեակը թէ նախասենեակը կը տեսներ :

Նախասենեակին մէջն էր որ կանդեղ մը կը վառէր : Առաջին անգամ թիւրեր մտածեց որ դայն ալ մարէ ճրագին պէս , բայց ժամանակ չունեցաւ . սանդուխէն ելնող քայլին ներքն նրբանցքին տախտակները ճռնչեցին , քիչ մը ճնշուած շունչ մը լսուեցաւ , շեմին վրայ մարդու կերպարանք մը տեսնուեցաւ , ելկշտութեամբ նախասենեակը սողոսկեցաւ , դուռը մղեց , նիզն ալ վրայէն դոցեց :

Թիւրեր միայն ժամանակ ունեցաւ Նիդօլի խոյը նետուելու , և վրայէն ապակի որ դուռը գոցելու :

Թիւլէր շունչը բռնեց , երեսը ապակիներուն կայուց , և ականջները չորս բացած մտիկ ըրաւ :

Մըրիկն հանդիսաւորապէս ամպերուն մէջ կը զոռար , անձրևի խոշոր կաթիլներ կը զարնուէին Անտրէի պատահանին ապակիներուն և նըբանցքին՝ ուր բաց թողուած պատահան մը ծխնիններուն վրայ կը ձունչէր , և մերթ ընդ մերթ , նըբանցքին մէջ նեղուող հովէն մղուելով աղմկաւ շըջանակին կը զարնէր :

Բայց ընտթեան ժխորը , արտաքին ձայները որքան սոսկալի ալ ըլլային՝ Թիւլէրի համար բան մը չէին , միտքը , կեանքը , հոգին նայուածքին մէջ կեդրոնացեր էին , և նայուածքն այն մարդուն վրայ բեեռած էր :

Այս մարդը նախասննկէն անցեր , Թիւլէրէն երկու քայլ հեռիէն քայլեր , և առանց վարանելու սննեակը մտեր էր :

Թիւլէր տեսաւ որ այս մարդը խարխափելով Անտրէի անկողինը գնաց , դարմացական շարժում մ'ըրաւ անկողինը պարագ պանելով , և գրեթէ նոյն ատեն թեք սեղանին վրայի մոմին զարկաւ :

Մոմն ինկաւ , և Թիւլէր լսեց որ սեղանին մարմարիտին վրայ բիւրեղեայ ճրագաբերանը կտրեցաւ :

Այն ատեն այս մարդը երկու անգամ խեղդուկ ձայնով մը կոչեց ,  
— 'Նիզ՛՛ , 'Նիզ՛՛ :

— 'Ենչ , 'Նիզ՛՛ մի , հարցուց Թիւլէր ինքնիրեն թագստոցին խորէն : Ինչո՞ւ համար այս մարդը 'Նիզ՛՛ կը կանչէ՝ մինչդեռ Անտրէ կանչել պէտք էր :

Սակայն , իւր ձայնին ոչ ոք պատասխանելով , այս մարդը գետնէն վեցուց մոմը և ոտքին մասններուն վրայ կոխելով գնաց նախասննկին կանգեղէն վառելու :

Այն ատեն Թիւլէր իւր բոլոր ուշադրութիւնը այս տարօրինակ ու գիշերային այցելուին վրայ կեդրոնեց , պատ մ'անդամ ըլլար՝ աչքովը պիտի ծակէր տեսնելու համար , այնքան կամք ունէր տեսնելու :

Յանկարծ Թիւլէր սարսուեցաւ , և , թէև պահուած էր՝ քայլ մը ընկրկեցաւ :

Երկու ճրագին լուսովը , Թիւլէր յայտուէ կը լսած կիտամեռ , Թիւլէր այն ճրագը բռնող մարդը տեսնելով թագաւորն ըլլալը ձանչեր էր :

Այն ատեն ամեն բան մեկնուեցաւ , 'Նիզ՛՛ լի փխտուստը , Պոզիլի և անոր մէջ համրուած դրամը , բաց թողուած դուռը , Ռիշլիէօի ըրածները , Գալէրնէյի ըրածները , և բոլոր այն զազանի ու քստմեղե մեքենայութիւնը որուն կեդրոն եղեր էր նորատի աղջիկը :

Թիւլէր հասկըցաւ թէ ինչո՞ւ համար թագաւորը 'Նիզ՛՛ կանչէր , այս ոճրին միջնորդը , մարդահաճոյ Յուզա՞ որ իւր արուհին վաճառեր ու մատներ էր :

Բայց , միտքը բերած ատեն թէ թագաւորը ինչ ընելու եկած էր այն սենեակը , թէ ինչ պիտի կատարուէր իւր ներկայութեանը՝ Թիւլէրի աչքերը արիւնով լցան և կոյր դարձան :

Պոռալ ուղեց , բայց վախը՝ այս հմայող մարդէն որ Գաղղիոյ թագաւոր կը կոչէին՝ լեղուն բերնին մէջ կայեց :

Սակայն Լուի Ժե. սենեակն եկեր էր վերստին՝ ճրագը ձեռքը :

Թագաւորը ներս մտաւ չմտա՝ Անտրէն տեսաւ սպիտակ շլարչէ պարեգօտով , աւելի մերկ քան թէ ծածկուած , որուն գլուխը բազմոյն յենարանին վրայ ծռած էր , որուն մէկ սրունքը բարձին վրայ կը հանդէր , մինչդեռ միւսը՝ ձի ու անկոշիկ՝ գորդին վրայ կ'ընար :

Այս տեսնելով թագաւորը ժպտեցաւ : Ճրագին լուսով այն չարագուշակ ժպիտը տեսնուեցաւ , բայց գրեթէ նոյնժամայն թագաւորին ժպիտին չափ աղետալի ժպիտ մը Անտրէի դէմքը լուսաւորեց :

Լուի Ժե. քանի մը խօսք արտասանեց զոր Թիւլէր սիրային խօսքեր կարծեց , և , ճրագը սեղանին վրայ դնելով դառնալու ատեն բոցավառ երկինից անգամ մը նայելով , եկաւ նորաւի աղջկան առջև ծունր դրաւ և ձեռքն համբուրեց :

Թիւլէր ձակտէն հոսող քրտինքը սրբեց : Անտրէ չչարժեցաւ :

Թագաւորը տեսնելով որ այն ձեռքը սառած է՝ իւր ձեռքին մէջ առաւ ստացրնելու համար , և միւս թեք այն հրաշագեղ մարմնոյն շուրջը բոլորելով ծուրով ականջն ի վար մըմեջեց այն սիրայօդ խօսքերէն մէկ քանին՝ զոր նիրհած աղջկանց ականջն կը մըմեջնն :

'Նոյն միջոցին , երեսը այնքան Անտրէի մօտեցաւ որ նորատի աղջկան երեսին քսուեցաւ :

Թիւլէր իւր վրայ շոշափեց և շունչ առաւ զգալով որ բաձկնուկին գրպանն է այն երկայն դանակը որով դարասասանին նշագրիները կը յատանէր :

Երեսն ալ ձեռքին նման սառած էր :

Թագաւորը կանգնեցաւ , աչքը գնաց Անտրէի մերի ոտքին՝ որ Աստիրայից բարինն նման սպիտակ ու փոքր էր : Թագաւորը երկու ձեռքացր ձե ջն առաւ զայն աւ սարսուեցաւ : Այս ոտքը մարմարէ արձանի մը ոտքին պէս պաղ էր :

Թիլլէր տեսնելով որ իւր աչքին առջև պարզուած այնքան գեղեցիկ թիւնները իրմէ յափշտակելու կ'սպառնար թագաւորը իւր անաւակ ու թեւաւորը , Թիլլէր ակուաները կ'ձրտեց և զանակը բացաւ՝ զոր մինչև այն ատեն գոց պահէր էր :

Բայց թագաւորն արդէն ոտքը թողեր էր՝ ինչպէս որ ձեռքն ու երեսը թողեր էր , և նորատի աղջկան քունին զարմացած , քուն՝ զոր առջև բերան քծնի ամօթխած ու թիւն մը կարծեր էր , կ'սկսէր մտածել այս մահատիպ պաղով թեան վրայ որ այն գեղեցիկ մարմնոյն ծայրերը գրաւեր էր , ինքնիրեն կը հարցընէր թէ արդեօք սիրալը կը տրտփէր՝ մինչդեռ ձեռքն , ոտքը և երեսը սառած էին :

Ուստի Անտրէի պարեզօտը մ կղի ընելով՝ անոր կուսական կուրծքը մեկացոյց , և երկչոտ ու միանգամայն շնական ձեռքով անոր համր սիրտը զննեց այն կ'ձր նման սառուցեալ մարմնոյն ներքև՝ որուն սպիտակութիւնն ու կատարեալ բոլորութիւնն ունէր :

Թիլլէր կէս մը դռնէն դուրս սողոսկեցաւ՝ զանակը ձեռքը , աչքին հրացայտ , ակուաները սեղմ՝ , միտքը զննելով որ և թէ թագաւորը իւր ըրածները շարունակէ՝ գաշունէ զան , և ետքն ալ ինքզինքը :

Յանկարծ՝ սուկալի որոտում մը սենեկին բոլոր կարասին դորդեց , մինչև անգամ այն բազմոցը որու առջև ծունր դրեր էր Լուի Թեմանիշագոյն և Ծծմբադոյն նոր փայլակ մը Անտրէի դէմքին վրայ այնպիսի կապարադոյն և սաստիկ լոյս մը սփռեց՝ որ Լուի Թեմայն գունատութենէն սարսափելով ընկրկեցաւ մեմուալով :

— Բայց ստուգիւ այս աղջ կը մնա՞ծ է :

Նոյն միջոցին , թագաւորը մտածելով որ դիակ մ'էր գրկածը՝ սարսուտ մը զգաց իւր երակներուն մէջ : Գնաց ճրագն առաւ , և Անտրէի քով գալով՝ դողդոջուն բոցին լուսով անոր նայեցաւ : Այն մանիշագոյն շրթերը , սեպոյն թրջած աչքերը , ցանուցիւր մազերը , այն անշունչ պարանոցը տեսնելով՝ ճիշմ'արձակեց , ճրագը ձեռքէն ինկաւ ,

դողդոջեց , և դիտով մարդու մը պէս թաւալղըր նախասենեակը գնաց՝ որուն պատերուն զարնուեցաւ սարսափով երթալու ատեն :

Յետոյ անոր արագընթաց քայլերը լուսեցան սանդուխին վրայ , քիչ մ'ետք ալ պարտեզին աւաղին վրայ , բայց դուրսն որոտացող և ծառերը ջարդուրուրդ ընող հովը իւր մերկալից և սաստիկ շունչին մէջ ամեն ձայն առաւ տարաւ :

Այն ատեն Թիլլէր համր ու տխուր իւր թաղստոցէն ելաւ զանակը ձեռքը : Անտրէի սենեկին մինչև շեմն յառաջացաւ , խոր քունին մէջ թաղուած այն չքնաղ աղջիկը քանի մը բոսպէ դիտեց :

Նոյն միջոցին , գետինը զլորուած ճրագը գորգին վրայ պառկած կը վառէր՝ այն պաշտելի գիւկին փափուկ ոտքն ու անրիժ սրունքն լուսաւորելով :

Թիլլէր ծանր կերպով զանակը գոցեց , մինչդեռ անդալի կերպով դէմքին վրայ անողքեղի որոշում մը կը նկատուէր , յետոյ գնաց թագաւորին ելած դռնէն մտիկ ընելու :

Բաւական ատեն մտիկ ըրաւ :

Յետոյ , բոտ կարդի , թագաւորին ըրածին պէս , դուրս գոցեց և նիզը մղեց :

Ապա նախասենեկին կանդեղը մարեց :

Յետոյ վերջապէս , միւսնոյն ծանրութեամբ , աչացը մէջ նոյն թախձալից հուրով՝ Անտրէի սենեակը մտաւ վերստին և ոտքը ճրագին վրայ դրաւ՝ որ տախտակամանին վրայ կը հոսէր :

Յանկարծական մթութիւն մը Թիլլէրի շրթանցը վրայ նկարուող աղէտալի ժպիտը մարեց :

— Անտրէ , Անտրէ , մեմուաց , քեզի խոստացայ որ երբորդ անգամ ձեռքս ինալուգ առաջին երկու անգամներուն պէս ձեռքէս չալիտի աղատիս : Անտրէ , Անտրէ , այն սարսափելի վէպին որուն համար զիս ամրաստանեցիր թէ շինած եմ , սարսափելի վախճան մը պէտք է :

Եւ թեկերը բացած շիտակ քայլեց դէպ 'ի բազմոցն ուր Անտրէ տարածուած էր սառած , անշարժ և զգայազրկ :

# ՃԻՐ

## ԿԸՄՔ

Պալատօի մեկնիր տեսանք : Ճիրիտ կայծակի մ'արագութեամբ կը տանէր զայն : Չիտօրն անհամբերութենէն և երկիւղէն գունատ կենդանին ալեծուփ բաշին վրայ ծռած՝ կիսարայ շրթերով օղը կը ծծէր, օղը՝ որ գեղազափն լանջին առջև կը բացուէր՝ ինչպէս որ ջուրը կը ճեղքուի արագասահ նաւառջիքին ներքև :

Ծառերն ու տուները ցնորական տեսիլներու պէս աներեղթ կ'ըլլային անոր ետեկն : Անցնելու ատեն հազիւ թէ կը նշմարէր իւր անիւներու առանցքին վրայ մանչող ծանր սայլակը՝ որուն լծուած հինգ ձիերը կը կատուէին այս կենդանի մետէօրային մօտիլը տեսնելով զոր չէին կրնար իրենց սեռին վերաբերող բան մը նկատել :

Պալատօ գրեթէ այսպէս փարսախ մը ճամբայ առաւ՝ այնպիսի բորբոքած ուղեղով մը, այնպիսի հրացայտ աշերով, այնպիսի հրատապ և հնչուն շնչառութեամբ մը՝ որ ներկայ ժամանակիս բանահիւսները պիտի բազդատէին զինքն այն հրով և շողիով լի ողիւներուն՝ որ կենդանութիւն կու տան հրաշունչ ծանր մեքենաներու, և երկաթուղիի մը վրայ կը թուցրնեն զանոնք :

Չի և ձիաւոր քանի մը ըսպէի մէջ Վերսայլէն անցեր էին. փողոցները գտնուող քանի մը բնակիչներ կայծերու հետք մը տեսան միայն, և ոչ այլ ինչ :

Պալատօ փարսախ մը տեղ ալ տակաւին սրարշաւ գնաց. քառորդ մը չեղած Ճիրիտ այս երկու փարսախ ճամբան կտրեր էր սակայն դար մը թուեր էր Պալատօի :

Յանկարծ Պալատօի միտքը բան մ'ինկաւ. գեղազատն իսկոյն կեցուց : Ճիրիտ կատելու ատեն ետեի սրունքները ծռեց, մինչդեռ առջևի ոտները աւազին մէջ մխուեցան :

Գեղազատն ու հեծեալը պահ մը շունչ առին :

Շնչելու ատեն Պալատօ զլուխը վեր առաւ : Յետոյ քրտնամոր քունքերը թաշկինակով մը սրբելով, և, լիառունդն շնչելով սիւքը՝ մուծին մէջ հետեւալ խօսքն արտասանեց .

— Ո՛հ, հէ՛ղ տխմար . ոչ ձիուգ արշաւը և ոչ եռանդուն ջանքը չեն կրնար հասնիլ կայծակին անմիջականութեան կամ ելիքսրական կայծին արագութեան, և սակայն ասոր պէտք ունիս զլիսուգ վրայ ծանրացող աղէտին առաջքն առնելու . դու պէտք ունիս այն արագ արդիւնքին, այն անմիջական հարուածին, այն ամենակարող հարուստն որ անգամալոյժ ընէ այն սրունքները՝ որոց զօրծողութենէն կը վախնաս, այն լեզուն՝ որուն շարժումն կ'երկիւղիս . քեզի պէտք է հեռուէն այն յաղթիչ քունը՝ որով միայն կրնաս ձեռք ձգել իւր շղթան խորտակող գերին : Ո՛հ, անգամ՝ մ'որ ձեռքս իյնայ . . . :

Եւ Պալատօ ակունները կ'ձրտելով յուսահատ շարժում մ'ըրար :

— Ո՛հ, 'ի զուր կը կամիս, Պալատօ, 'ի զուր կը վազես, գոչեց, Լօրէնցա արդէն հասած է . պիտի խօսի . թիրևս մինչև հիմա խօսած է : Ա՛խ, թշուառական կին, քեզ պատժելու համար սրբան տանջանք տրուի՝ դարձեալ քեզ է :

«Կեցիր, կեցիր, շարայարեց Պալատօ յօնքը պոստած, աչերն յառած, ծնօտը ձեռքին մէջ, կեցիր . գիտութիւնը բառ մ'է կամ իրողութիւն մը . գիտութիւնը կրնայ կամ չկրնար . ես կ'ուզեմ . . . : Փորձենք . . . : Լօրէնցա, Լօրէնցա, կ'ուզեմ որ քնանաս . Լօրէնցա, ուր որ ալ ըլլաս՝ քնայիր, քնայիր, այնպէս կ'ուզեմ, այնպէս վստահութիւն ունիմ :

«Ո՛հ, ոչ, ոչ, մումուաց վճատութեամբ . ոչ, կը ստեմ . ոչ, չեմ հաւատար ըսածիս, չեմ համարձակիր այնպէս վստահութիւն ունենալ . և սակայն կամքն ամենայն ինչ է : Ո՛հ, պինդ կամքով կ'ուզեմ, անձիս բոլոր զօրութեամբը կ'ուզեմ : Ճեղքէ՛ օղը, ո՛վ իմ գերադոյն կամքս, բոլոր հակակիր կամ անտարբեր կամաց յորձանքներուն մէջէն անցիր, ուումբի մը պէս պատերէն անցիր, անոր ետեկն ինկիր ուր որ երթայ, զարկ, ոչինչ դարձուր . Լօ-

րէնցա՛, Լօրէնցա՛, կ'ուզեմ՝ որ քնանաս, Լօրէնցա, կ'ուզեմ՝ որ անխօս ըլլաս :

Եւ պահ մը միտքն ուղղեց դէպ 'ի այն նպատակը՝ լաւ տպաւորելով ուզեղին մէջ՝ զողջես դէպ 'ի Բարիզ սրացած ատեն աւելի զօրութիւն տալու համար մտքին . և այս խորհրդաւոր գործողութենէն ետք՝ որուն անշուշտ գործակցեցան բոլոր երկնային հիւլէները՝ ամենայն իրաց տէր և իշխան Աստուծմէ զօրութիւն ստանալով, Պալսամօ տակաւին սկուաները սեղմած, բուռերը գոյ՝ սկսաւ ճիւղալ քայլեցընելու, քայց այս անգամ ոչ ստբով զարկաւ և ոչ մտորակեց :

Կարծես թէ Պալսամօ կ'ուզէր ինքն ալ համոզուիլ :

Այն ատեն ընտիր գեղազատն սկսաւ հանդարտօրէն քայլել՝ տիրոջն իբն տուած ընելեայն հրամանին համեմատ, իւր յեղին յատուկ փափկութեամբ մը գրեթէ անձայն կոխելով ճամբուն սալարկին վրայ, այնքան թեթև կը կոխէր :

Պալսամօ՝ որ մակերևոյթը միայն տեսնողներու համար կորսուած կը համարուէր՝ նոյն միջոցին պաշտպանողական յատակագիծ մը կը պատրաստէր . ճիւղիս Սէվրի սալարկն հասած ատեն Պալսամօ կ'աւարտէր իւր յատակագիծը :

Գարատանին վանդակապատին առջև հասած ատեն կայ առաւ և շուրջը նայեցաւ . կարծես թէ մէկու մը կ'սպասէր :

Արդարև գրեթէ խսկոյն մարդ մը մեծ գրան մը ներքեկէն ելաւ և իրեն եկաւ :

— Դո՛ւ ես, Ֆրից, հարցոյց Պալսամօ :

— Այո, տէր :

— Տեղեկութիւն առի՞ր :

— Այո :

— Տիկին Տիւպարի Բարիզ կը գտնուի թէ Լիւսիէն :

— Բարիզ :

Պալսամօ յաղթական աչքով մը երկինք նայեցաւ :

— Կ'նչպէս եկար :

— Սուլթանով եկայ :

— Ո՛ր է :

— Այս պանդոկին բակն է :

— Համետը վրա՞ն է :

— Վրան է :

— Լաւ, պատրաստ դոնուէ :

Ֆրից գնաց Սուլթանը քակեց : Այն դերմանական արի ձիւրէն մին էր՝ որոնք քիչ մը կը մուման սաստիկ վազած ատեննին, սակայն դարձեալ կը վազէն որչափ որ իրենց ներքը շունչ՝ և հեծելոյն կրուկը մտրակ մնայ :

Ֆրից Պալսամօի քով դարձաւ :

Պալսամօ թուղթ մը կը գրէր այն կանգեղին լուսով՝ զոր ՊՊ. բաժակեաները բոլոր դիշերը վառ կը պահէին իրենց դանձային գործողութեանց համար :

— Բարիզ դարձիր, ըսաւ, և տիկին Տիւպարիի ձեռքն յանձնէ այս տոմսակը ուր որ ալ ըլլայ . այս ընելու համար կէս ժամ ունիս . անկէ ետք Աէն-Գլօա փողոցը կը գտնուաս և հոն տիկին Լօրէնցային կ'սպասես որ անշուշտ պիտի վերադառնայ . իրեն բան մը չըսելով թող իւր տաս որ անցնի, և բնաւ դէմ չես դներ : Գնա, և մտնուանդ միտքդ պահէ որ կէս ժամուան մէջ պէտք է կատարուած ըլլայ քեզի յանձնուած գործը :

— Լաւ, ըսաւ Ֆրից, կը կատարուի :

Այս ըսելով մտրակն ու խարազանը կը զարնէր Սուլթանին՝ որ այս կերպ խտուութեան վարժուած չըլլալով ցաւաղին վրնջիւն մը արձակեց և ճամբայ ելաւ :

Իսկ Պալսամօ հետզհետէ ինքզինքը գտնելով Բարիզի ճամբան ինկաւ՝ ուր երեք քառորդէն հասաւ՝ գրեթէ զուարթ դէմքով, հանդարտ կամ լաւ ևս խոհուն նայուածքով :

Պալսամօ իրաւունք ունէր . որքան արագ քայլէր ճիւղիս՝ անպատին սոյն վրնջող զաւակը՝ ետ պիտի մնար, կամքը միայն կրնար համընթաց ըլլալ բանտէն խոյս տուող Լօրէնցայի :

Նորատի կինը Սէն-Գլօա փողոցէն ելնելով պողոտան մտեր էր, և աջ կողմը դառնալով Պատղիլի պատնէշները տեսեր էր իսկոյն սակայն Լօրէնցա բնաւ գուրս ելած չըլլալով՝ Բարիզը չէր դիտեր . ասկէ զատ, իւր առաջին նպատակը խոյս տալ էր այն անիծեալ

անէն՝ որ իրեն համար բերդ մ'էր . վրէժխնդրութիւնն սակէ ետը կու գար :

Սէնդ-Անուան արուարձանը նոր մտեր էր խռոված , աճապարանօք՝ և ահա երիտասարդ մ'իրեն մօտեցաւ որ քանի մը վայրկեանէ 'ի վեր անոր կը հետեւէր զարմանօք :

Արդարև Լօրէնցա , Հոռոմի շրջականերէն Խտալուհի մը՝ գրեթէ միշտ բացառիկ կեանք մը վարած՝ նոյն ատենի նորաձևութենէն , հազուստներէն և սովորութիւններէն հեռի կենալով , Լօրէնցա աւելի Արևելքի կնոջ մը նման կը հաղուէր քան թէ Եւրոպայուհոյ , այսինքն միշտ լայն ու շքեղ զգեստներ , չնմանելով այն սիրուն պաճուճապատանքներուն՝ որոնք պիժակներու նման երկայն կոճկէնի մը մէջ սեղմուած են և մետաքսի ու շղարշի մէջ կը ծփան՝ որոց ներքև մարդ 'ի զուր կը փնտուէ մարմին մը , ինչու որ կարի մեծ փափաք մ'ունին անսխիթ երևելու :

Լօրէնցա այն ատենի Գաղղիացոց հաղուստին միայն երկու մատնաչափ կրուկով կօշիկները կը հաղնէր՝ որոնք կոր ձև մը կու տային ոտքին , բոյթերուն փափկութիւնը երևան կը հանէին , և այն քիչ դիցաբանական դարուն մէջ Ալփիտներէն հալածուող Արեթուսաներուն փախուստն անկարելի կ'ընէին :

Արդ մեր Արեթուսան հալածող Ալփիտըրդ զիւրաւ հասաւ անոր . տանդէլաներով զարդարուած մետաքսեայ շրջազգեստին ներքևէն անոր գիւցական սրունքները տեսեր էր , անփոշի մազերը , դլխոյն և պարանոցին շուրջը բոլորուած մեկնոցակի մը ներքև տարօրինակ հուրով մը փալիթող աչերը դիտեց , կարծեց թէ Լօրէնցան ծրար տեալ կին մ'էր՝ որ պարահանութեան կ'երթար կամ սիրային ժամադրութեան մը , և կառք մը չղանելուն համար հետի կ'երթար արուարձանին մէկ փոքրիկ տունը :

Ուստի մօտենալով և Լօրէնցաի քով կենալով դլխարկը ձեռքը :

— Տէր Աստուած , տիկին , ըսաւ . այդպէս հեռուն շէք կրնար երթալ , այդ կօշիկներով որ ձեր ընթացքը կ'արգիլեն . կ'ուզէք թևս մտնել մինչև որ կառք մը դանուի , և ես պատիւ կ'ունենամ ձեզի ընկերակցելու ուր որ երթաք :

Լօրէնցա դուրսն յանկարծ դարձուց , սև ու խորին աչքովը նա

յեցաւ այն առաջարկութիւնն ընողին , առաջարկութիւն մը որ շատ կ'ինքերու լրբութիւն պիտի թուէր , և կ'ասելով՝

— Այո , ըսաւ կ'ընդունիմ :

Երիտասարդը վայելչօրէն թևն անոր երկնցուց :

— Ո՛ւր կ'երթաք , տիկին , հարցուց :

— Ոստիկանութեան տեղակալին ապարանքը :

Երիտասարդը սարսուեցաւ :

— Պ . տը Սարդինի ապարանքը , հարցուց :

— Չեմ գիտեր թէ անունը Պ . տը Սարդին է . բայց խօսիլ կ'ուզեմ անոր որ ոստիկանութեան տեղակալ է :

Երիտասարդն սկսաւ խորհիլ :

Այս մանկամարդ և գեղեցիկ կինը որ օտարականի զգեստ հագած երեկոյեան ժամը ութին Բարիզի փողոցները կը թափառէր թևին ներքև արկղիկ մը և ոստիկանութեան տեղակալին ապարանքը հարցընելով՝ որուն հակառակ կողմը կ'երթար՝ այս կինն անոր կատկածելի երևցաւ :

— Ա՛հ , ըրաւ , Պ . տեղակալին ապարանքն այս կողմը չէ :

— Ո՛ւր է :

— Սէն-Ժէրմէն արուարձանն է :

— Ո՛ր կողմէն կ'երթան Սէն-Ժէրմէն արուարձանը :

— Հոսկէ , տիկին պատասխանեց երիտասարդը հանդարտ՝ թէ և միշտ քաղաքավար . և թէ որ կ'ուզէք՝ մեր դէմը կառք մը ելնելուն պէս . . . :

— Այո , կառք մը , այնպէս է , իրաւունք ունիք :

Երիտասարդը սլոզոտան տարաւ Լօրէնցան , և կառք մը տեսնելով կօշեց :

Կառավարն եկաւ :

— Ո՛ւր տանելու է ձեզ , տիկին , հարցուց :

— Պ . տը Սարդինի ապարանքը , ըսաւ երիտասարդը :

Եւ քաղաքավարութեամբ , կամ լաւ ևս՝ զարմանօք կառքին դուրս բանալով՝ Լօրէնցան բարևեց , և կառքն ելնելու համար անող օդնելով՝ անոր հեռանալը դիտեց՝ ինչպէս որ երազի մէջ մարդ տեսիլ մը կը դիտէ :



Առաջարկն այն ահարկու անունը յարդանօք լսելով՝ ձիերը ձողկեց և մեկնեցաւ նշանակուած ճամբան մանելով :

Այն ատեն էր որ Լօրէնցա Ռուայալ հրապարակէն անցաւ, այն ատեն էր որ Անտրէ՝ մագնիսական քնոյն մէջ՝ դան տեսնելով և լսելով՝ Պալամօի իմաց տուաւ :

Քսան վայրկեանէն Լօրէնցա սպարանքին գոռն հատաւ :

— Սպասեմ, դեղանի տիկինս, հարցուց կառավարը :

— Այո, պատասխանեց Լօրէնցա մեքենարար :

Եւ թեթեակի ոտներով աներևոյթ եղաւ փառաւոր սպարանքին դռնէն ներս :

**ՃԻԳ**

**Պ. ՏԸ ՍԵՐԳԻՆԻ ԱՊԱՐԵՆԵՐԸ**

Բակն հասնելուն պէս Լօրէնցա տեսաւ որ ամեն կողմ՝ զինուորականներ կան :

Իրեն ամենէն մտա զոտուող պահապան զինուորին զիմեց և ազաչեց որ ոտականութեան անդակալին աանի զինքը, այս պահապանը դռնապանին յղեց՝ որ այս գեղեցիկ և տարօրինակ կինն այնպէս ճոխ հաղուած և թեկն ներքե այնպիսի սքանչելի արկղիկ մը բռնած տեսնելով՝ հասկըցաւ որ սոյն այցելութեանն ապարդիւն չէր, և մեծ սանդուխէ մը մինչև նախասենեակ մը հանեց զան ուր ամեն եկող այն դռնապանին խորաքնին հետաջտութեանը նայելով օրուան կամ գիշերուան ամեն ժամուն տեղեկութիւն մը, յայտնութիւն մը կամ տեղեկագիր մը կրնար բերել Պ. տը Սարգիին :

Տարակից չկայ որ առաջին երկու կարգի այցելուները վերջինէն աւելի ընդունելութիւն կը գտնէին :

Բարապան մը Լօրէնցայի հարցումներ ընելով՝ Լօրէնցա միայն այս պատասխանը տուաւ :

— Դուք Պ. տը Սարգիին էր :

Բարապանը շատ զարմացաւ որ իւր թուլի զգեստը և պողպատեղ շղթան ոտտիկանութեան տեղակալին նկարակիտեալ զգեստին և միգաստ կեղծամին հետ կը շփոթեն եղեր, բայց որովհետև տասնապետ մը չարգողիւր երբ զինքը հարիւրապետ կոչէն, որովհետև այն կնոջ խօսքերուն մէջ օտարականի արտասանութիւն տեսաւ, որովհետև անոր հաստատուն և ապահով նայուածքը յիմարի նայուածքին չէր նմաներ՝ համոզուեցաւ թէ այցելութիւնը կարևոր բան մը կը բերէր այն արկղիկով՝ զոր մեծ հողով և ուժով թեկն ներքե կը սեղմեր :

Սակայն Պ. տը Սարգին խոհեմ և կասկածոտ մէկն էր, դեղանի Իտալու հիէն ոչ նուազ յանկուցիչ հրապոյրներով իրեն դէմ արդէն քանի մը դարաններ լարուած ըլլալով՝ լաւ պահպանութիւն կ'ընէին անոր շուրջը :

Ուստի Լօրէնցա կէս-երկուտասնեակ քարտուղարներու և պայտիկներու խուզարկութեանց և հարցմանց և կասկածներուն ենթարկեցաւ :

Բոլոր այս հարցումներուն և պատասխաններուն արդիւնքը սա եղաւ որ Պ. տը Սարգին տակալին չէր եկեր և Լօրէնցա պիտի սպասէր :

Այն ատեն նորատի կինը ախուր լուծեան մը մէջ թաղուեցաւ աչերը ընդարձակ նախասենեակին մերկ պատերուն վրայ պտտցընելով :

Վերջնօրէս հնչակի մը ձայնը լսուեցաւ, բակին մէջ կառք մը թաւալեցաւ, և երրորդ բարապան մը եկաւ իմաց տուաւ Լօրէնցայի թէ Պ. տը Սարգին իրեն կ'սպասէր :

Լօրէնցա ոտք ելաւ և երկու սրահէ անցաւ ուր լեցուն էին կասկածելի գէմքով և իւր զգեստէն աւելի տարօրինակ զգեստներ հողած մարդիկ, վերջապէս, ու թանկիւնի ձևով և բազմաթիւ ճրագներով լուսաւորուած մեծ դահլիճ մը մտայնցին :

Յիտուն յիսուհիինց տարեկան մարդ մը, պարեգօտով, զլուխը փոշոտած և զանգար ահաղին կեղծամ մը գրած՝ քաճարաձև կարասիք մ'առջև նստած կ'աշխատէր, որուն վերին մասը պահարանի մը պէս երկու հայե լիւ էրեսներով պոցուած էր՝ օրոց մէջէն այն աշխատողը

առանց տեղէն շարժելու դահլիճը մանողները կը տեսնէր և կրնար անոնց դէմքը քննել իրենց դէմքն անոր դէմքին համեմատ սլաքորատելու տակաւին ժամանակ չունեցած :

Այս կարասիին ստորին մասը դրասեղան էր , վարդափայտէ բազմաթիւ գզրոցներ ներսի կողմը կը զարդարէին , գզրոցներէն իւրաքանչիւրը այր ու բենի բաղադրութեամբ կը գոցուէր , Պ. տը Սարգին հոն թղթեր և ծածկադրութիւններ կը պահէր՝ զոր ոչ ոք կրնար կարգաւ անոր ողջ եղած ատենը , որովհետև այն կարասին միայն անոր համար կը բացուէր , և ոչ ոք անոր մահուանէ ետք չպիտի կարենար այն ծածկադրութիւնները լուծելու , միայն թէ միւս գզրոցներէն աւելի ծածուկ գզրոցի մը մէջ՝ ծածկադրութեան դաղանիքը գտնէր :

Այս գրասեղանը , կամ լաւ ևս այս պահարանը վերին մասին հայելիներուն ներքև տասներկու գզրոց ունէր նոյնպէս անտեսանելի մեքենայով մը գոցուած , այս կարասին զոր խնամակալը շինել տուեր էր յատկապէս տարբալուծական կամ քաղաքական դաղանիք պահելու համար , իշխանը Տիւպուսյին տուեր էր , և Տիւպուս ալ Պ. Տոմարապիլի՝ ոստիկանութեան տեղակալին , այս վերջինէն Պ. տը Սարգին առեր էր կարասին և դաղանիքը . սակայն Պ. տը Սարգին նուիրատուն մահուանէ ետքը միայն հաւանեցաւ գործածել զայն փականքին ձևը փոխել տալով : Այս կարասին համբաւ հանած էր , և կ'ըսէին՝ թէ շատ աղէկ գոցուելուն պատճառաւ Պ. տը Սարգին իւր կեղծ ծամներէն ուրիշ բան ալ կը պահէ հոն :

Բանքասել սիրողները՝ որոցմէ շատ կար այն ատեն , կ'ըսէին թէ եթէ կարելի ըլլար այս կարասիին վրայէն կարգալ՝ անշուշտ անոր գզրոցներէն միոյն մէջ պիտի գտնուէին այն անուանի դահնադրութիւնները՝ որոց ուժովը վեհափառ Լուի Թե ցորենի գնոյն բարձրանալէն շահ կը հանէր իրեն՝ իւր անձնուէր գործակալ Պ. տը Սարգինի միջոցաւ :

Ուստի ոստիկանութեան տեղակալը շեղաձև հայելոյն մէջ Լորէնցիի գունատ և լուրջ դէմքը տեսաւ՝ որ իւր կողմը կու գար թեկնանք քն արկղիկ մը բռնած :

Նորատի կինը դահլիճին մէջ տեղը կեցաւ : Անոր հագուստը , դէմքը , քալուածքը ոստիկանութեան տեղակալին ուշը գրաւեցին :

— Ո՞վ էք դուք , հարցոյց առանց ետեը դառնալու՝ բայց հայելոյն մէջ նայելով , ի՞նչ կ'ուզէք ինձ :

— Պ. տը Սարգինի՝ ոստիկանութեան տեղակալին առջեւ կը գտնուիմ , պատասխանեց Լորէնցա :

— Այո , պատասխանեց Պ. տը Սարգին համառօտ կերպով :

— Ասայոյ՞ց :

Պ. տը Սարգին ետեը դարձաւ :

— Չեր փնտռած մարդն ես ըլլալուս ասայոյց մը կրնայ ըլլալ եթէ ձեզ բանտարկեմ , ըսաւ :

Լորէնցա պատասխան չտուաւ :

Միայն թէ իւր երկրին կանանց յատուկ մեծանշութեամբ մը շուրջը նայեցաւ փնտռելու համար այն աթոռը ուր չէր հրաւիրեր զինքը Պ. տը Սարգին :

— Նստեցէք , ըսաւ յանկարծ :

Լորէնցա աթոռ մը քաշեց իրեն և նստաւ :

— Շուս խօսեցէք , ըսաւ դատաւորը : Նայինք ի՞նչ կ'ուզէք :

— Պարոն , ըսաւ նորատի կինը , զիս ձեր պաշտպանութեան ներքև դնելու եկեր եմ :

Պ. տը Սարգին իրեն յատուկ խորամանկ նայուածքով անոր նայեցաւ :

— Ա՛հ , ըսաւ :

— Պարոն , շարայարեց Լորէնցա , զիս իմ ընտանիքէս առևանգելով սուտ ամուսնութեամբ մը հպատակ ըրին զիս մարդու մը՝ որ երեք տարիէ ՚ի վեր զիս կը ճնշէ և ցաւէս կը մնայնէ :

Պ. տը Սարգին այն աղնուական դէմքը դիտեց և յուզուեցաւ այն քաղցրահայն ձայնէն որ երդի կը նմանէր :

— Ո՞ր տեղացի էք :

— Հուովմայեցի եմ :

— Անունն ի՞նչ :

— Լորէնցա :

— Լորէնցա ո՞վ :

— Լորէնցա Ֆելիչեանի :

— Չեմ ճանաչեր այդ ընտանիքը : Օրիորդ էք :

Յայտնի է որ օրիորդ՝ ազնուական աղջիկ կը նշանակէր այն ատեն :  
Մեր օրերուն մէջ կին մը ամուսնացած վայրկեանէն բաւական ազ-  
նուական կը համարի ինքզինքը . ալ իւր միակ փափաքը տիկին կո-  
չուիլն է :

— Օրիորդ եմ, ըսաւ Լօրէնցա :

— Ետքը : Ի՞նչ կ'ուզէք :

— Գատաստան կ'ուզեմ՝ այն մարդուն դէմ՝ որ զիս բանտարկեց ,  
գրաւեց :

— Այդ ինձ վերաբերեալ բան մը չէ, ըսաւ ոստիկանութեան տե-  
ղակալը , իւր կիներէն :

— Ինք այնպէս կ'ըսէ :

— Ի՞նչ կ'ըսէ :

— Այո , բայց ես բնաւ չեմ յիշեր՝ ամուսնութեան դաշինքը քունքս  
մէջ կատարուած ըլլալով :

— Բա՛ , որքան ծանր է եղեր ձեր քունը :

— Ի՞նչ հրամայիք :

— Կ'ըսեմ թէ այդ ինձ վերաբերեալ բան մը չէ , գործակալի մը  
դիմեցէք և դատ վարեցէք , ընտանեկան գործոց մէջ մտնել չեմ ու-  
զեր :

Ասոր վրայ Պ. տը Սարգիս ձեռքովը շարժում մ'ըրաւ որ կը նշա-  
նակէր՝ «Գացէք :»

Լօրէնցա տեղէն չշարժեցաւ :

— Ուրիշ ի՞նչ կայ , հարցուց Պ. տը Սարգիս զարմացած :

— Չաւարտեցի , ըսաւ Լօրէնցա , և հոս եկած չեմ չնչին բանի մը  
համար դանդաղեցու՝ այլ վրէժ լուծելու համար , իմ հայրենիքս բսի  
ձեզ . իմ երկրի կանայք վրէժ կը լուծեն և չէ թէ կը գանդատին :

— Այդ ուրիշ , ըսաւ Պ. տը Սարգիս , բայց շուտ ըրէք , գեղանի  
տիկին , ժամանակս սուղ է :

— Ըսի թէ պաշտպանութիւն խնդրելու եկած եմ՝ ձենէ , պիտի  
պաշտպանէք զիս :

— Որո՞ւ դէմ :

— Այն մարդուն դէմ որմէ վրէժ առնել կ'ուզեմ :

— Զօրաւոր է ուրեմն :

— Թագաւորէ մ'աւելի զօրաւոր :

— Իրարու խօսք հասկընանք , սիրելի տիկինս . . . Ինչո՞ւ ձեզ  
պաշտպանեմ այնպիսի մարդու մը դէմ որ , ձեր կարծեօք , թագաւո-  
րէն աւելի զօրաւոր է , այնպիսի գործողութեան մը համար որ թե-  
րեւ ոճիր մ'է : Եթէ վրէժ պիտի առնէք այն մարդէն՝ առէք : Այդ-  
իմ փոյթս չէ . միայն թէ , եթէ ոճիր մը գործէք՝ ձեզ ձերբակալել  
կու տամ , անկէ ետք կը նայինք , ահա այսպէս կ'ըլլայ :

— Այ , պարոն , ոչ , ըսաւ Լօրէնցա , զիս չպիտի ձերբակալել տօք  
վանս զի իմ վրէժն գրութիւնս մեծ կարեւորութիւն ունի՝ ձեզի հա-  
մար , թագաւորին համար , Գաղղիոյ համար : Ես վրէժ կ'առնեմ այն  
մարդուն գանդանիքներն երևան հանելով :

— Ա՛հ , այդ մարդը գաղտնիք ունի , ըսաւ Պ. տը Սարգիս ակամայ  
ուշադրութիւն տալով :

— Մեծ գաղտնիքներ , պարոն :

— Ի՞նչ տեսակ :

— Քաղաքական :

— Ըսէք :

— Բայց վերջապէս , պիտի պաշտպանէք զիս :

— Ի՞նչ տեսակ պաշտպանութիւն կ'ուզէք ինչ : հարցուց դատաւո-  
րը սրաղ ժպտով մը , դրամ թէ գորով :

— Պարոն , մենաստան մը մտնել կ'ուզեմ՝ հոն անձանթ ե  
թաղուած ասլըրու համար : Կ'ուզեմ որ այն մենաստանը դամբան մը  
ըլլայ ինձ , սակայն աշխարհիս մէջ ոչ ոք կարենայ իմ դամբանս  
բռնարարել :

— Ա՛հ , ըրաւ գատաւորը , մեծ բան մը չէ ձեր պահանջածը :  
Մենաստան մը կը գտնենք ձեզի , խօսեցէք :

— Ուստի խօսք տուիք , պարոն :

— Կարծեմ թէ տուի :

— Ուրեմն , ըսաւ Լօրէնցա , առէք այս արկղիկը , այնպիսի գաղտ-  
նիքներ կան մէջը՝ որոնք թագաւորին և թագաւորութեան համար որ-  
քան վտանգաւոր ըլլալը տեսնելով պիտի դողաք :

— Ուրեմն զիտէք այս գաղտնիքները :

— Գրտէն , սակայն զիտեմ որ կան :

- Եւ թէ կարևոր են :
- Սոսկալի են :
- Քաղաքական գաղանխքներ , կ'ըսէք :
- Բնաւ լրած չէք թէ դաղտնի ընկերութիւն մը կայ :
- Ա՛՛՛՛՛ , մասօճներու ընկերութիւնը :
- Աներևոյթներու ընկերութիւնը :
- Այո , բայց չեմ հաւատար :
- Երբ այս արկղիկը բանաք՝ պիտի հաւատար :
- Ա՛՛՛՛՛ , ըրաւ Պ. տը Սարգիս աշխուժիւ , նայինք :
- Եւ արկղիկը Լօրէնցացի ձեռքէն առաւ :
- Բայց մտածելով՝ յանկարծ գրասեղանին վրայ դրաւ զայն :
- Այ , ըսաւ կասկածանօք , դուք բացէք :
- Բայց բանալին վրաս չէ :
- Ի՛նչպէս վրադ չէ բանալին : Թագաւորութեան հանգստութիւնը պարունակող արկղիկ մը կը բերէք ինձ և բանալին հետ առնելու կը մոռնար :
- Աւրեմն այնքան դժուարին է փականք մը բանալը :
- Այ , երբ ի՛նչպէս բացուին յայտնի ըլլայ :
- Յետոյ , պահ մ'ետքը :
- Հոս ամեն տեսակ փականքի համար բանալի ունինք , շարայաքից , հիմա տրցակ մը բանալի կու տամ ձեզի , — աչերը Լօրէնցացի վրայ յառեց , — և դուք ձեր ձեռքով կը բանար :
- Տուէք , ըսաւ Լօրէնցացի պարզապէս :
- Պ. տը Սարգիս ամեն ձեռքով փոքրիկ բանալիներու տրցակ մ'երկնցուց նորատի կնոջ :
- Լօրէնցացի առաւ :
- Պ. տը Սարգիս ձեռքին դպաւ , մարմարի պէս պաղ էր :
- Բայց , ըսաւ , ինչո՞ւ բանալին ձեր հետը չբերիք :
- Ասան զի արկղիկին տէրը ընաւ վրայէն չթողուր բանալին :
- Իսկ արկղիկին տէրը , թագաւորէ մ'աւելի զօրաւոր մէկը , ո՞վ է :
- Ի՛նչ ըլլալը մարդ չկրնար ըսել , որչափ ատեն ապրած ըլլալը յաւիտենութիւնը միայն դիտէ , իւր կատարած գործերը Աստուած միայն կը տեսնէ :

- Բայց անունը :
- Տասն անգամ անուն փոխելը տեսած եմ :
- Աւեր ջապէս , այն անուամբ որ զինքը կը ձանձաք :
- Աշարա ,
- Ո՛ւր կը բնակի :
- Փողոց Սէն . . .
- Յանկարծ դող մ'եկաւ վրան , սարսուեցաւ , մէկ ձեռքէն արկղիկը ձգեց և միւս ձեռքէն ալ բանալիները , պատասխան տալու համար ճիգ մ'ըրաւ , ցաւազին ջրածղութեամբ մը բերանը քաշուեցաւ , երկու ձեռքը կոկորդը տարաւ՝ այնպէս որ կարծես թէ դուրս ելնելիք խօսքը զինքը կը խեղդէր , յետոյ , դողդոջուն բացուկները դէպ' երկինք վերցրնելով՝ կայնած տեղէն դահլճին գորգին վրայ ինկաւ առանց ձայն մը կարենալ հանելու :
- Իսեղճ աղջիկ , մամուաց Պ. տը Սարգիս , ի՛նչ եկաւ գլխուն : Յիրաւի շատ գեղեցիկ է : Ի՛՛՛՛՛ նախանձոտ սէր կայ այս վրէժխնդրութեան մէջ :
- Իսկոյն հնչալը զարկաւ , և ինքը վերցուց գետնէն նորատի կինը որ բաց աչերովը , անշարժ շրթերովը՝ արդէն մեռած և այս աշխարհէս բաժնուած կ'երևէր ,
- Երկու պայիկ ներս մտան :
- Զգուշութեամբ վերցուցէք այս կինը , ըսաւ ուտիկանութեան փողակալը , և քովի սենեակը տարէք : Զանացէք որ խելքը գլուխը պայ . չըլլայ որ բռնութիւն բանեցընէք : Գացէք :
- Պայիկները Լօրէնցացի տարին :

Պ. տը Սարգիսն առանձին մնալով՝ արկղիկն սագին անդին դարձուց՝ զիւտի մ'արժեքը լաւ ճանչցող մէկու մը պէս :

Յետոյ ձեռքն երկնցուց և Լօրէնցոյ ձեռքէն ինկած բանալիներու տրցալին առաւ :

Ամենքն ալ փորձեց . մէկն ալ չյարմարեցաւ :

Երկու երեք ուրիշ տրցալիներ ալ հանեց զգրոցէն :

Այս տրցալիներուն մէջ ամեն երկայնութեամբ բանալի կար . անշուշտ կարասեաց բանալիներ , արկղիկներու բանալիներ . սովորական բանալիէն սխտելով՝ մինչև մանրադիտական բանալին , կարծես թէ գտնուած բոլոր բանալիներուն օրինակցուն ունէր Պ. տը Սարգիսն :

Անոնցմէ քսանը , յիսունը , հարիւրը փորձեց արկղիկին . և ոչ մին գոնէ անդամ մը չդարձաւ : Գատաւորն այն ատեն զուշակեց թէ այն փականքը առ երեսս բան մ'էր , և հետևաբար բանալի ալ չունէր :

Այն ատեն նոյն զգրոցէն փոքրիկ մկրատ մը և փոքրիկ կուան մը հանելով կտրեց փականքը՝ արկղիկին հաւատարիմ պահապանը :

Իսկոյն թղթերու ծրար մը երեցաւ աչքին՝ փոխանակ կայծակնացայտ մեքենաներու՝ որոցմէ կը վախնար թէ հոն պիտի տեսնէ , կամ փոխանակ այնպիսի թոյներու՝ որ մահաբոյր հոտ մը հանելով պիտի զրկէին Գաղղիան իւր գլխաւոր մէկ դատաւորէն :

Ոստիկանութեան տեղակալին աչքին զարնող առաջին բառերն ասոնք եղան՝ որոնք բառական կեղծուած զրով մը զրուած էին .

« Արպետ , ալ Պալսամօ անունը թողելու ժամանակն եկած է : »

Ստորագրութիւն չկար , այլ միայն այս երեք տառերը . L. P. D.

— Ա՛հ , ըրաւ կեղծամին խոպոպիները ոլորելով , եթէ զիրը

չեմ : Դանաչեր՝ անունը կարծեմ թէ կը ճանաչեմ : Պալսամօ , նախինքն , Պիին մէջ փնտուենք :

Իւր քսանն չորս զգրոցներէն մին բացաւ և փոքր արձանադրութիւն մը հանեց հանկէ՝ որուն վրայ այբուրենի կարգաւ , բարակ գրով մը և լի համառօտագրութիւններով դրուած էին երեք չորս հարիւր անուններ՝ առջևը , ետևը , քովը նշանակուած կրակու բոց սողակապներով :

— Օ՛ , մումուսց , ս'ըքսն բան կայ այս Պալսամօին վրայ :

Եւ միևնոյն դժգոհութեամբ բոլոր երեսը կարդաց : Յետոյ արձանադրութիւնը զգրոցը դրաւ վերստին՝ արկղիկին մէջ եղածները քննելու համար :

Հատ շանցաւ մեծ սողա որութիւն մը եղաւ վրան : Քիչ մ'ետք անուններով և ձածկադրութիւններով լի թուղթ մը գտաւ :

Այն թուղթը շատ կարևոր թուեցաւ իրեն . լուսանցքները շատ մտաւած էին և վրան լի էր մատիտի նշաններով : Պ. տը Սարգիսն հնչակը զարկաւ . սպառաւոր մ'եկաւ :

— Գիւանադպրին օգնականը հիմա թող գայ , ըսաւ : Գրասենեակներէն սենեակն անցուր որպէս զի ժամանակ չկորսուի :

Սպասաւորը գնաց :

Երկու վայրկեան ետք , դրացի մը գրիչը ձեռքը , գլխարկը մէկ թևին տակ , ահագին արձանադիր մը միւս թևին տակ , սև քօֆէ թեղանիքները իւր զգեստին թեղանիքին վրայ անցուցած գահլճին շեմին վրայ երնցաւ : Պ. տը Սարգիսն հայեւիին մէջէն ահաւզան և թուղթն ուսին վրայէն անոր տալով ,

— Լուծէ զայս , ըսաւ :

— Այո , տէր իմ , պատասխանեց զբացիւրը :

Ծածկադրութիւններ լուծող այս մարդը կարճահասակ և նուրբ մէկն էր , ներս քաշուած շրթերով , ըրած խուզարկութիւններէն պուտած յօնքերով , գունատ և քրթաձև գլխով , սուր կզակով , խորատոյղ ճակատով , գէր այտերով , սուզեալ և աղօտ աչերով՝ որ մերթ ընդ մերթ կը փայլէին :

Պ. տը Սարգիսն լա Գուին կը կոչէր զան :

— Նստէ , ըսաւ դատաւորը սենեակով որ ձեռքը եղածներէն փոթեր մնացեր է :

Լա Ֆուին համեաորէն ամոռակի մը վրայ նստաւ, Յունդերը քովէ քով բերաւ և սկսաւ ծնգանցը վրայ գրել անտարբեր դէմէ քով մը բառգիրքն ու յիշողութիւնը խուզելով:

Հինգ վայրկեան ետք գրած էր:

Բ

«Հրաման Բարիդի մէջ երեք հազար եղբայր ժողովելու:»

Բ

«Հրաման երեք շրջանակ և վեց օթեակ կազմելու:»

Բ

«Հրաման մեծ գօփղին համար սյահապանաց խումբ մը կազմելու, և անոր չորս բնակարան պատրաստելու՝ որոց մին արքայավայել տան մը մէջ:

Բ

«Հրաման հինգ հարիւր հազար ֆրանք անդր տրամադրութեան ներքե դնելու՝ ոստիկանութիւն մ'ուսնկնալու համար:»

Բ

«Հրաման Բարիդեան շրջանակներուն գլխաւորին մէջ անդամակից առնելու գրականութեան և փիլիսոփայութեան ծաղիկը:»

Բ

«Հրաման դատաւորները վարձելու կամ շահելու, մանաւանդ ոստիկանութեան տեղակալը ձեռք ձգելու՝ կաշտօքով, բռնութեամբ կամ խորամանկութեամբ:»

Լա Ֆուին հոս պահ մը կեցաւ չէ թէ գրածին վրայ մտածելով, խեղճ մարդուն մտքէն անգամ չէր անցներ այսպիսի բան մը՝ որովհետեւ յանցանք գործած կ'ըլլար, այլ որովհետեւ երեսը լեցուած ու մեկնը տակաւին թաց ըլլալով՝ շարունակելու համար սպասելու էր:

Պ. տը Սարգին անհամբեր՝ թուղթը խլեց անոր ձեռքէն և կարգաց:

Վերջին հատուածին հասած ատեն դէմքին վրայ այնպիսի վախ մը նկարուեցաւ՝ որ հայելոյն մէջ իւր գեղնութիւնը տեսնելով գունատեցաւ:

Թուղթը ետ չտուաւ գրագրին՝ այլ նոր թուղթ մ'երկնցուց անոր:

Գրագրին սկսաւ վերստին գրել հետզհետէ լուծելով. և այս գործը շատ դիւրութեամբ կը կատարէր:

Այս անգամ՝ Պ. տը Սարգին անոր ուսին վրայէն կարգաց:

Բ

«Բարիդի մէջ Պալսամօ անունը թողուլ՝ որ կ'սկսի հանրածանօթ ըլլալ, և առնուլ կոմս տը ֆէ. . . անունը:»

Մեկանի բիծ մը բառին մնացած մասը ծածկեր էր:

Այն միջոցին որ Պ. տը Սարգին՝ աւրուած վանկերը կը փնտռէր ամբողջ բառը կազմելու համար՝ դուրսը հ'չալը զարնուեցաւ և պայիկ մը ներս մտաւ ծանուցանելով,

— Պ. տը ֆէնիքս կոմս:

Պ. տը Սարգին ճիշ մ'արձակեց, և իւր կեղծամին ներդաշնակաւոր շէնքը աւրելու վտանգին մէջ դնելով՝ ձեռներն իրար կցեց զլիւնէն վեր, և գրագրին ստապարանօք ճօմբեց ծածուկ գունէ մը:

Յետոյ, գրասեղանին առջև դառնալով՝ պայիկին ըստ,

— Ներս բեր:

Քանի մը ըսպէ ետք Պ. տը Սարգին հայելոյն մէջ կոմսին խիստ կիսադէմը տեսաւ՝ զոր քիչ մը նշմարեր էր արքունիքը տիկին Տիւպարիի ներկայացման օրը:

Պալսամօ առանց բնաւին վարանելու ներս մտաւ:

Պ. տը Սարգին ոտք ելաւ, պաղ ընդունելութիւն մ'ըրբաւ կոմսին, և ոտքն ոտքին վրայ նետելով՝ կունակը թիկնաթողին տուաւ քաղաքավար կերպով մը:

Մէկ ակնարկով գատաւորն այս այցելութեան սլաւաճառն ու նպատակը նշմարեր էր:

Մէկ նայուածքով Պալատն ալ նշմարեւ էր արկղիկին բացուած  
և կիսովին Պ. տը Սարգիսի գրասեղանին վրայ պարպուած ըլ՝  
լալը :

Որքան գողունի կերպով ալ նետեց ակնարկը արկղիկին վրայ՝  
ոստիկանութեան տեղակալին աչքէն չվրիպեցաւ :

— Ի՞նչ գիպուածով պատիւ ունիմ՝ ձեր ներկայութիւնը վայե-  
լելու, պարոն կոմս, հարցոյց Պ. տը Սարգիս :

— Պարոն, պատասխանեց Պալատն քաղցրութեամբ լի ժպիտով  
մը, պատիւ ունեցայ ներկայացուելու Եւրոպիոյ բոլոր վեհապետ-  
ներուն, բոլոր պաշտօնէից, բոլոր պետականներուն. սակայն չգտայ  
մէկը որ զիս ձեզ ներկայացընէ : Ուստի եկայ ես զինքս ներկա-  
յացընելու :

— Ճշմարիտ, պարոն, պատասխանեց ոստիկանութեան տեղա-  
կալը, շատ յարմար ժամանակին եկաք, վասն զի կարծեմ թէ  
իթէ դուք ինքնին եկած չըլլայիք՝ ձեզ բերել պիտի տայի :

— Ա՛հ, ինչ ալ աղէկ յարմարեցաւ, ըստ Պալատն :

Պ. տը Սարգիս հեզնական ժպիտով մը խոնարհութիւն ըրտ :

— Արդեօք կրնամ ձեզի օգտակար ըլլալու երջանկութիւնն ու-  
նենալ, պարոն, շարայարեց Պալատն :

Եւ այս խօսքն ըսած ատեն անոր զուարթ դէմքին վրայ բնաւ  
յուզմունք կամ տազնապ չերեցաւ :

— Գուք շատ ճամբորդութիւններ ըրած էք, այնպէս չէ՞, պարոն  
գուքս, հարցոյց ոստիկանութեան տեղակալը :

— Շատ, պարոն :

— Ա՛հ :

— Թերևս աշխարհագրական տեղեկութիւն մը կ'ուզէք : Ձեզի  
պէս մեծահասակ մէկը միայն Գաղղիայով չըրաղիք՝ այլ Եւրո-  
պայով, բոլոր աշխարհքով . . .

— Աշխարհագրական տեղեկութիւն չէ ուզածս, պարոն կոմս,  
բարոյական ըսենք՝ աւելի ճիշդ կ'ըլլայ :

— Ոչ միայն և ոչ միւսին համար մի նեղուիք, ձեր հրամանին  
կ'ըստատեմ :

— Լաւ ուրեմն, պարոն կոմս, երևակայեցէք թէ խիստ վտան-

գաւոր մէկը կը փնտռեմ, մարդ մը որ անաստուած է . . .

— Ո՛հ :

— Գաւաճան է :

— Ո՛հ :

— Նենգիչ է :

— Ո՛հ :

— Շնացող, գրամանենդ, ճամարտակ, աշանդի գլուխ, մարդ մը  
որուն պատմութիւնն իմ արձանագրութիւններուս մէջ, այս արկղի-  
կին մէջ, ամենուրեք է :

— Ա՛հ, այո, հասկըցայ, ըստ Պալատն, պատմութիւնը ձեռ-  
քերնիդ է, բայց մարդը ոչ :

— Ոչ :

— Նզովից արմատ, այդ աւելի կարևոր է, կարծեմ :

— Անշուշտ, բայց պիտի տեսնէք թէ զան ձեռք անցընելու շա-  
մօտ ենք : Ճշմարիտ, այն խորհրդաւոր ճամբորդը Պրոդէոսէն աւելի  
այլափոփոխ, Արամազդէն բաղմանուն է. Աշարա՛ Եղիպտոսի մէջ,  
Պալատն՝ Իտալիոյ մէջ, Սօմինի՛ Սարտենիոյ մէջ, Աննա մարքիզ՝  
Սալդաի մէջ, Բէլիկրինի մարքիզ՝ Քօրսիքաի մէջ, վերջապէս կոմս  
. . .

— Կոմս . . . յարեց Պալատն :

— Ահա այս վերջին անունը լաւ չկրցայ կարգաւ, պարոն, վստահ  
եմ որ ինձ պիտի օղնէք, այնպէս չէ՞, վասն զի տարակոյս չկայ որ այն  
մարդը ձեր ուղևորութեանց մէջ և հիմա յիշած երկիրներուս մէջ  
տեսած ըլլալու էք :

— Քիչ մը տեղեկութիւն տուէք ինձ անոր վրայ, ըստ Պալատն  
հանդարտօրէն :

— Ա՛հ, կը հասկընամ, կերպ մը նկարագիր է ուզածնիդ, այնպէս  
չէ՞, պարոն կոմս :

— Այո, պարոն, եթէ կը հաճիք :

— Լաւ ուրեմն, ըստ Պ. տը Սարգիս Պալատնօր վրայ յառելով  
աչքը զոր կը ճղնէր խուզարկու ձևացնել, ձեր տարիքը, ձեր հասակը,  
ձեր իրանը մարդ մ'է, մերթ մեծ իշխանի մը պէս ոսկին կը ցանէ,  
մերթ բնութեան գաղտնիքները փնտռող ճամարտակ մը, երբեմն գաղտ-

նի ընկերութեան մը սեպտեմբեր մէկ անդամը՝ որ մուծին մէջ թագաւորաց մահ՝ և գահերուն կործանում կ'երգնու :

— Ո՛հ , այդ տեղեկութիւնները անբաւական են , ըստ Պալսամո :

— Ի՞նչ , անբաւական մի :

— Եթէ զիտնայիք թէ ո՞րքան մարդ տեսած եմ այդ նկարագրին նմանող :

— Իրա՞ն :

— Անշուշտ , ուստի եթէ կ'ուզէք որ ձեզի օգնեմ՝ աղէկ կ'ընէք եթէ քիչ մ'աւելի ստոյգ տեղեկութիւն տաք : 'Նախ' ո՞ր երկիրն աւելի կը բնակի :

— Ամեն երկիր ալ կը բնակի :

— Բայց այս միջոցին զո՞նէ :

— Այս միջոցին Գաղղիա կը գտնուի :

— Ի՞նչ կ'ընէ Գաղղիոյ մէջ :

— Ահազին դաւաճանութեան մը գլուխն է :

— Ահա , տեսա՞ք մի , ահա այս տեղեկութիւն մ'է , կեցցէք , և եթէ զիտնաք թէ ի՞նչ դաւաճանութիւն է՝ ձեռքերնիդ թել մը կ'ունենաք որուն ծայրը՝ հասնաբար՝ ձեր մարդը կը գտնէք :

— Ես ալ այնպէս կը կարծեմ :

— Լաւ ուրեմն , եթէ դուք ալ այնպէս կը կարծէք՝ ինձ ինչո՞ւ խորհուրդ կը հարցնէք : Աւելորդ է :

— Ա՛հ , պատճառն այն է որ ինքնիրենս կը մտածեմ :

— Ի՞նչ բանի վրայ :

— Այս բանին վրայ :

— Ըսէք :

— Ձերբակալել տամ՝ թէ ոչ :

— Թէ ո՞չ :

— Թէ ոչ :

— Աչք չեմ հասկընար , պարոն , վասն զի քանի որ կը դաւաճանէ . . .

— Այո , բայց թէ որ անունով մը , ախտոսով մը պաշտպանուած է :

— Ա՛հ , հասկը ցայ : Բայց ի՞նչ անուն , ի՞նչ ախտոս : Պէտք է ինձ

ըսէք այդ՝ որպէս զի ձեր խուզարկութեանց մէջ ձեզի օգնեմ , պարոն :

— Ի՛հ , պարոն , արդէն ձեզի ըսի թէ ո՞ր անուան ներքե ծածկուիլը զիտեմ , բայց . . .

— Բայց ո՞ր անուան ներքե ինքզինքը ցոյց տալը չէք զիտեր :

— Ճիշդ , ապա թէ ոչ . . .

— Ապա թէ ոչ ձերբակալել կու տայիք զինքը :

— Անմիջապէս :

— Լաւ ուրեմն սիրելիդ իմ պարոն տը Սարգին՝ ինչպէս որ քիչ մը առաջ կ'ըսէիք՝ բարեբաղդօրէն այս միջոցին եկեր եմ հոս , վասն զի ձեր ուզած ծառայութիւնը պիտի կատարեմ :

— Դո՞ւք :

— Այո :

— Անունը պիտի ըսէք ինձ :

— Այո :

— Այն անունը որուն ներքե ինքզինքը ցոյց կու տայ :

— Այո :

— Ուրեմն կը ճանաչէք զինքը :

— Կատարեալպէս :

— Ի՞նչ է ուրեմն այդ անունը , հարցուց Պ. տը Սարգին սուտ մը լսելու սպասելով :

— Կոմս տը Ֆէնիքս :

— Ի՞նչ , այն անունը որով ներկայացա՞ք :

— Այն անունը որով ես ներկայացայ , այո :

— Ձեր անունը :

— Իմ անունս :

— Ուրեմն այն Աշարան , այն Սօմինին , այն Աննա մարքիզը , այն Բէլիկրինի մարքիզը , այն Ժօզէֆ Պալսամօն դո՞ւք էք :

— Այո , ըստ Պալսամօ պարզապէս , ես եմ :

Պ. տը Սարգին պահ մը կեցաւ որ այս անսանձ համարձակութեան իրեն աղբած շլացումը վրայէն երթայ :

— Գուշկած էի այնպէս ըլլալը , ըստ , ձեզ կը ճանաչէի , զիտէի որ այն Պալսամօն և այս Ֆէնիքս կոմսը մէկ մարդ էր :

— Ա՛հ , դուք անողոգական պաշտօնեայ մ'էք :



— Գուք ալ անդուգական անխոհեմ մ'էք, ըսաւ դատաւորը հնչա-  
կին մօտենալով :

— Անխոհեմ, ինչու :

— Ղանս զի՛նք ձերբակալել պիտի տամ հիմա :

— Օ՛ն անդր, պատասխանեց Պալսամօ քայլ մ'առնելով դէպ 'ի  
գատաւորին և հնչակին մէջտեղը, միթէ զիս կը ձերբակալեն :

— Է՛հ, ի՛նչ կ'ընէք զիս արդիւլեւու համար : Կը հարցընեմ ձեզի :

— Կը հարցընէք :

— Այո :

— Սիրելիդ իմ Պ. տը Սարգին, հիմա ձեր գլուխը կը ծակեմ :

Եւ Պալսամօ ոսկերօծ սքանչելի ատրճանակ մը հանեց զրսանէն՝  
որ Պէնվէնուդօ Չէլլինիէն քանդակուած կրնար կարծուիլ՝ և զայն  
հանդարտօրէն ուղղեց Պ. տը Սարգինի երեսին՝ որ դեպի դեղին կտրե-  
ցաւ և թիկնաթոռի մը մէջ ինկաւ :

— Սանկ, ըսաւ Պալսամօ ոստիկանութեան տեղակալին թիկնա-  
թոռին քով ուրիշ թիկնաթոռ մը քաշելով և նստելով, ահաւասիկ  
հիմա նստանք, ուստի կրնանք քիչ մը խօսակցիլ :

ՃԻԵ

ԽՈՍԽԱՅՈՒԹԻՒՆ

Պ. տը Սարգին պահ մը շունչ առաւ այն սաստիկ յուզմունքն անցը-  
նելու համար : Ատրճանակին սպառնալից բերանը տեսեր էր՝ այնպէս  
որ գողցես մէջը նայիլ ուզած ըլլար. մինչև անգամ անոր երկաթէ  
պաղ շը ջանակը ճակոխն վրայ զդացեր էր :

Սերջապէս հանդարտեցաւ :

— Պարոն, ըսաւ, ես ձեր վրայ առաւելութիւն մ'առնիմ, որոն

հետ խօսիլ զիտնալով՝ չէի ըրեր այն զուշութիւնները՝ զոր սովո-  
րական չարագործներու դէմ կ'ընեն :

— Ո՛հ, պարոն, պատասխանեց Պալսամօ, կը տեսնեմ որ կը  
զայրանաք և անհամ խօսքեր կ'ըլլան : Միթէ չէք տեսներ թէ որ-  
քան անիրաւ էք : Ես եկած եմ ձեզի ծառայութիւն մ'ընելու :

Պ. տը Սարգին շարժում մը ըրաւ :

— Ծառայութիւն, այո, պարոն, կրկնեց Պալսամօ, և դուք  
իմ դիտաւորութիւններս սխալ կը մեկնէք. դուք ինձ դաւաճան-  
ներու վրայ կը խօսիք ճիշդ այն պահուն երբ ես ալ եկած էի  
դաւաճանութիւն մը ձեզի յայտնել :

Բայց Պալսամօ 'ի զուր կը խօսէր, այն միջոցին Պ. տը Սար-  
գին շատ ուշագրութիւն չէր ըներ այն վտանգաւոր այցելուին խօս-  
քերուն. թէև այս դաւաճանութիւն բաւր ուրիշ ատեն յանկարծ  
պիտի արթնցընէր զինքը՝ սակայն նոյն միջոցին հազիւ թէ ուշա-  
գրութիւն ըրաւ :

— Անշուշտ կը հասկընաք, պարոն, քանի որ այդչափ քաջ  
դիտէք ո՛վ ըլլալս, անշուշտ կը հասկընաք, կ'ըսեմ, Գաղղիոյ  
մէջ ունեցած պաշտօնս. վեհափառ Մեծն Ֆրէտէրիք առաքած է  
զիս, այսինքն՝ Նորին Բրուսիական Աւեհափառութեան քիչ շատ  
զաղտնի դեսպանը. արդ դեսպան մը հետաքրքիր կ'ըլլայ. ուստի  
ես ալ իրրե հետաքրքիր՝ անցած դարձածը շատ աղէկ դիտեմ,  
ամենէն աւելի պիտցածներուս մէկն ալ արմտեաց մենավաճառու-  
թիւնն է :

Որքան պարզութեամբ ալ արտասանեց Պալսամօ այս խօսքերը  
միւս բոլոր խօսքերէն աւելի ազդեցութիւն ըրին ոստիկանութեան  
տեղակալին վրայ, որովհետև սկսաւ ուշ դնել :

Գլուխը վեր առաւ ծանր կերպով :

— Ի՛նչ է այդ արմտեաց գործը, ըսաւ այնքան համարձակու-  
թիւն կեղծելով՝ որքան որ Պալսամօ ունեցեր էր խօսակցութեան  
սկիզբը : Շնորհ ըրէք այդ մասին ինձ տեղեկութիւն տալ, պար-  
ոն :

— Թօժարութեամբ, պարոն, ըսաւ Պալսամօ : Ահաւասիկ եղի-  
լութիւնը :

— Մտիկ կ'ընեմ :

— Գիտեմ այնպէս ըլլալը : . . : Շատ ճարտար շահագէտներ Գաղղիոյ վեհափառ թագաւորը համոզեր են թէ պէտք է շտեմարաններ շինէ իւր ժողովրդեան ցորենը հոն պահելու համար՝ սով եղած ատեն առաջին առնելու մտօք : Ուստի շտեմարանները շինեցին . շինած ատեննին ըսին թէ մեծ շինելու է զանոնք . բան մը շինայեցին , ոչ քարը և ոչ շաղախը , և շատ մեծ շինեցին զանոնք :

— Ետքը :

— Ետքը պէտք եղաւ զանոնք լեցընել : պարսպ շտեմարաններն անօդուտ էին . ուստի լեցուցին զանոնք :

— Լաւ ուրեմն , պարոն , ըսաւ Պ . տը Սարգին տակաւին աղէկ յտեսնելով թէ Պալսամօ ուր բերել կ'ուզէր խօսքը :

— Լաւ ուրեմն , անշուշտ կը գուշակէք թէ շատ մեծ շտեմարաններ լեցընելու համար շատ մեծ քանակութեամբ ցորեն դնել հարկ եղաւ հոն : Ճշմարտանման չէ՞ այս :

— Անշուշտ :

— Խօսքս կը շարունակեմ : Շատ մը ցորեն շրջաբերութենէ քաշելը ժողովուրդը սովալլուկ ընելու միջոց մ'է . վասն զի , աղէկ միտքերնիդ պահեցէք , շրջաբերութենէ քաշուած այսչափ դրամ կը ցուցնէ թէ այսչափ բերք պակասած է : Շտեմարանը հազար պարկ ցորեն մտած ատեն հրասպարակէն հազար պարկ կը պակսի : Այս հազար պարկը միայն տասնով բազմապատկեցէք և իսկոյն ցորենին գինը կը բարձրանայ :

Պ . տը Սարգին չոր հազէ մը բռնուեցաւ :

Պալսամօ կեցաւ և հանդարտօրէն սպասեց որ հազն անցնի :

— Ուստի , շարայարեց երբ ոստիկանութեան տեղակալը ատեն տուաւ իրեն , շտեմարանին շահագէտը արժէքին առնալովը ճոխացաւ . միթէ յտակ չէ՞ այս :

— Կարի յտակ , ըսաւ Պ . տը Սարգին . բայց իմացածիս նա յեւելով , պարոն , դուք ինձ դաւաճանութիւն մը կամ ոճիր մը կ'իմացընէք որուն հեղինակը Նորին Աւեհափառութիւնն ըլլայ :

— Ճիշդ , կրկնեց Պալսամօ , ուրեմն կը հասկընաք :

— Այդ մեծ յանդգնութիւն մ'է , պարոն , և շատ կը փափաքիմ գիտնալ թէ ինչպէս պիտի մեկնէ թագաւորը ձեր ըրած ամբաստանութիւնը . շատ կը վախնամ որ արգիւնքը դարձեալ նոյնը պիտի ըլլայ ինչ որ միտքս դրեր էի ձեր գալէն առաջ սոյն արկղին թղթերը քննած ատենս . զգուշացէք , պարոն , ձեր ծայրը միշտ Պասգէյլ պիտի ըլլայ :

— Ա՛հ , կը տեսնեմ որ ըսածս բնաւ չէք հասկընար :

— Ինչպէս :

— Տէր Աստուած , որքան սխալ կը դատէք զիս անմտի մը տեղ դնելով : Ինչ , միթէ կ'ենթադրէք թէ թագաւորին վրայ պիտի յարձակիմ , ես գետպան մը , հետաքրքիր մը . . . : Պարզամիտ մէկու մը պէս վարուած կ'ըլլայի : Ուստի կ'աղաչեմ , ըսածս մինչև վախճանը մտիկ ըրէք :

Պ . տը Սարգին գլխով շարժում մ'ըրաւ :

— Գաղղիոյ ժողովրդեան դէմ նիւթուած այս դաւաճանութիւնը երևան հանողները . . . (ներեցէք ինձ զոհած թանկազին ժամանակուդ համար , բայց քիչ մ'ետք պիտի տեսնէք թէ 'ի զուր վասնած չէք ձեր ժամանակը) — Գաղղիոյ ժողովրդեան դէմ նիւթուած այս դաւաճանութիւնը երևան հանողները սնտեսագէտներ են որ անխոնջ աշխատասիրութեամբ , մանրակրկիտ խուզարկութեամբ իրենց մանրացոյցը սոյն խարդաւանանքին վրայ դնելով նշմարեր են թէ թագաւորը առանձին չիաղաք : Լաւ գիտեն թէ Նորին Աւեհափառութիւնը զանազան վաճառանոցներու վրայ արմտեաց ունեցած գիներուն ճիշդ արձանագիր մը կը բռնէ , լաւ գիտեն թէ Նորին Աւեհափառութիւնը ձեռները կը շփէ երբ զինները բարձրանալով ութ կամ տասն հազար սկուտ կը շահի , սակայն գիտեն նաև թէ Նորին Աւեհափառութեան քով մարդ մ'ալ կայ՝ որուն գիրքը սակարկութիւնը կը դիւբայընէ , մարդ մը որ բնականաբար , քանի մը պաշտօններու շնորհիւ , — պաշտօնեայ մ'է , կը հասկընաք , — գնուածներուն , հասածներուն , վաճառքներուն կը հսկէ , միով բանիւ մարդ մը որ թագաւորին միջնորդ կ'ըլլայ , արդ սնտեսագէտները , մանրացոյցով նայողները ինչպէս որ ես կը կոչեմ՝ թագաւորին վրայ շին յարձակիր , ինչու որ ապուշ չեն :

այլ կը յարձակին այն մարդուն վրայ, սիրելիդ իմ պարոն, այն պաշտօնէին վրայ, այն գործակալին վրայ որ Նորին Աւհափառութեան տեղ տոյն նենպուծիւնը կը գործէ :

Պ. տը Սարգին շատ ջանաց որ հաւասարակշռութիւն տայ իւր կեղծամին՝ բայց ՚ի զուր :

— Արդ, շարայարեց Պալտաօ, հիմա եղելութեան կը հանիմ : Ինչպէս որ դուք ոստիկանութիւն մ'ունենալով գիտէիք թէ ես Պ. տը ֆէնիքս կոմսն եմ, ես ալ գիտեմ որ դուք Պ. տը Սարգինն էք :

— Է՛, ետքը, ըսաւ գատաւորը շփոթած : Այո ես Պ. տը Սարգինն եմ : Ինչ աղերս գիւտ :

— Ա՛հ, բայց գիտցէք որ այս Պ. տը Սարգինը ճիշդ տետրակ բռնող, իւր շահուն համար այս գործին մէջ մտնող, դրամն հաւաքող մարդն է, այն մարդն է որ թաղաւորին գիտնալովը կամ չգիտնալովը քսանեօթն միլիոն Գաղղիացուոց ստամբսէն շահ կը հանէ՝ մինչդեռ իւր պաշտօնն իրեն կը պատուիրէ կարելի եղածին չափ լաւ կերպով անուցանել զանոնք : Արդ, սրահ մը երեակայեցէք այնպիսի յայտնութեան մը հետեանքը, ժողովուրդը քիչ կը սիրէ ձեզ, թագաւորն ալ փափուկ մէկը չէ. սովալլուկները պուշտալով ձեր գլուխն ուղեւունս պէս՝ Նորին Աւհափառութիւնը կասկած չտալու համար որ ձեզի հետ գործակից է, կամ պատճելու համար եթէ դաւակից չէ՝ Նորին Աւհափառութիւնը պիտի փութայ զձեզ կախաղանն հանել տալ՝ ինչպէս որ Անկէրան տը Սարինսին ելաւ, միտքերնիդ կու գայ :

— Աղէկ միտքս չգար, ըսաւ Պ. տը Սարգին սաստիկ գունաթափ, և կը տեսնեմ որ լաւ ճաշակ չունիք, պարոն, իմ աստիճանիս մէկու մը կախաղանի խօսք ընելով :

— Ո՛հ, եթէ կախաղանի խօսք կ'ընեմ ձեզ, սիրելիդ իմ պարոն, ըսաւ Պալտաօ, պատճառն այն է որ կարծես թէ տակաւին աչքիս առջևն է այն խեղճ Անկէրանը : Ա՛րդնում որ նա Նորմանտիոյ անթերի ազնուականներէն մին էր, շատ հին ընտանիքէ մը և շատ ազնուական գերդաստանէ մը : Արքունի սենեկապահ, Լուվրի զօրապետ, Կանձուց և շինութեանց տեսուչէր, տը Լօնկվիլ կոմս էր :

կոմսութիւն մը՝ որ ձեր տ'Ալպի կոմսութենէն շատ երևելի էր : Լաուրեմն, պարոն, ես զինքը Մօնֆօթօնի կախաղանէն կախուիլը տեսայ՝ զոր ինքը շինել տուած էր, սակայն ես շատ անգամ իրեն ըսած էի, «Անկէրան, սիրելիդ իմ Անկէրան, զգուշացի՛ր, դանձուց այնպէս տակէն կը մանես վրայէն կ'ենես որ Շարլ տը Ալալուա չպիտի ներէ քեզի :» Խօսքս մտիկ չըրաւ, պարոն, և դժբաղդարար ՚ի կորուստ մատնեցաւ : Աւաղ, եթէ դիտնայիք թէ որքան ոստիկանութեան պաշտօնեաներ տեսած եմ Պիլատոսէն սկսելով որ Յիսուս Քրիստոսը դատապարտեց, մինչև Պ. Պէրդէն տը Պէլ-Իլ՝ կոմս տը Պուրտէյլ՝ իշխան Պրանցօմի՝ ձեր նախորդը՝ որ կանթեղներն հաստատեց և փունջերն արգիլեց :

Պ. տը Սարգին ոտք ելաւ ՚ի զուր ջանալով ծածկել այն յուզմունքը որուն ճարակ եղեր էր :

— Լաւ, ըսաւ, զիս կ'ամբաստանէք՝ թէ որ կ'ուզէք, ինչ փոյթս է այնպիսի մարդու մը վկայութիւնը որ բանի մը կասուած չէ :

— Զգուշացէք, պարոն, ըսաւ Պալտաօ, շատ անգամ անոնք ամեն բանի կասուած են որոնք բանի մը չկասուած կ'երևին, երբ բուլոր մանրամասն պարազաներով այս մեղաւաճաւ եղած ցորենին պատմութիւնը գրեմ իմ թղթակցիս կամ Ֆրէտէրիքին որ փիլիսոփայ է ինչպէս որ գիտէք, երբ Ֆրէտէրիք փութայ եղելութիւնը Պ. Արուէ տը Աօլգէրին գրել իւր կողմէն ալ մեկնութիւններ աւելցրնելով, երբ Աօլգէր ալ իւր գրչովը որուն գէթ համբար գիտէք կը յուսամ, քառասուն տարեց զէպին պէս չարաճճի վէպ մը շինէ. երբ Պ. տ'Ալամպէր՝ այն հիանալի երկրաչափը հաշուէ թէ հասարակաց անունդէն զողջուած ցորենով հարիւր միլիոն մարդ կրնայ կերակուրուիլ երեք չորս տարուան մէջ, երբ Հելվէտիոս հաստատէ թէ այս ցորեներուն զինը վեց ֆրանքսոց սկուտի վերածուի և իրարու վրայ դուռի՝ մինչև լուսինը կրնայ բարձրանալ, կամ դրամատոմիս փոխուած և իրարու քով գրուած ատեն մինչև Բեդերսպուրկ կրնայ հասնիլ, երբ այս հաշիւը յուր թատրերգութիւն մը ներշնչէ Պ. տը Աւ Շարբի, ընտանեաց Հօր խօսակցութիւն մը՝ Տիտրօի, և այն խօսակցութեան սոսկալի մեկնութիւն մը՝ Ժընէվի Ժան-Ժաք Ռուսօի որ ուզած ատենը գէշ չխածնէր, յիշատակարան մը Պ. Գարօն տը Պամարշէի որուն

ոտրին վրայ Աստուած չընէ որ կոխէք, փոքրիկ նամակ մը՝ Պ. Արիմի, կոշտ հանձարարանութիւն մը՝ Պ. ԹՕլլախի, սիրուն բարոյամէս մը՝ Պ. տը Մարմօնդէլի որ դձեղ կ'սպաննէ գէշ պաշտպանելով, երբ այս նիւթին վրայ խօսին Խնամակալութեան սրճարանը, Օտինօի տունը, թաղաւորին մեծ պարաւորակներուն մէջ որոնք Նիգօլէէն կը հողա-ցունին ինչպէս որ գիտէք, անձ, պարոն կոմս ԹՕլլախի, այն խեղճ Ան-կէրան տը Մարինեիէն շատ աւելի հիւանդ ուստիկանութեան տեղա-կալ մը կ'ըլլաք, սրուն անունը լսել չէք ուզեր, բայց նա կախաղանը ելած ատեն կ'ըսէր թէ անմեղ է ինքը, և այնքան անկեղծութեամբ կ'ըսէր՝ որ պատիւս վկայ հաստացի խօսքին:

Այս խօսքերուն վրայ Պ. տը Մարդին պատշաճութեան չնայելով՝ կեղծամը հանեց և քրտնաթոր դանկը սրեց:

— Լաւ, այնպէս թող ըլլայ, ըսաւ. սակայն բոլոր ասոնք բնաւ արգելք մը չեն ըլլար: Ձիս 'ի կորուստ մատնեցէք՝ եթէ կրնաք: Գուք ձեր փաստերն ունիք, ես ալ իմս: Պահեցէք ձեր գաղտնիքը, ես ալ արկղիկը կը պահեմ:

— Պարոն, անշա մեծ սխալ մ'ալ՝ որուն մէջ ձեզի պէս կորու-վամիտ մէկու մը ինչալը տեսնելով շատ կը զարմանամ. այդ արկ-ղիկը: . . .

— Լաւ, այս արկղիկը:

— Չպիտի պահէք զայն:

— Ո՛հ, դոչեց Պ. տը Մարդին հեգնական ծիծաղով մը, ճշմա-րիտ է. մոռցայ թէ Պ. տը Ֆէնիքս կոմսը լերան ազնուական մ'է որ զինու զօրութեամբ մարդիկը կը կողոպտէ: Ձեր ատրճանակը չէի տեսներ այլ ևս, վասն զի գրպաննիդ գրիք, ներեցէք, պարոն դեսպան:

— Է՛հ, տէր Աստուած, խնդիրը ատրճանակի վրայ չէ, պարոն տը Մարդին, անշուշտ չէք կարծեր որ բռնութեամբ, մաքառելով առնեմ ձենէ այս արկղիկը, և սանդուխին վրայ հասածիս պէս դուք ալ զանդակը զարնէք և զողը բռնեցէք պոռաք: — Ո՛չ, երբ կ'ըսեմ թէ արկղիկը չպիտի պահէք՝ ըսել կ'ուզեմ թէ դուք սի-րով և կամովին ինձ պիտի վերադարձնէք զայն:

— Ե՛ս, դոչեց գատաւորը բունն այնպէս դնելով կուռը նիւթ

եղող առարկային վրայ որ քիչ մնաց զայն պիտի խորտակէր:

— Այո, դուք:

— Աղէկ, աղէկ, ծաղրեցէք, պարոն. այս արկղիկը տունելու մասին՝ գիտցած ըլլաք որ կենացս հետ կրնաք առնել զայն: Ի՛նչ կ'ըսեմ, կենացս հետ. միթէ կեանքս հազար անգամ վտանգի դրած չեմ, միթէ արեանս մինչև յետին կաթիլը Նորին Աեհափառու-թեան ծառայութեանը պարտաւոր չեմ: Սպաննեցէք զիս, ազատ էք. սակայն ելած ձայնէն վրէժխնդիրներ կու գան, և իմ վրայ բաւական ձայն մը կը մնայ ձեր դճիրները հաստատելու համար: Ա՛հ, այս արկղիկը ձեզ դարձնեմ, յարեց դառն ժպիտով մը, դժոխքն անգամ ուզէ՝ չեմ տար:

— Ուստի ես ալ սանդարամետային զօրութեանց միջնորդութիւնն 'ի գործ չպիտի դնեմ. ինձ բաւական է այն միջնորդութիւնը՝ որ այս պահուս ձեր բակին դուռը զարնել կու տայ:

Արդարև իշխանական կերպով դրան զարնուած երեք հարուած լուռեցան:

— Եւ որուն կառքը, շարայարեց Պալսամօ, մտիկ ըրէք, այս միջոցին ձեր բակը կը մտնէ:

— Կ'երեի թէ ձեր բարեկամներէն մին է, որ ինձ այցելութեան գալու պատիւ կ'ընէ, այնպէս չէ:

— Ինչպէս որ կ'ըսէք՝ իմ բարեկամներէս մին է:

— Եւ անոր պիտի դարձնեմ այս արկղիկը:

— Այո, սիրելիդ իմ պարոն տը Մարդին, անոր պիտի դար-ձնէք:

Ոստիկանութեան տեղակալը արհամարհական շարժում մը տա-կաւին չաւարտած՝ պայիկ ո՛րձսպարանօք դուռը բացաւ և իմաց տուաւ թէ տիկին Տիւպարի կոմսուհին ունկնդրութիւն կը խնդրէր Պ. տը Մարդինէն:

Ոստիկանութեան տեղակալը սարսուցաւ և Պալսամօի նայեցաւ ափիբերան՝ որ բոլոր զօրութիւնն 'ի գործ կը դնէր պատուէլի դա-տաւորին քթին չխնդալու համար:

Նոյն միջոցին կին մը որ կը կարծէր թէ հրաման առնելու պէտք չունի՝ արագ և անուշաբոյր ներս մտաւ. գեղանի կոմսուհին էր

որուն ալեծուփ շրջազգեստը դահճին դրան քսուելով անուշ ձայն մը հանեց :

— Դուք , տիկին , դուք , մրմնջեց Պ. տը Սարգին որ տակաւին վրան վախ ըլլալով՝ ձեռացը մէջ բռնած կուրծքին վրայ կը սեղմէր բաց մնացած արկղիկը :

— Բարե , Սարգին , ըսաւ կոմսուհին զուարթ ժպիտով մը :  
Յետոյ Պալամոնի դառնալով :

— Բարե , սիրելի կոմս , յարեց :

Եւ ձեռքն երկնցուց այս վերջնոյն՝ որ ընտանեբար ծուեցաւ այն սպիտակ ձեռին վրայ և շրթերն անոր վրայ դրաւ՝ ուր շատ անգամ դրուած էին թագաւորին շրթերը :

Այս շարժման մէջ Պալամոն ժամանակ ունեցեր էր ցած ձայնով քանի մը խօսք ըսելու՝ զոր չէր կրցած լսել Պ. տը Սարգին :

— Ա՛հ , ճիշդ , գոչեց կոմսուհին , ահա իմ արկղիկս :

— Չեր արկղիկը՞ , կակաղեց Պ. տը Սարգին :

— Անշուշտ , իմ արկղիկս : Տես , բացեր ես , և հոգ չես ըներ :

— Սակայն , տիկին . . . :

— Ա՛հ , շատ աղէկ է այս , մտքէս անցաւ . . . : Այս արկղիկը գողցան ինէ . այն ատեն ինքնիրենս ըսի . «Պէտք է որ երթամ Սարգինը տեսնեմ , նա կը գտնէ :» Յառաջագոյն գտեր ես , չնորհակալ եմ :

— Եւ ինչպէս որ կը տեսնէք , ըսաւ Պալամոն : պարոնը բացեր է անգամ :

— Այո , ստոյգ է . . . : Այս եղանկ բան է : Բայց անտանելի բան է այս եղանկը , Սարգին :

— Տիկին , ձեզի համար ունեցած մեծարանօքս հանդերձ կը վախնամ որ ձեզ կը խաբեն :

— Կը խաբեն , պարոն , ըսաւ Պալամոն , միթէ այդ խօսքն ինձի համար կ'ընէք :

— Ես գիտցածս գիտեմ , պատասխանեց Պ. տը Սարգին :

— Իսկ ես բան մը չգիտեմ , ցած ձայնով ըսաւ տիկին Տիւպարի Պալամոնի : Ըսէք նայինք , ի՞նչ կայ , սիրելի կոմս : Դուք պա-

հանջեցիք ինէ այն խոստումը որ ձեզի ըրեր էի՝ ձեր ընելիք առաջին խնդիրը կատարելու համար , Մարդու մը պէս խօսքս բռնելով՝ ահաւասիկ եկայ : Ըսէք նայինք , ի՞նչ կ'ուզէք :

— Տիկին , պատասխանեց Պալամոն բարձր ձայնով , քիչ օր առաջ այն արկղիկն ինձ յանձնեցիք և ինչ որ մէջը կար :

— Անշուշտ , ըսաւ տիկին Տիւպարի ախարկով մը կոմսին ախարկին պատասխանելով :

— Անշուշտ , գոչեց Պ. տը Սարգին , անշուշտ կ'ըսէք , տիկին :

— Այո , և տիկինը բաւական բարձր արտասանելով այս խօսքը՝ հարկաւ լսեցիք :

— Արկղիկ մը որուն մէջ թերեւս տասն դաւաճանութիւն կայ :

— Ա՛հ , պարոն ար Սարգին , զիտէք որ այդ բառին հետ բաղդ չունիք , մի կրկնէք ուրեմն : Տիկինը իւր արկղիկը կ'ուզէ ձեռնէ , դարձուցէք իրեն , ամեն բան կը լմնայ :

— Կ'ուզէք , տիկին , ըսաւ Պ. տը Սարգին բարկութենէն դուրս գալով :

— Այո , սիրելի դատաւոր :

— Բայց , գոնէ զիտցէք . . .

Պալամոն կոմսուհոյն նայեցաւ :

— Գիտնալու բան մը չունիմ , ըսաւ տիկին Տիւպարի . դարձուր ինձ արկղիկը . չնչին բանի մը համար ելած եկած չեմ , կը հասկընա՞ք :

— Յանուն կենդանի Աստուծոյ , յանուն Կորին Աւհափառութեան շահուց . . .

Պալամոն անհամբեր շարժում մ'ըրաւ :

— Արկղիկը , պարոն , ըսաւ կոմսուհին կարճ կերպով մը , արկղիկը , այո՛ կամ ո՛չ , Սակայն խորհեցէք ոչ ըսելէ առաջ :

— Ինչպէս որ կ'ուզէք , տիկին , ըսաւ Պ. տը Սարգին խոնարհարար :

Եւ կոմսուհոյն երկնցուց արկղիկը՝ որուն մէջ արդէն Պալամոն մտցուցեր էր դրասեղանին վրայ ցրուած բոլոր թղթերը :

Տիկին Տիւպարի Պալամոնի կողմը դարձաւ սիրուն ժպիտով մը :

— Կսմս , ըսաւ , արկղիկը մինչև կառքս կը բերէք և ձեռքեր-

նիդ ինձ կու տա՞ք որպէս զի տղեղ դէմքերով լեցուած նախասե-  
նեակներէն առանձին չանցնիմ :

— Շնորհակալ եմ, Սարգին :

Եւ Պալսամօ իւր պաշտպանուհւոյն հետ արդէն դրանը կը մօ-  
տենար՝ երբ տեսաւ որ Պ. տը Սարգին հնչակին կը մօտենայ :

— Տիկին կոմսուհի, ըսաւ Պալսամօ նայուածքով իւր թշնամին  
կեցընելով, շնորհ ըրէք Պ. տը Սարգինի ըսել՝ որ սաստիկ ոխ ու-  
նի ինձ դէմ՝ ձեր արկղիկը պահանջելու համար, շնորհ ըրէք ի-  
րեն ըսելու թէ որքան պիտի ցաւիք եթէ ոստիկանութեան Պ. տե-  
ղակալին ձեռօք ինձ չարիք մը հասնի, և թէ որքան դժգոհ պի-  
տի ըլլաք իրմէ :

Կոմսուհին Պալսամօի նայելով ժպտեցաւ :

— Կը ըսես Պ. կոմսին ըսածը, սիրելիդ իմ Սարգին, շատ ճշմա-  
րիտ է ըսածը. Պ. կոմսը իմ ընտիր բարեկամս է. ուստի եթէ  
որ և է անհաճոյ բան մ'ընես անոր՝ ոխերիմ թշնամի կ'ընես զիս  
քեզի : — Մնաս բարեաւ, Սարգին :

Եւ այս անգամ ձեռքը Պալսամօի ձեռքին մէջ՝ որ արկղիկը  
կը տանէր, տիկին Տիւպարի ոստիկանութեան տեղակալին դահլի-  
ճէն մեկնեցաւ :

Պ. տը Սարգին այն երկուքին մեկնիլը տեսաւ առանց ցոյց տա-  
լու այն զայրոյթը՝ զոր Պալսամօ կ'սպասէր :

— Գնա՛, մռմռաց նիւն դատաւորը, գնա՛, արկղիկը քու ձեռքդ  
է, սակայն կիներն ալ իմ ձեռքս է :

Ուստի վրէժն առնելու համար սկսաւ հնչակները ջախջախելու  
չափ ուժով զարնել :

### ՃԻՉ

## ԹԷ ԵՐՐ Պ ՏԸ ՍԱՐԳԻՆ ԿՍԿՍԻ ԿԱՐՑԵԼ ԹԷ ՊԵԼՍԱՄՕ ԿԵԽԱՐԿ Է

Պ. տը Սարգինի զանգակին յախուռն թնդիւնը լսելով բարա-  
պան մը ներս վազեց :

— Է՛, կինը՞, հարցուց դատաւորը :

— Ո՞ր կինը, տէր իմ :

— Այն կինը որ հոս մարեցաւ և ձեզի յանձնեցի :

— Շատ աղէկ վիճակի մէջ է, տէր իմ, պատասխանեց բա-  
րապանը :

— Լաւ. հոս բեր :

— Ո՞ւտի բերեմ :

— Ի՞նչ ըսել է. քովի սենեկէն :

— Հոն չէ, տէր իմ :

— Հոն չէ՞ : Ո՞ւր է ուրեմն :

— Չեմ գիտեր :

— Մեկնեցաւ :

— Այո :

— Առանձին :

— Այո :

— Բայց ոտքի վրայ չէր կրնար կենալ :

— Տէր իմ, ճշմարիտ է, քիչ մ'ատեն մարած մնաց. բայց

Պ. տը Ֆէնիքս կոմսին դալէն հինգ վայրկեան ետք այն տարօրի-  
նակ վիճակէն սթափեցաւ, վիճակ մը՝ որուն և ոչ մէկ դարման  
օգուտ չըրաւ : Այն ատեն աչերը բացաւ, կանգնեցաւ և գոհունակ  
կերպով մը շունչ առաւ :

— Ետքը՞ :

— Ետքը, դէպ ՚ի գուռը գնաց. և որովհետեւ հրաման արուած  
չէր զան վար գնելու համար՝ թող սուինք և գնաց :

— Գնաց , գոչեց Պ. տը Սարգին : Ա՛՛՛՛՛ , թշուառականներ , ձեզ ամենքդ ալ Պիսեղորի մէջ պիտի փոսեցընեմ : Շուտ , շուտ : Թող առաջին գործակալս ինձ յղեն :

Բարապանն աշխուժիւ դուրս ելաւ առած հրամանը կատարելու համար :

— Թշուառականը կախարդ է , մումուաց անբաղդ դատաւորը : Ես թագաւորին ոստիկանութեան պաշտօնեայն եմ , նա ալ սատանին ոստիկանութեան պաշտօնեայն է :

Ընթերցողն արդէն անշուշտ հասկըցաւ ինչ որ Պ. տը Սարգին չէր կրնար իմանալ : Ատրձանակին տեսարանէն անմիջապէս ետք՝ երբ ոստիկանութեան տեղակալը ինքզինքը դանելու կը ջանար՝ Պալսամօ նոյն ժամանակէն օգուտ քաղելով՝ հետզհետէ չորս աշխարհադրական կողմերը դառնալով՝ աներկբայ որ անոնցմէ միոյն մէջ պիտի պատահէր Լօրէնցայի , հրաման ըրեր էր անոր որ ելնէ և եկած ճամբէն դարձեալ դառնայ՝ այսինքն Սէն-Գլօտ փողոցը :

Պալսամօի մտքին մէջ այս կամքը կազմուելուն պէս՝ մադիստական յորձանք մը հաստատուեր էր անոր և նորատի կնոջ մէջ՝ որ իրեն տրուած հրամանին հնազանդելով՝ ոտք ելեր ու մեկնէր էր , և ոչ ոք ընդդիմութիւն չէր ըրեր անոր երթին :

Պ. տը Սարգին նոյն իսկ այն իրիկունը անկողին մտեր և արին առնել տուեր էր . ցնցումը սաստիկ ըլլալով անմիաս չէր անցեր , և եթէ քառորդ մ'ալ աւելի տեէր , հաւաստեր էր բժիշկը , կաթուածահար պիտի ըլլար :

Նոյն միջոցին Պալսամօ կառքն առաջնորդեր էր կոմսուհին , և ջանացեր էր բաժնուելու հրաման ինդրել անորմէ . բայց այնպիսի կին մը չէր որ իւր աչքին առջև կատարուած տարօրինակ եղելութեան բացատրութիւնը չլիտցած կամ զիտնալ չփորձած զան թողուր որ երթայ :

Աւստի կոմսին աղաչեց որ իւր քովը նստի կառքին մէջ . կոմսն հնազանդեցաւ , և կարապետ մը ձիւրիտի սանձէն բռնելով սարաւ :

— Տեսաք , կոմս , թէ խօսքս բոնո՞ղ մէկն եմ , և երբ մէկը

քարեկամ կոչեմ՝ բերնով թէ սրտով կ'ըսեմ : Այսին պիտի դառնայի՝ ուր՝ թագաւորն ինձ ըսեր էր թէ վաղն առտու պիտի գար զիս տեսնել , բայց ձեր նամակն առած ատենս ամեն բան թողուցի ձեզի համար : Շատերը պիտի սարսափէին այն դաւաճանութիւն և դաւաճան բառերէն՝ զոր ստեպ կը կրկնէր Պ. տը Սարգին . գործելէ առաջ ձեր երեսը նայեցայ և ձեր բաղձանայն համեմատ վարուեցայ :

— Տիկին , պատասխանեց Պալսամօ , ձեզի մատուցած ծառայութիւնս լիով լի վճարեցիք դուք , բայց ինչ ոչ որ կորուստ կ'ընէ , պիտի տեսնէք թէ երախտագիտութիւնս ինչպէս ցոյց պիտի տամ : Սակայն մի կարծէք թէ Պ. տը Սարգինի բւսածին պէս ոճրագործ մը կամ դաւաճան մ'եմ : Այն սիրուն դատաւորը զիս մասնող մէկէ մը տուցեր էր այս արկղիկը որ լի էր իմ՝ բնալուծական դաղանիքներով , գաղանիքներ որոց ձեզ ալ մասնակից ընել կ'ուզեմ , տիկին կոմսուհի , որպէս զի տահէք այդ անմահ , լուսափայլ դեղեցկութիւնը , այդ ակնխախտիլ թարմութիւնը : Արդ , թղթերուս ծածկադրութիւնները տեսնելով Պ. տը Սարգին օգնութեան կոչեր է իրեն զիւանագպիւրը՝ որ չխաբուելու մտք՝ ուղածին պէս մեկնէր է իմ ծածկադրութիւններս : Արժեմ անգամ մ'ըսած եմ ձեզ տիկին , սոյն արհեստը տակալին աղատ չէ այն վտանգն : Եւ որով պաշարուած էր միջին դարու մէջ . ձերինն պէս իմաստուն և նորահաս մտքերը միայն անոր նպաստաւոր են : Միտը բանիւ , տիկին , զիս շփոթէ մ'աղատեցիք , ասոր համար իմ երախտագիտութիւնս կը յայտնեմ ձեզ և անոր ապացոյցը պիտի տամ :

— Բայց ինչ պիտի ընէր ձեզի եթէ օգնութեան չհասնէի :

— Չարութիւն մ'ընելու համար Գրէտէրիք թագաւորին՝ զոր Նոբրին Աեհափաւութիւնը կ'ատէ՝ զիս Աէնսան կամ Պատգիլը գնել կուտար : Գիտեմ որ ես հոնկէ դուրս կ'ելնէի շնորհիւ այն միջոցին՝ որով քարին փշած ատենս կը հալի , սակայն այն ատեն արկղիկս վրայ կուտայի՝ որուն մէջ՝ ինչպէս որ պատիւ ունեցայ ձեզի ըսելու՝ կարծի հետաքրքրաշարժ և անգին ծանօթութիւններ կան գիտութեան երջանիկ մէկ դիպուածովը յախտենական մտթէն խլուած :

— Ա՛՛՛՛՛ , կոմս , դուք զիս կը վստահացնէք և միանգամայն սաստիկ կ'ուրախացընէք : Աւստի կը խոստանաք ինձ այնպիսի բնուելի մը որով երիտասարդանամ :

- Այո :
- Ե՛րբ պիտի տաք ինձ զայն :
- Ո՛հ , աճապարելու հարկ չկայ : Բասն տարի ետք կ'ուզէք ինձմէ զայն , սիրելի կոմսուհի : Առ այժմ կը մտածեմ թէ անշուշտ տղայա- նալու փափաք չունիք :
- Արդարեւ , սքանչելի մարդ մ'էք դուք , սակայն վերջին հար- ջում մ'ալ կ'ընեմ և ձեզ կը թողում , վասն զի ինձ կը թուի թէ շատ կ'աճապարէք :
- Խօսեցէք , կոմսուհի :
- Ինձ ըսիք թէ մէկը ձեզ մասնեւր էր , մարդ մ'է , թէ կին մը :
- Այն մ'է :
- Ա՛ , ա՛ , կոմս , սէ՛ր :
- Աւա՛ղ , այո , վրան ալ աւելցուցէք նախանձ մը որ մինչև կա- տաղը թեան կը հասնի , և այն գեղեցիկ արդիւնքը յառաջ կը բերէ զոր տեսար . ահա կին մը որ չկարենալով դանակի հարուած մը տալ ինձ , ըստ որում գիտէ թէ ես չեմ սպաննուիր , ուղեց զիս բանտի մը մէջ թաղել տալ կամ կործանել :
- Ի՞նչ , կործանել :
- Գէթ իւր կարծեօք :
- Կոմս , կաւքը կը կեցընեմ , ըսաւ կոմսուհին խնդալով : Արդեօք ձեր երակներուն մէջ հոսող սնդկին շնորհին է որ ստացած էք այդ անմահութիւնը , այնպէս որ ձեզ կը մատնեն փոխանակ ձեզ սպաննե- լու : Հո՞ն իջեցնեմ ձեզ թէ տուն տանիմ :
- Տիկին , ա՛լ բարեսիրութեան չափը կ'անցնի եթէ ինձի համար ձեր ճամբէն խոտորիք : Ճիրիտ ձիս հոս է :
- Ա՛ , այն սքանչելի անասունը որուն համար կ'ըսեն թէ հողէն աւելի արագընթաց է :
- Կը տեսնեմ թէ ձեզ հաճելի է այն :
- Արդարեւ ընտիր դեղաղատ մ'է :
- Ներեցէք որ ձեզ նուիրեմ զայն , այն պայմանաւ որ միայն դուք հեծնէք :
- Ո՛հ , ոչ , շնորհակալ եմ . ես ձի չեմ հեծներ , կամ դէթ խիստ երկչոտութեամբ կը հեծնեմ : Ուստի ձեր այդ դիտաւորութիւնը նուէ-

- րին չափ արժէք ունի : Մնայք բարեաւ սիրելի կոմս , մի մտնաք որ տասն տարիէն վերանորոգիչ ըմպելին պիտի տաք ինձ :
- Ես քսան տարի լըսի :
- Կոմս , դուք դիտէք այս առածը , «Աւելի լաւ ունիմ որ քոզու ըլլայ . . . » Նոյն իսկ եթէ կրնաք հինգ տարիէն ինձ տալ զայն . . . :
- Մարդ չկրնար զխնալ զալիքը :
- Ուզած ատեննիդ կու աամ , կոմսուհի : Ձէք գիտեր որ բոլորա- վին ձերն եմ :
- Յետին խօսք մ'ալ , կոմս :
- Մտիկ կ'ընեմ , տիկին :
- Ձեր վրայ շատ մեծ վստահութիւն ունիմ որ այս խօսքը կ'ընեմ : Պալտամօ որ արդէն կառքէն իջեր էր՝ անհամբերութեանն յաղ- թեւով կոմսուհոյն մօտեցաւ :
- Ամենուրեք կ'ըսեն , շարայարեց տիկին Տիւպարի , թէ թագա-ւորը հաճութիւն կ'զգայ Պավէրնէյի աղջիկէն :
- Ա՛հ , տիկին , ըսաւ Պալտամօ , միթէ կարելի է այդ :
- Անդաճնուն նայելով շատ մեծ հաճութիւն մը : Պէտք է որ ինձ ըսէք , կոմս , եթէ ճշմարիտ է այս՝ մի խնայէք ինձ , կոմս , բարեկամի մը պէս վարուեցէք հետս , երդում կու տամ ձեզ , կոմս , ճշմարտու- թիւնն ըսէք ինձ :
- Տիկին պատասխանեց , Պալտամօ , աւելին պիտի ընեմ , ես կ'ե- բաշխաւորեմ թէ երբէք օրիորդ Անտրէ թագաւորին սիրուհին չպի- տի ըլլայ :
- Ինչո՞ւ համար , կոմս , դուք տիկին Տիւպարի :
- Ինչու որ ես չեմ ուզեր , ըսաւ Պալտամօ :
- Ո՛հ , ըրաւ տիկին Տիւպարի չհաւատալով :
- Կը կասկածիք :
- Ներելի չէ :
- Երբէք կասկած մի ունենաք դիտութեան վրայ , տիկին : Երբ ձեզի այո ըսի՝ հաւատացիք ինձ . երբ ոչ կ'ըսեմ՝ դարձեալ հաւատա- ցէք :
- Բայց վերջապէս ունի՞ր այնպիսի միջոցներ . . . հոս կեցաւ ծպտելով :



— Աւարանցէք :

— Այնպիսի միջոցներ որով կարենաք թաղաւորին կամքը ջնջել կամ անոր քմահաճոյիցը դէմ դնել :

Պալատն ժպտեցաւ :

— Ես համակրութիւն կ'ստեղծեմ :

— Այո , գիտեմ այդ :

— Այլ հաւատար նաև :

— Այլ հաւատամ :

— Լաւ ուրեմն նոյնպէս ալ հակակրութիւն պիտի ստեղծեմ , պէտք եղած ատենը անկարելիութիւն : Ուստի անհոգ եղիք , կոմսուհի , ես կը հսկեմ :

Պալատն բոլոր այս պարբերութեանց ծուկները այնպիսի սխալներով կը տարածէր՝ որ եթէ կոմսուհին գիտնար թէ Պալատն որքան տենդալի ծարաւ մ'ունէր կարելի եղածին չափ շուտ Լօրէնցան տեսնելու՝ դուշակութեան տեղ պիտի չգնէր զանոնք :

— Օ՛ն , ըսաւ կոմսուհին , ստուղիւ , կոմս , դուք ոչ միայն իմ բարեաց գուշակս էք՝ այլ նաև իմ պահապան հրեշտակս : Աոմս , ուշադրութիւն ըրէք , ձեզ պիտի պաշտպանեմ , դուք ալ զիս պաշտպանեցէք : Գաշակցութիւն , գաշակցութիւն :

— Ըրինք՝ տիկին , ըսաւ Պալատն :

Եւ անգամ մ'ալ պաղաւ կոմսուհեոյն ձեռքը :

Յետոյ կառքին դռնակը գոցելով՝ զոր կոմսուհին 'ի Շան-Ղէլիդէ կեցուցեր էր՝ իւր ձին հեծաւ որ ուրախութենէն վրնջեց , և գիշերուան մութին մէջ անյայտ եղաւ :

— Ի Լիւսիէն , գոչեց տիկին Տիւսարի միւլիթարուած :

Պալատն այս անգամ թեթև շչիւն մը լսել տուաւ , ծոնդերը քիչ մը սեղմեց և ձիւրիտը քայլեցուց՝ որ սկսաւ սրարշաւ երթալ :

— Հինգ վայրկեանէն Աէն-Պլօտ փողոցի տան դուռին հասաւ և Քրիցի նայեցաւ :

— Ի՛նչ եղաւ , հարցուց անձկութեամբ :

— Այո , տէր , պատասխանեց ծառան որ անոր նայուածքէն ինչ ըսել ուզելը սովորաբար կը հասկընար :

— Վերադարձա՛ւ :

— Վերն է :

— Ո՛ր սենեակը :

— Մուշտակներու սենեակը :

— Ի՛նչ վիճակի մէջ :

— Ո՛հ , խիստ խոնջած , այնքան արագ կը վազէր որ՝ հեռուէն տեսած ատենս երբ կը լրտեսէի՝ ժամանակ անգամ չունեցայ առ ջննելու :

— Իրա՛ն :

— Ո՛հ , վախցայ անգամ . փոթորկի մը պէս վերադարձաւ , առանց շունչ առնելու սանդուխէն ելաւ , և յանկարծ , սենեակը մտած ատեն՝ մեծ սև առիւծին մորթին վրայ ինկաւ : Հոն կը գտնէք զինքը :

Պալատն յախուռն վեր ելաւ և արդարև Լօրէնցան դտաւ որ ջղային ճղնածամի մը առաջին ջղաձգութեանց մէջ կը տապալտկէր : Շատ ատեն էր որ հոսանիւթն անոր վրայ կը կշռէր և զայն կը չարչարէր : Տարնապի մէջ էր , կը հառաչէր , կարծես թէ կուրծքին վրայ բեռ մը ծանրացեր էր և նէ ձիւ կը թափէր զայն մէկգի ըննելու :

Պալատն բարկացայտ աչերով սրահ մը նայեցաւ անոր , և բազկացը մէջն առնելով՝ իւր սենեակը տարաւ , որուն խորհրդաւոր դուռը իւր վրայէն գոցուեցաւ :

### ՃԻԷ

### ԿԵՆՍԵՏՈՒ ՅԵՐԵ

Ընթերցողը գիտէ թէ Պալատն ինչ արամադրութիւններով Լօրէնցաի սենեակը մտաւ :

Ուստի կը սխալաբանուէր Լօրէնցան արթնցնելով իւր ներքը գրգռուող բարկութեան ազդած կշտամբանքներն անոր ընել , և ի-

բօք որոշած էր այն բարկութեան խրատածին համեմատ պատժել՝ երբ ձեզուներն երբակի մէկ ցունցն անոր իմացուց թէ Ալթօզաս իւր վերադարձին սպասեր էր ու իրեն հետ խօսիլ կ'ուզէր :

Սակայն Պալսամօ վերստին սպասեց , կը յուսար թէ կամ ինքը սխալած էր՝ կամ նշանը դիպուածոյ էր՝ երբ անհամբեր ծերը հարուած հարուածի վրայ կրկնեց . այնպէս որ Պալսամօ , անշուշտ վախնալով , թէ չե՛նէ վար իջնէ՛ ինչպէս որ երբեմն պատահեր էր , կամ իրենին հակառակ ազդեցութեամբ մը Լօրէնցայ արթնալով՝ չտեղեկանայ նոր դէպքի մը՝ որ իւր քաղաքական դաշտիքներէն նուազ վտանգաւոր չէր , այնպէս որ Պալսամօ , ըսինք , եթէ կարելի է այսպէս ըսել՝ հասանելի չէր խաւերով ծածկելով Լօրէնցան՝ Ալթօզասի երթալու համար դուրս ելալ :

Երթալու ժամանակն էր , կափոյցն արդէն ձեզուներն կէսն հասեր էր : Ալթօզաս իւր թաւալուն թիկնաթոռը թողած էր , և ձեզուներն այն շարժուն մասին պլլուած էր՝ որ կ'երևէր և կ'իջնէր :

Պալսամօի Լօրէնցայի սենեկէն ելնելը տեսեր էր :

Ծերն այնպէս պլլուած վիճակին մէջ սուկալի և միանգամայն պժգալի անսարան մը կ'ընծայէր :

Իւր սպիտակ դէմքը , կամ լաւ ևս այն դէմքին ինչ ինչ մասերը որ տակաւին կենդանի կ'երևէր՝ բարկութեան հրով կարմրեր էին , ձեռները մարդկային կմակքի մը ձեռքին նման նուրբ և յօգուածները ցցուած՝ իրարու զարնուելով կը դողդղային , ներս քաշուած աչերը դողցես իրենց խոր ակնակապիճին մէջ կ'երերէին , և նոյն իսկ իւր աշակերտին անծանօթ լեզուով մը խիստ կշտամբանքներ կ'ուղղէր անոր :

Զսպանակը մղելու համար իւր թիկնաթոռէն ելած ըլլալով գողցես միայն երկու երկայն թևերովը կ'ապրէր ու կը շարժէր՝ որ սարդի մը թևերուն նման դիւրաբեկ և կոր էին , և , ինչպէս որ ըսինք , բաց ՚ի Պալսամօն ուրիշ ամենուն անմատչելի սենեկէն ելնելով՝ ստորին սենեակը փոխադրուելու վրայ էր :

Որպէս զի այն տկար ծերը որ այնքան ծոյլ էր , իւր թիկնաթոռը թողուր՝ այն ճարտարագիւտ մեքենան որ ամեն յողեութենէ կը պահպանէր զինքը , որպէս զի աշխարհի վարած կենցաղին դործերէն մին կատարելու հաւանէր , որպէս զի իւր սովորութեանց մէջ այսպիսի

փոփոխութիւն մը մտցընելու նեղութիւնը կրէր՝ պէտք էր տարօրինակ գրգիռ մը զինքն ստիպած ըլլար իւր զննող կեանքը թողուլ և իրական կենաց մէջ մտնել :

Պալսամօ գրեթէ յանկարծակիի գալով՝ նախ կարի զարմանք՝ ապա տազնապ ցոյց տուաւ :

— Ա՛հ , գուշեց Ալթօզաս , եկա՛ր , ծոյլ , եկա՛ր , վատ , որ վարպետդ երեսի վրայ կը թողուս :

Պալսամօ ծերին խօսած ատեն ունեցած սովորութեանն համեմատ , բոլոր իւր համբերութիւնն օգնութեան կուշեց :

— Սակայն , պատասխանեց մեղմովին , կարծեմ թէ , բարեկամ , դեռ նոր կուշեցիք զիս :

— Բարեկամ , գուշեց Ալթօզաս , բարեկամ , անարդ արարած մարդկային , կարծեմ թէ քու նմաններուդ լեզուն կը խօսիս ինձ : Կարծեմ թէ ես քու բարեկամդ եղած եմ . բարեկամէ աւելի , հայր , հայր որ զքեզ սնուցած է , մեծցուցած է , կըթած է , ճախացուցած է : Բայց դու իմ բարեկամն եղած ըլլաս՝ ո՛հ , ո՛չ , դու զիս լքիր , դու զիս սովով կը տանջես , կ'սպաննես :

— Բայց վարպետ , այդպէս մաղձերնիդ կը յուզէք , արիւննիդ կը բորբոքէք , հիւանդ կ'ըլլաք :

— Հիւանդ կ'ըլլամ . կը հեզնես : Միթէ ես երբէք հիւանդացած եմ , եթէ ոչ միայն այն ատեն երբ հակառակ իմ կամբիս մարդկային պիղծ վիճակին մէկ քանի թշուառութեանց մասնակից ըրած ես զիս : Հիւանդ ըլլամ , կը մոռնամ թէ ես ուրիշները կ'առողջացրեմ :

— Ա՛րջապէս , վարպետ , պատասխանեց Պալսամօ պաղութեամբ , ես եկայ , ժամանակնիս ընդ վայր չլատնենք :

— Այո , յիշեցուր ինձ զայդ , ժամանակը , ժամանակը՝ զոր տնտեսութեամբ գործածելու կ'ստիպես զիս , զիս որուն համար ոչ վախճան և ոչ սահման պիտի սեննար բոլոր մահկանացուաց չափով տրուած այս կերպարը , այո , ժամանակս կ'անցնի , այո ժամանակս կը կորսուի , այո , իմ ժամանակս այլոց ժամանակին պէս վայրկեան առ վայրկեան յախտենութեան մէջ կ'իյնայ՝ մինչդեռ իմ կեանքս յախտենութիւնը պէտք էր ըլլալ :

— Օ՛ն , վարպետ , ըսաւ Պալսամօ անայլայլելի համբերութեամբ :

մը , կափոյցը մինչև դետինն իջեցնելով , ինքը քովը կենալով և զինքն իրեն սենեակը տանող զսպանակը մղելով , ծն , ըսէք նայինք ինչ պէտք է ձեզի : Խօսեցէք : Ա՛րտէք թէ սովալլուկ կը տանջեմ ձեզ , բայց դուք քառասնօրեայ ծովին մէջ չէք :

— Այո , այո , անշուշտ , վերածննդեան գործն երեսուներկու օրէ 'ի վեր սկսած է :

— Արեմն ինչ է ձեր գծոհոհումը : Երկու երեք շիշ անձրևի ջուր կը տեսնեմ հող՝ որմէ ուրիշ ջուր չէք խմեր :

— Անշուշտ , բայց դու կը կարծես թէ ես չեմ ամ որպէս զի կարենամ բոլորովին առանձին կատարել երիտասարդանալու և այլակերպելու այս մեծ գործը : Մինչդեռ ուժ չունիմ , դու կը կարծես թէ առանձին կրնամ բաղադրել իմ ցփիս : Մինչդեռ կողիս վրայ պառկած եմ և զովարար ըմպելիներով կը թուլնամ որոնք իմ մինակ սնունդս են , եթէ ինձ չօգնես՝ կը կարծես թէ առանձին մնացած ատենս կրնամ կատարել վերածննդեանս այս մանրախոյզ աշխատութիւնը՝ որուն մէջ , դու քաջ գիտես թշուառական , բարեկամի մը օգնութիւնը պէտք է :

— Ահաւասիկ հոս եմ , վարպետ , ըսէք նայինք , ըսաւ Պալսամօ զրեթէ անոր չուղելովը վերստին թիկնաթողն մէջ տեղադրելով ձերը հրէշ տղու մը պէս . ըսէք նայինք , թորեալ ջուրը պակաս չեղաւ ինչու որ , ինչպէս որ ըսի , երեք շիշ լեյուն կը տեսնեմ հող , այդ ջուրը ձիշտ մայիսի ամսոյն ժողվեցինք ինչպէս որ գիտէք . ահաւասիկ գարիէ և շուշմայէ պարսիմասներդ :

— Այո , բայց ցփին , ցփին տակաւին պատրաստուած չէ . քու միտքդ չգար , դու հոն չէիր , հայրդ էր , հայրդ՝ որ քենէ աւելի հաւատարիմ էր , իմ վերջին յիսնեակիս ատեն ամիս մ'առաջ պատրաստեցի ցփիս : Արարատ լեռան վրայ քաշուած էի : Հրեայ մը քրիստոնեայ երախայ մը բերաւ ինձ որ տակաւին կաթ կ'ուտէր՝ տղուն ծանրութեանը չափ արծաթ տալով՝ զնեցի , ծիսին համեմատ երակը ծակեցի , շնչերակէն հոսած արեան յետին երեք կաթիլներն առի և ժամուան մը մէջ պատրաստուեցաւ ցփիս՝ որուն միայն այս նիւթը կը սրկսէր , ուստի իմ յիսնեակի վերածննդս սքանչելի կերպով կատարուեցաւ , այն երանաւետ ցփին խմելս :

Ետք տեղի ունեցող ջլաձգութեանց միջոցին մազերս ու ախաներս ինկան , սակայն վերստին բուսան՝ ախաներս դէշ , գիտեմ , վասն զի հող չտարի ոսկի խողովակով մը ցփին կոկորդս լեցնելու : Սակայն մազերս ու եղունդներս սոյն երկրորդ երիտասարդութեանս վերստին բուսան , և սկսայ տասնեհինգ տարեկան մէկու մը պէս ապրել . . . . Բայց ահա վերստին ձերացայ , եթէ ցփին չպատրաստուի , այս շիշին մէջ չմտնէ , եթէ բոլոր խնամքս չտամ այս աշխատութեան , մէկ դարով ստացուած դիտութիւնը ինձմով պիտի ոչնչանայ , և այս սքանչելի , գերազոյն զաղտնիքը որ իմ քովս է՝ պիտի կորսուի մարդուն համար՝ որ յիս և ինձմով աստուածութեան կը հասնի : Ա՛հ , եթէ նպատակիս չհասնիմ , ո՛հ , եթէ խաբուիմ , ո՛հ , եթէ սխալիմ , Աշարա , դու , դու պիտի ըլլաս պատճառ , և՛ զդուշացիք , բարկութիւնս սոսկալի պիտի ըլլայ , սոսկալի :

Եւ այս վերջին խօսքն արտասանած ատեն իւր նուազուն աչերէն գոցցես կապոյտ կայծ մ'ելաւ , ձերը թեթեւ ջլաձգութեան մը մէջ ինկաւ՝ որուն յաջորդեց սաստիկ հազ մը :

Պալսամօ իսկոյն փութաց պէտք եղած խնամքն անոր մատուցանել :

Ծերն ինքզինքը դտաւ , իւր գերնութիւնը կապուտակ գոյնի փոխուեր էր : Այս թեթեւ ձղնաժամը այն աստիճան անոր ոյժը կտրեր էր որ կարծես թէ պիտի մեռնէր :

— Ըսէք նայինք , վարպետ , ըսաւ անոր Պալսամօ , ուզածնիդ իմացուցէք :

- Ուղածս . . . ըսաւ աչքը Պալսամօի վրայ սևեռելով .
- Այո . . . .
- Ահաւասիկ ուղածս . . . .
- Խօսեցէք , ձեզի մտիկ կ'ընեմ և կը հնազանդիմ՝ եթէ ուզած նիդ հնարաւոր է :
- Հնարաւոր . . . հնարաւոր . . . մուսկայ ձերն արհամարհանօք : Գիտես որ ամեն բան հնարաւոր է :
- Այո , անշուշտ , ժամանակով և գիտութեամբ :
- Գիտութիւնը ունիմ , ժամանակին յաղթելու վրայ եմ . ցփիս

չափն յաշողեցաւ . դրեթէ բնաւ վրաս ուժ չմնաց : Երիտասարդու-  
թիւնը մայիս ամսուան ծառերու հիւթին պէս հին կճեպին ներ-  
քեւէն վեր կ'երնէ և գողցես փայտը կը բուսցնէ : Պէտք է դի-  
տես , Աշարա , թէ երևոյթներն սքանչելի են . ձայնս տկարացած  
է , աչքիս լոյսը երեք քառորդ մարած է , մերթ ընդ մերթ միտքս  
կը մոլորի . տաքէն ցուրտի անցնելս չեմ զգար , ուստի անհրա-  
ժեշտ է ինձ ցքիս լրացնել՝ որպէս զի իմ երկրորդ յիմնակիս  
ճիշդ օրը հարիւր տարուէն քսան տարու իջնեմ աներկեան , այս  
ցքիին համար պէտք եղած նիւթեր պատրաստուած են , խողովակը  
շինուած է . միայն երեք կաթիլ արիւնը կը պակսի :

Պալսամօ շարժում մ'ըբաւ որ զղուանք կը յայտնէր :

— Լաւ , ըսաւ Ալթօղաս , հրաժարինք տղէն , քանի որ դու ա-  
ւելի լաւ ունիս քու սիրուհւոյդ հետ սենեկին մէջ փակուել՝ քան  
թէ ինձ տղայ մը դտնել :

— Վարպեա , քաջ դիտէք որ Լօրէնդա իմ սիրուհիս չէ :

— Օ՛ , օ՛ , ըբաւ Ալթօղաս , կը կարծես թէ զին ալ կրնաս  
խաբել ամենուն պէս . կ'ուզես որ անոր կուսութեանն հաւատամ՝  
մինչդեռ դու այր ես :

— Վարպեա , կ'երդնում թէ Լօրէնդա Մայր Աստուածածնին  
պէս անքիծ է . կ'երդնում թէ սէր , իղձ , աշխարհային ցանկու-  
թիւն ամեն բան իմ հոգւոյս զոհնցի . վասն զի ես ալ վերանորո-  
գիչ գործս ունիմ . միայն թէ փոխանակ իմ անձիս վերաբերե-  
լու համայն աշխարհի կը վերաբերի :

— Յիմար , խեղճ յիմար , դոչեց Ալթօղաս . կարծեմ թէ դար-  
ձեալ պիտի սկսի խօսիլ որդերու հեղիներուն , միջիւններու ա-  
պաստարանութեան վրայ՝ մինչդեռ ես յաւիտենական կենաց , յաւիտե-  
նական երիտասարդութեան վրայ կը խօսիմ :

— Որ սոսկալի ոճիրով մը միայն ձեռք կրնայ անցնիլ , այն ալ  
. . . :

— Կը կասկածին , կարծեմ կը կասկածիս , թշուառական :

— Ոչ , վարպետ . սակայն քանի որ տղէն կը հրաժարիք , ըսէք  
նայինք , ի՞նչ պէտք չէ ձեզի :

— Ձեռքդ ինկած արարածը որ կոյս ըլլայ . այր կին հոգ չէ :

սակայն կինն աւելի աղէկ է : Սեռերու նմանութենէն գտայ այս .  
գտիր ուրեմն զայն և անապարէ , վասն զի ութ օր ունիմ միայն :

— Լաւ , վարպետ , կը նայիմ , կը դտնեմ :

Առաջինէն աւելի սոսկալի նոր փայլակ մ'անցաւ ձերին աչե-  
րուն մէջէն :

— Կը նայիս , կը գտնես , դոչեց . ո՛հ , այդ է պատասխանդ :  
Սակայն կ'սպասէի այդ պատասխանին , չգիտեմ թէ ինչո՞ւ կը զար-  
մանամ : Եւ երբէ՞ն ՚ի վեր , չնչին որդ , արարածն իրեն արարչին  
այսպէս կը խօսի : Ա՛հ , զիս անշօր կը տեսնես , զիս պառկած կը  
տեսնես , զիս աղաչող կը տեսնես և տխմարութեամբ կը կարծես  
թէ ես քու ձեռքդ մնացած եմ : Այո կամ ոչ , Աշարա , աչքիս  
մէջ ոչ վարանում կայ և ոչ սուտ . վասն զի սրտիդ մէջ կը տես-  
նեմ և կը կարգամ , վասն զի քեզ կը դատեմ , և քեզ պիտի հա-  
լածեմ :

— Վարպետ , պատասխանեց Պալսամօ , զգուշացիր , զայրոյթը  
ձեզ կը ֆլատէ :

— Պատասխանէ , պատասխանէ :

— Միայն ճշմարիտը կրնամ լսել իմ վարպետիս . կը նայիմ  
թէ կրնամ ձեռք անցնել ձեր ուզածը առանց մեր երկուքին  
ֆլատելու , առանց զմեզ վտանդի մէջ ձգելու : Պիտի փնտրեմ մարդ  
մը որ ձեզի պէտք եղած արարածը մեզի ծախէ , սակայն այն ոճիրն  
իմ վրաս չպիտի առնեմ : Ահա բոլոր ըսելիքս այս է :

— Շատ փափուկ է , ըսաւ Ալթօղաս դառն ծիծաղով մը :

— Այսպէս է , վարպետ , ըսաւ Պալսամօ :

Ալթօղաս այնպիսի զօրաւոր ճիգ մ'ըբաւ որ իւր բազկացն օգ-  
նութեամբ անոռին թևերուն վրայ յենլով ելաւ կանգնեցաւ :

— Այո՛ կամ ո՛չ , ըսաւ :

— Վարպետ , այո՛ եթէ գտնեմ , ոչ՛ թէ որ չգտնեմ :

— Ուրեմն դու զիս մահուան պիտի ենթարկես , թշուառական ,  
ինձ պէտք եղած արարածին պէս պիղծ ու չնչին կենդանիի մը ե-  
րեք կաթիլ արիւնը կը խնայես և կը թողուս որ ինձ նման կատա-  
րեալ էակ մը յաւիտենական անդունդին մէջ զլորի : Մտիկ ըրէ ,  
Աշարա , սը քեանէ բան մը չեմ ուզեր , ըսաւ ձերը սոսկալի ժպի-

տով մը, քենէ բնաւ բան մը չեմ ուզեր. պիտի սպասեմ. բայց եթէ ուզածս չկատարես՝ ես ինքս պիտի կատարեմ, եթէ զիս թողուս՝ ես ինձ պիտի օրհնեմ: Ըզածս լսեցիր, այնպէս չէ: Գնա հրմա:

Պալատն այն սպառնալիքին պատասխան չտալով ձերին շուրջը պատրաստեց անոր պէտք եղածը, խմելիքը և ուտելիքը մօտը դրաւ, միով բանիւ ինչ խնամք որ կրնայ տանիլ արթուն ծառայ մը իւր տիրոջը, անձնուէր որդի մը իւր հօրը՝ բոլորն ալ կատարեց. յետոյ՝ Ալթօղասը չարչարող մտածմունքէն զատ սնտած մունքի մը մէջ թաղուած՝ կափոյցն իջուց առանց նշմարելու որ ձերին հեղինական նայուածքը իրեն կը հետեւէր գրեթէ մինչև հոն՝ ուր իւր միտքն ու սիրտը կը դիմէին:

Ալթօղաս տակաւին սատանայի մը պէս կը ժպտէր՝ երբ Պալատն Լօրէնցայի դէմը գտնուեցաւ որ քնանալը կը շարունակէր:

ԴԻԸ

ՄԵՔԱՌԻՄՆ

Հոն կեցաւ Պալատն վշտալից խորհուրդներով սիրտն ուռած, Ա՛լ բուն խորհուրդներ չենք ըսեր, այլ վշտալից:

Իւր և Ալթօղասին մէջ անցած տեսարանը թերևս մարդկային իրաց ոչնչութիւնը իրեն յիշեցրնելով բոլոր բարկութիւնը մարեր էր: Միտքը կը բերէր այն փիլիսոփային ըրածը՝ որ քերականին այբբենգիմէն մինչև ֆէն կը կարդար՝ Աքելէսի խրատատու սևադէմ շատուածոյն ձայնը մտիկ ընելէ առաջ:

Լօրէնցայի պառկած բազմոցին առջև կեցած պաղ և համր գննութիւն մ'ընելէ ետք:

— Ահաւասիկ տխուր՝ բայց ըննչիքս որոշած եմ, և վիճակս աչքիս առջնն է. Լօրէնցա զիս կ'ատէ. Լօրէնցա սպառնայ զիս մատնել, և մատնեց. իմ գաղտնիքս ալ լսն չէ, այս կինը ձեռքը տուի որ հովին կու տայ զայն. կը նմանիմ այն աղուէսին որ պողպատե ակաւներով շինուած որոգայթէն ոտքին սակորը միայն դուրս կը հանէ՝ բայց միսն ու մորթը հոն թողած է, այնպէս որ որսորդը կրնայ ըսել հետեւեալ օրը:

«—Աղուէսը հոս բռնուեր է, ապրի կամ մեռնի զինքը պիտի ճանչնամ»:

«Իւ այս անլուր աղէտը, այս աղէտը որ Ալթօղաս չկրնար հասկընալ, և այս պատճառաւ իրեն չպատմեցի, այս աղէտը որ բոլորովին յոյսս բաղդէն կը կտրէ այս երկրին մէջ՝ և հետեւաբար այս աշխարհին մէջ՝ որուն հոգին Գաղղիա է, այս քնացող աբարածին, այս զեղածիծաղ արձանին կը պարտիմ: Այս աղէտալի հրեշտակին կը պարտիմ անպատուութիւն և կործանում՝ մինչև որ գերութիւն, արտը և մահ զայ զիս գտնէ անոր պատճառաւ»:

«Արդ, շարայարեց տաքնալով, բարեաց գումարը չարեաց գումարէն անցաւ, և Լօրէնցա ինձ մնասակար է»:

«Ո՛վ օձ շնորհալի՞ծ բայց մահատու դալարումներով, սկեզոյն բայց թունալից պարանոցով, քնացիր ուրեմն, վասն զի պիտի պարտաորիմ քեզ սպաննել եթէ արթննաս»:

Եւ Պալատն աղէտալի ժպիտով մը ծանրաբայլ մօտեցաւ նորատի կնոջ՝ որուն ծանրացած աչերը բացուելով անոր վրայ կը դառնային քանի որ նա կը մօտենար, ինչպէս որ նորել արևին ճառագայթները տեսնելուն պէս արևածագիկները և պատատուկները կը բացուին:

— Ո՛հ, բաւ Պալատն. պէտք է սակայն որ յաւիտեան գոցեմ այս աչերը որ այս սրահու այսչափ գործազին ինձ կը նային. այս զեղանի աչերը որ երբ սիրալատ չեն՝ հրացայտ են»:

Լօրէնցա քաղցրիկ ժպտեցաւ, և ժպտելու պտեն իւր մարգարտանման ակուններուն գեղեցիկ և անրիժ կրկին շարքը ցոլց տուաւ:

— Բայց զիս ատողը սպաննած ատենս, շարայարեց Պալսամօ բազուկները գալարելով, զիս սիրողն ալ պիտի սպաննեմ :

Եւ սիրտն անհնարին վշտով մը լեցուեցաւ՝ անորոշ իղձով մը խառնուած :

— Ո՛հ, մումուաց, ո՛չ. 'ի զուր 'երգուայ : Ի զուր սպառնացի, ո՛չ, զան սպանելու քաջութիւնը երբէք չպիտի ունենամ. ո՛չ, պիտի ապրի, բայց առանց երբէք արթննալու պիտի ապրի. պիտի ապրի այն կեղծ կեանքով որ իրեն համար երջանկութիւն պիտի ըլլայ, մինչդեռ միւսը յուսահատութիւն է : Իյէ՛ թէ կարենայի զինքը երջանիկ ընել : Մնացածն ինչ փոյթս է . . . ալ մէկ կեանք մը պիտի ունենայ, այն՝ որ իրեն պիտի ստեղծեմ ես, այն՝ յուրում զիս կը սիրէ, այն՝ որով կ'ապրի այս պահուս :

Եւ Լօրէնցայի օխրափառ նայուածքին խանդակաթ նայուածքով մը պատասխանեց, մէկ ձեռքը ծանր կերպով անոր գլխուն վրայ իջեցնելով :

Նոյն միջոցին Լօրէնցա որ դողցես զիրք մը կարդալու պէս Պալսամօի միտքը կը կարդար, երկայն հառաչ մ'արձակեց, ոտք ելաւ մեղմովին, և քնոյ սիրուն ծանրութեամբը եկաւ իւր երկու օպիտակ և փափուկ բազուկները Պալսամօի ուսերուն կապեց՝ որ անուշաբոյր շունչն զգայ անոր շրթունքէն երկու մատ հեռու :

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, դօշեց Պալսամօ հրաքրքրեք ճակատը և շլացած աչերը ձեռքովը սրբելով. ոչ, այս թմբրեցուցիչ կեանքը զառանցութեան կը տանի. ոչ. միշտ չպիտի կրնամ դիմանալ, և այս փորձիչ սատանան, այս համբարուն քովն եղած ատեն փառքը, զօրութիւնը, անմահութիւնը ինէ խոյս պիտի տան : Ո՛հ, ո՛չ, արթննալու է, այնպէս կ'ուզեմ, այնպէս պէտք է :

Պալսամօ խոռված, այլ յայլմէ՝ ուժով հրեց Լօրէնցան որ իրմէ բաժնուելով՝ ձփող առաջատարի մը պէս, ստուերի մը պէս, ձեան հատի մը պէս, դնաց բազմոցի մը վրայ ինկաւ :

Ամենէն խորամանկ քննող կինը, ինքզինքը իւր սիրահարին ցոյց տալու համար, աւելի հրատուրիչ զիրք մը չպիտի ընտրէր :

Պալսամօ գեռ ևս ոյժ ունեցաւ քանի մը քայլ առնելով հեռանալու. բայց Որփէոսին նման ետեւը դարձաւ. Որփէոսին նման կորուսուեցաւ :

— Ո՛հ, եթէ արթնցընեմ զինքը, ըսաւ մտքէն, վէճը պիտի օկսի վերստին. եթէ արթնցընեմ՝ ինքզինքը պիտի սպաննէ, կամ զիս պիտի սպաննէ, կամ զիս պիտի պարտաւորէ զինքն սպաննել : Անդունդ, անդունդ :

«Այո՛, այս կնոջ ճակատագիրը գրուած է. կարծես թէ հրեղէն տառերով գրուած կը կարդամ զայն. մահ, սէր. . . : Լօրէնցա, Լօրէնցա, դու սիրելու և մեռնելու նախասահմանուած ես : Լօրէնցա, Լօրէնցա, կեանքդ ու սէրդ իմ ձեռքս է :

Իբրև պատասխան, այն զիւթիչ կինն ոտք ելաւ, ուղղակի Պալսամօի կողմը դնաց, անոր ոտքն ինկաւ, քնոյ և հեշտութեան մէջ թաղուած աչերովն անոր նայեցաւ. և անոր մէկ ձեռքէն բռնելով կուրծքին վրայ դրաւ :

— Մահ, ըսաւ ցած ձայնով, ծովէն նոր ելած բուստին պէս տամուկ և փայլուն շրթերովը, մահ՝ բայց սէր :

Պալսամօ երկու քայլ ետ դնաց, գլուխը ետեւը ծռած, ձեռքը աչերուն վրայ :

Լօրէնցա շնչասպառ անոր հետեցաւ ծնազնոյց վրայ քայլելով :

— Մահ, կրկնեց իւր զիւթիչ ձայնովը, բայց սէր, սէր, սէր : Պալսամօ այլ ևս դէմ չլրցաւ դնել. բոցեղէն ամպ մը զինքը կը շրջապատէր :

— Ո՛հ, ըսաւ, ալ չափն անցաւ. ո՛րչափ ատեն որ մարդկային արարած մը կրնայ մաքառիլ՝ մաքառեցայ. ո՛վ ապագային սատանան կամ հրեշտակը, ո՛րն ալ որ ըլլաս. բաւական ատեն անձնասիրութեան և հպարտութեան զօհեցի յիս եռացող բոլոր վեհանձն կիրքերը : Ո՛հ, ո՛չ, ո՛չ, սրտիս խորը խմորող այս մարդկային միակ զղացումին դէմ դնելու իրաւունք չունիմ : Ար սիրեմայս կինը, և այս բուռն սէրը սոսկալի ասելութենէ աւելի միտս կը հասցընէ անոր : Այս սէրն անոր մահ կու տայ, ո՛հ, ինչ վատ եմ, ինչ կատղած յիմար մ'եմ. իղձերուս հետ իսկ չեմ կրնար համաձայնիլ : Ինչ, երբ պատրաստուիմ Աստուծոյ առջև ելնելու, ես պատրոզս, սուտ մարդարէս, երբ խորամանկութեան և կեղծաւորութեան վերարկուն հանեմ վրայէս զերագոյն գատաւորին առջև, վեհանձն դործ մը չ'պիտի ունենամ ինքզինքս ցոյց տալու, ո՛չ

իսկ երջանկութիւն մը որուն յիշատակը զիս միջիթարէ յախտեան տառապանացս մէջ :

«Ո՛հ, ոչ, ոչ, Լօրենցայ, զիտեմ թէ քեզ սիրելով՝ ապագան կը կորսնցընմ, զիտեմ թէ իմ դաղանադէտ հրեշտակս երկինք պիտի վերանայ՝ երբ կինը բաղկացս մէջն իջնէ :

«Բայց դու կ'ուզես, Լօրենցայ, կ'ուզես :

— Սիրեցեանդ իմ, հառաչեց Լօրենցայ :  
— Ուրեմն փոխանակ իրական կեանքին կ'ընդունիս այս կեանքը :  
— Ծուներ դրած կը խնդրեմ, կ'աղերսեմ, կը պաղատիմ, այս կեանքը սէր է, երջանկութիւն է :

— Անդամ մ'որ իմ կինս ըլլաս, կը բաւէ քեզի այդ կեանքը՝ ինչու որ քեզ սաստիկ կը սիրեմ, կը սեռնես :

— Ո՛հ, զիտեմ, ինչու որ սրտիդ մէջ կը կարգամ :

— Ոչ մարդկան առջև և ոչ Աստուծոյ առջև երբէք զիս չ'սիրտի ամբաստանես թէ կամքդ խաբեցի, սիրտդ պատրեցի :

— Երբէք, երբէք, ո՛հ, մարդկան առջև, Աստուծոյ առջև ընդհակառակը քեզ շնորհակալ պիտի ըլլամ որ ինձ սէր տուիր, աշխարհիս միակ բարիքը, միակ մարդարիտը, միակ գոհարը :

— Երբէք չ'սիրտի փնտուես թե երբ, խեղճ աղանի, ըստ որում քաջ զիտցիր, ալ չ'սիրտի երթաս լուսաճաճանչ անջրպետները Եհովան քով փնտուելու այն ճառագայթը զոր երբեմն իւր մարդարեաներուն ճակատին վրայ կը գնէր : Երբ ապագան զիտնալ ուզեմ, երբ մարդոց իշխել ուզեմ, աւանդ, աւանդ, ձայնդ այլ ևս չ'սիրտի պատասխանէ ինձ : Գու իմ սիրեցեալ կինս և օժանդակ ուզիս էիր, այժմ միայն մին սիրտի ըլլաս, և դարձեալ . . .

— Ա՛հ, կը կասկած ինձ, զոչեց Լօրենցայ. կասկածը սև բիծի մը պէս սրտիդ վրայ կը տեսնեմ :

— Միշտ սիրտի սիրես զիս, Լօրենցայ :

— Միշտ, միշտ :

Պալատն ձեռքովը ճակատը սրբեց :  
— Լաւ, այսպէս թող ըլլայ ուրեմն, ըսաւ : Աօկէ զատ . . .

Պահ մ'իւր խորհրդին մէջ թաղուած մնաց :  
— Աօկէ զատ, անպատճառ ասոր պէտք ունիմ, շարայարեց :

Ոչ, ոչ, մինչդեռ սա զիս երջանիկ պիտի ընէ, միւսը՝ սիրտի շարունակէ զիս հարուստ և զօրաւոր ընել, Անտրէ ալ քեզի չափ նախաճամանեալ և յստակատես է : Անտրէ զեռահաս, անբիծ, կոյս է, և ես չեմ սիրեր Անտրէն, սակայն Անտրէ ևս քեզի նման ինձ հնազանդ է քնոյն մէջ, Անտրէ պատրաստ զոհ մ'է քեզ յաջողութեամբ համար, և ինձի համար նէ բժշկին ձեռքն ինկած գձուձ հողին է որ փորձեցու կրնայ ծառայել. անձանց թիւն սառեցնեցուն մէջ քեզի չափ, թերևս քննէ աւելի կը թուչի : Անտրէ, Անտրէ, քեզ իմ թագաւորութեանս համար կ'առնեմ : Լօրենցայ, բաղկացս մէջ եկուր. քեզ կը պահեմ իմ սիրուհիս և սիրուհիս ընելու համար : Անտրէով զօրաւոր եմ, Լօրենցայով երջանիկ : Միայն այս ժամէս սկսելով կեանքս անթերի է, և անմահութենէ զատ Ալթօղասի անուրջն իրնցուցի ես, անմահութիւնը մեկդի առնելով՝ աստուածոց հաւասար եմ :

Եւ Պալատն Լօրենցայն ոտք հանելով շնչասպառ կուրծքը բացաւ որու գէմ Լօրենցայ եկաւ սյնպէս սեբտիւ փաթտուեցաւ՝ ինչպէս որ բաղեղը կաղնիին կը փաթտուի :



ՃԻԹ

ՍԵՐ

Ուրիշ կեանք մը սկսեր էր Պալատնի համար. կեանք որ մինչև այն ատեն անձանց էր այն գործունեայ և բաղմալարող անձին : Երբ օրէ 'ի վեր բարկութիւնն ինչ է, երկիւղն ինչ է, նախանձն ինչ է չէր զիտեր. երբ օրէ 'ի վեր քաղաքախնամութեան, գաւազբութեան, դաւադրի խօսք լսած չէր : Բոլոր աշխարհ մտցեր էր Լօրենցայի քով մնալով որմէ բնաւ չէր բաժնուեր : Այս

տաբօրինակ , անշուր սէրը որ կերպով մը մարդկութեան վերեր կը սաւառնէր , թմբբութեամբ և զաղանկքով լի այս սէրը , այս սէրը , — վասն զի զիտէր Պալսամօ թէ մէկ խօսքով անողորբելի թէ՛նամիչ մը կրնար փոխել իւր աղու սիրուհին , — զիտութեան կամ բնութեան անբացատրելի մէկ քմահաճոյքին շնորհիւ ատելութեանէ խզուած այս սէրը Պալսամօն այնպիսի երանութեան մը մը մէջ կ'ընկղմէր որ ապշութիւն և միանգամայն զառանցանք կրնար համարուիլ :

Այս երեք օրուան մէջ Պալսամօ սիրոյ քնածու թմբբութեանէն երբեմն սթափելով իւր ընկերուհւոյն կը նայէր , որ միշտ զուարթ և մտովին յափշտակուած էր . վասն զի անկէ ետք , անոր ստեղծած կեանքին մէջ , պատիր կեանքին հանգիստ առնել կու տար մնաւոր յափշտակութիւն տալով անոր , որ նոյնպէս կեղծ քուն մ'է . և երբ զան հանգարտ , քաղցր երջանիկ , կը տեսնէր , և նէ իրեն քնքուշ անուաներ կու տար և իւր խորհրդաւոր հեշտանաց վրայ խօսելով կ'երողէր , շատ անգամ Պալսամօ ինքնիրեն կը հարցնէր թէ արդեօք Աստուած զայրացած չէ՞ այս նոր տիտանին դէմ որ ջանացեր է իւր զաղանկքներն իրմէ յափշտակել , և Լօրէնցաի միտքը ձգած չէ՞ որ սուտովմը զինքը խաբէ որպէս զի իւր հսկողութիւնը պակսեցնէ , և այն հսկողութիւնը պակսածին պէս՝ փախչի և վրէժխնդիր Եւմենէին նման երևան ելնէ վերստին :

Այն վայրկեաններուն մէջ Պալսամօ կը կասկածէր այս գրտութեանէն՝ որ աւանդութեամբ հին ատենէն մնացեր էր , և միայն օրինակներ ունէր անոր ապացոյց :

Սակայն իսկոյն վստահութիւն կը դանէր այն մշտնջենաւոր բուցը , այն դպրամանաց ծարաւը տեսնելով :

— Եթէ Լօրէնցա կեղծած ըլլար , կ'ըսէր ինքնիրեն , եթէ ի՞նչ փախչելու միտք ունենար՝ զիս հեռացնելու առիթ կը վնասէր , առանձին մնալու պատրուակներ կը գտնէր . բայց , ընդհակառակը , անլուծելի շղթայի մը պէս իւր բաղուկները միշտ զիս կը բռնեն . իւր բոցավառ նայուածքը միշտ ինձ կ'ըսէ . «Մի՛ երթար .» միշտ իւր քաղցր ձայնն ինձ կ'ըսէ . «Վեցիր» :

Այն ատեն Պալսամօ իւր վրայ և գիտութեան վրայ կ'սկսէր վստահութիւն սասանալ :

Արդարև ինչո՞ւ համար այս մողական դաղանիքը որուն կը սլարտաւորէր բոլոր իւր զօրութիւնը , ինչո՞ւ համար առանց անցումի յանկարծ՝ մոռցուած յիշատակի մը , մարած կրակի մը մոխին պէս ցնորքի փոխուէր : Երբէք Լօրէնցա անոր մասին այնքան լուսամիտ և յստակատես եղած չէր . անոր մտքին մէջ կաշմուած բոլոր խորհուրդները , անոր սիրտը թրթուացնող բոլոր տպաստութիւնները Լօրէնցա իսկոյն կ'ըսէր :

Ար մնար զիտեալ թէ այն յստակատեսութիւնը համակրութիւն չէր . թէ իրմէ և ծողկահաս կնոջմէն դուրս : զձուած շրջանակէն անդին զոր իրենց սէրը լուսով կ'ողողէր , կը մնար զիտեալ թէ այն հողոց աչերը որոնք նոր Եւային անկուսէն առաջ սյնքան յստակ կը տեսնէին , պիտի կարենային մութին մէջ տեսնել :

Պալսամօ չէր համարձակեր որոշիչ փորձն ընելու . միշտ կը յուսար , և յոյսը աստեղազարդ պսակ մը կը բոլորէր իւր երջանկութեան վրայ :

Լօրէնցա երբեմն քաղցր մեղամաղձով մ'անոր կ'ըսէր .

— Աչարա , դու ինչ գտա կնոջ մը վրայ կը մտածես , հիւսիտային կնոջ մը վրայ որ խարտեաշ մազեր և կապոյտ աչեր ունի . Աչարա , ան , Աչարա , մտքիդ մէջայն կիներ միշտ քովէս կը քալէ : Այն ատեն Պալսամօ խանդաղատանօք կը նայէր Լօրէնցայի :

— Կը տեսնեն այդ մտքիս մէջ , կ'ըսէր :

— Ո՛հ , այո , հայեւոյ մը մէջ . տեսնելու պէս յստակ :

— Ուրեմն զիտես թէ զինքը սիրելու համար կը մտածեմ այն կնոջ վրայ , պատասխանեց Պալսամօ . կարգա՛ , կարգա սիրտս , սիրելի Լօրէնցա :

— Ոչ , կ'ըսէր Լօրէնցա զլուխը ցնցելով , ոչ , քաջ զիտեմ , բայց քու միտքդ մեր երկուքին մէջ կը բաժնես , ինչպէս այն ժամանակը երբ Լօրէնցա Ֆելիչիանի զքեզ կը չարչարէր , այն չար Լօրէնցան որ կը քնանայ և դու արթնցնուել չես ուզեր :

— Ոչ , սիրելիս , ոչ , կը գոչէր Պալսամօ . միայն քու վրադ կը խորհիմ , դէթ սրտով . տես թէ մեր երջանկութեանէն ՚ի վեր ամեն բան չմոռցայ՝ , ամեն բան երեսի վրայ չ[մողի] , ուսում , քաղաքականութիւն , աշխատութիւն :



— Իրաւունք չունիս, ըսաւ Լօրէնցա, վասն զի աշխատութեանցդ մէջ կրնամ ես քեզի օգնել:

— Ի՞նչպէս:

— Այո, երբեմն երկայն ժամեր գործարանիդ մէջ չէ՛ր փա- կուեր մնար:

— Ստուգիւ, բայց այն ունայն փորձերէն կը հրաժարիմ. իմ գոյութենէս այնքան ժամեր պակասած կ'ըլլան, — որովհետեւ նոյն միջոցին դքեզ չպիտի տեսնեմ:

— Սակայն ինչո՞ւ չհետևիմ քեզի աշխատութեանցդ մէջ ինչպէ՞ս սիրոյդ մէջ. ինչո՞ւ դքեզ զօրաւոր չընեմ ինչպէս որ երջանիկ կ'ը- նեմ:

— Վասն զի Լօրէնցա արդարև գեղեցիկ է՝ բայց ուսեալ չէ. Աստուած գեղեցիկութիւնը և սէրը կու տայ, բայց ուսումը միայն գիտութիւնը կու տայ:

— Հողին ամեն բան գիտէ:

— Ուրեմն իրօք հողոյ աշերտով է որ դու կը տեսնես:

— Այո:

— Եւ կ'ըսես թէ փիլիսոփայական քարին համար ըրած մեծ խուզարկութեանցս մէջ կրնաս ինչ օգնել:

— Կարծեմ թէ կրնամ:

— Ուրեմն եկուր:

Եւ Պալսամօ թեւ նորատի կնոջ մէջքն անցընելով իւր գոր- ծարանը տարաւ զան:

Քնն ահագին փուռը որուն ոչ որ հող տարած էր չորս օրէ 'ի վեր՝ մարած էր:

Հալոցներն իրենց ակութներուն վրայ պաղած էին:

Լօրէնցա առանց դարմանալու նայեցաւ բոլոր այն տարօրինակ գործիներուն որոնք հողեւարքին հասած քիմիային վերջին բաղա- դրութիւններն էին:

— Ոսկի՞ պիտի շինես, ըսաւ Լօրէնցա ժպտելով:

— Այո:

— Չանազան աստիճաններով պատրաստուած նիւթեր կը պա- րունակեն այս հալոցները:

— Ամենքն ալ կիսատ մնացած, ամենքն ալ կորուած են, բայց չեմ ցաւիր:

— Իրաւունք ունիս, վասն զի քու ոսկիդ գունաւոր սնդիկէ ու- րիշ բան մ'ըլլալիք չունի, թերևս զայն հաստատուն մարմնոյ վերածես, բայց երբէք զայն այլափոխելիք չունիս:

— Սակայն կարելի է ոսկի շինել, այնպէս չէ:

— Ոչ:

— Սակայն Գրանսիլվանիոյ Գանիէլը քսան հազար սուղադ առ- նելով Կօլմ Ա.ին ուսոյց մետաղները փոփոխելը:

— Գրանսիլվանիոյ Գանիէլը Կօլմ Ա.ը խաբեց:

— Սակայն Սաքսոնիացի Պէյքըն զոր Շարլ Բ. մահուան դա- տապարտեց, իւր կեանքը վերագնեց կաղարի ձոյլ մը ոսկւոյ ձոյլի վերածելով, որմէ քառսուն սուղադ շինեցին, ասիէ զատ մինտալ մ'ալ կոխեցին այն ոսկիէն 'ի փառս ճարտար քիմիագէտին:

— Ճարտար քիմիագէտը ճարտար ձեռնածու մ'էր: Կապարի ձոյլին տեղ ոսկւոյ ձոյլը դրաւ, ըրածը այս էր: Ոսկի շինելու ա- մենէն ապահով կերպը, Աշարա, ինչպէս որ կ'ըսես՝ ձոյլի վե- րածել է այն հարստութիւնները զոր քու գերիներդ աշխարհիս չորս կողմէն քեզի կը բերեն:

Պալսամօ սկսաւ մտածել:

— Ուրեմն, ըսաւ, մետաղներուն փոփոխութիւնը անկարելի է:

— Անկարելի է:

— Բայց ադամանդը, ըսաւ Պալսամօ ըստ դիտւոյ:

— Ո՛հ անդամանդն ուրիշ բան, ըսաւ Լօրէնցա:

— Ուրեմն կարելի է ադամանդ շինելը:

— Այո, վասն զի ադամանդ շինելը մարմին մը ուրիշ մարմնոյ մը փոխել չէ, ադամանդ շինելը ծանօթ տարերբի մը պարզ փոփո- խութիւնը փորձել է:

— Գիտե՞ս ուրեմն այն տարերբը որմէ ադամանդը կը կազմուի:

— Անշուշտ, ադամանդը զուտ ածխոյ տարրին պաղածն է:

— Պալսամօ ապշած մնաց, շլացուցիչ, անակնկալ, անլուր լոյս մը աչերուն կը ցայտէր, ձեռքովը աչերը զոցեց, այնպէս որ կար- ծես թէ այն բոցը զինքը կը կուրացնէր:

— Ո՛հ, տէր Աստուած, տէր Աստուած, բաւ չափէն աւելի է պարզեա՞ծ բարիքդ, վտանգը մօտ ըլլալու է: Տէր Աստուած, որն է այն անգին մատանին զոր ծովը նետելով քու նախանձիդ առաջքն առնեմ: Այսչափը բաւ է այսօր, Լօրէնցա, բաւ է:

— Ես քուկդ չեմ: Հրամայէ, հրաման տուր:

— Այո, դու իմն ես, եկուր, եկուր:

Եւ Պալսամօ Լօրէնցային թեւէն քաշելով դործարանէն դուրս հանեց, մուշտակներու սենեկէն անցաւ, և զլիւն վերեւը լսուած թերթե ճռնչիւնի մը ուշադրութիւն չընելով վանդակապատ սենեակը մտաւ Լօրէնցային հետ:

— Ուրեմն Լօրէնցայեդ զո՞հ ես, ամենասիրելիդ իմ Պալսամօ, հարցուց նորասի կինը:

— Ո՛հ, ըրաւ Պալսամօ:

— Ի՞նչ էր վախդ: Ըսէ, խօսէ:

Պալսամօ ձեռներն իրար կցեց և Լօրէնցայի նայեցաւ այնպիսի օտկումով մը՝ որուն ի՞նչ ըլլալը գրեթէ չպիտի հասկընար տեսնող մը՝ եթէ անոր հոգւոյն մէջ անցածը չկարգար:

— Ո՛հ, մըմնջեց, ես որ քիչ մնաց այս հրեշտակը պիտի սպաննէի, ես որ քիչ մնաց յուսահատութենէս պիտի մեռնէի՝ զօրաւոր և միանդամայն երջանիկ ըլլալու խնդիրը չլուծած, ես որ մոռցայ թէ գիտութեան ներկայ վիճակին դժած հորիզոնէն միշտ կ'անցնի կարելոյն սահմանը, և թէ ճշմարտութեանց մեծագոյն մասը որ իրութիւն դարձած են՝ ՚ի սկզբան ցնորք մը նկատուած են, ես որ կը կարծէի թէ ամէն բան գիտեմ և բան մը չեմ գիտեր եղեր:

Նորասի կինը երկնային ժպիտով մը կը ժպտէր:

— Լօրէնցա, Լօրէնցա, շարայարեց Պալսամօ, ուրեմն իրացաւ Արարչին այն խորհրդաւոր գիտաւորութիւնը որ մարդուն մարմնէն կ'ստեղծէ կինը և անոնց կ'ըսէ որ երկուքը մէկ սիրտ ունենան: Եւսն յարութիւն առած է ինձի համար, Եւսն որ առանց ինձի չպիտի խորհի, և որուն կեանքը ձեռքս բռնած թեւէս կախուած է: Տէր Աստուած, միայն մէկ արարածի համար այս չափէն աւելի է, և քու սարգեա՞ծ բարեացդ ծանրութեան ներքև կ'ընկճիմ:

Եւ ծնդանցը վրայ ինկած, պաշտելով բազկացը մէջ առաւ սեղմեց այն անուշ գեղեցիկ կինը որ երկրիս վրայ չգտնուած ժպիտով մը կը ժպտէր իրեն:

— Լաւ ուրեմն, ըսաւ, ոչ, ալ չպիտի աղատուիս դու ինէ, քու մութը պատուող նայուածքիդ ներքև ես ամենայն պահովութեամբ կ'ապրիմ, դու ինձ կ'օգնես այն քրտնաջան խուզարկութեանցս մէջ զոր, ըսածիդ պէս, դու միայն կրնաս լրացընել, և քու մէկ խօսքդ զանոնք պիտի դիւրացընէ և արդասաւոր ընէ, դու ինձ պիտի ըսես թէ ոսկի չեմ կրնար շինել, որովհետև ոսկին համասեռ նիւթ մը, նախնական տարր մ'է, դու ինձ պիտի ըսես թէ Աստուած իւր արարչագործութեան որ մասնիկին մէջ պահած է զայն. դու ինձ պիտի ըսես թէ Ովկիանոսի լայնատարած խորերուն որ կողմը մնացած են հարիւրամեայ գանձերը: Քու աչերովդ պիտի տեսնեմ մարդարիտն իւր գաղտակրին մէջ բոլորիլը, և մարդուն մտաց զարգացումը իւր մտին աղմուտ խաւերուն ներքև: Քու աւկանջներովդ պիտի լսեմ զեպիւր փորող որդին անլսելի պեղումը, և ինձ մօտեցող թշնամոյս քայլափոխները: Ատուծոյ նման մեծ պիտի ըլլամ և Աստուծմէ աւելի երջանիկ, իմն Լօրէնցա, վասն զի Աստուած երկնից մէջ իրեն հաւասար և ընկեր չունի, վասն զի Աստուած Ամենակարող է, բայց առանձին է իւր երկնային վեհափառութեան մէջ, և իրեն պէս ուրիշ երկնային էակի մը հետ չվայելէր այն ամենակարողութիւնը որով Աստուած է:

Լօրէնցա շարունակ կը ժպտէր, և ժպտելով բուռն զգուանքներով կը պատասխանէր այն խօսքերուն:

— Եւ սակայն, մըմնջեց Լօրէնցա այնպէս որ գողցես իւր սիրահարին գանկին մէջ կը տեսնէր այն անհանդարտ ուղեղին թեւերն յուղող իւրբարանչիւր խորհուրդը, և սակայն սակաւին կը կասկածիս, Աշարա: Ինչպէս որ ըսիր՝ կը կասկածիս թէ մեր սիրոյ շրջանակէն դուրս չեմ կրնար ելնել, կը կասկածիս որ հեռուէն չեմ կրնար կրնար տեսնել, բայց կը միթիթարուիս ըսելով թէ, եթէ ես չեմ տեսներ՝ նէ կը տեսնէ, նէ:

— Նէ, ո՞վ:

— Խարտեաշ կինը, կ'ուզէս որ անուրը ըսեմ:

- Այո :
- Կեցիր . . . Անտրէ :
- Ո՛հ, այդպէս է : Այո, դու իմ միտքս կը կարդաս . այո, յետին կտակած մը զիս կը վրդովէ : — Միշտ հեռուները կը տեսնես եթէ նիւթական խոչընդոտներով զոցուած ըլլայ :
- Փորձէ :
- Ձեռքդ տուր, Լօրէնցա :
- Նորատի կինը բուռն սիրով Պալսամօի ձեռքը բռնեց :
- Ետեւս կու գաս :
- Ամեն տեղ :
- Եկուր :
- Եւ Պալսամօ մտքովը Սէն-Գլօս փողոցէն ելնելով Լօրէնցայի միտքն ալ հետը տարաւ :
- Ո՛ր ենք, հարցուց Լօրէնցայի :
- Լերան մը վրայ ենք, պատասխանեց նորատի կինը :
- Այո, ճիշդ է, ըսաւ Պալսամօ ուրախութենէն սարուելով . բայց ի՞նչ կը տեսնես :
- Առանջս, ձախս թէ աջս :
- Առաջդ :
- Լայնատարած հովիտ մը կը տեսնեմ մէկ կողմը անտառ մը, միւս կողմը քաղաք մը, և զետակ մը որ զանոնք երկուքի կը բաժնէ, ու մեծ դղեկի մը պատին առջեւէն անցնելով հորիզոնին մէջ անցայտ կ'ըլլայ :
- Ճիշդ է, Լօրէնցա : Այն անտառը Վէզինէի անտառն է . քաղաքը Սէն-Ժէրմէնն է . դիւեակը Մէղօնի դղեակն է : Մեր ետերը գտնուած շէրքը մանենք :
- Մոնենք :
- Ի՞նչ կը տեսնես :
- Ա՛հ, նախասնեկին մէջ նախ կը տեսնեմ սևուկ մը որ այլանդակ հագուստ մ'ունի և շաքարանուշ կ'ուտէ :
- Չամօրն է : Մոնենք, մոնենք :
- Թափուր սրահակ մը՝ շքեղ կարասիներով, դռներուն վրայ զիցուհիներ և Աստղիան պատկերներ նկարուած են :

- Սրահակը թափուր է :
- Այո :
- Մոնենք ուրեմն :
- Ա՛հ, սքանչելի մենախուց մը հասանք որ զարդարուած է մետաքսեղէնով մը վրան բնական դոյն ծաղիկներով բանուած :
- Հո՞ն ալ թափուր է :
- Ոչ, կին մը բազմոցի մը վրայ պառկած է :
- Ո՛վ է այն կինը :
- Կեցիր :
- Քեզ չ'ըծուիր թէ արդէն զինքը տեսած ըլլաս :
- Այո, հոս . տիկին Տիւսարի կոմսուհին է :
- Այնպէս է, Լօրէնցա, այնպէս է . դու զիս պիտի խենթեցնես : Ի՞նչ կ'ընէ այն կինը :
- Քու վրադ կը մտածէ, Պալսամօ :
- Ի՛մ վրայ :
- Այո :
- Կրնաս ուրեմն անոր միտքը կարդալ :
- Այո . վասն զի կը կրկնեմ թէ քու վրադ կը մտածէ :
- Ի՞նչ աւթիւ :
- Խոստում մ'ըրեր ես անոր :
- Այո՛ . ո՞ր խոստումն :
- Դու անոր խոստացեր ես այն ջուրը զոր Աստղիկ Փարմիէ տուաւ՝ Սափիովէն վրէժ հանելու համար :
- Այնպէս է, այնպէս է . Մտածելով ի՞նչ կ'ընէ :
- Որոշում մը կ'ընէ :
- Ի՞նչ որոշում :
- Կեցիր . ձեռքը հնչակին կ'երկնցրնէ . հնչակը կը զստնէ . ուրիշ ծաղկահաս կին մը ներս կը մտնէ :
- Թո՛ւխ թէ խարտեաշ :
- Թուխ :
- Մեծ թէ փոքր :
- Փոքր :
- Քոյրն է : Մտիկ ըրէ ըսելիքը :

— Կ'ուզէ որ ձիերը կառքին լծեն :

— Ո՛ւր երթալու համար :

— Հոս գալու համար :

— Աստա՛հ ես :

— Այնպէս հրաման կու տայ : Ահա ըսածը կը կատարեն . ձիերը, կառքը կը տեսնեմ . երկու ժամէն հոս է :

Պալսամօ ծուներ դրաւ :

— Ո՛հ, գոչեց, եթէ երկու ժամէն իրօք հոս գայ, տէր Աստուած, ուրիշ բան մը չունիմ քենէ ուզելու՝ այն միայն թէ երջանկութեանս վրայ գլխաւ :

— Ուրեմն վա՛խ մ'ունէիր, սիրելիդ իմ :

— Այո, այո :

— Ի՞նչ բանէ վախ ունէիր : Սէրը որ ֆիզիզական գոյութիւնը կը լրացնէ, բարոյական գոյութիւնն ալ կը զարգացնէ : Սէրը միւս վեհանձն կիրքերուն պէս՝ Աստուծոյ կը մօտեցնէ, և Աստուծմէ կու գայ ամեն լոյս :

— Լօրէնցա, Լօրէնցա, ուրախութենէս պիտի խենթեցնես դիս : Եւ Պալսամօ նորատի կնոջ ծնդանցը վրայ ձգեց իւր գլուխը : Պալսամօ նոր փորձի մը կ'սպասէր կատարելապէս երջանիկ ըլլալու համար :

Այն փորձը տիկին Տիւպարիի դալուստն էր :

Սպասուած այն երկու ժամը շատ շուտ անցան : Լօրէնցա Պալսամօի ձեռքը բռներ էր :

— Տակաւին կը կանկած ին, ըսաւ, և կ'ուզես գիտնալ թէ ո՞ր է այս միջոցին :

— Այո, ճշմարիտ է, ըսաւ Պալսամօ :

— Լաւ ուրեմն, ձիերը սրարշաւ վաղցնելով պողոտայէն կ'անցնի, կը մօտենայ, Սէն-Գլօտ փողոցը կը մտնէ, դրանն առջև կը կենայ, դուրը կը զարնէ :

Այն սենեակն ուր երկուքը փակուած էին, այնքան հեռու էր՝ որ պղնձէ դռնահարին ձայնն իրենց չհասաւ :

Սակայն Պալսամօ մէկ ծունդի վրայ կանգնած ականջ դրաւ :

Քրիցի զարկած հնչակին երկու հարուածը լսելով Պալսամօ ոս-

տեց . ինչպէս որ ընթերցողը կը յիշէ՝ երկու հարուած կարևոր այցելութիւն մը կը նշանակէր :

— Ո՛հ, ըսաւ, ուրեմն ճշմարիտ է :

— Գնա՛, ստուգէ՛, Պալսամօ, բայց շուտ դարձիր :

Պալսամօ դէպ 'ի կրակարանը գիմեց :

— Կեցի՛ր որ մինչև սանդուխին դուրը տանիմ գրեզ, ըսաւ Լօրէնցա :

— Եկուր :

Երկուքն ալ մուշտակներու սենեակն անցան :

— Այս սենեակէն դուրս չպիտի ելնես, այնպէս չէ՛, հարցուց Պալսամօ :

— Ոչ, քանի որ քեզ կ'սպասեմ : Ո՛հ, ապահով եղիր, այն Լօրէնցան որ գրեզ կը սիրէ, դու ալ գիտես որ այն վախցած Լօրէնցադ չէ : Ասկէ զատ . . .

Ժպտելով կեցաւ :

— Ի՞նչ հարցուց Պալսամօ :

— Գու ալ իմ հոգուոյս մէջը չէն տեսներ, ինչպէս ես քուկէ կը տեսնեմ :

— Աւա՛ղ, ոչ :

— Ուրեմն հրաման ըրէ ինձ մինչև վերադարձդ քնանալ, հրաման ըրէ ինձ բազմոցիս վրայ անշարժ մնալ և ես կը քնանամ, անշարժ կը մնամ :

— Լաւ ուրեմն, սիրեցեալդ իմ Լօրէնցա, քնայիր և ինձ սպասէ :

Լօրէնցա արդէն քնոյ դէմ մաքառելով՝ վերջին համբոյրով մը շրթերը Պալսամօի շրթերուն փակցուց, և գնաց գողղոջուն կէս մը կունակի վրայ բազմոցին վրայ ինկաւ :

— Շուտով, իմն Պալսամօ, շուտով, այնպէս չէ՛ :

Պալսամօ ձեռքովը բարևեց . Լօրէնցա արդէն կը քնանար : Բայց այնքան գեղեցիկ էր, այնքան անբիծ էր իւր երկայն լուծած մազերովը, կիսաբաց բերնովը, այտերուն տենդային կտրմրութեամբը և ներս գացած աչերովը, — բայց այնքան կնոջ մը չէր նմաներ որ Պալսամօ անոր մօտեցաւ, ձեռքը բռնեց, անոր լեւերն

ու պարանոցը համարուրեց, բայց համարձակեցաւ անոր շրթունքը համարուրել :

Աւրիշ երկու հարուած : լսուեցան վերստին . կնոջ համբերու- թիւնը կը հասնէր կամ Գրից կը վախնար թէ իւր տէրը լսած չըլլայ :

Պալսամօ գուռը վազեց :

Գուռը վրայէն գոցելու ատեն՝ արդէն լսածին նման երկրորդ ճռինչ մ'ալ լսել կարծեց . գուռը վերստին բայցաւ, շուրջը նա- յեցաւ և բան մը չտեսաւ :

Միայն Լօրէնցան տեսաւ պառկած և իւր սիրոյն ծանրութեան ներքև շնչասպառ :

Պալսամօ գուռը գոցեց և սրահակը վազեց անվրդով, անկաս- կած, սրտին մէջ դրախտ բացուած :

Պալսամօ կը սխալէր . միայն սէրը չէր որ Լօրէնցանի կուրծքը կը ճնշէր և անոր շունչն անհանդիստ կ'ընէր :

Տեսակ մը երազ էր այն որ գողցես հետևանք էր այն անդա- յութեան ուր ինկեր էր, անդգայութիւն որ մահուան շատ մօտ էր :

Լօրէնցա կ'երազէր, և սոսկալի երազներու ժանտատեսիլ հայել- ւոյն մէջ . իրեն այնպէս կը թուէր ամեն բան խաւարեցընող մթու- թեան մէջ, թէ փայտէ ձեղունը կ'լսր մը կը բացուի, վարդաձև մեծ բան մը անկէ կը զատուի և հաւասար, ծանր շարժումով, չա- փով ու տխուր սուլմամբ վար կ'իջնէ . իրեն կը թուէր թէ օդը կը քիչնայ՝ այնպէս որ գողցես այն շարժուն շրջանակին ճնշման ներքև խեղդուելու մօտ է :

Միով բանիւ իրեն կը թուէր թէ այն տեսակ մը շարժուն կա- փոյցին վրայ խրտուիլակի պէս անձ բան մը կը շարժի, մարդկա- յին գէմքով ճրւաղ մը, ծեր մը, — որուն աչերն ու թևերը միայն կենդանի էին, և իւր ահարկու աչերովը անոր կը նայէր ու ծիւ- րած թևերն անոր կ'երկնցընէր :

Իսկ նէ, նէ, ինքձ աղջիկը 'ի զուր կը դալարէր, վասն զի չէր կրնար փախչիլ, իրեն սպառնացող վտանգը չէր կրնար գուշակել, ուրիշ բան չէր զգար բայց եթէ երկու կենդանի ակիշներ, որոց ծայրը իւր ձերմակ գոցատին ծայրէն կը բռնէր, բազմոցին վրայէն

կը վերցընէր և կափոյցին վրայ կը դնէր . կափոյցը ծանր ծանր վեր կ'եղնէր սուր ճռինչ մը հանելով, և ժանտածուտ քրքիջ մը կ'եղնէր այն մարդկային դէմքով ճրւաղին սոսկալի բերնէն, որ զին- քը գէտ 'ի ձեղունը կը տանէր քառանց ցնցում և ցաւ պատճառե- լու :

ՃԼ

ԵՐԻՏԱՍԱՐԿԱՅԵՆՈՂ ՋՈՒՐԸ

Լօրէնցանի գուշակածին պէս՝ տիկին Տիւպարի էր գուռը զար- նոզը : Գեղանի պալատականուհին սրահակը մտցուցեր էին : Պալ- սամօին սպասած ատեն կը թղթատէր մահուան այն հետաքրքրա- շարժ գիրքը որ 'ի Մայանս փորագրուած է, և որուն սքանչելի ճարտարութեամբ դժադրուած պատկերները ցոյց կու տան մահը մարդկային կենաց ամեն գործողութեանց ներկայ . մահը՝ որ մարդուն կ'սպասէ պարահանդէսին գուռը՝ ուր քիչ մ'առաջ սեղմած էր սի- բած կնոջ ձեռքը . մտած ջուրին խորը կը քաշէ զինքը, կամ մարդուն որսի տարած հրացանին բերնին մէջ կը պահուի :

Տիկին Տիւպարի այն պատկերին հասեր էր ուր գեղանի կին մը ինքզինքը շարժելով հայելին կը նայէր, և ահա Պալսամօ գուռը մղեց և զինքը բարևեց բոլոր գէմքին վրայ փայլող երջանկութեան ժպետովը :

— Աը ներէք, տիկին, ձեզ սպասուցի, սակայն սխալ հաշուեր էի հետաւորութիւնը կամ ձեր ձիանին արագութիւնը չէի զիտեր : Լու ժե-ի հրապարակը կը կարծէի զձեզ տակաւին :

— Ի՞նչպէս, հարցոց կ'ուսուհին . զիտէիք ուրեմն զաշ :

— Այո, տիկին. զրեթէ երկու ժամ առաջ ձեր կապոյտ մե-  
տաքսեղէնով զարգարուած մենախուցին մէջ զձեզ տեսայ : Հրաման  
կու տայիք որ ձիերը կառքին լծեն :

— Ա՛լ ըսէք թէ կապոյտ մետաքսեղէնով զարգարուած մենախուցս  
էի՛ք :

— Բնական դոյներով ծաղիկներ բանուած վրան : Այո, կոմ-  
սուհի, բազմոցի մը վրայ պառկած էիք : Մտքերնիդ ազնոր բան  
մ'ինկաւ. ինքնիրեն ըսիք. « Երթանք տը Ֆէնիքս կամը սենեկնք : »  
Այն ատեն զանգակը զարկիք :

— Ո՞վ եկաւ :

— Չեր քոյրը, կոմսուհի : Այնպէս չէ՛ : Խնդրեցիք իրմէ որ ձեր  
հրամաններն հաղորդէ, որոնք իսկոյն կատարուեցան :

— Յիրաւի, դուքս, դուք կախարդ էք : Միթէ դուք ամեն ա-  
տեն իմ մենախուցս կը նայիք : Այն ատեն պէտք է կանխաւ իմաց  
տաք ինձ, կը հասկընաք ըսածս հարկաւ :

— Ա՛հ, հանգիստ եղէք, կոմսուհի, բաց դռներէն միայն կը  
նայիմ :

— Եւ բաց դռներէն նայելով տեսաք որ ձեր վրայ կը մտածէիք :

— Այո, և բարի գիտաւորութեամբ :

— Ա՛հ, իրաւունք ունիք, սիրելի կոմս. ձեզի համար շատ  
բարի գիտաւորութիւններ ունիմ. բայց դուք ըսէք թէ գիտաւո-  
րութիւններէ աւելին արժանի էք. դուք որ ինձի համար այնքան  
բարի և օգտակար էք, դուք որ կ'երևի թէ պաշտպանի դեր կա-  
տարելու սահմանուած էք իմ կենացս մէջ, այսինքն ամենէն զժուար  
դերը :

— Յիրաւի, տիկին, զիս շատ երջանիկ կ'ընէք. միթէ կրցած  
եմ ձեզի օգուտ մ'ունենալ :

— Ի՞նչ. . . դուք գուշակ էք, և չէք գուշակեր :

— Գէթ թող տուէք որ համեստութեանս արժանանամ :

— Լաւ, սիրելիդ իմ կոմս, ուրեմն նախ քեզի ըրածիս վրայ  
սխտի խօսիմ :

— Հարկ չկայ, տիկին, ձեր վրայ խօսինք, կ'աղաչեմ :

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ կոմս, նախ ինձ տուր այն քարը

որ անտեսանելի կ'ընէ զմարդ, վասն զի դալու ատենս, որքան ա-  
րագ ալ եկայ, կարծեցի թէ Պ. տը Ռիշլիէօի մարդոյմէն մին տես-  
այ :

— Ի՞նչ կ'ընէր այն մարդը, տիկին :

— Տաճիկ ձիով մը կառքիս կը հետեւէր :

— Ի՞նչ կը մտածէք այս պարագային վրայ, և ի՞նչ նպատակաւ  
դուքսը մարդ դրած էր ձեր ետեւէն :

— Իւր ուզածին պէս յոռի խաղ մը խաղալու համար ինձ. որ-  
քան համեստ ալ էք, Պ. տը Ֆէնիքս կոմս, ձեր անձնական ա-  
ռուելութեանց պատճառաւ կրնաք նոխանձ ազդել թաղաւորին .  
. . . ձեզի ըրած այցելութիւններովս կամ ձեր ինձ ըրած այցե-  
լութիւններով :

— Տիկին, պատասխանեց Պալամո, Պ. տը Ռիշլիէօ և ոչ մէկ  
պարտոյայի մը մէջ վտանգաւոր չկրնար ըլլալ ձեզ :

— Սակայն կատարուած եղելութեան առաջ վտանգաւոր էր,  
սիրելի կոմս :

Պալամո հասկըցաւ թէ ասոնց ներքեւ գաղտնիք մը կար զոր  
Լօրէնցա իրեն չէր յայտնած տակաւին : Ուստի չցիտցած ին մէջ  
չմտաւ, այլ բաւական համարեց ժողտիլ :

— Վտանգաւոր էր, կրկնեց կոմսուհին, և այնչափ վարպետու-  
թեամբ պատրաստուած դաւին քիչ մնաց որ զո՛հ սխտի երթայի, ո-  
րուն մէջ դուք ալ մատ ունէիք :

— Ե՛ս, ձեզի դէմ լարուած դաւի մը մէջ : Երբէք, տիկին :

— Դուք չէիք որ Պ. տը Ռիշլիէօի սուրբ այն ջուրը :

— Ո՛ր ջուրը :

— Զուր մը զոր խմողը յիմարի պէս կը սիրէ :

— Ոչ, տիկին, այն ջրերն Պ. տը Ռիշլիէօ ինքը կը պատ-  
րաստէ, վասն զի զանոնք պատրաստելու կերպը վաղուց գիտէ. ես  
անոր միայն թմբրեցուցիչ դեղ մը տուի :

— Ա՛հ, իրաւ :

— Պատուոյս վրայ կ'երդնում :

— Եւ Պ. դուքսը ո՞ր օր եկաւ այն թմբրեցուցիչ դեղը ձե՛նէ  
ուզելու : Թուականն աղէկ միտքերնիդ բերէք, կարևոր է :

— Տիկին , անցեալ շարաթ օր : Այն օրուան առջի օրը յորում պատիւ ունեցայ Քրիցի միջոցաւ ձեզ ուղղել այն երկտողը՝ որով կ'աղաչէի զձեզ զալ զիս դտնել Պ. տը Սարգիսի քով :

— Այն օրուան առջի օրը , դոչեց կոմսուհին , այն օրուան առջի օրը յորում թաղաւորը տեսած են Գալէրնէյի աղջկան բնակարանն երթալը : Ո՛հ , ամեն բան հասկըցայ հիմա :

— Ուստի քանի որ ամեն բան հասկըցաք , կը տեսնէք որ ես թմրեցուցիչ զեղը տալէն ուրիշ բան մ'ըրած չեմ :

— Այո , այն դեղը մեզ ազատեց :

Պալսամօ սպասեց այս անդամ , բան մը չէր զիտեր :

— Տիկին , պատասխանեց , երջանիկ եմ որ նոյն իսկ անդիտութեամբ օգտակար եղած եմ ձեզ :

— Ո՛հ , միշտ մեծ օգուտ ունիք ինձ : Բայց մինչև հիմա ինձ ըրածնէդ աւելին կրնաք ընել ինձ : Ո՛հ , պարոն բժիշկ , քաղաքական ոճով խօսելով՝ շատ հիւանդ եղայ , և այժմ հազիւ կը հաւատամ ապաքինութեանս :

— Տիկին , պատասխանեց Պալսամօ , բժիշկը , քանի որ ինքն ըրոյն մէջ բժիշկ կայ , դարմանելու հիւանդութեանը վրայ մանրամասն տեղեկութիւն կ'ուզէ : Հաճեցէք ուրեմն ամենաճիշտ տեղեկութիւններ հաղորդել ինձ ձեր զոյգածին վրայ , և եթէ կարելի է՝ բնաւ մէկ երեոյթ մի մոռնաք :

— Շատ պարզ է , սիրելի բժիշկ , կամ սիրելի կախարդ , ինչպէս որ կ'ուզէք՝ այնպէս յորջորջեմ : Թմրեցուցիչ զեղին զործածուելուն առջի օրը , Նորին Աւհափառութիւնը չուզեց Լիւսիէն երթալ ինձ հետ : Յոգնութիւն պատրուակելով՝ Գրիանօն մնաց , այն ստախօս Աւհափառութիւնը , տը Ռիշիէօ գքսին և տը Գալէրնէյ սեպուհին հետ ընթրելու համար , ինչպէս որ ետքէն իմացայ :

— Ա՛հ :

— Հիմա դուք ալ կը հասկընաք : Այն ընթրիքին ատեն սէր ազդող ջուրը թաղաւորին խնցուցին : Արդէն խելքը օրիորդ Անտրէին տուեր էր , զիտէին թէ երկրորդ օրը թաղաւորը զիս չպիտի տեսնէր . հետեւաբար այն ջուրը այն աղջկան համար ներգործութիւն պիտի ընէր :

— Ետքը :

— Ետքը , ներգործեց :

— Ի՞նչ եղաւ :

— Ի՞նչ եղած ըլլալը դժուար է զիտնալ զրապէս : — Լաւ տեղեկութիւն ունեցող սնձինք Նորին Աւհափառութիւնը տեսեր են որ սպասաւորաց բնակարանին կողմը կ'երթայ , այսինքն օրիորդ Անտրէի բնակարանին կողմը :

— Գիտեմ անոր բնակարանը , բայց ետքը :

— Ա՛հ , ետքը , է՛հ , ինչպէս ալ կ'աճապարէք , կոմս : Անվտանդ չհեռելիք մէկը թագաւորի մը որ ինքզինքը կը ծածկէր :

— Բայց վերջապէս :

— Աւերջապէս , բոլոր զիտյաձս այս է որ , Նորին Աւհափառութիւնը սոսկալի փոթորկի զիշեր մը Գրիանօն վերադարձաւ զուհատ , դողդոջուն , և զառանցութեան տանող տենդով մը :

— Ուստի դուք կը կարծէք , հարցուց Պալսամօ ժպտելով , թէ թաղաւորը փոթորկէն զատ ուրիշ բանէ մ'ալ վախցեր էր :

— Ոչ , վասն զի սենեկապան ծառան թաղաւորին քանիցս կրկնելն իմացեր է , «Նէ մեռեր է , մեռեր է , մեռեր է , մեռեր է :»

— Ո՛հ , ըրաւ Պալսամօ :

— Թմրեցուցիչ դեղն այնպէս ցոյց տուեր էր , շարայարեց Տիւպարի , թաղաւորը մեռելէ շատ կը վախնայ , մանաւանդ մեռելի երես տեսնելէ : Օրիորդ տը Գալէրնէյը տարօրինակ քնով մը քնայած դտեր և զան մեռած կարծեր է :

— Այո , այո , արդարև մեռած , ըսաւ Պալսամօ , որ յիշեց թէ առանց Անտրէն արթնցընելու խոյս տուեր էր , մեռած կամ գէթ մահուան բոլոր երեւոյթներն իւր վրայ կրեւով : Այնպէս է : Ետքը , տիկին , ետքը :

— Ոչ ոք զիտցաւ թէ ի՞նչ անցաւ այն զիշերուան մէջ , կամ այն զիշերուան սկիզբը : Միայն թէ թաղաւորը իւր բնակարանը մտնելու ատեն վրան սաստիկ տենդ մը և ջղային սարսուռներ եկան , որոնք հետեւալ օրն անցան , երբ տիկին արքայորդին խեղք ընելով պատուհանները բանալ տուաւ , և զեղաճաճանչ արևը մը մէջ զուարթ գէմքեր ցոյց տուաւ Նորին Աւհափառութեան : Այն

ատեն բոլոր այն անձանցով աներևոյթ եղան զիշերուան հետ սր զանոնք ծնած էր: Ահսօրին թագաւորն աւելի աղէկ էր. արգանակ մը խմեց և կարտի թև մը կերաւ. երեկոյին . . . :

— Երեկոյին, կրկնեց Պալսամօ:

— Լաւ ուրեմն, երեկոյին, կրկնեց տիկին Տիւպարի, Նորին Ահհափառութիւնը որ անշուշտ նախընթաց օրուան վախին վրայ Գրիանօն մնալ չէր ուզեր, երեկոյին Նորին Ահհափառութիւնը Լիւսիէն եկաւ զիս դտաւ, ուր, սիրելի կոմս, ճշմարիտ կ'ըսեմ, սեսայ որ Պ. տը Ռիշլէօ ձեզի չափ մեծ կախարչ է:

Կոմսուհւոյն յաղթական դէմքը, հրապոյրով և քծինքով լի շարժումը անոր զաղափարը լրացուցին, և Պալսամօ լիովին աներկօքայ եղաւ այն աղբեղութեան վրայ զոր տակաւին թագաւորին վրայ 'ի գործ կը գնէր իւր սիրուհին:

— Ուրեմն գոհ էք ինձմէ, տիկին, ըսաւ Պալսամօ:

— Յանշափս գոհ եմ, կոմս, ստոյգ ճշմարտութիւնն ըսիք ինձ այն անկարելիութեանց վրայ խօսած աստեանիդ զոր ստեղծեցիք:

Եւ 'ի նշան շնորհակալութեան անոր երկնցոյց այն սպիտակ, փափուկ, անուշաբոյր ձեռքը որ թէև Լօրէնցիան ձեռքին պէս լճարմ չէր՝ սակայն ստոր եղկութիւնն ալ իւր արժէքն ունէր:

— Եւ հիմա գանք ձեզի, կոմս, ըսաւ:

Պալսամօ խոնարհութիւն ըրաւ մտիկ ընելը հասկըցընելու համար:

— Եթէ դուք զիս մեծ վտանդէ մը պահպանեցիք, շարայարեց տիկին Տիւպարի, կարծեմ թէ ես ալ ձեզ այնպիսի վտանդէ մ'ազատեցի որ շատ փոքր չէր:

— Ես, ըսաւ Պալսամօ, յուզմունքը ծածկելով, միշտ շնորհապարտ եմ ձեզ, սակայն շնորհ ըրէք ըսել . . .

— Այո, այն արկղը:

— Ետքը, տիկին:

— Որուն մէջի ծածկադրութիւնները իւր բոլոր դրողիւրներուն լուծել տուաւ Պ. տը Սարգին, ամենքն ալ 'ի մասնաւորի լուծածնին ստորագրեր են, և ամենուն ալ լուծումը միեւնոյն արդիւնքը տուեր է: Այս առտու վէրսայլ էի, Պ. տը Սարգին հոն եկաւ:

բոլոր այն լուծումները և դեսպանադատական ծածկադրութեանց բաւարանը հետը բերելով:

— Ա', ա': Թագաւորը ինչ ըսաւ:

— Թագաւորը նախ դարմայտ, յետոյ վախցաւ: Արի զիւրահաւան է Նորին Ահհափառութիւնը երբ իրեն ըսուի թէ վտանդ կայ: Տամիէնի\* զմեղին հարուածէն 'ի վեր ամեն մարդ ըսածը կրնայ հաւտայցընել Լուի Ժե.ի այս խօսքն ընելով. «Զգուշացէք»:

— Ուստի Պ. տը Սարգին զիս իբր գաւակից ամբաստանեց:

— Նախ Պ. տը Սարգին ջանաց զիս դուրս հանել, բայց ես մերժեցի ըսելով թէ որովհետև ինէ աւելի թագաւորին կապուած մէկը չկար՝ ոչ ոք իրաւունք ունէր զիս դուրս հանելու երբ իրեն վտանդի վրայ կը խօսէին: Պ. տը Սարգին սնդեց, բայց ես դէմ կեցայ և թագաւորը ժպտելով և այնպիսի եղանակաւ մ'ինձ նայելով զորեւ կը հասկընամ, ըսաւ:

— Թող զինքը, Սարգին, այսօր բան մը չսլիտի մերժեմիրեն:

«Այն ատեն, կը հասկընաք, կոմս, ես հոն ըլլալուս համար Պ. տը Սարգին որ միտքը կը բերէր այնպէս մեկին կերպով շարագրուած մեր հրածեշտի ողջոյնը, Պ. տը Սարգին վախցաւ որ ինձ անհաճոյ կ'ըլլայ ձեզ դպչելով, սկսաւ ըսել թէ Բրուսիոյ թագաւորը Գաղղիոյ համար չարիք կ'ուզէ, թէ մտքերը տրամադիր են դերբնականին օգնութեամբ իրենց ապստամբութեան ընթացքը զիւրացընելու: Միով բանիւ շատ մարդ ամբաստանեց, ծածկադրութիւնները ձեռքը շարունակ սնդեցով թէ այն մարդիկը յանցաւոր են:

— Ինչ յանցանքով:

— Ինչ յանցանքով. . . : Կոմս, Պետութեան զաղտնիքը կրնամ երևան հանել:

\*Յրանառա-Ուօպեր-Տամիէն 1757ին յունկար Տին Բաբիզ երթալով Լուի Ժե.ի աջ կողմն գարկաւ զմեղի հարուածով մը: Ուստի բզքրոււելու դատապարտուեցաւ, եւ նոյն տարուան մարտ 28ին դատակնիքն 'ի գործ դրուեցաւ:



— Որ մեր ալ գաղտնիքն է, տիկին : Ո՛հ, բան մը վտանգի չէք գնեք : Կարծեմ թէ ես շահ մ'ունիմ լուծիւն պահելու :

— Այո, կոմս, գիտեմ, մեծ շահ ունիք : Պ. տը Սարգին աւելցնելու հաստատել թէ բաղմանդամ, զորաւոր աղանդ մը կայ քաջասիրտ, ճարպիկ, հաստատամիտ հեռուողներէ բաղկացած, որոնք ամենուն Նորին Աւհափառութեան պարտած ակնածութեան ճուղակ կը լարեն ինչ ինչ զրոյցներ տարածելով :

— Ի՞նչ զրոյցներ :

— Օրինակի համար, ըսելով թէ Նորին Աւհափառութիւնն ամբաստանուած է ժողովուրդը անօթի պահելուն համար :

— Ի՞նչ պատասխանեց թագաւորը :

— Ինչպէս որ թագաւորը միշտ կը պատասխանէ, կատակով մը : Պալամո շունչ առաւ :

— Ի՞նչ կատակ ըրաւ :

«— Որովհետեւ զիս կ'ամբաստանեն թէ ժողովուրդս անօթի կը պահեմ, ըսաւ, միայն մէկ պատասխան կայ այս ամբաստանութեան, սնուցանենք զանոնք :

«— Ինչպէս, վեհափառ տէր, ըսաւ Պ. տը Սարգին :

«— Բոլոր այդ լուրը տարածողներուն սնունդը ես իմ վրայ կ'առնեմ, և ասկէ զատ՝ իրենց բնակարան մ'ալ կու տամ իմ Պասդիլի դղիկիս մէջ :

Պալամո զգաց թէ թեթեւ սարսուռ մ'անցաւ իւր երակներուն մէջէն, սակայն ժողովը շարունակեց :

— Աերջը, հարցուց :

— Աերջը, թագաւորը ժպիտով մը գոգցեալ ինձ խորհուրդ հարցուց :

«— Աւհափառ տէր, ըսի անոր այն ատեն, երբէք զիս չպիտի կարենան հատադրենել, թէ Պ. տը Սարգինի բերած այն փոքրիկ սենշաններն ըսել կ'ուզեն թէ դուք յոռի թագաւոր մ'էք :

«Այն ատեն ոստիկանութեան սեղակալն սկսաւ բացադանչութիւններ ընել :

«— Նոյնպէս, յարեցի, չեն կրնար ապացուցանել թէ ձեր զրպիւրները կարգաւ գիտեն :

— Ի՞նչ ըսաւ թագաւորը, կոմսուհի, հարցուց Պալամո :

— Թէ կարելի էր որ ես իրաւունք ունենայի, սակայն Պ. տը Սարգինն ալ անիրաւ չէր :

— Լաւ, այն ատեն :

— Այն ատեն շատ մը դատաւարտութեան դիրքը ուղարկուեցան, որոց մէջ յայտնի տեսայ թէ Պ. տը Սարգին կը ջանար հատ մ'ալ ձեզի համար սահեցընել : Բայց ես չիտնարհեցայ և մէկ խօսքով կեցուցի զինքը :

«— Պարոն, ըսի անոր յայտնի և թագաւորին առջև, եթէ կ'ուզէք՝ բոլոր Բարեկի բնակիչները ձերբակալեցէք, այդ ձեր արհեստն է. բայց չըլլայ որ իմ բարեկամներէս մէկուն դպչիլ ուզէք . . .

«— Օ՛, օ, ըրաւ թագաւորը, կոմսուհին կը սրդողի : Զգուշացիր, Սարգին :

«— Բայց, վեհափառ տէր, տէրութեան շահը . . .

«— Ո՛հ, դու Սիւլի չես, ես ալ Գաբրիէլլա չեմ, պատասխանեցի բարկութենէս կաս կարմիր եղած :

«— Թագաւորը մեղքընել կ'ուզեն, ինչպէս որ Անրի Գ.ը մեռցուցին :

«Այս անդամ թագաւորը դունատեցաւ, դողաց, ձեռքը ճակատը տարաւ :

«Կարծեցի թէ յաղթուեցայ :

«— Աւհափառ տէր, ըսի, թոյլ տալու է որ պարոնը շարունակէ խօսքը. վասն զի իւր զրադիրներն անշուշտ այն ծածկագրութեանց մէջ կարգայեր են թէ ես ալ ձեզի դէմ կը դաւաճանեմ :

«Եւ դուրս ելայ :

«Է՛հ, այն սիրարձարձ ջրին երկրորդ օրն էր, սիրելի կոմս. Թագաւորն իմ ներկայութիւնս Պ. տը Սարգինի ներկայութենէն նախապատիւ սեպեց, և ետեւէս վազեց :

«— Ա՛հ, կոմսուհի, Աստուած սիրես մի սրդողիր, ըսաւ :

«— Ուրեմն վճռեցէք այն անպիտան մարդը, վեհափառ տէր. բանտ կը հոտի :

«— Օ՛ն, Սարգին, ել դնա, ըսաւ թագաւորը ուսերը վեր ընելով :

«—Եւ ասկէ ետք կ'արդիլեմ՝ քեզ ոչ միայն տունս դալը՝ այլ և զիս բարեկեր :

«Այս անգամ մեր դատաւորը խելքը կորսնցուց . ինձ եկաւ , և խոնարհաբար ձեռքս համբուրեց :

«—Լաւ ուրեմն , այնպէս թող ըլլայ , զեղանի տիկին , չխօսինք ասոր վրայ , բայց դուք Պետութիւնը կը կործանէք : Իմ գործակալներս չպիտի դպչին ձեր պաշտպանած անձին՝ քանի որ անպատճառ այնպէս կ'ուզէք :

Պալատն իտրին մտախոհութեան մը մէջ թաղուած երեցաւ :

— Տես , ըսաւ կոմսուհին ինձ շնորհակալ չէք ըլլար որ ձեզ չթողուցի որ Պաստիւլ տեսնաք , ուր թերեւս յանիրաւի մանկիք՝ սակայն քիչ տհաճութիւն չպիտի զգայիք :

Պալատն պատասխան չտուաւ . այլ գրպանէն սրուակ մը հանեց , որուն մէջ արեան նման կարմրագոյն հեղուկ մը կար :

— Առէք , տիկին , ըսաւ , ձեր ինձ տուած ազատութեան փոխարէն ես ալ ձեր երիտասարդութիւնը քան տարի աւելի կ'երկարեմ :

Կոմսուհին կրծանոցն 'ի վար սահեցընելով սրուակը , ուրախ և յաղթանակաւ մեկնեցաւ :

Պալատն մտախոհ մնաց :

— Թերեւս առանց կնոջ մը քծնասիրութեանը կ'աղատէին , ըսաւ ինքնին : Այս պալատականութեան փոքրիկ ոտքը զանոնք մինչև անդունդին խորը կը գահավիժէ : Ստուգիւ Աստուած մեզի հետ է :

ՃԼԱ

ԸՐԻԻՆ

Տակաւին տանը դուռը տիկին Տիւպարիի վրայէն դոյուած չէր :

երբ Պալատն ծածուկ սանդուխէն ելնելով մուշտակներու սենեակը կը մանէր :

Կոմսուհին հետ ըրած խօսակցութիւնը երկայն տևեր էր , և երկու պատճառ ունէր աճապարելու :

«Մախ՛ կը փափաքէր Լօրէնցան վերստին տեսնել . երկրորդ՝ կը վախնար որ նորատի կինը կը յոգնի . վասն զի անոր համար ստեղծած նոր կենաց մէջ ձանձրոյթ չէր պատճառեր անոր . այլ , ինչպէս որ երբեմն կը պատահէր , յոգնած ատեն նորատի կինը մազնիսական քունէն մտայն յափշտակութեան կ'անցնէր :

Արդ , այն մտայն յափշտակութեան միշտ կը յաջորդէին ջղաշին ճգնաժամեր , որ Լօրէնցան բոլորովին ուժածափ կ'ընէին՝ եթէ նորոգիչ հոսանիւթը զալով դոհացուցիչ հաւասարակշռութիւն մը չբերէր դործարանաց զանազան պաշտօններուն մէջ :

Ուստի Պալատն դուռը դոցեւուն պէս , աչքն իսկոյն դարձուց այն բազմոցը ուր Լօրէնցան թողեր էր :

Լօրէնցա հոն չէր :

Միայն անոր գործածած ոսկեհուռ ծաղիկներով շալը կեցած էր բարձին վրայ , իբրև սպասոյց հոն բնակած և այն կարասին վրայ հանդիւսած ըլլալուն :

Պալատն թափուր բազմոցին նայելով անշարժ մնաց : Թերեւս Լօրէնցա անհանդիստ եղեր էր տարօրինակ հոսէ մը որ դոզցես հոն սփռուած էր դուրս ելնելէն 'ի վեր . թերեւս մեքենական շարժումով մը , իրական կենաց սովորութիւններն 'ի գործ դնելով բնազդմամբ անց փոխեր էր :

Առաջին անգամ Պալատն մտածեց թէ Լօրէնցա գործարանը դացած էր վերստին , ուր քիչ մ'առաջ միասին դացեր էին :

Գործարանը մտաւ : Մէկ նայուածքով թափուր ըլլալը կը տեսնուէր . սակայն ահազին փուռին ստուերին մէջ , Արեւելքէն բերուած գորգին ետև , կին մը դիւրաւ կրնար պահուիլ :

Գորգը վերցուց , փուռին բոլորտիքը դարձաւ . և ոչ տեղ մը Լօրէնցայի հեղին անգամ չգտաւ :

Կը մնար նորատի կնոջ սենեակը ուր դացած ըլլալու էր անշուշտ :

Միայն արթուն եղած ասեն իրեն բանտ մը կը թուէր այն սեփակը :

Սենեկին կողմը վաղեց և կափոյցը դոց գտաւ :

Այս ապացոյց մը չէր կրնար ըլլալ որ Լօրէնցա հոն մտած չըլլար : Լօրէնցա այն յտտակատես քունին մէջ կրնար յիշել անոր բացօտելու կերպը , և մտքէն բոլորովին չջնջուած երազի մը զառանցանայր հնազանդիլ :

Պալատն զսպանակը մղեց :

Սենեակին ալ դործարանին պէս թափուր էր , կ'երևէր թէ Լօրէնցա հոն մտած անգամ չէր :

Այն ասեն վշտալից խորհուրդ մը՝ ինչպէս որ ընթերցողը կը յիշէ՝ արդէն սիրտը ծակեր էր , անոր բոլոր ենթագրութիւնները , երջանիկ սիրահարին բոլոր ակնկալութիւնները՝ ի բաց վանեց :

Լօրէնցա խաղ մը խաղացած ըլլալու էր . քնանալ կեղծած ըլլալու էր , ամուսնոյն մտքէն ամեն կասկած , տարակուսանք , արթնութիւն հանելով , ազատ մնալուն պէս , խոյս տուած ըլլալու էր , ընելիքն աւելի ապահով կերպով ՚ի դործ գնելով , քանի որ արդէն առաջին , կամ մանաւանդ երկրորդ փորձ մ'ունեցած էր :

Այս մտածելով ոտտեց Պալատն , և Քրիցը կոշեղու համար զանգակը զարկաւ :

Յետոյ , որովհետեւ իւր անհամբերութեանը նայելով Քրից կ'ուշանար , ինքը վաղեց անոր դէմը , և ծածուկ սանդուխին վրայ աւոր պատահեցաւ :

— Տիկինը , ըսաւ :

— Ինչ , տէր , հարցուց Քրից Պալատնի յուզմունքէն հասկընալով որ արտաքոյ կարգի բան մը կար :

— Տեսա՞ր զինքը :

— Ոչ , տէր :

— Գուրս չեղա՞ն :

— Ո՛րքէն :

— Տնէն :

— Կոմսուհիէն ուրիշ մարդ գուրս չեղաւ , որուն վրայէն գուրս հիմա գոցեցի :

Պալատն խենդի պէս վեր ելաւ : Այն ասեն երեակայեց թէ նորատի կինը , որ արթուն եղած աստեղն խիստ տարբեր էր քունի մէջ եղած աստեղ , տղայական չարաճճութիւն մը մտածած ըլլալու էր , թէ պահուած մէկ անկիւնէն , իր սրտին սիրող սոսկումը կը տեսնէր և զինքը վախցընելով կը զուարճանար , որպէս զի ետքէն երևան ելնէ :

Այն աստեղ մանրակրկիտ խուզարկութիւն մը սկսաւ :

Անկիւն չթողուց , դարան չթողուց , հորմարդէլ չթողուց բոլորն ալ նայեցաւ : Պալատն այս խուզարկութիւնն ըրած աստեղ կը նմանէր կիրքէն կուրցած մարդու մը , աչքին բան մը չերեցող խենդի մը , դողդոջող զինովի մը : Վրան ուրիշ ուժ չմնաց՝ այլ միայն թեկերը բանալու և գոչելու . « Լօրէնցա , Լօրէնցա » յուսալով որ այն պաշտելի արարածը յանկարծ պիտի դար բազկացը մէջն ինյար ուրախութեան մեծ աղաղակ մ'արձակելով :

Բայց միայն լուութիւն , տխուր և յամառ լուութիւն մը միայն կը պատասխանէր իւր արտառոց մտածմունքին և իւր անմիտ կոչումին :

Վաղէլ , կարասիները տեղէն հանել , պատերուն խօսիլ , Լօրէնցան կանչել , նայիլ առանց տեսնելու , մտիկ ընել առանց լսելու , սիրտը տրոխիլ առանց սպրելու , սարսուիլ առանց մտածելու , ահա այս վիճակին մէջ երեք վայրկեան անցուց Պալատն , այսինքն երեք դար հոգեվարք եղաւ :

Այն տեսակ մը բանգագուշանքէն կէս յիմարի մը փոխուեցաւ , ձեռքը ստուգեալ ջրի մէջ մտեց և քունքերը թրջեց , յետոյ մէկ ձեռքը միւսով սեղմեց՝ զոզցես անշարժ մնալու համար , կամբովն ՚ի բաց վանեց արեան ուղեղին զարնուելուն շնկողը , աղետաբեր , անդադար , միակերպ շնկոց , որ երբ շարժում և լուութիւն ունի կեանք կը ցուցնէ , երբ աղմկալից և զգալի է՝ մահ կամ յիմարութիւն կը ցուցնէ :

— Աեցիր , տրամաբանե՛ք , ըսաւ . Լօրէնցա հոս չէ , ինքզինքն չխտրենք , հոս չէ . ուրեմն գուրս ելած է : Այո , գուրս ելած է , գուրս ելած է :

Եւ անգամ մ'ալ իւր շուրջը նայեցաւ և անգամ մ'ալ կոչեց :

— Գո՛ւրս ելեր է, կրկնեց : Քրից 'ի զուր կը պնդէ թէ տեսած չէ՛ զինքը, դուրս ելեր է, անշուշտ դուրս ելեր է :

« Երկու պարագայ կայ :

« Կամ իրօք բան մը տեսած չէ՛, որ անկարելի բան մը չէ՛, վասն զի մարդ սխալման ենթակայ է . — կամ տեսած է և Լօրէնցայէն կաշառք առած :

« Քրից կաշառք առնէ :

« Ինչո՞ւ չէ՛ : Ի զուր իւր անցեալ հաւատարմութիւնը այս ենթադրութեան դէմ կը բողոքէ : Եթէ Լօրէնցա, եթէ սէրը, եթէ զիտութիւնը կրցան այս աստիճան խաբել և ստել, ինչո՞ւ համար մարդկային արարածի մը զիւրարեկ և սխալական բնութիւնը շատ ըստ կարգի :

« Ո՛հ, պիտի զիտնամ, ամեն բան պիտի զիտնամ : Օրիորդ տը Գալիւրնէյ ձեռքս չէ՛ մի :

« Եյս, Անտրէի միջոցաւ Քրիցի մասնութիւնը պիտի զիտնամ, նոյնպէս Լօրէնցայի մասնութիւնը, և այս անգամ . . . ո՛հ, այս անգամ, որովհետեւ սէրը խաբուսիկ եղած պիտի ըլլայ, որովհետեւ զիտութիւնը սխալ մը եղած պիտի ըլլայ, որովհետեւ հաւատարմութիւնը դաբան մը եղած պիտի ըլլայ . . . ո՛հ, այս անգամ Պալլասա՛ն անողորմաբար, առանց աջը ձախը նայելու պիտի պատժէ, պիտի պատժէ զօրաւոր մարդու մը պէս որ սրտէն գուժը կը հանէ և սեղը հպարտութիւնը կը դնէ :

« Է՛հ, շուտով դուրս ելնելու է, Քրիցին բան մը դու շակել տալու չէ՛ և Գրիանոն վազելու է :

Եւ Պալլասա՛ն զլխարին առնելով որ գետինն ինկեր էր՝ դուռը վազեց :

Բայց յանկարծ կասեցաւ :

— Ո՛հ, ըսաւ, ամեն բանէ առաջ . . . Տէր Ատուած, խեղճ ծեր, մուցեր էի զինքը : Ամեն բանէ առաջ պէտք է որ Ալթօգասը տեսնեմ, զառանցանայ ճգնաժամին մէջ ճիւղալային սիրոյ ստնդանացս (spasme) մէջ, խեղճ ծերը լքի : Այերախա, տմարդի եղայ :

Եւ Պալլասա՛ն այն տեսնողով որ նոյն միջոցին իւր բոլոր շարժումները կը սաստկայնէր, ձեղունին բառնալիքը շարժող զսպանակին մօտեցաւ :

Իսկոյն շարժուն ատաղճը վար իջաւ արադօրէն :

Պալլասա՛ն վրան ելաւ, և հակակշռոյն օդնութեամբ սկսաւ վեր ելնել, սակայն մտքին և սրտին յուզմունքը տակաւին վրան էր, և միայն Լօրէնցայի վրայ կը մտածէր :

Ալթօգասի սենեկին՝ գետինը հասնելուն պէս, ծերին ձայնը եկաւ ականջին հնչեց և իւր վշտալից մտախոհութենէն զինքն սթափեց :

Սակայն Պալլասա՛ն շատ զարմացաւ որ ծերին առաջին խօսքը կշտամբանք չեղաւ, ինչպէս որ ինքը կ'սպասէր . այլ՝ բնական և պարզ զուարթութեամբ մը զինքն ընդունեց :

Աշակերտը զարմանալով վարպետին նայեցաւ :

Ծերը զսպանակաւոր աթոռին տուած կոնակը՝ տարածուեր էր շշնկոցով և հրճուանօք կը շնչէր, այնպէս որ դողցես իւրաքանչիւր շնչառութեան օրուան մը կեանք կ'ստանար . մթին հրով մը լի աւերը՝ որուն արտայայտութիւնը կ'ամոքէր շրթանցը վրայ փայլող ժպիտը, աչերը շարունակ իւր այցելուին վրայ յառած էին :

Պալլասա՛ն իւր ոյժը ժողվեց և զաղափարները ի հաւաքեց՝ յուզմունքն իւր վարպետին չցուցնելու համար, որ մարդկային տկարութեանց ներող մէկը չէր :

Ինքզինքը ժողված միջոցին Պալլասա՛ն զգաց թէ սրտին վրայ տարօրինակ ճնշում մը կը ծանրանայ : Օդն անշուշտ շարունակական ծծումով ապականեր էր . ծանր, անախորժ, եղկ, նողկալի հոտ մը, նոյն հոտը որ արդէն ուրիշ անգամ շնչած էր հոն՝ բայց ոչ այնչափ սաստիկ՝ օդին մէջ կը տարածուէր, և աշնան մէջ արևը ծագելու և մանելու աստն լիճերէն և ճահիճներէն ելնող շոյիներուն նման՝ մարմին առեր և ապակիները նսեմացուցեր էր :

Այն թանձր և կծու մթնոլորտին մէջ Պալլասա՛ն սիրտը տկարացաւ, գլուխն սկսաւ դառնալ, զրաց որ շունչն և ուժը անմիջապէս պիտի կտրէին :

— Վարպետ, ըսաւ, կը թնելու համար հաստատուն տեղ մը փնտռելու և երկայն շունչ մը առնել ջանալով, վարպետ, հոս չես կրնար ապրիլ, մարդ բնաւ շունչ չկրնար առնել հոս :

— Ինչպէս կը թուի քեզ հոս :

— Շատ գեշ :

— Սակայն ես շատ լաւ շունչ կ'առնեմ հոս, սրտասխանեց Սլիթօզաս զուարթամտութեամբ, և ինչպէս որ կը տեսնես, ես հոս կ'ապրիմ:

— Վարպետ, վարպետ, ըստ Պալլամօ հետզհետէ զլուխը ծանրացած, մտիկ ըրէ ինձ և թող առ որ սրտուհան մը բանամ, գեանէն արեան շողի մը կը բարձրանայ:

— Երեան: Ա՛հ, այնպէս կը թուի քեզ. . . : Երեան, դու չեց Սլիթօզաս խնդալէն մարելով:

— Ա՛հ, այո, այո, նոր սպաննուած մարմինէ մը բուրոյ ժահահոտութիւնը կ'առնեմ, կրնամ իսկ կշռել զայն, այնքան ուղեղիս և սրտիս վրայ կը ծանրանայ:

— Այնպէս է, ըստ ձերը հեղնական ծիծաղով մը, այնպէս է, արդէն հասկըցայ. շատ փախուկ սիրտ մը և զիւրազրգիւ ուղեղ մ'ունիս, Աշարա:

— Վարպետ, ըստ Պալլամօ մատը ձերին երկնցընելով, վարպետ, ձեռքերուդ վրայ արիւն կայ. վարպետ, սեղանին վրայ արիւն կայ. վարպետ, արիւն կայ ամեն կողմ, մինչև աշերուդ մէջ որ երկու բոցերու պէս կը վայլին. վարպետ, այս հոտը որ հոս տարածուած է, այս հոտը որ ինձ թալուկ կու տայ և շունչս կը կտրէ՝ արեան հոտ է:

— Լաւ, ետքը, ըստ Սլիթօզաս հանդարտութեամբ. առաջին անգամ է որ արեան հոտ կ'առնես:

- Ոչ:
- Ըրած փորձերս տեսած չես, նոյն իսկ դու ըրած չես:
- Բայց այս մարդկային արիւն է, ըստ Պալլամօ ձեռքովը բռնաթոր ձակատը սրբելով:

— Ա՛հ, սուր հոտառութիւն ունիս, ըստ Սլիթօզաս: Շիտակը, ես չէի կարծեր որ մէկը կարենայ մարդուն արիւնը որ և է կենդանի մ'արիւնէն որոշել:

— Մարդու արիւն, մեմուայ Պալլամօ:  
Եւ որովհետեւ կը գողգոջէր և ինքզինքը բռնելու համար՝ կարասի մը դուրս ցցուած մէկ կողմը կը փնտռէր, ստուգումով տեսաւ պղնձէ մեծ կոնք մը՝ որուն փայլուն երեսներուն մէջ կ'երեւէին նոր լեցուած արեան փայլուն և գոճանման դոյնը:

Ահազին ամանը կիսովին լեցուն էր:

Պալլամօ սարսափած ընկրկեցաւ:

— Ա՛հ, այս արիւնը, ուտի՛ է այս արիւնը:

Սլիթօզաս սրտասխան չէր տար, սակայն բնաւ աչքէ չէր կորնցընէր Պալլամօի յուզմունքը, շիտթութիւնը և սոսկումը: Յանկարծ սարսափելի մոնչիւն մ'արձակեց Պալլամօ:

Յետոյ, որսի մը վրայ յարձակելու պէս ձուելով, սենեկին մէկ կողմը վազեց, և գեանէն վերցոց արծաթաթեղ բանուած մետաքսէ ժապաւէն մը, որուն ետէն կախուած էր սև մազերու երկայն հիւս մը:

Այն սուր, ցաւաղին, գերադոյն ազազակէն ետք, պահ մը մահատիւ լուծիւն մը տիրեց ձերին սենեկին մէջ:

Պալլամօ կամայ մը կը վերցընէր այն ժապաւէնը, սարսուելով կը քննէր այն մաղերը՝ որոց ծայրը ոսկի փոփոսեղով մը բռնուած էր ժապաւէնին վրայ, մինչդեռ միւսը որ կտրուած ըլլալը յայտնի կը տեսնուէր՝ կը նմանէր ծոպի մը որուն ստորին մասը արեան դպած ըլլայ, վասն զի կարմիր և փոփոխելի կաթիլներ կ'երեւէին այն ծոպին ծայրը:

Պալլամօ քանի ձեռքը վեր կ'առնէր՝ այնքան ձեռքը կը դողար:

Պալլամօ քանի ուշադրութեամբ կը նայէր այն թրջած ժապաւէնին՝ այնքան այտերը կը կապուանային:

— Ա՛հ, ուտի է այս, մեմուայ, բայց բաւական բարձր ձայնով, որպէս զի այս խօսքը հարցում մ'եղած իրմէ ուրիշ մէկուն:

— Այն, ըստ Սլիթօզաս:

— Այո:

— Մաղերու կապուած ժապաւէն մ'է:

— Բայց այս մաղերը, այս մաղերը ինչով թրջած են:

— Ինչպէս որ կը տեսնես, արիւնով:

— Ինչ արիւնով:

— Ի՛հ, այն արիւնով որ ցփիս համար պէտք էր, այն արիւնով զոր դու ինձ կը մերժէիր, և դու մերժելուդ համար ես ինքս գտայ:

— Բայց այս մաղերը , այս հիւսքը , այս ժառանգնը ո՛ւստի առիր : Այս տղու մը զլխանոց չէ :

— Քեզի ո՞վ ըսաւ թէ խողխողածս տղայ է , հարցուց Ալթօղաս Տանգարտութեամբ :

— Յփիկ համար տղու մ'արիւնը պէտք չէ՞ր քեզ , դոչեց Պալսամօ : Ըսէ նայինք , այնպէս չըսիր :

— Կամ կոյսի մ'արիւնը , Աշարա , կամ կոյսի մ'արիւնը :

Եւ Ալթօղաս թիկնաթուին թեկն վրայ երկնցընելով նիհար ձեռքը , սրուակ մ'առաւ հոնկէ , և մէջինը հրձուանօք խմեց :

Յետոյ , ամենաբնական կերպով մը , և զորովալից ձայնով մը ,

— Աղէկ ըրիր , Աշարա , իմաստութեամբ և հեռատեսութեամբ վարուեցար՝ այն կլինը հոն իմ տախտակամածիս ներքև դնելով , գրեթէ ձեռքիս քով . մարդկութիւնը գանդատելու բան մը չունի , օրէնքը ձեռք անցընելու բան մը չունի : Է՛հ , դու չյանձնեցիր ինձ կոյսը առանց սրոյ պիտի մեռնէի . ոչ , ես առի : Է՛հ , շնորհակալ եմ , իմ պղտիկ Աշարաս :

Եւ անգամ մ'ալ շրթանցը մօտեցուց սրուակը :

Պալսամօ մաղերուն զիսակը ձեռքէն ձգեց . սոսկալի լոյս մը աչքերը շրջուցեր էր :

Դէմը ձերին սեղանը , այն մարմարէ ահագին սեղանը որուն վրայ միշտ լեցուն էր աունկերով , զիրքերով , սրուակներով . առջևը այն սեղանը մթազոյն ծաղիկներով դամասկեան կերպասէ մեծ սաւանով մը ծածկուած էր , որուն վրայ Ալթօղասի կանդեղը իւր կարմրագոյն լոյսը կ'արձակէր և աղէտալի ձևեր կը գծադրէր՝ զօր Պալսամօ տակաւին նշմարած չէր :

Պալսամօ սաւանին մէկ ծայրէն բռնեց և խսախ իրեն քաշեց ,

Բայց այն ատեն մաղերը ցցուեցան , կոկորդին խորը խեղդուող սոսկալի աղաղակը բաց բերնէն դուրս չկրցաւ ելնել :

Այն պատանին ներքև Լօրէնցաի դիակը տեսեր էր սեղանին վրայ տարածուած , գլուխը գունատ բայց դէմքին վրայ տակաւին ժպիտ մը կը նշմարուէր , և դողցես երկայն մաղերուն ծանրութենէն գլուխը ետևը կախուած էր :

Լայն վէրք մը բացուեր էր անրակին վերևը , որմէ կաթիլ մ'արխուն չէր վազեր :

Ձեռները գալարած էին , աչերը մանիշադոյն արտևանանցը ներքև զոցուած էին :

— Այո , արիւն , կոյսի մ'արիւնը , կոյսի մը շնչերակին արեան յետին երեք կաթիլները . ինձի պէտք եղածն այս էր , ըսաւ ձերը երկրորդ անգամ իւր սրուակին զիմելով :

— Թշուառական , դոչեց Պալսամօ , որուն յուսահատական ճիչը վերջապէս մարմնոյն բոլոր ծակտիքներէն դուրս կ'եկնէր , մեռիւր ուրեմն , վասն զի չորս օրէ 'ի վեր աիրուհիս էր , սէրս էր , կի՛նս էր : Ընդ վայր սպաննեցիր զինքը . . . : Կոյս չէր :

Այս խօսքին վրայ Ալթօղասի աչերը դողացին , այնպէս որ դողցես ելքերտրական ցունց մը դուրս հանեց զանոնք իրենց ակնակապճին մէջ . բիբերը սոսկալի կերպով ամրածուեցան , ահուայ չունենալուն համար լինտերը կըճառեցին , ձեռքէն ինկաւ սրուակը և հաղար կտոր եղաւ , մինչդեռ ինք յապուշկրթած , չքայցած , սրտէն և ուղեղէն միանգամայն զարնուած՝ թիկնաթուին մէջ կը թաւալէր ծանր կերպով մը :

Իսկ Պալսամօ , հեծեծանօք Լօրէնցաի մարմնոյն վրայ ինկաւ , և անոր արիւնաթաթաւ մաղերը՝ համբուրելով մարեցաւ :

ՃՂԲ

ԹԱՐԻ ԵՒ ԱՍՏՈՒԸԹ

Ժամերն , այս զարմանալի քոյրերը , որ իրարու ձեռքէ բռնած այնքան ծանր կը քայլեն դժբաղդին համար , և արագաստ հ'անցնին երջանիկ մարդուն համար , ժամերն իրենց ծանր թևերը գոցելով իջան այն սենեկին վրայ՝ ուր հառաչանք և հեծեծանք միայն կը լսուէր :

Մէկ կողմը մահ, միւս կողմը հոգեվարք :

Մէջ տեղը յուսահատութիւն, հոգեվարքին պէս վշտալից՝ մահ հուան պէս անյատակ :

Պալատն անկողնը սրտառով աղաղակէն՝ ի վեր բառ մը չէր արտասաներ :

Այն շանթարձակ յայտնութենէն ետք որ Ալթոգասի վայրագ ուրախութիւնը ջնջեր էր՝ Պալատն ընաւ շարժում մը չէր ըրեր : Իսկ ժանտատեսիլ ծերունին, բռնի այն կենաց մէջ նետուելով զոր Աստուած մարդուս առած է, այս նոր տարերքին մէջ նոյնը կ'զգար՝ ինչ որ կ'զգայ կապարի հատիկով մը զարնուած և ամպի մը բարձրութենէն լճի մը մէջ ինկած թռչուն մը, որ ջրին երեսը ի զուր կը տալտիկի, և վերջապէս չկրնար թռկերը սլարգել :

Անոր գունատ և խռոված դէմքին սարսափէն կ'երևէր թէ ինչ անսպասում ահաճութիւն կ'զգար :

Արդարև, Ալթոգաս չէր մտածեր անգամ, երբ տեսաւ այն նոսր տակը ուր կ'ուղղուէր ծուխի մը պէս ցնդելու, նպատակ մը՝ որ կը կարծէր թէ ժայռի մը պնդութիւնն ունի :

Տխուր և լռիկ յուսահատութիւնը ապշութեան պէս բան մ'ուներ : Զան չճանչըցող մէկը պիտի կարծէր թէ այն լուրձիւնը բան մը փնտուելու նշան էր, սակայն Պալատն, որ երեսն անգամ չէր նայեր, պիտի հասկընար թէ զօրութեան, բանականութեան կենաց հոգեվարքն էր այն :

Ալթոգաս աչքը չէր հեռացընի որ այն ջախջախուած սրուակին վրայէն՝ որ իւր ակնկալութեանց ոչնչութեան սլակերն էր, կարծես թէ կը համրէր այն հաղարատը բեկորները որոնք գետինը ցրուելով այնքան օր իւր կեանքը կարճեր էին, զողոյցեա աչքով ժողովել կ'ուզէր այն անոյն ըմպելին որ տակտակամածին վրայ թափեր էր, և զոր անմահութիւն կարծեր էր սրահ մը :

Երբեմն ալ, երբ այն ցնորքին անհետանալը սուտ ցաւ մը կ'ազդէր, ծերն անփայլ աչքը Պալատնի վրայ կը դարձընէր, յետոյ Պալատնէն Լօրէնցաի գեղկին վրայ կը դարձընէր :

Այն ատեն կը նմանէր թակարդին մէջ բռնուած անասուններուն զորս որտորդն առաօտուն կը տեսնէ որ բռնուեր են, բաւական ա-

տեն ոտքովը կը տանջէ զանոնք՝ բայց չկրնար անոնց դլտխը դարձընել տալ, սակայն որսի զանախովը կամ հրացանին սուխովը անոնց զպածին պէս՝ իրենց արիւնալից աչքը խոտորնակի կը վերցընեն, որ լի է ատելութեամբ, վրէժինդրութեամբ, կշտամբանօք և զարմացմամբ :

— Միթէ կարելի է, կ'ըսէր այն նայուածքը որ տակաւին այնքան արտայայտիչ էր իւր անդօրութեանը մէջ, միթէ հաւատալէ է թէ այսքան աղէտ, այսքան հարուած ինձ եկան այս մարդուն պէս չնչին արարածի մը կողմէն՝ որ ինձմէ շուրջ քայլ հեռի ծունր գրած է՝ այն մեռած կնկան պէս գոեհիկ նիւթի մը ոտիցը ներքև : Բնութեան մէկ խառնակութիւնը չէ այս, զիտութեան կործանումը չէ այս, բանականութեան քանդումը չէ այս, որ այսչափ գոեհիկ աշակերտը չարաչար կը վարուի վեհադոյն վարպետին հետ, վերջապէս, անհեղեղ բան մը չէ որ փռչոյ հատիկը յանկարծ կեցընէ այն սքանչելի և արաղընթաց կառքին անիւր՝ իւր ամենազօր և անմահ գլորման միջոցին :

Պալատնի գալով՝ որ խարտակուած, չքացած, ձայնէ զուրկ, անշարժ, գրեթէ կեանքէ զուրկ էր, բնաւ մարդկային զաղափար մը չէր անցեր տակաւին անոր ուղեղին արիւնաներկ շոգիներուն մէջէն :

Լօրէնցա, իւր Լօրէնցան, Լօրէնցո՛ իւր կիներ, իւր կուռքը, իբրև հրեշտակ և իբրև սիրուհի՝ կրկնակի թանկագին արարածը, Լօրէնցա հաճոյք և փառք, ներկայ և ապագայ, զօրութիւն և հաւատք, Լօրէնցա՛ այսինքն աշխարհիս վրայ միայն սիրածը, փափաքածը, փառասիրածը, Լօրէնցա յաւիտեան կորսուած էր իրեն համար :

Չէր լար, չէր սրուար, չէր հառաչեր անգամ :

Հազիւ թէ ժամանակ ունէր զարմանալու թէ այսպիսի սարսափելի փորձանք մ'եկած ըլլայ իւր գլխուն : Ար նմանէր այն խեղճերուն՝ զորս ջուրը կը կոխէ իրենց անկողնին մէջ մութ տեղը, որոնք երազուուն մէջ կը տեսնեն որ ջրին մէջն են, կ'արթնան, աչքերնին կը բանան, և իրենց գլխուն վերև մտնող ալիք մը տեսնելով՝ ժամանակ անգամ չունին աղաղակ մ'արձակելու՝ կեանքէն մահուան անցած ատեննին :

Պալատն երեք ժամ շարունակ կարծեց թէ գերեզմանին ամենա-  
խոր անդունդներուն մէջ թաղուած է . իւր անսահման ցաւոցը  
մէջ, գլխուն պատահածը կը համարէր այն սոսկալի երազներէն  
մին զոր մեռելները կը տեսնեն իրենց թաղման յախտնական և  
լուին գիշերը :

Իրեն համար այլ ևս Ալթօգաս չկար : այսինքն ոչ ատելութիւն  
և ոչ վրէժխնդրութիւն :

Իրեն համար այլ ևս Լօրէնցա չկար : այսինքն ոչ կեանք, ոչ  
սէր :

Քուն , գիշեր , անէութիւն :

Ահա այսպէս անցաւ ժամանակը տխուր , լուին , անվերջ , այն  
սենեկին մէջ ուր արինը կը պաղէր իւր արգասաւոր մասը տալով  
այն հիւլէներուն որ պէտք ունին :

Յանկարծ լուսեան և մութին մէջ հնչակ մը երեք անգամ  
զարնուեցաւ :

Անշուշտ Ֆրից գիտէր որ իւր տէրը Ալթօգասի սենեակն էր ,  
վասն զի հնչակ մը նոյն իսկ սենեկին մէջ ձայն հանց :

Բայց ՚ի զուր երեք անգամ հնչեց տարօրինակ խիստ ձայնով մը .  
ձայնը օդին մէջ կորսուեցաւ գնաց :

Պալատն զլուսը վեր չառաւ :

Քանի մը վայրկեան ետք , նոյն ձայնն աւելի սաստիկ , երկրորդ  
անգամ մ'ալ հնչեց , սակայն չկրցաւ Պալատն սթափեցընել իւր  
թմրութենէն :

Յետոյ չափաւոր միջոցէ մ'ետք , բայց այս անգամ աւելի շուտ ,  
կատղած հնչակը երրորդ անգամ մ'ալ սկսաւ սենեկին մէջ խա-  
ցուցիչ և անհամբեր ձայներ հանել :

Պալատն առանց սարսուելու , ծանր կերպով ճակատը վեր ա-  
ռաւ և սկսաւ նայիլ գերեզմանէն ելնող մեռելի մը պաղ հանդի-  
սատութեամբ :

Այսպէս նայած ըլլալու է Ղազարոս՝ երբ Քրիստոսի ձայնը երեք  
անգամ զինքը կոչեց :

Հնչակը շարունակ կը զարնուէր :

Հետզհետէ աճող սաստկութիւնը վերջապէս սթափեց Լօրէնցաի  
սիրահարին միտքը :

ձեռքը դիակին ձեռքէն զատեց :

Իւր վրայէն բոլոր ջերմութիւնը գացեր էր՝ առանց Լօրէնցաի  
մարմնոյն անցնելու :

— Մեծ լուր մը կամ մեծ վտանգ մը , ըսաւ Պալատն ինքնին :  
Միայն թէ մեծ վտանգ մ'ըլլայ . . . . :

Եւ ելաւ կանգնեցաւ :

— Բայց ինչո՞ւ պատասխանեմ այս կոչումին , շարայարեց անու-  
շաղիւր այն տպաւորութեանը որ իւր խօսքերը կ'ընէին այն մթին  
կամարին ներքեւ , այն սգալի սենեկին մէջ , միթէ ասկէ ետք աչ-  
խարհիս մէջ բան մը կրնայ կարեւորութիւն ունենալ կամ վախ տալ  
ինձ :

Հնչակն այն ատեն դողցոցեալ իրեն պատասխանելու համար այնպէս  
ուժգին զարկաւ հարիչն իւր կողերուն՝ որ հարիչը բրդաւ և գնաց  
ինկաւ ապակիէ խողովակի մը վրայ , որ մետաղեայ շինդով մը  
ջախջախելով՝ կտորները տախտակամածին վրայ ցրուեցան :

Պալատն ալ գէմ չգրաւ , նաև պէտք էր որ ոչ ոք , ոչ իսկ  
Ֆրից , գար զինքը նոյն սեղը դռնէր :

Հանդարտ քայլով մը գէպ ՚ի զսպանակը գնաց , միեց զայն և  
կափոյցին վրայ ելաւ , ծանր կերպով վար իջաւ և զինքը մուշտակ-  
ներու սենեակը տարաւ :

Բազմոցին քովէն անցնելու ատեն քսուեցաւ այն լանջակամարին  
որ Լօրէնցաի ուսերէն ինկեր էր , երբ անողոք ծերունին մահուան  
նման անտարբեր՝ բազկացը մէջ վերցընելով տարեր էր Լօրէն-  
ցան :

Դպած իրը նոյն իսկ Լօրէնցաէն աւելի կենդանի ըլլալով՝ ցա-  
ւալի սարսուռ մը տուաւ Պալատնի :

Լանջակամարն առաւ , պագաւ , և նոյն իսկ անով խեղդեց իւր  
աղաղակները :

Յետոյ գնաց սանդուխին դուռը բացաւ :

Ամենէն վերի աստիճաններուն վրայ , Ֆրից բոլորովին դունաթափ  
չնչասպառ , մէկ ձեռքը ջահ մը և միւս ձեռքը հնչակին լարը՝  
զոր իւր սարսափէն և անհամբերութենէն շարունակ կը քաշէր  
ջղաձիգ կերպով , իրեն կ'սպասէր :



Տէրը տեսնելուն պէս՝ նախ դոհունակութեան աղաղակ մը , յետոյ զարմացման և սարսափի երկրորդ աղաղակ մ'արձակեց :

Բայց Պալսամօ , սյոս կրկին աղաղակին պատճառը չգիտնալով , համը հարցումով մը պատասխանեց :

Քրից բան մը չըսաւ , սակայն նա որ այնքան յարգանք կը վարուէր սովորաբար , տիրոջը ձեռքէն բռնեց և տարաւ զինքը վեհակեան մեծ հայելիին առջև որ կը զարդարէր այն կրակարանին վերեւը՝ որմէ Լորէնցի սենեակը կ'անցնուէր :

— Ո՛հ , նայեցէք , Վսեմաշուք տէր , ըսաւ հայելիին մէջ ցոյց տալով անոր դէմքը :

Պալսամօ սարսուեցաւ :

Յետոյ ժպիտ մը , այն ժպիտներէն մին որ անսահման և անբուժելի վշտի մը ծնունդն են , մահացու ժպիտ մը շրթերուն վրայէն անցաւ :

Երգարև Քրիցի սոսկումն հասկըցեր էր :

Պալսամօ մէկ ժամուան մէջ քսան տարիի չափ ծերացեր էր . աչերուն մէջ փայլ չէր մնացեր , ոչ ալ արիւն մարթին ներքև , ապուշ և անբան կերպարանք մ'ունէր , արիւնալից փրփուր մը կը կաթկթեր շրթերէն , արեան մեծ բիծ մը կը փնտրուէր ճերմակ շապիկին ջանջիլին (batiste) վրայ :

Պալսամօ պահ մը նայեցաւ հայելիին մէջ և ինքզինքը չճանչցաւ . յետոյ հայելիին մէջ ցոլացող սարօրինակ անձին աչերուն սևեռելով իւր աչերը :

— Այո , Քրից , այո , ըսաւ , իրաւունք ունիս :

Յետոյ , հաւատարիմ ծառային խօսված դէմքը նկատելով ,

— Բայց ինչու կանչեցիր զիս , հարցուց անոր :

— Ո՛հ , տէր . անոնց համար :

— Անոնց :

— Այո :

— Անոնց , ո՞վ են :

— Վսեմաշուք տէր , մըմջեց Քրից բերանը Պալսամօի ականջին մօտեցնելով , անոնք , հինգ վարպետները :

Պալսամօ սարսուեցաւ :

— Ամենքն ալ , հարցուց :

— Այո , ամենքն ալ :

— Վարն են :

— Վարն են :

— Առանձին :

— Ոչ , իւրաքանչիւրն հետը զինեալ ծառայ մ'ունի որ բախը կ'սպասէ :

— Միասին եկան :

— Միասին , այո , տէր . և համբերութիւննին կը հատնի . ահա սոր համար այնքան անգամ և այնքան ուժով զարկի հնչակը :

Պալսամօ առանց արեան բիծը ծածկելու , առանց վրայի խառնակութիւնը կարգադրելու՝ սկսաւ քայլել և սանդուխէն իջնել Քրիցին հարցընելով թէ հիւրերը սրահակն էին թէ մեծ դահլիճը :

— Սրահակն են , վսեմաշուք տէր , պատասխանեց Քրից տիրոջը ետեէն երթալով :

Յետոյ , սանդուխին ստորոտը Պալսամօն կեցընելով ,

— Ձեր վսեմութիւնն ինձ տալու հրաման ունի , ըսաւ :

— Բնաւ , Քրից :

— Ձեր Վսեմութիւնը . . . շարայարեց Քրից թոթովելով :

— Ետքը , հարցուց Պալսամօ անսահման քաղցրութեամբ մը :

— Ձեր Վսեմութիւնն անպէ՛ն կ'երթայ անոնց քով :

— Անպէ՛ն , այո :

— Դոյն իսկ առանց սրոյ :

— Ինչու սուրս առնեմ , Քրից :

— Ձեմ զիտեր , ըսաւ հաւատարիմ ծառան աչերը խոնարհելով . կը մտածեմ , կը կարծեմ , կը վախնամ . . .

— Լաւ , գնա , Քրից :

Քրից քանի մը քայլ առաւ հնազանդելու համար և դարձաւ :

— Չըսեցիր , հարցուց Պալսամօ :

— Վսեմաշուք տէր , պիտի ըսէի թէ ձեր երկհարուածեան ատրճանակները ոսկեզօծ աշտանակին ներքև , երեսուսեայ արկղին մէջն են :

— Գնա , կ'ըսեմ՝ քեզի , պատասխանեց Պալսամօ :

Եւ սրահակը մտաւ :

# ՃԼԳ

## ԳՐԱՆՈՒՅԵՆ

Ֆրից իրաւունք ունէր, Պալսամօի հիւրերը ոչ խաղաղերեւոյթով մը և ոչ ալ բարեյօժար կերպարանքով մը մտեր էին Սէն-Գլօտ փողոցը:

Հինգ ձիաւորներ կային ուղակառքին հետ որով հինգ վարպետները եկած էին. ամբարտաւան և խիստ դէմքով հինգ մարդ, յոտից ցղուխ զինեալ, փողոցին դուռը դոցեր էին, և զայն կը պահպանէին իրենց տեարոյը սպասելու երևոյթով մը:

Առաջին զահին վրայ կառավար մը, երկու պայիկներ իրենց վերարկուին ներքեւ որսի դանակներ և հրացանակներ պահեր էին, Աւելի արշաւանք մը քան թէ այցելութիւն մ'ընելու եկեր էին այն մարդիկը Սէն-Գլօտ փողոցը:

Ուստի սոսկալի մարդոց այս զիշերային արշաւանքը զորս Ֆրից ճանչցեր էր, ապարանքին վրայ այսպէս յարձակելնին, Գերմանացւոյն մեծ Խարսափ ազդեր էր առջի բերան. դրան քովի պատուհանէն այն բազմութիւնն ու զէնքերը նշմարած աստեն փորձ փորձեր էր դուռն ամենուն դէմ գոցել. բայց այն ամենազօր նշանները, որ եկողներուն իրաւանց անդիմադրելի վկայութիւնն էին՝ իրեն թոյլ չտուին դէմ գնել: Տեղին տիրելուն պէս՝ օտարականները հնարագէտ զօրապիսներու պէս՝ ամենը իւրաքանչիւր ծայրը տեղ բռներ էին՝ իրենց թշնամական դիտաւորութիւնները մինչև անդամ չձածուկելով:

Ֆրից այն կարծեցեալ պայիկները բախին և անցքերուն մէջ, կարծեցեալ տէրերը սրահակը տեսնելով չկրցաւ լաւ բան մը դուռ շահել. ահա ասոր համար զանգակը կոտրեր էր:

Պալսամօ առանց զարմանալու, առանց պատրաստուելու մտաւ

այն սրահակը՝ զոր Ֆրից վայելչօրէն լուսաւորեր էր պատիւ ընելու համար, ինչպէս որ ամեն հիւրի կը պարտաւորէր:

Թիկնաթոռներու վրայ նստած տեսաւ հինգ այցելուները, որոցմէ և ոչ մին ոտք չելաւ երբ ինքը երեցաւ:

Ինքը բնակարանին տէրը, զանոնք ամենքն ալ տեսնելով, քաղաքաւարութեամբ ողջունեց:

Այն աստեն միայն ոտք ելան և բարեն առին վայելչօրէն:

Պալսամօ անոնց դիմացը թիկնաթոռ մը նստաւ առանց նշմարելու կամ նշմարել ցոյց տալու այս ժողովին տարօրինակ կարգադրութիւնը: Արդարև հինգ թիկնաթոռները կիսաբոլոր մը կը կազմէին նախնի ատեաններուն նման; երկու աթոռակիցներով նախագահ մը, և Պալսամօի աթոռը, նախագահին աթոռին դէմը դրուած, նոյն տեղն որ ամբաստանելոյն կուտան սիւնհողներուն և ասեաններուն մէջ:

Նախ Պալսամօ չխօսեցաւ, ինչպէս որ ուրիշ որ և է պարագայի մը մէջ պիտի ընէր. կը նայէր առանց տեսնելու. հետեանք այն ցաւալին քնէութեան՝ որ այն հարուածէն ետք վրան մնացեր էր:

— Ա՛րեւի թէ հասկըցար, եղբայր, ըսաւ նախագահը, կամ լաւ ևս նա որ մէջ տեղի թիկնաթոռը կը բազմէր: Սակայն շատ ուշ եկար. և մենք կը խորհրդակցէինք արդէն թէ արդեօք ետեւէդ մարդ ուղարկենք:

— Ըսածնիդ չեմ հասկընար, պատասխանեց Պալսամօ պարզապէս:

— Ես այնպէս չէի կարծեր տեսնելով որ մեր առջին ամբաստանեալի տեղն ու դիրքը կը բռնես:

— Ամբաստանեալի, կակաղեց Պալսամօ անորոշ կերպով:

Եւ ուտերը վեր ըրաւ:

— Չեմ հասկընար ըսաւ:

— Հիմա պիտի հասկըցընենք քեզի, և այս ալ դժուարին չպիտի ըլլայ՝ դունստ ճակտիդ, մարած աչերուդ, թրթուռն ձայնիդ նայելով. . . : Մարդ կը կարծէ թէ չես իմանար:

— Ինչո՞ւ չէ, կ'իմանամ, պատասխանեց Պալսամօ գլուխը ցոյցե-

լով, զողոյս զայն ճնշող զաղափարներ 'ի բաց վանելու համար :  
— Կը յիշեն , եղբայր , շարայարեց նախագահը , թէ դերագոյն մասնաժողովն իւր տուած վերջին տեղեկութեանց մէջ՝ ուխտիս մեծերուն միոյն կողմէն ըլլալիք մատնութիւն մ'իմացուց :

— Թե՛րես . . . այո . . . ոչ չեմ ըսեր :

— Ահատող խղճի մը վայելուչ կերպով կը պատասխանես . բայց հանդարտ . . . մի վճատիր . պատասխանէ այն յստակութեամբ , այն ճշգրտութեամբ զոր կը հրամայէ քեզ սոսկալի վիճակ մը . պատասխանէ ինձ այն ստուգութեանն համեմատ որուն կրնանք համոզուիլ , վասն զի հոս ոչ ոիս կը բերենք և ոչ ասեղութիւն . մենք օրէնքն ենք . դատաւորը լսելէն ետք օրէնքը կը խօսի :

Պալատն ոչինչ պատասխանեց :

— Ըսածս կը կրկնեմ , Պալատն , և այս յայտարարութիւնն ընելով այն ազդարարութիւնն ըրած կ'ըլլամ՝ զոր մարտիկներն իրարու կ'ընեն կռուի չսկսած . օրինաւոր՝ բայց զօրաւոր զէնքով պիտի յարձակիմ վրագ : պաշտպանէ զքեզ :

Ներկայ եղողները Պալատն անտարբերութիւնը և անշարժութիւնը տեսնելով , զարմանօք իրարու նայեցան , յետոյ աշերտին նախագահին դարցուցին :

— Լսեցիր ըսածս , այնպէս չէ՞ , Պալատն , կրկնեց այս վերջինը :  
Պալատն զլստովը հաստատական նշան մ'ըրար :

— Ուստի , իբր օրինասէր և բարեսէր եղբայր , մտքիդ ազգարարութիւն ըրի և հարցաքննութեանս նպատակը զգալ տուի : Իմացար . զգուշացիր , կ'սկսիմ :

«Այն ազգարարութենէն ետք , շարայարեց նախագահը , ընկերութիւնը իւր անդամակիցներէն հինգ հոգի ընտրեց Բարիզ մէջ հսկելու համար այն մարդուն ընթացքը՝ զոր իբր մատնիչ մեզ կը նշանակէին :

«Արդ , մեզի եղած յայտնութիւնները սխալի ենթակայ չեն . դու ալ գիտես՝ որ սովորաբար կ'ստանանք թէ մարդոց մէջ գանձող անձնուէր գործակալներէն , թէ իրաց ինչ ինչ նշաններէն , թէ բնութեան տակաւին միայն մեզի յայտնած խորհրդաւոր՝ բաղադրութեանց մէջ գանձող անսխալ երևոյթներէն և նշաններէն : Արդ

մենէ մին քեզի վերաբերեալ տեսիլ մը տեսեր էր , գիտենք որ նա երբէք սխալած չէ . զգոյշ կեցանք , և քեզ հսկեցինք :

Պալատն այս ամենը մտիկ ըրաւ առանց բնաւ ցոյց տալու անհամբերութեան , կամ նոյն իսկ իմացականութեան նշան մը :  
Նախագահը շարունակեց .

— Քեզի պէս մէկը հսկելը դիւրին բան չէր , դու ամեն տեղ կը մտնես , քու պաշտօնդ է հաստատուիլ այն ամեն տեղ ուր մեր թշնամիք տուն մը , որ և է զօրութիւն մ'ունին : Քու տրամադրութեանդ ներքև ունիս բոլոր բնական օգնութիւնները որ անհատում են , նաև անոնք զոր ընկերութիւնը քեզ կը մատակարարէ՝ իւր դատը յաղթանակել տալու համար : Շատ ատեն կասկածի մէջ վարանեցանք՝ Ռիշլիէօի պէս , Տիւպարիի պէս , Ռօհանի պէս թշնամիներ տունդ դալը տեսնելով : Ասկէ զատ , Բլադրիէր փողոցին վերջին ժողովին մէջ ատենախօսութիւն մ'ըրիր , ընդհանուր կարծիքէ գուրս ատենախօսութիւն մը , որով մեզի կարծել տուիր թէ դու դեր մը կը կատարէիր ողորբելով , յաճախելով այն անուղղայ ցեղը զոր հարկ է երկրէս բնաջինջ ընել : Ատեն մը քու ընթացքիդ գաղանխքն յարգեցինք՝ օղակար արդիւնք մը յուսալով . սակայն վերջապէս ցնորքնիս փարատեցաւ :

Պալատն իւր անշարժութիւնը , անտարբերութիւնը պահեց , այնպէս որ նախագահն սկսաւ համբերութիւնը կորսնցընել :

— Երեք օր կայ , ըսաւ , հինգ դատապարտութեան գիր ուղղուեցան : Պ . ար Սարդին ուղերէր զանոնք թաղաւորէն . ստորագրուելուն պէս պարագ մնացած տեղերը դրուելով , նոյն իսկ այն օրն ներկայացուեցան մեր գլխաւոր հինգ գործակալներուն՝ որոնք կարի հաւատարիմ , կարի անձնուէր եղբայրներ՝ Բարիզ կը բնակին : Հինգն ալ ձերբակալեցան և տարուեցան՝ Երկուքը Պասդիլ՝ ուր արձանագրուեցան ամենազաղտ կերպով , երկուքը Աէնսան՝ մոռացութեան մէջ , մին 'ի Պիսեղը՝ մահաբեր ծակի մը մէջ : Գիտե՞ս ասոնք :

— Ոչ , ըսաւ Պալատն :

— Տարօրինակ բան , դու որ այնքան յաբարբերութիւն ունիս տերութեան մեծերուն հետ : Բայց անքի սարօրինակը կայ , ահա ասիկ . . .

Պալատն մտիկ ըրաւ :

— Պ. տը Սարգիս այս հինգ հաւատարիմ բարեկամները ձերբակալելու համար պէտք էր որ աչքին առջև ունենար այն միակ յայտագիրը՝ որ կարգացուելու կերպով գրուած՝ զո՛հ դայոց հինգ անձանց անունները կը պարունակէ : Այս յայտագիրն 1769ին ուղարկուեցաւ քեզ գերագոյն ժողովին կողմէն, և նոյն իսկ դու ընդունեցիր այն նոր անդամակիցները, և անմիջապէս անոնց տուիր այն աստիճանը՝ զոր գերագոյն ժողովն անոնց համար կը նշանակէր :

Պալատն շարժումով մը հասկըցուց թէ միտքը բան մը չէր դար :

— Յիշողութեանդ պիտի օգնեմ : Այն հինգ անձինք արաբերէն հինգ տառերով ներկայացուած էին, և այն տառերը, քեզի հաղորդուած յայտագրին վրայ, նորեկ եղբարց անուններուն և թիւերուն կը պատասխանէին :

— Այնպէս թող ըլլայ, ըսաւ Պալատն :

— Կը խոստովանիս :

— Ինչպէս որ կ'ուզէք :

Նախագահը իւր պիտուակիցներուն նայեցաւ սոյն խոստովանութիւնը նշանակել տալու համար :

— Լաւ ուրեմն, շարայարեց, նոյն յայտագրին վրայ, միայն այն յայտագրին, կիմանան, որ կընար եղբայրները վտանգի ենթարկել, վեցերորդ անուն մը կար, կը յիշես :

Պալատն պատասխան չտուաւ :

— Այն անունն էր . որ Ֆէնիս կոմս :

— Այնպէս է, ըսաւ Պալատն :

— Քանի որ հինգ եղբարց անունները դատապարտութեան դիւրերուն մէջ անցեր են, ինչո՞ւ ուրեմն քուկդ կը յարդեն, կը փայփայեն, սիրով կը լսեն արքունիքը և պաշտօնէից նախասենեակներուն մէջ : Եթէ մեր եղբարքը արժանի էին բանտի, դու ալ արժանի ես, ինչ պիտի պատասխանես :

— Ոչինչ :

— Ա՛հ, կը դուշակեմ ընելիք առարկութիւնդ, պիտի ըսես թէ ոստիկանութիւնը իւր ունեցած միջոցներով ձեռք անցուցեր է նուազ համբաւ ունեցող եղբարց անունները, սակայն պարտաւոր է յար-

գել քու անունդ, դեսպանի անուն, զօրաւոր մարդու անուն, մինչև անգամ պիտի ըսես թէ չէ կրցեր կասկածիլ այս անուան վրայ :

— Բնաւ բան մը չպիտի ըսեմ :

— Կը տեսնեմ որ հպարտութիւնդ պատիւէդ ետքը կ'ապրի դարձեալ . ոստիկանութիւնը այն անունները գտած է՝ գերագոյն ժողովին քեզ ուղարկած յայտագիրը կարդալով, և ահա ինչպէս կարդացեր է . . . : Արկղիկի մը մէջ պահած էիր զայն, ստոյգ է :

«Օր մը կին մը դուրս ելաւ տնէդ արկղիկը թուին ներքև . մեր հսկող գործակալները զինքը տեսեր, և մինչև Ահն-ժէրմէն արուարձանը ոստիկանութեան տեղակալին ապարսնքն անոր հետեւեր էին : Արնայինք չարիքը սկիզբէն կեցընել, վասն զի արկղիկն առնելով, այն կինը բռնելով ամեն բան հանդարտ և ապահով կ'ըլլար մեզի համար : Բայց մենք հնազանդեցանք սահմանադրութեան յօդուածներուն, որ կը սրամարդէ յարդել թաքուն միջոցները՝ որոցմով մեր դատին կրնան ծառայել ընկերներէն ոմանք, մինչև անգամ եթէ այն միջոցները մատնութեան կամ անխոհեմութեան երեւոյթ մ'ունենան :

Պալատն այս վկայութեան համամոտութիւն ցոյց տուաւ, բայց այնքան անորոշ կերպով, որ առանց մինչև այն ատեն պահած անշարժութեանը, նշմարելի չպիտի ըլլար այն շարժումը :

— Այն կինը գնաց ոստիկանութեան տեղակալը դտաւ, ըսաւ նախագահը, այն կինը արկղիկը յանձնեց՝ և ամեն բան յայտնուեցաւ : Ստոյգ է :

— Լիովին ստոյգ :

Նախագահը ոտք ելաւ :

— Ո՞վ էր այն կինը, դոչեց : Գեղանի, սիրալաւ, հոգւով և մարմնով քեզի անձնուէր, խանդակաթ սիրուած քեանէ . հանձարեղ, հնարագէտ, դիւրահամբոյր խաւարին այն հրեշտակներուն նման որոնք մարդու կ'օգնեն չարագործութեան մէջ յաջողելու, Լօրէնցա Ֆէլիչիանի կինդ է, Պալատն :

Պալատն յուսահատական մունչիւն մ'արձակեց :

— Համոզուեցա՞ր, ըսաւ նախագահը :

— Եզրակացուցէք, ըսաւ Պալատն :

— Տակաւին չաւարտեցի : Ոստիկանութեան տեղակալին քո՞ն երթալէն քառորդ մ'եսք դու ալ գացիր : Կէ մատնութիւն ցաներ էր , դու ալ գացիր վարձատրութիւնը քաղել : Իբրև հըու աղախին՝ յանցանքն իւր վրայ առեր էր , դու ալ գացիր այն վատ գործին վերջին անգամ աղւոր ձև մը տալ : Լօրէնցա առանձին դու ռա ելաւ : Անշուշտ զինքը կը մերժէիր , և չէիր ուզեր ինքզինքդ վտանգի ենթարկել՝ անոր ուղեկցելով : Յաղթական դուրս ելար ատկին Տիւսարիի հետ՝ որ հոն կոչուեր էր բերնէդ լսելու համար այն յայտնութիւնները՝ զոր գրամով ծախել կ'ուզէիր . . . : Այն պոռնկին կառքը հեծար նման այն նաւավարին որ նաւ հեծաւ Եզիպտացի մեղաւոր Սարիամին հետ . մեզ 'ի կորուստ մատնող յայտագիրները Պատը Սարգիսի քով կը թողուիր , բայց հետդ կ'առնէիր արկղիկը որ կրնար գեղը կորսնցընել մեր առջև : Աստուած տուաւ որ անսանք . Աստուծոյ լոյսը չպակսիր մենէ բարեպատեհ առիթներու մէջ . . . :

Պալատն խոնարհեցաւ առանց բան մ'ըսելու :  
 Հիմա կրնամ եզրակացընել , յարեց նախադահը : Երկու յանցաւոր նշանակուեցան մեր ուխտին . կին մը՝ դաւակնցդ , որ թերևս անմեղութեամբ՝ սակայն իրօք մնաս հասցուց մեր դատին՝ մեր գաղտնիքներէն մին երևան հանելով . երկրորդ՝ դու , վարպետ , դու մեծ դօժի , դու՝ լուսաձաձանչ նշոյլ՝ որ այն կնոջ ետևն ապաստանելու վատութիւնն ունեցար , մատնութիւնդ շատ յայտնի չերևելու համար :

Պալատն ծանր կերպով գունատ դուրսը վերցուց և ներկայ եղողներուն դարձուց աչքը լի այն հրով՝ որ հարցաբնութեան սկիզբէն 'ը վեր ծնունդ առեր էր կուրծքին մէջ :

- Ինչու կ'ամբաստանէք այն կինը , ըսաւ :
- Ա՛հ , գիտենք որ պիտի ջանաս զինքը պաշտպանել . գիտենք որ գիտութեան , երջանկութեան և հարստութեան դանձգ է . գիտանք որ ամբողջ աշխարհէն աւելի թանկագին գործիք մ'է :
- Գիտէք այդ , ըսաւ Պալատն :
- Այո , գիտենք , և քեզ աւելի անով պիտի պատժենք՝ քան թէ քեզմով :

— Աւարտեցէք . . .  
 Նախադահը ոտք ելաւ :

— Ահաւասիկ վճիռը . Ժողով Պալատն մատնիչ է . երկու մեքոնս գրծեց . սակայն իւր գիտութիւնը կարեոր է ուխտին՝ որովհետև անսահման է : Պալատն իւր մասնած դատին համար պիտի սպրի . իւր եզրաբոյր կը վերաբերի՝ թէ և ուրացաւ զանոնք :

— Ա՛հ , ա՛հ , ըրաւ Պալատն ախտը և մոլեղին :  
 — Մշտն ջենաւոր բանտարկութիւն մը պիտի պաշտպանէ ընկերութիւնը անոր նոր ներդրմանց դէմ , միանգամայն եղբարք կարող պիտի ըլլան քաղել Պալատնէն այն օգուտը՝ զոր ընկերութիւնը իրաւունք ունի սպասել իւր ամեն անդամակիցներէն . Լօրէնցա Ֆելիչիանիի գալով , սոսկալի պատիժ մը . . .

— Անցէք . ըսաւ Պալատն ձայնին մէջ կատարեալ հանդարտութիւն մը պահելով : Ար մոռնաք որ ես զինքս չպաշտպանեցի . ամբաստանելոյն ջատագովութիւնը պէտք է մտիկ ընել . . . բաւ մը կը բաւէ ինձ , միակ վկայութիւն մը : Այրկեան մը սպասեցէք ինձ , խոստացած ապացոյցս հիմա կը բերեմ :

Հինգ վարպետներն իրարու երես նայեցան :  
 — Ո՛հ , կը վախնաք որ ինքզինքս կ'սպաննեմ , ըսաւ Պալատն դառն ժպտով մը : Եթէ ուզէի՝ կ'ընէի : Ձեր հինգն ալ մեռցընելու չափ թոյն կայ այս մատանիին մէջ՝ եթէ բանամ : Ար վախնաք որ խոյս կու տամ . Հեռս մէկը դրէք թէ որ կ'ուզէք :

— Գնա՛ , ըսաւ նախադահը :  
 Պալատն վայրկեան մը չերեցաւ . յետոյ սանդուխէն բեռով մը իջնելը լուեցաւ . ներս մտաւ :

Ուսին վրայ ունէր Լօրէնցայի պիրկ , պաղած և գունաթափ դիակը՝ որուն սպիտակ ձեռքը դէպ 'ի վար կը կախուէր :

— Այս կինը զոր կը պաշտէի , այս կինը որ իմ զանձս էր , միակ ինչքս էր , կեանքս էր , այս կինը որ մատնեց , ինչպէս որ կ'ըսէք , գոռեց , ահաւասիկ , առէք : Աստուած ձեզի չսպասեց զինքը պատժելու համար , պարոններ , յարեց :

Եւ կայծակի մ'արագութեամբ դիակը թևերուն վրայէն սահեցընելով գորզին վրայ թաւալեց մինչև դատարաններուն օտից ներ-

քե, որոնք մեծ սարսափին մէջ, մեռելին պաղ մազերը և անշարժ ձեռներն իրենց քսուելը զդայն, մինչդեռ կանդեղներուն լուսովը կարապի սպիտակութեամբ պարանոցին մէջ տեղը վէրքը կ'երևեր խոր և աղէտալի :

— Հիմա վճիռ տուէք, յարեց Պալսամօ :

Գատա: որները զարհուրած՝ սոսկալի աղաղակ մը արձակեցին, և թալկաւոր սարսափէ մը բռնուած խոյս տունն անբացատրելի շփոթութեամբ մը: Իսկոյն բակին մէջ լուսեցան ձիերուն խխնջիւնը և ոտից ձայնը. դուռը ծխնիններուն վրայ դռնչեց, յետոյ լուծիւնը, հանգիսաւոր լուծիւնը եկաւ մահուան և յուսահատութեան քով նստաւ :

### ՃԼԴ

### ՄԱՐԳ ԵՒ ԱՍՏՈՒԸԾ

Մինչդեռ մեր պատմած տեսարանը Պալսամօի և հինգ վարպետներուն մէջ տեղի կ'ունենար, տանը մնացած մասին մէջ փոփոխութիւն մը չէր երևեր. միայն ծերը տեսեր էր որ Պալսամօ իւր սենեակը մտնելով Լօրէնցաի դիակը տարեր էր, և այս նոր ցոյցն իրեն զղացընել տուեր էր կրկին՝ իւր շուրջը կատարուածները :

Տեսնելով որ Պալսամօ մարմինն ուսին վրայ առած վարի դատիկներ կ'իջնէ, կարծեց թէ վերջին, յաւիտենական ողջոյնն էր այն մարդուն՝ որուն սիրտը կտորեր էր, և սկսաւ վախ զգալ այն լքուածն, որ մահուան համար զգացած սարսափը կը կրկնապատկեր, նա որ ամեն բան 'ի գործ դրած էր չմեռնելու համար :

Չգիտնալով թէ Պալսամօ ինչ նպատակաւ կը հեռանար, չգիտնալով թէ ո՞ր կ'երթար, սկսաւ կոչել :

— Աշարա՛, Աշարա՛ :

Տղայութեան անունն էր այս. կը յուսար որ այս աւելի աղբեցութիւն պիտի ունենար չափահաս մարդուն վրայ :

Սակայն Պալսամօ կ'իջնէր. իջնելէն ետք չմտածեց անգամ կափոյցը վերստին վեր հանել, և նրբանցքին խորերն անյայտ եղաւ :

— Ա՛հ գոչեց Ալթօբաս, ահա այսպէս է մարդը կոյր և ապերախտ կենդանի: Գարձիւր, Աշարա, դարձիւր: Ա՛հ, դու՛ կին ըսուած ծիծաղելի նիւթը աւելի՛ նախապատիւ կը համարիս մարդկային կատարելութենէն՝ զոր ես կը ներկայացընեմ, կենաց կտոր մը անմահութենէն աւելի՛ նախապատիւ կը համարիս :

«Բայց ոչ, գոչեց պահ մ'ետք. ոչ, թշուառականը խարեց իւր վարպետը, վատ աւագակի մը պէս իմ վստահութիւնս խաղ ըրաւ իրեն, կը վախնար որ ես կ'ապրիմ, ես որ այնքան կը դերազանցեմ զինքը գիտութեան մէջ, կ'երևի թէ կ'ուզէ ժառանգել այն բազմալատտակ գործը՝ զոր գրեթէ 'ի կատար հանած էի. ինձ որոգայթ լարեց, ինձ որ իւր վարպետն եմ, բարերարն եմ: Ա՛հ, Աշարա . . .

Եւ սոսկաւ առ տակաւ ծերին բարկութիւնը կը սաստկանար, այստեղը տենդարեր գոյն մը կ'առնէին, կիսաբաց աչերուն մէջ կ'աւելնար այն մթին փայլը նման այն փոսփորային նշոյլներուն՝ զոր սրբապիղծ տղաք մեռած զլիսու մը ակնակապիճին մէջ կը զետեղեն :

Այն ատեն կը գոչէր .

— Գարձիւր, Աշարա, դարձիւր: Չղոյշ եղիր, գիտես որ սատանայական կերպերով կրակ կրնամ հանել, դերբնական ողիններուն կրնամ յարութիւն տալ. մոգերուն Փեղոր ըսած Սատանան Գաղլերանց մէջ կոչեցի, և սատանան ստիպուելով սանդարամէտը թողուլ՝ եկաւ ինձ երեցաւ. Աստուծոյ բարկութեան պաշտօնեայ եօթն հրեշտակաց հետ լսասկեցեայ այն լերան վրայ՝ ուր Մովսէս օրինաց տախտակներն ընդունեցաւ, միայն իմ կամաց զօրութեամբ վառեցի այն եօթնաջահեան մեծ եռուսանին՝ զոր Տրխանոս Հրէաներէն յափշտակեց. զգուշացիր, Աշարա, զգուշացիր :

Բայց բնաւ պատասխան տուող չկար իրեն :

Եւ այն ասնն զլուինն հետզհետէ մոլորելով .  
 — Չես տեսներ , թշուառական , կրէր խեղդուկ ձայնով մը ,  
 թէ մահն ինձ պիտի հասնի գձուձ արարածի մը հասնելու պէս .  
 մտիկ ըրէ , եկուր , Աշարա , քեզի գէշութիւն չեմ ըներ , եկուր :  
 Արակ չեմ հաներ , չար ողիէն վախնալու բան մը չունիս , եօթը  
 վրէժխնդիր հրեշտակներէն վախնալու բան մը չունիս , վրէժխնդ-  
 դութիւնս մէկդի կը գնեմ , և սակայն կրնամ քեզի այնպիսի սոս-  
 կում մը տալ՝ որ ապուշ կ'ըլլաս և մարմարի պէս պաղ , վասն զի  
 ես կրնամ արեան շրջագայութիւնը կեցընել , Աշարա : Գարձիբ ու-  
 բեմն , քեզի ամենեկին չարիք մը ընելու չեմ . այլ ընդհակառակը ,  
 քեզի շատ բարիք կրնամ ընել . . . Աշարա , փոխանակ զիս երեսի  
 վրայ թողելու՝ հսկէ կենացս վրայ , և բոլոր դանձերս , բոլոր  
 գաղանձքներս քուկդ են . զիս ապրեցուր , Աշարա , զիս ապրեցուր  
 որ բոլոր ասոնք քեզի սովորեցընեմ . նայէ . . . նայէ . . .

Եւ աչքովն ու մէկ գողգոջուն մատովն ցոյց կու տար այն ընդ-  
 արձակ սենեկին մէջ ցանուցիբ միլիոնաւոր առարկաները , թղթերը :  
 Յետոյ ոյժ առնելով քիչ մը կ'սպասէր որ իւր զօրութեան ցնդիւ-  
 րը քննէ :

— Ա՛հ , չես դառնար , շարայարեց . ա՛հ , դու կը կարծես որ ես  
 այոպէս պիտի մեռնիմ , դու կը կարծես որ ամեն բան քեզի պիտի  
 ըլլայ այս եղեւով , վասն զի դու կ'սպաննես զիս : Անմիտ , եթէ մին-  
 չե անգամ կարող ըլլայիր կարգալ այն ձեռագիրները՝ զոր իմա-  
 չերս միայն կրցած են լուծել , եթէ մինչև անգամ երկու երեք  
 հարիւր տարի ալ ապրէիր , իմ զիտութիւնս ունենայիր և այս բո-  
 լոր գործիներուն գործածութիւնը զիսնայիր՝ ոչ , հարիւր անգամ ոչ ,  
 դարձեալ դու իմ ունեցածներս չպիտի ժառանգէիր . կեցիր , Ա-  
 շարա . Աշարա , եկուր . եկուր , պահ մը , գոնէ ասնս կործան-  
 մանը ներկայ գտնուելու , գոնէ զիսելու այն գեղեցիկ տեսարանը՝  
 զոր քեզի կը սրտարաստեմ : Աշարա , Աշարա , Աշարա :

Իրեն պատասխան տուող չկար . վասն զի նոյն միջոցին Պալլա-  
 մօ վարպետներուն ամբաստանութեանը կը պատասխանէր՝ սպան-  
 նուած Լօրէնցացի մարմինը ցոյց տալով անոնց . սակայն , լքեալ  
 ծերունոյն աղաղակները հետզհետէ կը սաստիկանային , և յուսա-

հասութիւնը անոր զօրութիւնը կը կրկնապատկէր , ու անոր ու-  
 նալուն հաստ ձայնը նրբանցքին մէջ տարածուելով սարսափ կ'ազ-  
 դէր հեռուները , նման վայրկին մահախիւններուն որ իւր շղթան խոր-  
 տակած է կամ վանդակին երկայթէ ձողերը բրցուցած :

— Ա՛հ , չես դառնար , կ'ուռնար Ալթօղաս , Ա՛հ , զիս կ'ատես ,  
 ա՛հ , յոյսդ տկարութեանս վրայ գրեց ես : Լաւ ուրեմն , հիմա  
 պիտի տեսնես , կրակ , կրակ , կրակ :

Այս աղաղակներն այնպիսի կատաղութեամբ մ'արտասանեց , որ  
 Պալլամօ իւր սարսափահար այցելուներէն բաժնուած , իւր ցաւոց  
 մէջէն սթափեցաւ , Լօրէնցացի մարմինը բազկացը մէջն առաւ , սան-  
 դուխէն վեր ելաւ , դիակը դրաւ այն բազմոցին վրայ՝ ուր երկու-  
 ժամ առաջ քնանալու համար հանգչեցուցեր էր , և շարժուն տախ-  
 տակին վրայ ելնելով՝ յանկարծ Ալթօղասի աչքին երեցաւ :

— Ա՛հ , վերջապէս , գոչեց ծերն ուրախութենէն թմրած , կը  
 վախնաս , տեսար որ կրնամ վրէժ հանել , եկար , և աղէկ ըրիր  
 որ եկար , վասն զի քիչ մ'ետք կրակի պիտի տայի այս սենեակը :

Պալլամօ ուսերը վեր ընելով անոր նայեցաւ , սակայն բառ մը  
 անգամ չպատասխանեց :

— Ծարաւի եմ , գոչեց Ալթօղաս , ծարաւի եմ , խմելիք տուր  
 ինձ , Աշարա :

Պալլամօ պատասխան չտուաւ . մահամբձ ծերունոյն այնպէս  
 կը նայէր որ կարծես թէ անոր հոգեարքին մանրամասն պարագա-  
 ները զիտել կ'ուզէր :

— Ար լսես , կ'ուռնար Ալթօղաս , կը լսես :

Պալլամօ միևնոյն լուծիւնը , միևնոյն անշարժութիւնը կը սրահէր :

— Ար լսես , Աշարա , աղաղակեց ծերը կոկորդը պատուելով որ-  
 պէս զի իւր բարկութեան այս վերջին սաստիկութեանը ճամբայ  
 տայ : Զուրս , տուր ջուրս :

Ալթօղասի կերպարանքն իսկոյն կ'աւրուէր :

Այլ ևս փայլ չկար աչքին մէջ , սոսկալի և գծոխային նշոյլ-  
 չեր միայն . մորթին ներքև արիւն չէր մնայեր , շարժում չունէր-  
 իւր երկայն շուտ թևերը՝ որոց մէջ առնելով Լօրէնցացի սղու մը  
 պէս տարեր էր , իւր երկայն թևերը վեր կ'ենէին՝ սակայն բազ-  
 մնտանոյն մաշկին պէս անշարժ և ծփուն էին :

— Ա՛հ, ըսաւ, ա՛հ, կը տեսնես որ շուտ չեմ մեռնիր. ա՛հ, կ'ուզես զիս ծարաւի մեռցընել. ա՛հ, ձեռագիրներուս և գանձերուս կը նայիս ցանկութեամբ, ա՛հ, կը կարծես թէ արդէն ձեռք ձգած ես զանոնք. լաւ, կեցի՛ր, կեցի՛ր :

Եւ Ալթօդաս գերազոյն ճիգ մ'ընելով՝ թիկնաթուին բարձին ներքեւէն շիշ մը հանեց ու բացաւ : Օգն անոր հաղորդուելուն պէս՝ հոտուն բոց մը ցայտեց ապակիէ ընդունարանէն, և Ալթօդաս կախարդական էակի մը նման այն բոցը իւր շուրջը ցանեց :

Իսկոյն, ծերին թիկնաթուին շուրջը դիզուած ձեռագիրները, սենեկին մէջ ցրուած դրբերը, այն բոլորուած թղթերը սր մեծ աշխատանքով զերծ մնացած էին Քէոսի բուրգերէն և Հէրգուլանօմի խուղարկութիւններէն՝ վառօրի արագութեամբ կրակ առին. բոցերէն սաւան մը տարածուեցաւ մարմարեայ յատակին վրայ, և Պալլամօի աչքին տեսարան մ'ընծայեց նման այն բոցերէն շրջանակներուն՝ որոց վրայ Տանդ կը խօսի :

Անշուշտ Ալթօդաս կ'սպասէր որ Պալլամօ բոցերուն մէջ պիտի նետուէր այն առաջին ժառանգութիւնն ազատելու համար, սակայն կը սխալէր. Պալլամօ հանդարտ կեցաւ, շարժուն տախտակամածին վրայ քաշուեցաւ, որպէս զի բոցն իրեն չհասնի :

Այն բոցը Ալթօդասը կը շրջապատէր, սակայն փոխանակ անոր սարսափ տալու՝ կարծես թէ ծերն իւր տարերքին մէջ կը գտնուէր, և բոցը, ինչպէս որ մեր հին զղեակներուն ճակատին վրայ քանդակուած սաղամանտրին կ'ընէ, փոխանակ զինքն այրելու կը զլուէր :

Պալլամօ շարունակ անոր կը նայէր. բոցը տախտակներուն կը հասնէր, ամեն կողմէն կը սրտէր ծերը. կաղնիէ ահաղին թիկնաթուին ստորտը կը սողար, որուն վրայ նստած էր, և տարօրինակ բան, թէև արդէն ծերին թեք կ'այրէր՝ սակայն կարծես թէ չէր զգար :

Ընդհակառակը, այն բոցէն որ մարբիչ կ'երևէր՝ հոգևարքին ներարգերը աստիճանաբար ձգտեցան, և գէմքին բոլոր գծերուն վրայ անձանթօթ փայլ մ'երևցաւ դիմակի մը պէս : Այս վերջին ժամուն մէջ մարմինն բամբուած՝ ծեր մարդարէն, իւր հրեղէն կառքին

վրայ, գոգցես պատրաստ էր երկինք ելնելու : Այս յետին ժամուն մէջ ամենակարող՝ հողին նիւթը կը մոռնար, և ապահով ըլլալով որ սպասելու բան մը չունի, վերին սահմանները կը նկրտէր ուր գոգցես կը մղէր հուրը :

Այն վայրկեանն սկսելով, Ալթօդասի աչքերը որ գոգցես բոցին առաջին նշոյլէն կեանք զգեցած էին, սկսան տարտամ, մոլորած կերպով կէտի մը նայիլ՝ որ ոչ երկինքն էր և ոչ երկիրս, այլ փափաք մը հորիզոնը թափանցելու : Հանդարտ և համակամ, ամեն զգածում լուծելով, ամեն ցաւ զննելով՝ իբր երկրիս մէկ յետին ձայնը, ծեր մտքը խուլ կերպով ձնաք բարով ըսաւ զօրութեան, կենաց և յուսոյ :

— Օ՛ն, օ՛ն, ըսաւ, անվիշտ կը մեռնիմ, ամեն բան ստացայ երկրիս վրայ, ամեն բան դիտցայ, ըբի՛ ինչ որ արարած մը կրնայ ընել. քիչ մ'ետք անմահութեան պիտի հասնէի :

Պալլամօ ախուր քրքիջ մ'արձակեց, որուն ահռելի ձայնը ծերին ուշադրութիւնը դրաւ եց :

Այն ատեն Ալթօդաս այն բոցերուն մէջէն որ գոգցես իւր վրայ ձգուած քող մ'էին՝ վայրենի վեհափառութեան տիպարը կրող նայուածք մ'արձակելով,

— Այո, իրաւունք ունիս, ըսաւ, բան մը կայ որ հաշուի դրած չէի. հաշուի դրած չէի Աստուած :

Եւ գոգցես այս զօրաւոր բան իւր հողին արմատախիլ ըրած ըլլար, Ալթօդաս թիկնաթուին մէջ կունակի վրայ ինկաւ. Աստուծոյ տուեր էր այս վերջին շունչը զոր յուսացեր էր Աստուծո մէ խելէ :

Պալլամօ հառաչ մը հանեց. ճիգ չըրաւ բան մ'աղատել այն թանկազին խարոյկէն՝ որուն վրայ այս նոր Զրադաշտը պառկեր էր մեռնելու համար. Լօրէնցաի քով իջաւ և կափոյցին զսպանակը թողուց որ գնաց ձեղունին փակաւ՝ իւր աչքէն ծածկելով այն ահաղին փուռը որ զլիտուն վերքը կ'ետար՝ նման հրաբուխի մը բերնին :

Բոլոր գիշերը բոցը Պալլամօի դիտուն վերքը ամպրոպի մը պէս քոռաց, և Պալլամօ բան մը չըրաւ զայն մարելու կամ անկէ խոյս տալու համար, վասն զի Լօրէնցաի անզգայ մարմնոյն քով ընաւ վտանգ



մը աչքին չէր երևեր . բայց իւր յուսացածին հակառակ՝ կրակը  
ամեն բան այրելէ , աղիւսէ կամարը մերկացնելէ ետք՝ որուն թան-  
կազին զարդերը ջնջեր էր՝ կրակը մարեցաւ , և Պալսամօ լսեց ա-  
նոր յետին մանչիւնները՝ որ Աթօղասի մանչիւններուն նման կոծե-  
բու կը փոխուէին և հաւաչանքով կը մարէին :

### ՃԼԵ

#### ԹԻՆ ԵՐՐ ԵՐԿՐԻՍ ԱՐԵՑ ԿԸ ԳԵՌՆԵՆՔ ԱՐԵՍԵՆ

Պ. տը Ռիշլիէօ դուքսը Աւերսայլի ապարանքը իւր ննջարանը  
կը գտնուէր , որ համեմտ կով պատրաստուած շօգօլաղը կը խմէր՝  
Ռաֆդէն ալ քովը՝ որ իրմէ հաշիւ կ'ուզէր :

Գուքսը խելքը միտքը իւր դէմքին տուած՝ որուն կը նայէր հե-  
ռուն դրուած հայելիի մը մէջ , շատ քիչ ուշադրութիւն կ'ընէր  
իւր Պ. քարտուղարին յաւէտ կամ նուազ ճիշդ հաշիւներուն :

Յանկարծ նախասենեկին մէջ ձունչող կոշիկներու տեսակ մը ձայն  
այցելութիւն մ'իմացուց , և դուքսն աճապարանօք շօգօլաղին մնա-  
յած մասն ալ կու տուաւ՝ անձկութեամբ դրանը նայելով :

Կար այնպիսի ժամեր յորում Պ. տը Ռիշլիէօ պաւաւ քծնու հի-  
ներու պէս՝ ամեն մարդու հետ անսնուիլ չէր ուզեր :

Սենեկապանը Պ. տը Գավէրնէյը ծանոյց :

Գուքսն անշուշտ խուսիչ պատասխանով մը ուրիշ օրուան կամ  
ուրիշ ժամուան մը պիտի թողուր իւր բարեկամին այցելութիւնը ,  
սակայն դուռը բացուելուն պէս՝ յանդուգն ձերը սենեակը խուժեց ,  
անցնելու ատեն մատին ծայրն երկնցուց մարաջախտին , և վազեց  
ինկաւ ահապին թիկնաթուռի մը մէջ՝ որ աւելի հարուածէն քան  
թէ ծանրութենէն ձանչեց :

Ռիշլիէօ իւր բարեկամին անցնիլը տեսաւ , նման այն առասպե-  
լային մարդոց՝ որոց գոյութեանը Հօֆման մեզ հաւատացուց այն ա-  
տենէ ետք . թիկնաթուռին ձոխնչը լսեց , ահապին հառաչի մը ձայնը  
մտիկ ըրաւ , և իւր հիւրին դառնալով ,

— Է՛ , սեպուհ , ինչ նոր բան կայ , ըսաւ , մահատիպ տխրու-  
թիւն մը կը տեսնեմ վրադ :

— Տխրութիւն , ըսաւ Գավէրնէյ , տխրութիւն :

— Է՛՛ , կարծեմ ուրախութեան հաւաչ մը չէր արձակածդ :  
Սեպուհը մարաջախտին նայեցաւ , այնպիսի կերպարանքով մը  
որ ըսել կ'ուզէր թէ քանի որ Ռաֆդէն հոն էր՝ չպիտի կրնար  
բացատրութիւն տալ :

Ռաֆդէ առանց ետեւը նայելու հասկըցաւ , վասն զի ինքն ևս  
իւր տիրոջը պէս երբեմն հայելիներուն մէջ կը նայէր :

Հասկընալով ելաւ խոհեմութեամբ մեկնեցաւ :

Սեպուհն անոր ետէն նայեցաւ , և դուռը գոցուելու ատեն ,

— Տխրութիւն մի ըսեր , դուքս , ըսաւ սեպուհը , տաղնապ ըսէ  
և մահացու տաղնապ :

— Բն :

— Ճշմարիտ , գոչեց Գավէրնէյ ձեռներն իրար կցելով , ես ալ  
քեզ կը խրատեմ որ զարմանք ցոյց տաս : Ամեն մ'աւելի կայ որ  
զիս տարտամ խօսքերով կը խաղցընես օրինակի համար , «Թա-  
գաւորը չտեսայ» կամ , «Թագաւորը զիս չտեսաւ» , կամ «Թագաւո-  
րը երեսը կը կախէ ինձ» խօսքերով : Տէ՛ր ողորմա , դուքս , այս-  
պէս չեն պատասխաներ հին բարեկամի մը : Ամիս մը , կը հասկը-  
նաս , յաւիտենութիւնը :

Ռիշլիէօ ուտերը վեր ըրաւ :

— Նղովից արմատ , ինչ պատասխան տամ , սեպուհ , պա-  
տասխանեց :

— Է՛՛ , ճշմարտութիւնը :

— Միթէ ճշմարտութիւնը քեզի չըսի՛ , ականջդ 'ի վար փողով  
կը գողացնեմ ճշմարտութիւնը , բայց դու հաւատալ չես ուզեր :

— Ինչ , դու , դուքս և տտենակալ մը , Գաղղիոյ մարաջախտ  
մը , խորհրդարանի ազատորդի մը , կ'ուզես ինձ հաւատացընել թէ

Թագաւորը չես տեսներ՝ դու որ ամեն առտու կանուխ կ'երթաս ւ  
Գնա՛ բանդ :

— Ըսի՛ւ ե դարձեալ կը կրկնեմ, հաւատալի չէ ըսածս՝ սակայն  
այսպէս է, երեք շաբաթէ՛ ՚ի վեր կանուխ կ'երթամ՝ ամեն օր, ես  
դուքս եւ ատենակալ, ես մարաջակտ Գաղղիոյ, ես ազատորդի խոր-  
հրդարանի :

— Եւ թագաւորը չ'խօսիր քեզ, ընդմիջեց Գալէրնէյ, կամ դու  
չեն խօսիր թագաւորին, կ'ուզես որ այս սուտը կ'լլեմ ես :

— Է՛հ, սեպուհ, սիրելիս, անվայել խօսքեր ընելու սկսար, աղ-  
նիկ բարեկամ, զիս սուտ կը հանես այսպէս որ կարծես թէ քառասուն  
տարու աւելի փոքր ենք եւ յանդուզն յարձակամներու դիւրութիւն  
ունինք :

— Մարդ կը կատղի, դուքս :

— Ա՛հ, այդ ուրիշ, կատղէ, սիրելիս, ես ալ կը կատղիմ :

— Գու ալ կը կատղիս :

— Այդ ալ խօսք է : Քեզի չեմ՝ ըսեր որ այն օրէն ՚ի վեր թա-  
ղաւորն ինձ չնայեցաւ . նորին Վեհափառութիւնը միշտ կոնակը  
դարձուց ինձ, ամեն անգամ որ կարծեցի թէ իրեն հաճեցի ըլլալու  
համար պէտք է ժպտիմ՝ թագաւորը սոսկալի կերպով երեսը խո-  
ժուեց, ալ ձանձրացայ Վերսայլ երթալով թշնամանութէն : Ըսէ  
նայինք, ի՛նչ ընեմ :

Մարաջակտին սոյն պատասխանին ատեն Գալէրնէյ խտիւր եղունգ-  
ները կը կրծէր :

— Բան մը չեմ հասկընար, ըսաւ վերջապէս :

— Ես ալ չեմ հասկընար, սեպուհ :

— Յիրաւի, մարդ կը կարծէ թէ թագաւորը կը գոտարձանայ  
քու նեղութիւնդ տեսնելով, վասն զի վերջապէս . . .

— Այո, ես ալ այնպէս կ'ըսեմ, սեպուհ : Վերջապէս . . .

— Է՛հ, դուքս, պէտք է որ այս շփոթէն ազատինք, պէտք է  
այնպիսի ճարտար ընծացք մը փորձել, որով ամեն բան կը բացատ-  
րուի :

— Սեպուհ, սեպուհ, ըսաւ Ռիշլիէօ, թագաւորներէն բացատ-  
րութիւն ստանալուն մէջ վտանդ կայ :

— Այնպէս կը կարծես :

— Այո : Քեզի բան մ'ըսեմ :

— Ըսէ :

— Ես բանէ մը կը կասկածիմ :

— Ի՛նչ բանէ, հարցուց սեպուհը վէսօրէն :

— Տեսա՞ր որ կը սրբողիս :

— Վարծեմ իրաւունք ալ ունիմ :

— Ուրեմն խօսքը չընենք :

— Ընդհակառակը, խօսէ, բայց բացատրութիւն տուր :

— Բացատրութիւն կ'ըսես կ'երթաս . յիրաւի, մնամա՞նլութիւն

մ'է այդ . զոյշ կեցիլ :

— Ի՛նչ աղւոր կը խօսիս, դուքս : կը տեսնես որ բոլոր մերյա-  
տակաղիծերը որոշած ենք, կը տեսնես որ գործերուս ընթացքին  
մէջ անբացատրելի հանդարտութիւն մը կայ, եւ դու ինձ խրատ կու  
տաս որ սպասեմ :

— Ի՛նչ հանդարտութիւն է, ըսէ նայինք :

— Նախ այս, ան :

— Նամակ մը :

— Այո, տղէս :

— Հա, զնդապետէն :

— Ի՛նչ աղւոր գնդապետ :

— Ղան, այդ կողմէն ի՛նչ կայ :

— Այո կայ որ, ամիսէ մ'ի վեր Փիլիպ ՚ի Ռէյմն կ'սպասէ այն  
անուանումին՝ զոր թագաւորն իրեն խոստացաւ, անուանումը չկա-  
տարուիր, եւ զօրադունդը երկու օրէն պիտի մեկնի :

— Պիտի մեկնի :

— Սղրասպուրի երթալու համար : Այնպէս որ եթէ մինչեւ երկու  
օր Փիլիպ հրովարտալը չստանայ . . .

— Ետքը :

— Երկու օրէն Փիլիպ հոս պիտի գտնուի :

— Այո, կը հասկընամ, մուցուեր է խեղճ տղան . նոր այսչ-  
տօնէութեան հաստատած դրասենեակներուն մէջ սովորութիւնն այս

է հիմա : Ա՛՛՛՛, թէ որ ես պաշտօնեայ ըլլայի՛ ճրովարտակը կ'երս թար :

- Հըմ, պատասխանեց Գավէրնէյ :
- Ի՛նչ ըսիր :
- Կ'ըսեմ թէ բնաւ չեմ հաւատար :
- Ի՛նչպէս :
- Եթէ դու պաշտօնեայ ըլլայիր՝ Փիւսը կրողին կու տայիր :
- Օ՛ :
- Հայրն ալ հետը :
- Օ՛, օ՛ :
- Քոյրն ալ շուտիկին :
- Քեզի հետ խօսելով մարդ կը զուարճանայ, Գավէրնէյ . կարի հանճարբան ես . սակայն վերջ տանք այս խնդրոյն :
- Իմ ալ ուզածս այդ է . բայց զաւակս չկրնար վերջ տալ այս խնդրոյն, հանդիստ վիճակ մը չունի : Գուքս, անպատճառ թագաւորը տեսնելու է :
- Է՛՛՛՛, չըսի՛ որ միշտ կը տեսնեմ :
- Իրեն խօսելու է :
- Է՛՛՛՛, սիրելիս, թագաւորին չես կրնար խօսիլ՝ երբ նա քեզի չխօսիր :
- Ստիպելու է :
- Ա՛, ես պապը չեմ :
- Ուրեմն, ըսաւ Գավէրնէյ, ես ալ կ'որոշեմ աղջկանս հետ խօսիլ . վասն զի բոլոր ասոնց մէջ մութ բան մը կայ, պարոն դուքս :
- Այս խօսքը մոզիչ ազդեցութիւն մ'ունեցաւ :
- Ռիշլիէօ Գավէրնէյը քններ էր . գիտէր որ սկզբունք, բարոյական շունեցող մէկն էր՝ իւր երիտասարդութեան բարեկամներուն՝ Պ. Լաֆառի և Պ. տը Նուէի նման, որոց զեղեցիկ համբաւը անեղծ մնացած էր : Հօրն և աղջկան միութենէն կը վախնար, վերջապէս իրեն տհաճութիւն պատճառելու անձանթ բանէ մը կը վախնար :
- Է՛, մի սրդողիր, ըսաւ, փորձ մ'ալ կ'ընեմ : Սակայն պատուաբար մը պէտք է :

- Պատրուակ ունիս :
- Ե՛ս :
- Անշուշտ :
- Ո՞րն է :
- Թագաւորը խոստում մ'ըրաւ :
- Որո՞ն :
- Տղուս : Իւ այս խոստումը . . .
- Լաւ :
- Կրնաս իրեն յիշեցընել :
- Արդարեւ հնարք մ'է այս : Նամակը քնվդ է :
- Այո :
- Տուր :
- Գավէրնէյ բաձկոնակին զրոյանէն հանեց զայն և դքսին տուա՞հ համարձակութիւն և միանգամայն զղուշութիւն պատուիրելով անոր :
  - Հուր և ջուր, ըսաւ Ռիշլիէօ, օն, յիրաւի շտոտ այլանդակ կը վարուինք : Փոյթ չէ, զինին քաշուած է, խմելու է :
  - Ջանգակը զարկաւ :
  - Թող գան զիս հագուեցընեն, և ձիերը լծեն, ըսաւ դուքսը . յետոյ Գավէրնէյի դառնալով .
  - Ջարդարանքիս ներկայ գտնուիլ կ'ուզե՞ս, սեպուհ, հարցուց անհանդիստ կերպարանքով մը :
  - Գավէրնէյ հասկըցաւ որ խիստ անհաճոյ պիտի ըլլար իւր բարեկամին՝ հոն մնալով :
  - Ոչ, սիրելիս, անկարելի է, ըսաւ . քաղքին մէջ արշաւանք մը պիտի ընեմ, ժամադրութեան տեղ մը որոշէ :
  - Գղեակը :
  - Լաւ, գղեակը :
  - Պէտք է որ դու ալ տեսնես Նորին Աւհափառութիւնը :
  - Այնպէս կը կարծես, ըսաւ Գավէրնէյ մեծ ուրախութեամբ :
  - Կը պահանջեմ, կ'ուզեմ որ անձամբ ստուգես խօսքիս ճշդութիւնը :
  - Կասկած չունիմ, սակայն քանի որ կ'ուզես . . .
  - Գու ալ կ'ուզես, հէ՛ :

— Շխտակը բռնեմ, այո :

— Լաւ ուրեմն , Հայելիներու դահլիճը , ժամը տասնըմէկին , երբ ես Նորին Վեհափառութիւնը տեսնելու պիտի երթամ :

— Այնպէս թող ըլլայ մնաս բարեալ :

— Ո՞ր չպահենք , սիրելիք իմ սեպուհ , ըսաւ Ռիշլիէօ որ մինչև յետին վայրկեանը չէր ուզեր թշնամի ընել իրեն այն մարդը՝ որուն զօրութիւնը տակաւին չէր դիտեր :

Գալէրնէյ իւր կառքը հեծաւ վերստին , առանձին ու խոհուն դնաց երկայն շրջագայութիւն մ'ընել պարտէզին մէջ , մինչդեռ Ռիշլիէօ՝ իւր պայիկներուն խնամքով՝ ուղածին պէս կ'երիտասարդանար . կարևոր զբաղմունք՝ որ երկու ժամէն պակաս չտեսցի Մահօնի ակնաւոր յաղթականին համար :

Սակայն Գալէրնէյ չէր կարծեր որ այնքան ուշ մնայ , և աչքը ճամբան ըլլալով՝ ժամը ճիշդ տասնըմէկին տեսաւ սր մարաջախտին կառքը պալատին զրանդին առջև կեցաւ , ուր պաշտօն ունեցող սպաներ զինքը բարևեցին՝ մինչդեռ բարապանները զինքը ներս տարին :

Գալէրնէյի սիրտը սաստիկ կը բաղխէր , շրջագայութիւնը թողոց , և ծանր կերպով , մտքին եռանդէն աւելի ծանր կերպով , Հայելիներուն դահլիճը դնաց , ուր բազմաթիւ վարկ չունեցող պալատականներ , աղերսագիր բերող սպաներ և փառասէր չորանոց ազատորդիներ արձաններու պէս կեցեր էին սահուն տախտակամածին վրայ՝ որ կարի յարմար պատուանդան մ'է Բաղդին սիրահար այսօ պիտի մարդոց :

Գալէրնէյ հառաչելով բաղմութեան մէջ կորսուեցաւ , սակայն հոգ տարաւ այնպիսի դիրք մը պահել՝ ուրիշ կարող ըլլայ մօտ գտնուիլ մարաջախտին՝ երբ Նորին Վեհափառութեան քովէն դուրս ելնէր :

— Ո՛հ , մոռնաց ակռաներուն մէջէն , այս դեղջուկ ազնուականներուն և ազտտա զինուորականներուն մէջ մնամ , ես որ ամիս մը առաջ թագաւորին հետ դէմ առ դէմ կ'ընթերի :

Եւ իւր խաւ խաւ յօնքէն խել մը անարդ կասկածներ կ'եղնէին , որոցմէ Ենարի պիտի ամչնար :

### ԺԼԳ

#### ԹԱԳՈՒՐՆԵՐՈՒՆ ՍԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ

Ռիշլիէօ ինչպէս որ խոստացեր էր՝ դացեր արիարար Նորին Վեհափառութեան աչքին առջև կեցեր էր այն ատեն՝ երբ Պ. ար Գօնտէ շապիկը կու տար անոր :

Թագաւորը մարաջախտը նշմարելով՝ այնպիսի խիստ շարժում մ'ըրաւ անդին դառնալու համար՝ որ քիչ մնաց շապիկը գետինը պիտի լինար , և իշխանը զարմացած ետ քաշուեցաւ :

— Ներէ , տոհմիկս , ըսաւ Լուի ԺԵ , որպէս զի լաւ հաստատէ թէ այն խիստ շարժումը անոր համար չէր :

Ուստի , Ռիշլիէօ հասկըցաւ թէ թագաւորին զայրոյթն իրեն համար էր :

Բայց մարաջախտը որովհետեւ եկած ատեն որոշեր էր որ եթէ հարկ ըլլայ՝ այն զայրոյթը զրգուէ՝ որպէս զի լուրջ բացատրութիւն մը ստանայ , ֆօնդընուաի մէջ ըրածին պէս ճակատ փոխեց և գնաց հոն կեցաւ՝ ուստի թագաւորը պիտի անցնէր իւր սենեակը երթալու համար :

Թագաւորն այլ ևս մարաջախտը չտեսնելով՝ սկսաւ համարձակ և շնորհալի կերպով խօսիլ . հազուեցաւ , Մարլի որսի երթալու դիտաւորութիւն յայտնեց , և այս մասին երկար խորհրդակցեցաւ իւր առհմիկին հետ , վասն զի Պ. ար Գօնտէ նշանաւոր որսորդի համբաւ ունեցան միշտ :

Սակայն իւր սենեակն երթալու ատեն , երբ արդէն ամեն մարդ մեկներ էր , Ռիշլիէօն տեսաւ որ հոն կեցեր էր այնպիսի ամենափրուն կերպով իւր յարգանքը մատուցանելու՝ որուն նման Լօղէօնէն ետք տեսնուած չէր , Լօղէօնէն՝ որ այնքան անթերի կերպով կը բարևէր :

- Լուի Թե յանկարծ կենալով՝ զրեթէ տատանեցաւ :
- Գարձեալ հոս ես , Պ. սը Ռիշլիէօ , ըսաւ :
- Նորին Աւհափառութեան հրամանացը կ'սպասեմ , այո , վեհափառ տէր :
- Սակայն Աւհրսայէն չես մեկնիր :
- Քառասուն տարիէ 'ի վեր է , վեհափառ տէր , որ Աւհրսայէն ուրիշ բանի համար չեմ հեռանար՝ այլ Նորին Աւհափառութեան ծառայութեան համար :
- Թագաւորը մարաջախտին դէմը կեցաւ :
- Ըսէ նայինք , ըսաւ , ինէ բան մը չես ուզեր , այնպէս չէ :
- Ե՛ս , վեհափառ տէր , ըսաւ Ռիշլիէօ ժպտելով , է՛հ , ինչ պիտի ուզեմ :
- Բայց , դուքս , ետեւէս ընկեր ես , ես չեմ տեսներ :
- Այո , վեհափառ տէր , սիրովս և յարգանօքս , շնորհակալ եմ , վեհափառ տէր :
- Ո՛հ , խօսքս չհասկընալ ցոյց կու տաս՝ սակայն շատ աղէկ կը հասկընաս ըսածս : Լաւ ուրեմն , զիտցիր , պարոն մարաջախտ թէ ես քեզի ըսելիք մը չունիմ :
- Ոչինչ , վեհափառ տէր :
- Ամենեւին ոչինչ :
- Ռիշլիէօ խորին անտարբերութեամբ մը զինուեցաւ :
- Վեհափառ տէր , միշտ ինքնիրենս , հողովս և խղճովս , բարեբաղդութիւն ունեցած եմ ըսելու , թէ Նորին Աւհափառութեան համար ունեցած անխնայ ջանքս անշահախնդրութեամբ կատարած եմ , վեհափառ տէր , մեծ կետ մը այն քառասուն տարիէ 'ի վեր որուն վրայ Նորին Աւհափառութեան կրթօսելի , ուստի նախանձոտները չպիտի կարենան ըսել թէ թաղաւորն ինձ բան մը շնորհած է , բարեբաղդաւար , այս մասին համբաւս ելլած է :
- Է՛հ , դուքս , եթէ բանի մը պէտք ունիս՝ ուզէ , բայց շուտ ուզէ :
- Վեհափառ տէր , բնաւ բանի մը պէտք չունիմ , առ այժմ բաւական պիտի համարիմ աղերսել Նորին Աւհափառութեան . . .
- Ի՞նչ բան :

- Որ հաճի իւր ներկայութեանն ընդունիլ՝ իրեն շնորհակալութիւնը մատուցանելու համար . . .
- Ո՛վ :
- Վեհափառ տէր , մէկը որ կարի շնորհապարտ է Նորին Աւհափառութեան :
- Բայց ո՞վ է :
- Մէկը , վեհափառ տէր , որուն Ձեր Աւհափառութիւնը մեծ պատիւ ըրաւ . . . Ը՛հ , այն կայ որ , երբ մէկը պատիւ կ'ուներնայ Ձեր Աւհափառութեան սեղանը նստելու , երբ մէկը այն այնքան անուշ խօսակցութեան , այն այնքան սիրուն զուարթութեան համն առնէ՝ որով Ձեր Աւհափառութիւնը երկնային կոչնական մը կը դառնայ , այն ատեն , վեհափառ տէր , մարդուն մտքէն բնաւ չընկեր , և այնպիսի քաղցր սովորութեան մը դիւրաւ կը վարժուի :
- Հրապուրիչ լեզու մ'ունիս , պարոն սը Ռիշլիէօ :
- Ո՛հ , վեհափառ տէր . . .
- Աերջապէս , որո՞ւ վրայ է խօսքդ :
- Դավէրնէյ բարեկամիս վրայ :
- Բարեկամիդ , գոչեց :
- Ներեցէք , վեհափառ տէր :
- Դավէրնէյ , կրկնեց թաղաւորը տեսակ մը սոսկումով որ կարի զարմացուց դուքսը :
- Ի՛նչ ընեմ , վեհափառ տէր , վաղեմի ընկեր մը . . .
- Պահ մը կեցաւ :
- Մարդ մը որ ինձի հետ Ալիլարի հրամանատարութեան ներքե ծառայած է :
- Դարձեալ կեցաւ :
- Գիտե՞ք , վեհափառ տէր , աշխարհիս մէջ բարեկամ կը կոչեն անոնք որ կը ճանչնանք , անոնք որ թշնամի չեն , քաղաքավար բաւ մ'է որուն ներքե շատ անգամ մեծ բան մը չկայ :
- Ատանգարեր բաւ մ'է այդ , դուքս , ըսաւ թաղաւորը խօսիս , այնպիսի բաւ մ'է զոր զգուշութեամբ դորձած ելու է :
- Ձեր Աւհափառութեան խորհուրդները իմաստութեան սկզբբունքներ են : Արեմն Պ. սը Դավէրնէյ . . .

- Պ. տը Գավէրնէյ անբարոյական մարդ մ'է :
- Լաւ ուրեմն , պնտուականութիւնս վկայ ես ալ կը կատարած էի :
- Փափկութիւն չունեցող մարդ մը , պարոն մարաջախտ :
- Իւր փափկութեանը դալով , վեհափառ տէր , անոր վրայ չպիտի խօսիմ Նորին Վեհափառութեան առջև , միայն դիտցածս կ'երաշխաւորեմ :

— Ինչ , չեն երաշխաւորեր բարեկամիդ , վաղեմի ծառայի մը , Վիլարի հրամանատարութեան ներքև քեզի հետ ծառայող մէկու մը , ինծի ներկայացուցած մէկ անձիդ փափկութեանը : Սակայն դիտես զինքը :

— Իրաւ , դիտեմ զինքը , վեհափառ տէր , սակայն փափկութիւնը չեմ դիտեր : Սիւլին Անրի Գ. ձեր հատին կ'ըսէր թէ իւր ջերմը կանաչ զգեստով դուրս ելնելը տեսեր էր , ես խոնարհաբար կը խոստովանիմ , վեհափառ տէր , թէ երբէք չդիտցայ թէ ինչ հանգերձ կը հագնի Գավէրնէյի փափկութիւնը :

- Վերջապէս , մարաջախտ , ես կ'ըսեմ քեզի , անպիտան մարդ մ'է , և անպիտան խաղ մը խաղաց :
- Ո՛հ , եթէ Ձեր Վեհափառութիւնը կ'ըսէ . . .
- Այո , պարոն , ես կ'ըսեմ :

— Լաւ ուրեմն , պատասխանեց Ռիշլիէօ , այդպէս խօսելով Ձեր Վեհափառութիւնն ինձ գիւրութիւն կ'ընծայէ : Ոչ , կը խոստովանիմ , Գավէրնէյ փափկութիւնը չէ , և այս շատ աղէկ նշմարեցի , սակայն , վեհափառ տէր , քանի որ Ձեր Վեհափառութիւնը չհաճեցաւ ինձ դիտցընել իւր կարծիքը . . .

- Կարծիքս ահաւասիկ , պարոն , կ'արհամարհեմ զինքը :
- Ո՛հ վիճիւր տրուեցաւ , վեհափառ տէր , սակայն բարեբաղդութիւն մ'է այն խեղճին համար , շորայտրեց Ռիշլիէօ , որ զորաւոր բարեխօսութիւն մը զինքը կը պաշտպանէ Ձեր Վեհափառութեան առջև :
- Ինչ ըսել կ'ուզես :
- Եթէ հայրը թաղաւորին անհաճոյ ըլլալու դժբաղդութիւնն տեսցաւ . . .
- Ըստ անհաճոյ :

- Ոչ չեմ ըսեր , վեհափառ տէր :
- Աւրեմն ինչ կ'ըսես :
- Կ'ըսեմ թէ կատրոյտ աչերով և խարտեաշ մագերսով հրեշտակ մը . . .

— Ըսածդ չեմ հասկընար , դուքս :

— Խօսքս կը հասկըցուի :

— Շիտակը կը փափաքիմ հասկընալ :

— Ինծի պէս սրբապիղծ մը , վեհափառ տէր , մտքովն անգամ վեր վերցընելու կը դժուայ այն քողը՝ որուն ներքև այնքան սիրային և անուշ գաղտնիքներ կը ծածկուին , սակայն , կը կրկնեմ ըսածս , որքան շորհակալ ըլլալու է Գավէրնէյ այն անձին՝ որ 'ի նպատակուն՝ թաղաւորին զայրոյթը կ'ամուրէ : Ո՛հ , այո , օրիորդ Անտրէ հրեշտակ մ'ըլլալու է :

— Օրիորդ Անտրէ ճիւաղ մ'է Ֆիզիկականի մասին՝ ինչպէս որ հայրն այնպէս է բարոյականի մասին , դուչեց լմացաւորը :

— Բն , ըրաւ Ռիշլիէօ արմանալով զարմանալով , ամենքս ալ կը խարուէինք , իսկ այն գեղեցիկ երևոյթը . . .

— Երբէք այն աղջկան վրայ ինձ մի խօսիր , դուքս , մտքես անցուցած ատենս դող կու դայ վրաս :

Ռիշլիէօ ձեռները իրար կցեց կեղծաւորաբար :

— Ո՛հ , տէր Աստուած , ըսաւ , գրեթէ . . . : Եթէ Ձեր Վեհափառութիւնը՝ տէրութեան առաջին գնահատիչը , եթէ Ձեր Վեհափառութիւնը՝ անձնաւորեալ անսխալութիւն , չհաւատներ , ինչպէս պիտի հաւատայի . . . : Ինչ , վեհափառ , տէր , այն աստիճան շինձ ո՞ :

— Ատիկէ աւելի , պարոն , վրան հիւանդութիւն մը . . . սոսկալի . . . դաւաճանութիւն մը , բայց , Աստուծոյ համար , ալ խօսք մը մի ընէր անոր վրայ , կը մեռնիմ :

— Տէր Աստուած , դուչեց Ռիշլիէօ , ալ բնաւ բերանս չեմ բանար , վեհափառ տէր : Ձեր Վեհափառութիւնը մեռնի՛ , ո՛հ , ինչ թախիժ : Ինչ ընտանիք , պէտք է որ թշուառ ըլլայ այն տղան :

- Բայց որո՞ւ վրայ է խօսքդ դարձեալ :
- Ո՛հ , այս անգամ , Ձեր Վեհափառութեան հաւատարիմ , ան-

կեղծ , անձնուէր ծառայի մը վրայ է խօսքս : Ո՛հ , վեհափառ տէր , տիպար մ՛է նա , և լաւ դատեր էք զինքը : Այս անգամ , կ'երաշխաւոր եմ , ձեր շնորհները սխալ տեղ չեն երթար :

— Բայց որո՞ւ վրայ է խնդիրը , դուքս : Աւարտէ , պիտի երթամ :

— Միոյն որդիին և միւսին եղբօրը վրայ կ'ուզեմ խօսիլ , վեհափառ տէր , պատասխանեց Ռիշլիէօ թողլօրէն , կ'ուզեմ խօսիլ Փիլիպ տը Գովէրնէյի վրայ , այն արի երիտասարդին վրայ՝ որուն զօրագունդ մը պարզեց Ձեր Վեհափառութիւնը :

— Ե՛ս , ես զօրագունդ պարզեցի՞ մէկու մը :

— Այո , վեհափառ տէր , զօրագունդ մը զոր շարունակ կ'սպասէ Փիլիպ տը Գովէրնէյ , ճշմարիտ է , սակայն վերջապէս պարզեցիք :

— Ե՛ս :

— Ե՛հ , այնպէս կը կարծեմ , վեհափառ տէր :

— Դու խե՛նդ ես :

— Բա՛ն :

— Ես բան մը չպարզեցի , մարաջատ :

— Իրա՞ն :

— Բայց դու ինչո՞ւ կը խառնուիս այս գործերուն մէջ :

— Բայց վեհափառ տէր . . .

— Քեզի վերաբերեալ բաներ են ասոնք :

— Բնա՞ւ :

— Ուրեմն ո՞ւր ես ըրեր որ այն փուշերու խուրձով զիս կամաց կամաց պրես :

— Վեհափառ տէր , ինձ այնպէս կը թուէր (քաջ կը տեսնեմ որ հիմա կը սխալիմ) ինձ կը թուէր որ Ձեր Վեհափառութիւնը խոստացած էր . . .

— Բայց այդ իմ գործս չէ , դուքս : Պատերազմի պաշտօնեայ ունիմ : Ես զօրագունդ չեմ պարզեւր . . . : Զօրագունդ մը . ինչ աղւոր առասպել մը շիներ են : Ա՛հ , դու այդ անզգամներուն փաստաբանն ես : Քեզի չէի ըսեր որ անոնց խօսքը մի ըներ ինձ , արիւնս տակնուվրայ ըրիր ,

— Ո՛հ , վեհափառ տէր :

— Այո , տակնուվրայ : Գետինն անցնի փաստաբանը , մինչև իրիկուն չպիտի կրնամ մարսել կերածս :

Ասոր վրայ թաղաւորը կ'ունակը դարձուց դքսին և սաստիկ զայրացած իւր սենեակը մտաւ՝ ամենաթշուառ վիճակի մէջ թողլով Ռիշլիէօն :

— Ա՛հ , այս անգամ , մումուաց ծեր մարաջատար , զիտեմ ընելիքս :

Եւ փոշիները վրայէն վար ընելով , Ռիշլիէօ գնաց այն դահլիճին կողմը՝ որուն անկիւնին մէջ իւր բարեկամը մաշիչ անհամբերութեամբ մը կ'սպասէր :

Մարաջատար երևելուն պէս , սեպուհը որսին վրայ յարձակող մամուկին պէս վազեց թարմ լուրեր առնելու :

Արթուն աչքով , բերանը սրտին մէջ , թեկը շամիրակի ձևով յառաջ եկաւ :

— Լաւ ուրեմն , ինչ կայ նոր :

— Նոր այս կայ որ , պարոն , պատասխանեց Ռիշլիէօ արհամարհօտ բերան մը պարզելով և շապիկին տանդէլային անարդական կերպով մը զարնելով , քեզ կ'աղաչեմ , ինձի բան մի հարցնե՛ր : Գովէրնէյ ապուշ աչերով դքսին նայեցաւ :

— Այո , սաստիկ անհաճոյ եղեր ես թաղաւորին , շարայարեց Ռիշլիէօ , և թաղաւորին անհաճոյ եղողն ինձ մնաս կու տայ :

Գովէրնէյ , այնպէս որ զոպցես ոտները մարմարին մէջ արմատացեր էին՝ իւր ապշութեան մէջ դամուած մնայ :

Սակայն Ռիշլիէօ իւր ճամբան շարունակեց :

Ապա Հայելիներուն դահլիճին դուռն հասած ատեն՝ ուր իւր պայիին իրեն կ'սպասէր :

— Ի Լիւսիէն , գու՛նց :

Եւ աներևոյթ եղաւ :

### ՃԼԷ

## ԱՆՏՐԷԻ ՄԱՐԿՈՒՐԸ

Գալէրնէյ երբ խեղքը գլուխը եկաւ և լաւ հասկըցաւ այն բանը՝ զոր ինքը իւր ձախողութիւնը կ'անուանէր, մտածեց որ մամանակը եկած է լուրջ բացատրութիւն մ'ուղեւոր այն անձէն՝ որ այնքան տաղնապնդու առաջին պատճառն էր :

Հետեւաբար սաստիկ բարկացած՝ Անտրէի բնակարանին կողմը գնաց :

Նորատի աղջիկը իւր զարդարանքն աւարտելու վրայ էր, և բուրջի թեւերը վեր առեր էր ականջին ետև կապելու համար մաղերու երկու ըմբոստ հիւսքեր :

Անտրէ նախասենեկին մէջ հօրն ոտքի ձայնն առաւ՝ այն պահուն երբ գիրքը թեւին ներքև առած՝ սենեկին շեմէն պիտի անցներ :

— Ա՛հ, բարի լոյս, Անտրէ, ըսաւ Պ. տը Գալէրնէյ. դուրս կ'ելնես :

— Այո, հայր իմ :

— Առանձին :

— Ինչպէս որ կը տեսնէք :

— Տակաւին մինակ ես ուրեմն :

— Նիգուլի աներեւոյթ ըլլալէն ՚ի վեր սենեկապան աղջիկ չառի :

— Բայց չես կրնար պէտք եղածին պէս հագուել, Անտրէ, այսպէս հագուած կ'ին մը բնաւ յաջողութիւն չգտնէր արքունիքը. ես քեզի ուրիշ կերպ պատուիրեր էի, Անտրէ :

— Ար ներէք, հայր իմ, տիկին արքայորդին ինձ կ'սպասէ :

— Ար հաւաստեմ, Անտրէ, պատասխանեց Գալէրնէյ հետոյ՝ չեա՛տե տաքնալով, կը հաւաստեմ, օրիորդ, թէ այս պարզութեամբ վերջապէս վերադ ինդացընե՛լ պիտի տաս :

— Հայր իմ. . .

— Ծաղրուիլը մարդը կը մեռցնէ, մանաւանդ արքունեաց մէջ :

— Պարոն, մտադիր պիտի ըլլամ՝ ձեր ըսածին : Բայց այս անգամ տիկին արքայորդին գոհ պիտի ըլլայ նուազ շքեղօրէն հագուելէս՝ տեսնելով որ կը փութամ իրեն երթալ :

— Գնա և ազատ ըլլալուդ պէս գարձիր, կ'աղաչեմ, վասն զի չուրջ գործի մը վրայ խօսելէք ունիմ հետդ :

— Այո, հայր իմ, ըսաւ Անտրէ :

Եւ ջանաց ձամբան շարունակել :

Սեպուհը բոլորովին աչք կտրած անոր կը նայէր :

— Կեցիր, կեցիր, գոչեց, այդպէս դուրս չես կրնար ելնել. երեսդ կարմիր քսել մոռցար, օրիորդ. գեղնութիւն կայ երեսդ :

— Ի՛մ երեսս, հայր իմ, ըսաւ Անտրէ կենալով :

— Ուրեմն հայելին նայած ատենդ ի՛նչ կը խորհիս : Այտերդ մոմի պէս ձերմակ, աչերուդ շուրջը մատ մը շրջանակ կազմուեր է : Այդ վիճակին մէջ մարդ դուրս չե՛ներ, օրիորդ, ապա թէ ոչ գէմը ելնողները կը վախցընէ :

— Ժամանակ չունիմ զարդարանքիս վրայ փոփոխութիւն ընելու, հայր իմ :

— Գորշելի է, յիրտի գարշելի բան է, գոչեց Գալէրնէյ ուսերը վեր ընելով. աշխարհիս մէջ այսպիսի աղջիկ մը մէկ հատ կայ, այն ալ իմ աղջիկս է : Անադորոյն բազդ : Անտրէ, Անտրէ :

Սակայն Անտրէ սանդուղին վարն հասեր էր արդէն :

Ետևը դարձաւ :

— Գոնէ, գոչեց Գալէրնէյ, ըսէ թէ հիւանդ ես. հոգ հրաւիրէ վրադ, նղովից արմատ, թէ որ գեղեցիկ երեխ չես ուզեր :

— Ո՛հ, այդ դիւրին պիտի ըլլայ ինձ, հայր իմ, և առանց սուտ ըսած ըլլալու պիտի ըսեմ թէ հիւանդ եմ, վասն զի իրօք տկարութիւն կ'զգամ այս միջոցին :

— Լա՛ւ, մումուսց սեպուհը, այս պակաս էր. . . հիւանդ :

Յետոյ ակուաներուն մէջէն :

— Արողին երթան առաքինութիւն ծախող կ'ինները յարեց : Եւ աղջկանը սենեակը մտաւ՝ տը մանրակրկիտ կերպով խուզարար :



կից այն ամեն բաները որոնք կրնային անոր վարկածներուն օգնել և անոր կարծիքը կազմել :

Նոյն միջոցին Անտրէ դրանդէն կ'անցնէր և ծառուղիներուն երկայնութեանը կ'երթար : Մերթ ընդ մերթ գլուխը վեր կ'առնէր բռուն կերպով օրը շնչելու համար , վասն զի նորածիլ ծաղկանց բուրումը խտիւ կը բարձրանար անոր ուղեղին և անոր իւրաքանչիւր նեարդը կը ցնցէր :

Այսպէս տկարացած , արևուն ներքև գողգոջուն և շուրջը նեցուկ մը փնտռելով , նորասի աղջիկը անձանօթ անհանգստութեան մը դէմ մաքսուելով հասաւ մինչև Գրիանօնի նախասենեակները՝ ուր տիկին տը Նօայլ շեմին վրայ կեցած՝ մէկ խօսքով հասկըցուց Անտրէի թէ ժամանակն հասեր էր և իրեն կ'նպասէին :

Արդարև \*\*\* արբան՝ իշխանուհւոյն ընթերցիչը՝ Նորին արքայալի Բարձրութեան հետ կը նախաձայէր , որ յաճախ այսպիսի շնորհներ կ'ընէր իրեն մտերիմ անձանց :

Արբան կը գովէր այն կարագոտ հացերուն ազնուութիւնը՝ զոր Ալմանեացի սպասուհիք մեծ ճարտարութեամբ կը շարեն սրճակաթով գաւաթի մը շուրջը :

Արբան կարգալու տեղ կը խօսէր , և իշխանուհւոյն կը պատմէր Ալիկնայի , բոլոր այն լուրերը զոր լրացրապետներէն և դեսպանապետներէն հաւաքած էր . վասն զի այն ժամանակ , ճշմարիտ , այնքան լուքալքաղխտութիւն կար փողոցներուն մէջ՝ ինչպէս դիւանատուններուն ամենազաղտնի այրերուն մէջ , և կը պատահէր երբեմն որ պաշտօնատունը այնպիսի լուրեր կ'առնէր՝ զոր Բալէ-Ռոյալի պարոնները կամ Ալէրսայլի տուններուն զոզանները զուշակած էին եթէ ոչ ձուլած :

Արբան կը խօսէր մանաւանդ ցորենի սղութեան պտտաւառ տեղի ունեցող գաղանի խոփութեան մը վերջին զրոյցներուն վրայ , խոփութիւն մը զոր յանկարծ կիցացեր էր Պար Յարդին ամենէն մեծ հաւաքողներէն հինգը Պասթիլի դէմով :

Անտրէ ներս մտաւ , իշխանուհին ալ օր կար որ իր քմահաճոյքն ու անդարն ունէր , արբայի խօսքերը կարևորութիւն ունեցեր էին իրեն համար , ուստի խօսքէն ետքն եկող Անտրէի գերբը դնելը տաղակացուց :

Հետևարտը իւր ընթերցչու հոյն բառ որ ուրիշ անգամ ժամանակէն ետք չմնայ , յարելով թէ այն ինչ լաւ բանը ճիշդ իւր ժամանակին լաւ կ'ըլլայ մանաւանդ :

Անտրէ լսած կշտամբանքէն ամչնալով և մանաւանդ անիրաւութիւնն զգալով պատասխան չտուաւ , թէ և կրնար ըսել թէ հայրն իրեն արգելք եղեր էր և ինքը ստիպուեր էր ծանր քալել զոչացած տկարութեան սլատաւառ :

Ոչ , յուզուած՝ ճնշուած՝ գլուխը ծռեց , և այնպէս որ զոչցես պիտի մեռնէր՝ աչքը գոցեց և հաւասարակշռութիւնը կորսնցուց , եթէ տիկին տը Նօայլ չըլլար , պիտի ինար :

— Ինքզինքդ շնչ կրնար բռնել , օրիորդ , մեմուսց տիկին Արբուհի Պատշաճութիւնը :

Անտրէ պատասխան չտուաւ :

— Բայց , դքսուհի , կ'աւրուի , գոչեց իշխանուհին ոտք ելնելով որ Անտրէին վազէ :

— Ոչ , ոչ , պատասխանեց Անտրէ աշխուժիւ , արտասուաթորաչերով , ոչ , արքայազուն իշխանուհի , ալէկ եմ , կամ մանաւանդ հիմա աղէկ եմ :

— Բայց իւր թաշկինակին պէս ճեփ ճերմակ կտրեցաւ , դքսուհի , նայէ : Իրաւ , յանցանքն իմն է , սրբողեցայ իրեն : Խեղճ աղջիկ , նստէ կ'րոտմ :

— Տիկին . . .

— Է՛ , քանի որ կը հրամայեմ . . . : Արբայ , ծալածոյ աթոռդ իրեն տուր :

Անտրէ նստաւ , տակաւ առ տակաւ , այն բարութեան քաղցր ներդրածութեան ներքև միտքը պարզուեցաւ , գոյնն սկսաւ այտերուն գառնալ :

— Ուրեմն հիմա կրնամ կարգալ , օրիորդ , հարցուց իշխանուհին

— Ո՛հ , այո , անշուշտ , կը յուսամ :

Եւ Անտրէ զրբին այն տեղը բացաւ զոր առջի օրը թողեր էր , և ջանաց հաստատուն ձայնով մը սկսիլ՝ սրպէս զի կարդացածը կարելի եղածին չափ հասկանալի և հաճելի ըլլայ :

Բայց երկու երեք երեսի վրայէն անցաւ չանցաւ , սկսան մանր սև

հիւլէններ աչքին առ ջն: Թուչիլ, յորձանքի սէս ոլորուիլ, թրթուալ և չկարգացուիլ:

Անտրէ վերասին գունատեցաւ. սպող քրտինք մը կուրծքէն ճահասն ելաւ, և այն սև շրջանակը որուն համար Գալէրնէյ խստիւ կը կշտամբէր իւր աղջիկը, աչերուն շուրջն այնքան մեծցաւ՝ որ իշխանուհին՝ Անտրէ ի վարանման վրայ գլուխը վեր առնելով, գոչեց.

— Գործեալ. . . Նայէ, գ. քսուհի, յիւրաւի այս աղջիկը հիւանդ է, ինքզինքը կը կորսնցընէ:

Եւ այս անդամ՝ իշխանուհին ինքը վազեց աղով շիշի մը՝ զոր շնչել տուաւ իւր ընթերցչուհւոյն: Այսպէս ողի առնելով Անտրէ ճիգ ըրաւ գիրքը դեանէն վերցընելու, բայց ՚ի զուր, ձեռներուն վրայ ջղային գող մը մնացեր էր՝ զոր և ոչ բանով մը կարելի չեղաւ անցընել քանի մը վայրկեան:

— Ստուգիւ, գ. քսուհի, ըսաւ իշխանուհին, Անտրէ հիւանդ է, և ես չեմ ուզեր որ հոս մնալով նեղուի:

— Ուրեմն պէտք է որ օրիորդը շուտով սենեակը դառնայ, ըսաւ գ. քսուհին:

— Ինչու համար, տիկին, հարցուց իշխանուհին:

— Վասն զի, պատասխանեց պատուոյ տիկինը յարգանօք խոնարհելով, վասն զի այսպէս կ'սկսի ծաղիկը:

— Ծաղիկը. . .

— Այո, մարմրուքով, թալուկով, գողով:

Աբրան կարծեց թէ տիկին տը Նօայլի նշանակած վտանգին իրօք ենթակայ կը գտնուի, վասն զի աթուր վերցուց և կնոջ մը անհանդուածութեամբն ստացած ազատութեամբ շորհիւ, ոտքին մատներուն վրայ կոխելով և այնպէս ճարտարութեամբ սողոսկելով գնաց՝ որ ոչ ոք դիտեց անոր աներեղթ ըլլալը:

Երբ Անտրէ ինքզինքը գրեթէ իշխանուհւոյն գիրկը տեսաւ, այնպիսի մեծ իշխանուհի մը այն աստիճան անհանդիստ ըրած ըլլալուն ամօթն իրեն ոյժ կամ լաւ ևս արիւթիւն տալով, պատուհանին մտեցաւ օդ առնելու համար:

— Պէտք չէ որ այդ կերպով օդ առնես, սիրելի օրիորդ, ըսաւ իշխանուհին. տեղդ դարձիր, հետդ մարդ կը գնեմ:

— Ո՛հ, կը հաւատամ զձեզ, տիկին, ըսաւ Անտրէ, թէ ահա հաւաստիկ ինքզինքս դտայ. առանձին կրնամ երթալ տեղս՝ քանի որ Ձեր Բարձրութիւնը կը հաճի երթալու հրաման տալ ինձ:

— Այո, այո, և անհոգ եղիր, կրկնեց իշխանուհին. ալ ասկէ ետք քեզի չպիտի սրբողինք, քանի որ այդքան դիւրադրած ես, չարաճճի աղջիկ:

Անտրէ սիրտը շարժած այն բարութենէն՝ որ քրոջ մը մտերմութեան կը նմանէր, իւր պաշտպանուհւոյն ձեռքն համբուրեց և սենեկէն դուրս ելաւ, մինչդեռ իշխանուհին աչքով անոր կը հետեւէր մտահոգութեամբ:

Երբ սանդուղին վարն հասաւ՝ իշխանուհին պատահանէն գոչեց անոր.

— Անմիջապէս ներս մի մտնէր, օրիորդ. ծաղկոցներուն մէջ շրջէ քիչ մը. այս արևը քեզի օդուտ կ'ընէ:

— Ո՛հ, աէր Աստուած, տիկին, ո՞րքան շնորհ է այդ, միմեջեց Անտրէ:

— Նաև ինձ ուղարկէ արբան որ Հօլանտայի կակաչներու ամուի մը մէջ է, ուր բուսարանութիւն կ'ուսնի:

Անտրէ արբային քովն երթալու համար ստիպուեցաւ ճամբէն շեղիլ. ծաղկոցէն անցաւ:

Գլուխը ծուած կ'երթար, քիչ մը ծանր տակաւին այն տարօրինակ թմբբութիւններէն՝ որոցմէ առաօտէն ՚ի վեր կը նեղուէր. բնաւ ուշադրութիւն չէր ընէր թուչուններուն որ ցանկերուն և ծաղկած մնացաններուն վրայ իրարու ետեւէ ընկած կը վազվզէին, ոչ ալ մեղուններուն՝ որոնք ուրցին և շփոթուկին վրայ կը բզզային:

Ձէր նշմարեր անգամ իրմէ քսան քայլ հեռի երկու մարդիկ որ իրարու հետ կը խօսակցէին, և որոց միոյն նայուածքը յուզեալ և տաղնապալից Անտրէի կը հետեւէր:

Թիւլէրն ու Պ. տը Թիւսիէօն էին անոնք:

Թիւլէր բահին յեցած՝ մտիկ կ'ընէր դիսնական դաստուոն՝ որ կը բացատրէր իրեն թէ ինչպէս ջրելու է փափուկ տունկերը, այնպէս որ ջուրը միայն հողէն անցնի առանց հոն մնալու:

Թիւլէր կարծես թէ անյադութեամբ մտիկ կ'ընէր դատը, և Պ.

տը Թիւսիէօի կարի բնական կը թուէր զիտութեան համար ունեցած անոր եռանդը : վասն զի դասն այնպիսի դաս մ'էր՝ որ եթէ հասարակաց դասարանի մը մէջ ըլլար, աշակերտները նստարաններուն վրայէն սիտի ծափահարէին . ուստի խեղճ պարտիզպանի տղու մը համար անդին բողբ մը չէր այնպիսի մեծ վարպետի մը դասը նոյն իսկ բնութեան առջև :

— Կը տեսնես, տղաս, հոս չորս տեսակ հող կայ, կ'ըսէր Պ. ար Թիւսիէօ, և եթէ ուզեմ՝ այս չորս գլխաւոր հողերուն մէջ ուրիշ տասը տեսակ ալ խառնուած կրնամ գտնել, բայց պարտիզպանի աշակերտի մը քիչ մը կորովամտութիւն պէտք է այս դանազանութիւնն ընելու համար : Միշտ պէտք է ծաղկազարմանը հողին համընայի՝ ինչպէս որ պարտիզպանը պէտք է որ պտուղներուն համը նայի : Ըսածս կը հասկընաս, այնպէս չէ՞, Թիւլպէր :

— Այո, պարոն, պատասխանեց Թիւլպէր աչերն՝ յառած, բերանը կիսաբաց, վասն զի Անտրէն տեսեր էր, և կեցած տեղէն շարունակ կրնար նայիլ անոր՝ առանց կասկած տալու դասատուին թէ իւր դասը երկիւղածութեամբ չէր լսուեր և հասկըցուեր :

— Հողին համը նայելու համար, ըսաւ Պ. ար Թիւսիէօ՝ շարունակ Թիւլպէրի գեղքէն խաբուելով, ափ մը հող դէր կողովի մը մէջ, վրայէն կամաց մը քանի մը կաթիլ ջուր լեցուր, և համը նայէ այն ջուրին երբ կողովին ներքէն այն հողէն մզուելով դուրս կու գայ : Աղի, կծու, կամ անսխորժ, կամ բնական իւղերէ հոտ ստացած համ՝ ունեցողները սքանչելի կերպով կը յարմարին այն անկոց հիւթերուն՝ զոր հոն բուսցընել կ'ուզես, վասն զի բնութեան մէջ, կ'ըսէ Պ. Ռուսօ՝ նախնի խնամակալը, ամեն բան նմանութիւն է, նոյնացում է, համացեղութեան ձգտում է :

— Ո՛հ, տէր Աստուած, գոչեց Թիւլպէր թեւերը դէպ առաջ երկնցնելով :

— Ի՞նչ կայ :

— Կը մարի նէ, պարոն, կը մարի :

— Ո՛վ : Խեղճ ես ինչ ես :

— Նէ, նէ :

— Նէ՞ :

— Այո, կրկնեց Թիւլպէր աշխուժիւ, փիկին մը :

Եւ իւր սուկումը ու գունատութիւնը, ինչպէս նաև նէ բառը զինքը պիտի մատնէ ին՝ եթէ Պ. ար Թիւսիէօ աչքն անոր վրայէն չգարձընէր՝ ձեռքին ուղղութեանն հետեւելու համար :

Այն սղղութեանն հետեւելով, արդարև Պ. ար Թիւսիէօ Անտրէն տեսաւ որ մացառի մ'ետև քաշուեցաւ, և հոն հասած ասե՛ն նստարանի մը վրայ ինկաւ, անշարժ մնաց՝ զգացողութիւնը բոլորովին կորսնցընելու վիճակի մէջ :

Այն ժամանակն էր յորում թագաւորը սովորութիւն ունէր այցելութիւն տալ իշխանուհոյն, և մրդասանէն դուրս կ'ելնէր մեծ Գրիանօնէն փոքրը երթալով :

Նորին Աւհափառութիւնը յանկարծ դուրս ելաւ ճամբուն բերնէն :

Կաս կարմիր դեղձ մը կար ձեռքը՝ երախայրիքի հրաշք մը՝ և իբրև ճշմարիտ անձնասէր թագաւոր ինքնիրեն կը հարցընէր թէ աւելի լաւ չէր ըլլար, 'ի բարօրութիւն Գաղղիոյ, որ այն դեղձը ինք ճաշակէր՝ քան թէ իշխանուհին :

Պ. ար Թիւսիէօի առ Անտրէ գլմնլու անպարանքը, զոր թագաւորը իւր տկար տեսողութեամբ հաղիւ կը տարորոշէր՝ բայց բնաւ չէր ճանաչեր, Թիւլպէրի խեղդուկ աղաղակները որ մեծ սարսափ կը նշանակէին՝ Նորին Աւհափառութեան քայլերը շուտուցին :

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, հարցուց Լուի Ժե մացառին մօտենալով՝ որմէ միայն ծառուղիով մը հեռի կը գտնուէր :

— Թագաւորը, գոչեց Պ. ար Թիւսիէօ նորասի աղջիկը բազկացը մէջ բռնելով :

— Թագաւորը, մըմնջեց Անտրէ բոլորովին մարելով :

— Բայց ո՞վ է, կրկնեց Լուի Ժե. կին մը : Ի՞նչ է եղեր այդ կինը :

— Աւհափառ տէր, մարեր է :

— Ա՛հ, նայիմ, ըսաւ Լուի Ժե :

— Ինքզինքը կորսնցուցած է, վեհափառ տէր, յարեց Պ. ար Թիւսիէօ ցոյց տալով նորասի աղջիկը պիղկ և անշարժ վառած նստարանին վրայ ուր գրեւ էր նորէն :

Թագաւորը մօտեցաւ, Անտրէն ճանչցաւ և սարսուելով դռնէնց՝  
— Գործակալ . . . Ո՛հ, բայց սոսկալի բան է այս, երբ մէկն  
այսպիսի հիւանդութիւններու նի՛ սնէն դուրս չենէր, վայելուչ  
բան չէ ամենուն առջև մինչև իրիկուն մեռնիլ:

Եւ Լուի ԺԵ ճամբէն ետ դարձաւ փոքր Գրիանօն երթալու հա-  
մար՝ խեղճ Անտրէին համար հաղարաւոր անհաճոյ խօսքեր մեռաւ-  
լով:

Պ. տը Ժիւսիէօ որ առջի եղելութիւնները չէր զիտեր՝ պահ մը  
ապշած մնաց, յետոյ ետեւը դառնալով և Ժիւլէրը տեսնելով տասը  
քայլ հեռի սոսկումի և տագնապի մէջ:

— Հոս եկուր, Ժիւլէր, գոչեց. դու զօրաւոր ես, օրիորդ տը  
Գալէրնէյը մինչև իւր սենեակը կը տանիս:

— Ե՛ս, գոչեց Ժիւլէր սարսուելով, ես զինքը տանիմ, իրեն  
դպչիմ: Ո՛հ, ոչ, այդ բանին համար չպիտի ներէ ինձ, ոչ, երբէք:

Եւ խենդի պէս փախաւ՝ օգնութեան կոչելով:

ՃԼԸ

ՏՕՔՔԵՕՕ ԼՈՒԻ

Նոյն տեղէն քանի մը քայլ հեռի ուր Անտրէ մարեր էր, եր-  
կու պարտիզպանի օգնականներ կ'աշխատէին՝ որոնք Ժիւլէրի աղա-  
ղակները լսելով վաղեցին եկան, և Պ. տը Ժիւսիէօի հրամանին  
համեմատ՝ Անտրէն իւր սենեակը տարին, մինչդեռ Ժիւլէր հեռու-  
էն՝ գլխակոր՝ այն անշարժ, տխուր մարմնոյն կը հետևէր, ինչպէս  
որ մարդասպանը իւր զոհին ետևէն կ'երթայ:

Պ. տը Ժիւսիէօ սպասաւորաց բնակարանին դրանդն հասած ատեն

պարտիզպաններուն ձեռքէն առաւ իրենց բեռը, Անտրէ աչքը բա-  
ցեր էր:

Չայները և այն աճապարանը որ ամեն պատահարի շուրջն ի գործ  
կը դրուի Պ. տը Գալէրնէյը սենեկէն դուրս հանեցին, տեսաւ իւր  
աղջիկը՝ որ տակաւին դողողջելով ճիգ կ'ընէր սանդուխէն վեր ել-  
նել Պ. տը Ժիւսիէօի օգնութեամբ:

Վաղեց եկաւ՝ Թագաւորին պէս հարցրելով:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ:

— Ոչինչ, հայր իմ, պատասխանեց Անտրէ անզօր կերպով, տկա-  
րութիւն մը, անգար մը:

— Օրիորդը ձեր աղջիկն է, պարոն, ըսաւ Պ. տը Ժիւսիէօ  
սեպուհը բարեկեղով:

— Այո, պարոն:

— Ուրեմն ձենէ աղէկ որո՞ւ յանձնեմ: Բայց, Աստուծոյ ցիրոյն  
բժիշկ մը բերէք:

— Ո՛հ, բան մը չէ, ըսաւ Անտրէ:

Եւ Գալէրնէյ կրկնեց:

— Ստուգիւ, բան մը չէ:

— Ես ալ այնպէս կը մտախօսեմ, ըսաւ Պ. տը Ժիւսիէօ. բայց  
յիրաւի օրիորդը սաստիկ գունատ էր:

Եւ ասոր վրայ, Պ. տը Ժիւսիէօ Անտրէն մինչև սանդուխին վերն  
հանելով երթալու հրամանն խնդրեց:

Չայրն ու աղջիկը առանձին մնացին:

Գալէրնէյ որ աղջկանը բացակայութեանը մամանակէն օգուտ քա-  
ղելով լաւ խորհրդածութիւններ ըրեր էր, եկաւ Անտրէի ձեռ-  
քէն բռնեց որ ոտքի վրայ կեցեր էր, բաղնոցի մը մօտ տարաւ,  
նստեցուց և ինքն ալ քովը նստաւ:

— Ներքեք, հայր իմ, ըսաւ Անտրէ, շնորհ ըրէք պատուհան  
մը բանալ, օդ առնելու պէտք ունիմ:

— Ես քեզի հետ լըջօրէն խօսիլ կ'ուզի, Անտրէ, և այս վան-  
դակին մէջ որ իբրև բնակարան տուեր են քեզի՝ շունչ մը ամեն  
կողմէ կը լսուի. բայց հող չէ, ցած կը խօսիմ:

Եւ պատուհանը բացաւ:

Ապա գլուխն օրելով աղջկանը քով նստելու ասեն .

— Հիտակը ըսելու համար, ըսաւ, թագաւորը որ առջի բերան մեզի այնքան հողածուծիւն ցոյց տուաւ, ահռուականաբար չվարի ուիր թողլով որ դու այսպիսի խրճիթ մը բնակիս :

— Հայր իմ, պատասխանեց Անտրէ, Գրիանոնի մէջ բնակելու տեղ չկայ . գիտէ՞ք որ այս բնակարանին ամենէն մեծ պակասուած թիւնն այս է :

— Եթէ ուրիշներուն բնակելու տեղ չգտնուի, ըսաւ Գալէրնէյ յանկույիչ ժպիտով մը, թերեւ համոզուիմ, աղջիկս . բայց քեզ չգտնուած ասեն, շիտակը, չեմ համոզուիր :

— Դուք ինծի համար չափէն աւելի նպատաւոր դադափար մը ունիք, պարոն, պատասխանեց Անտրէ ժպտելով, սակայն՝ դժբաղ զարար՝ աշխարհ ձեզի պէս չէ :

— Ընդհակառակը, աղջիկս, բոլոր քեզ ճանաչողներն ինծի պէս են :

Անտրէ խոնարհութիւն ըրաւ այնպէս՝ ինչպէս որ օտարականի մը շնորհակալութիւն մատուցանելու համար պիտի ընէր . վասն զի իւր հօրը տուած դովեսաները կ'սկսէին մտահոգութիւն պատճառել իրեն :

— Եւ, շարայարեց Գալէրնէյ միենոյն աղու եղանակաւ, և . . . թագաւորը քեզ կը ճանաչէ, կարծեմ :

Եւ այս խօսքն ընելու միջոցին՝ նորատի աղջկան վրայ կը բեւեռէր այնպիսի նայուած մը՝ որ անտանելի կերպով խուզարկու էր :

— Բայց թագաւորը հազիւ կը ճանաչէ զիս, պատասխանեց Անտրէ ամենաբնական կերպով, և զիս պիտի մտքէն անցնէ :

Սեպուհն այս խօսքին վրայ ոտսեց :

— Քեզ մտքէն պիտի անցնէ, գոչեց ճշմարիտ, օրիորդ . խօսք քերէդ քան մը չեմ հասկընար . մտքէն անցնէ . ուրեմն ինքզինքդ բնաւ բանի տեղ չեմ դնիր :

Անտրէ զարմանալով հօրը նայեցաւ :

— Այո, այո, շարայարեց սեպուհը, ըսի և դարձեալ կ'ըսեմ . այնպիսի համեստութիւն մը կը կրես որ մինչև անգամ անձնական արժանիքդ կը մոռնաս :

— Ո՛հ, պարոն, չափազանցութիւն կու տաք ամեն բանի . ճիշմարիտ է որ թագաւորը մեր ընտանեաց թշուառութեանը հողածուծութիւն ցոյց տուաւ ; հաճեցաւ մեզի բան մ'ընել, սակայն՝ Նորին Ղեհասփառութեան դահին շուրջն այնքան թշուառներ կան, իւր արքայական ձեռքով այնքան պարզեներ . կը տրուին՝ որ անշուշտ բարիքէն ետք մոռացութիւնը պիտի դար մեզ պատել :

Գալէրնէյ աղջկանը վրայ յառեց աչքերը՝ անոր զգուշաւորութեանը և անթափանցելի խորհրդագրահատութեանը վրայ կերպ մը զարմանք զգալով :

— Է՛յ, սիրելիդ իմ Անտրէ, ըսաւ աղջկանը մտնեալով, հայրդ առաջին խնդրարկուն է որ քեզ կը դիմէ, և կարծեմ թէ չսխախտ մերժես զինքը :

Անտրէ ըստ կարգի հօրը նայեցաւ այնպիսի կնոջ մը պէս որ բացատրութիւն կ'ուզէ :

— Ամենքիս ալ կ'աղաչենք, շարայարեց, միջտորդէ մեզի համար, ընտանեաց համար բան մ'ըրէ . . .

— Բայց ի՞նչ անթիւ կ'ըսէք ինձ այդ, ես ինչ կընամ ընել, դոչեց Անտրէ այն խօսքերուն եղանակէն և իմաստէն յայտն չկըրթած :

— Ինծի և եղբորդ համար բան մը խնդրելու տրամադիր ես . այո կամ ոչ : Ըսէ :

— Պարոն, պատասխանեց Անտրէ, ինչ որ հրամայէք ինձ կ'ընեմ . սակայն չէք մոտածեր որ ծակաչք կ'երևինք : Արդէն թագաւորն ինձ ընծայեց զարդ մը՝ որ ըսածնուդ նայելով հարիւր հազար փրանքէն աւելի կ'արժէ : Ասկէ զատ, Նորին Ղեհասփառութիւնը զօրագունդ մը խոստացաւ եղբորս . այս կերպով արքունի հարստութեան մէկ մեծ մասը պիտի վասնուի :

Գալէրնէյ չկրցաւ զսպել ինքզինքը և սուր ու արհամարհոտ բրբիջ մ'արձակեց :

— Ուստի, օրիորդ, ըսաւ, դուք կը մտածէք թէ բաւական վճարուած է :

— Պարոն, գիտեմ որ ձեր ծառայութիւնները շատ արժէք ունին, պատասխանեց Անտրէ :

— Ի՛, իմ ծառայութեանցս վրայ խօսողն ո՛վ է քեզի : գօչեց  
Գավէրնէյ համբերութիւնը կորուսելով :

— Ուրեմն ի՛նչ բանի վրայ կը խօսիք ինձ :

— Շիտակը , շատ այլանդակ չէ՛ այդպէս իմ առջևս կեղծելը :

— Ի՛նչ պիտի կեղծեմ , տէր Աստուած , հարցուց Անտրէ :

— Ես ամեն բան գիտեմ , աղջիկս :

— Գիտէք . . . :

— Ամենն ալ գիտեմ , կ'ըսեմ :

— Ամենն ալ , ի՛նչ , պարոն :

Եւ ամենէն մաքուր խղճին վրայ եղած այս կոշտ յարձակումէն  
ծագած բնազդային կարմրութեամբ մը Անտրէի երեսը ծածկուեցաւ :

Հօրն աղջկանը համար ունեցած յարգանքը Գավէրնէյը կեցուց  
իւր հարցաքննութեանց դիւրասահ զառիվայրին վրայ :

— Օ՛հ , թող ուղածիդ պէս ըլլայ . կ'երեւի թէ սրահէը կ'ուզես ,  
գաղտնապահ : Ար թողուն որ հայրդ ու եղբայրդ մտադրութեան մէջ  
փտին , լաւ . սակայն այս խօսքս միտքդ պահէ . երբ մէկն սկիզբէն  
չափրէր՝ վերջէն բնաւ չտիրելու վտանդին կ'ենթարկի :

Եւ Գավէրնէյ կրունկին վրայ դարձաւ :

— Ըսածնիդ չեմ հասկընար , պարոն , ըսաւ Անտրէ :

— Շատ աղէկ . բայց ես ըսածս կը հասկընամ , պատասխանեց  
Գավէրնէյ :

— Այդ բաւական չէ՛ երբ երկու հողի իրենց մէջ կը խօսին :

— Լաւ ուրեմն , առելի բացայայտ պիտի խօսիմ . ՚ի գօրծ դիւր  
բոլոր այն գիւտնադիտութիւնը զոր դու ՚ի բնէ ունիս , և որ մեր  
ընտանեաց բարեմասնութիւններէն մէկն է , որպէս զի առիթը ներ-  
կայացած ատեն ընտանեացդ և քու բաղդդ շինես , և թաղաւորը  
տեսնելուդ պէս ըսէ իրեն՝ թէ եղբայրդ հրովարտակին կ'ապասէ ,  
և դու անօդ և անլոյս բնակարանի մը մէջ գոյնդ կը կորուսես .  
միով բանիւ , չափազանց անշահասիրութիւն ցոյց տալով ծիծաղե-  
լի մ'երեւիր :

— Բայց , պարոն . . .

— Ըսէ թագաւորին , նոյն իսկ այս իրիկուն :

— Բայց ես ո՛ր պիտի տեսնեմ թագաւորը :

— Ես յարէ թէ վայելուչ չէ նաև որ Նորին Աւհափառութիւնը  
գայ . . .

Այն միջոցին որ Գավէրնէյ անշուշտ առելի մեկին խօսքերով պի-  
տի գրգռէր այն փոթորիկը որ Անտրէի կուրծքին մէջ զանխուշ  
կը սպտարստուէր , և Անտրէ այնպիսի բացատրութիւն մը պիտի պա-  
հանէր՝ որմէ գաղտնիքը պիտի յայտնուէր , այն միջոցին , կ'ը-  
սենք , սանդուխին վրայ ոտքի ձայն լսուեցաւ :

Սեպուհն ընդմիջեց անմիջապէս և վաղեց նայելու թէ ո՛վ է աղջ-  
կանն եկողը :

Անտրէ զարմանալով տեսաւ որ իւր հայրը շտկուելով պատին  
առջև կեցաւ :

Գրեթէ նոյն վայրկեանին , իշխանուհին ետևէն սեազգեստ մարդ  
մը երկայն դաւաղանի մը կըթնամ՝ տեսեալը մտաւ :

— Չեր Բարձրութիւնը , գօչեց Անտրէ բոլոր ոյժը ժողվելով որ-  
պէս զի իշխանուհին գիմաւորէ :

— Այո , հիւանդ աղջիկ , պատասխանեց իշխանուհին , միթիւս-  
րութիւն և բժիշկ կը բերեմ քեզի : Եկուր , սօքթէօն : Ա՛հ , պա-  
րոն տը Գավէրնէյ . շարայարեց իշխանուհին սեպուհը ճանաչե-  
լով , աղջիկդ հիւանդ է , և զրեթէ խնամք չես տանիր իրեն :

— Տիկին . . . թոթովեց Գավէրնէյ :

— Եկուր , սօքթէօն , ըսաւ իշխանուհին այն սիրուն բարու-  
թեամբ որ միայն անոր կը պատկանէր . եկուր , նայէ այս բազկե-  
րակը , քննէ այս յոդնած աչերը , և ըսէ ինձ պաշտպանած աղջ-  
կանս հիւանդութիւնը :

— Ա՛հ , տիկին , տիկին , որքան բարեսրտութիւն . . . մըմնջեց  
նորատի աղջիկը : Ինչպէս համարձակիմ Չեր արքայապառն Բարձրու-  
թիւնն ընդունիլ . . .

— Այս հիւղին մէջ , ըսել կ'ուզես , սիրուն աղջիկ . յանցանքն  
իմն է , իմն որ այսպիսի յոռի բնակարան մը տուեր եմ քեզ . հոգ  
պիտի տանիմ այս մասին : Նայինք , աղջիկս , ձեռքդ Պ . Լուիին  
տուր , իմ վիրաբոյժիս , և զոյշ կեցիր , փիլիսոփայ մ'է որ կը  
գուշակէ՛ ինչպէս նաև գիտնական մը որ քաջ կը տեսնէ :

Անտրէ ժպտելով ձեռքը բժշկին երկնցուց :

Բժիշկը՝ անհաւին երիտասարդ՝ որուն խելացի կերպարանքը ցոյց կու տար ինչ որ իշխանուհին ըսեր էր անոր համար, սենեակը մանեւէն ի վեր շարունակ կը գիտէր նախ հիւանդը, յետոյ տեղը, ապա այն այլանդակ գէմքով հայրը՝ որուն երեսին վրայ նեղութիւն կը նշմարուէր, սակայն մտահոգութիւն ընաւ:

Գիտունը պիտի տեսնէր, փիլիսոփան թերևս գուշակեր էր:

Տօքթէօս Լուի երկար ատեն քննեց նորասի աղջկան բազկերահ կը և հարցոյց անոր թէ ինչ կ'զգայ:

— Սաստիկ զրուանք կ'զգամ ամեն ուտելիքէ, պատասխանեց Անտորէ, յանկարծական ձգտումներ, տաքութիւն որ խեղոյն գլուխս կ'ելնէ, ստնդանք, սրտի բազկիւն, նուաղում:

Քանի որ Անտորէ կը խօսէր՝ բժշկին գէմքը փրորութիւն մը կ'առնէր հետզհետէ:

Վերջապէս նորասի աղջկան ձեռքը թողոց և աչքն անդին դարձաւ:

— Լաւ ուրեմն, տօքթէօս, ըսաւ իշխանուհին բժշկին, quid? (ինչէ) ինչպէս որ խորհրդակցող բժշկները կ'ըսեն, աղջկանը վտանգ կ'սպառնայ, մեռնելու վախ կ'ա՞յ:

Բժիշկն անգամ մ'ալ աչքերը Անտորէի դարձուց և լուրթեամբ զննեց զան:

— Վտանգաւոր է:

— Ոչ, սովորաբար վտանգաւոր չէ, պատասխանեց բժիշկը ժպտելով:

— Ա՛հ, շատ աղէկ, ըսաւ իշխանուհին աւելի ազատ շունչ առնելով, չափազանց մի չարչարեր զինքը:

— Բնաւ չպիտի չարչարեմ, տիկին:

— Ի՛նչ, բնաւ դեղ մը չ'պիտի բռնէ:

— Ըրիտրդին հիւանդութեանը բնաւ դեղ պէտք չէ:

— Իրա՞ն:

— Պէտք չէ, տիկին:

— Ոչի՞նչ:

— Ոչինչ:

Եւ բժիշկը՝ զողջես աւելի երկայն բացատրութենէ մը խոյս տաւ:

լու համար՝ իշխանուհին հրաման ուղեց երթալու, պատրուակելով թէ հիւանդ ունի նայելու:

— Տօքթէօս, տօքթէօս, ըսաւ իշխանուհին, եթէ ըսածներդ զիս անհոգ ընելու համար չեն՝ այն ատեն ես օրիորդ Գավէրնէյէն աւելի հիւանդ եմ, ուրեմն այս իրիկուան այցելութեանդ անպատճառ բեր այն շարքանուշը զոր ինձ խոստացար քնացրնելու համար:

— Տիկին, սուս վերադարձած ատենս, ձեռքովս պիտի պատրաստեմ զայն:

Եւ մեկնեցաւ:

Իշխանուհին Անտորէի քով մնաց:

— Անհոգ եղիր, սիրելիդ իմ Անտորէ, ըսաւ բարեսէր ժպիտով մը. հիւանդութիւնդ ծանր բան մը չէ, վասն զի տօքթէօս Լուի ատանց դեղ մը գրելու կ'երթայ:

— Աւելի աղէկ, տիկին, պատասխանեց Անտորէ, վասն զի այն ատեն Ձեր արքայազն Բարձրութեան քով ունեցած ծառայութիւնս չպիտի ընդմիջի, և ամեն բանէ աւելի այս ընդմիջումէն էր որ կը վախնայի, սակայն թող չարդողի զիտուն բժիշկը, կ'երգնում որ, տիկին, շատ հիւանդ եմ:

— Սակայն մեծ բան մ'ըլլալու չէ այդ հիւանդութիւնը որուն վրայ բժիշկը կը ինդայ: Քնացիր ուրեմն, աղջիկս, հիմա մեկը կ'ուղարկեմ որ քեզի ծառայէ, վասն զի կը նայիմ որ առանձին ես չաճեցէք հետո գալ, պարոն տը Գավէրնէյ:

Այս ըսելով՝ ձեռքը երկնցուց Անտորէի, և մեկնեցաւ զան միտթարեւէ ետք՝ ինչպէս որ խոստացեր էր:

### ՃԼԹ

#### Պ. ՌԻՉԼԻԹԻ ԲՆՈՒՆԵՆԵՐ

Ինչպէս որ տեսանք՝ Պ. սը Ռիչլիէօ Լիւսիէնի կողմը դարձեալ էր այն արագ որոշմամբ և այն խելքի վստահութեամբ՝ որոնք Վիէննայի դեսպանը և Մահօնի յաղթականը ցոյց կու տային :

Ուրախ զուարթ հոն հասաւ, դրանդի սանդուխէն երիտասարդի մը պէս ելաւ, կոմսուհոյն հետ աղէկ եղած աստիճանի պէս Զամօրի ականջներէն քաշեց, և դրեթէ բռնարարեց այն համբաւաւոր ներքնախուցին դուռը՝ ուր խելճ Լօրէնցա տիկին Տիւպարին տեսեր էր որ Սէն-Յիւրտ փողոցը երթալու կը պատրաստուէր :

Կոմսուհին բազմոցի մը վրայ պառկած՝ առաւօտեան հրամանները կու տար Պ. տ'Էլիւլլօնի :

Երկուքն ալ ձայնին դարձան և մարաջախտը տեսնելով յայտը կը թեցան :

- Ա՛հ, Պ. դո՛քսը, գոչեց կոմսուհին :
- Ա՛հ, մօրեղբայրս, ըսաւ Պ. տ'Էլիւլլօն :
- Է՛հ, այո, տիկին . այո, քեռորդիս :
- Ի՛նչ, դո՛ք էք :
- Այո, ես իսկ, անձամբ :
- Լաւ է անաղան քան բնաւ, պատասխանեց կոմսուհին :
- Տիկին, պատասխանեց մարաջախտը, մարդ ծերացած ատեն քմահաճոյքներ կ'ունենայ :
- Ըսել է որ Լիւսիէնի համար . . .
- Սե՛ծ սէր մ'եկաւ վրաս՝ որ քմահաճոյքով մը դացեր էր ինէ : Ճիշդ այսպէս է, և մտքէս անցածը դո՛ք հիանալի կերպով կը լրացնէք :
- Այնպէս որ կը վերադառնար . . .

— Այնպէս որ կը վերադառնամ, այսպէս է, ըսաւ Ռիչլիէօ տեղաորուելով լաւագոյն թիկնաթուին մէջ՝ զոր տարորոշեր էր մէկ նայելուն :

— Ա՛հ, ըսաւ կոմսուհին, թերևս ուրիշ բան մ'ալ կայ որ չէք ըսեր, քմահաճոյքը . . . դրեթէ ձեզի պէս մէկու մը համար չէ :

— Կոմսուհի, իրաւունք չունիք երեսիս տալու, համբաւէս աւելի արժէք ունիմ, և եթէ ձեզի կը վերադառնամ, ինչպէս որ կը տեսնէք, ուրիշ կերպով չէ՛ այլ . . .

— Այլ . . . ընդմիջեց կոմսուհին :

— Բոլորանուէր սրտի :

Պ. տ'Էլիւլլօն և կոմսուհին խնդալ մ'է թող տուին :

— Ո՛րչափ երջանիկ ենք, ըսաւ կոմսուհին, որ քիչ մը խելք ունենալով՝ ձեր ունեցած այնքան խելքը կը հասկընանք :

— Ի՛նչպէս :

— Այո կ'երդնում որ եթէ ապուշ մարդիկ ըլլային՝ չպիտի հասկընային, բերանին բաց պիտի մնար, այս վերադարձին պատճառն ուրիշ բանի մէջ պիտի փնտուէին . ճշմարիտ, անուանս վրայ կ'երդնում, ձենէ ուրիշ մէկը չկայ, սիրելի դուքս, որ ձեզի պէս հիանալի կերպով մտնէ ու ելնէ . Մօլէ, նոյն իսկ Մօլէ փայտէ դեռասան մ'է ձեր քովը :

— Ուրեմն չէք հաւատար թէ սիրտս է զիս հոս բերողը, գոչեց Ռիչլիէօ : Կոմսուհի, կոմսուհի, զգուշացէք, ձեր վրայ դէ՛ռ դա՛վափար մը կու տաք ինձ . ո՛հ, մի խնդաք, քեռորդիս, ապա թէ ոչ ձեզ Վէ՛ժ կը կոչեմ, և ձեր վրայ բան մը չեմ շիներ :

— Եւ ո՞չ իսկ փոքրիկ պաշտօնէութիւն մը, հարցուց կոմսուհին :

Եւ երկրորդ անգամն ըլլալով՝ կոմսուհին բարձրաձայն քրքիջ մ'արձակեց այնպիսի համարձակութեամբ մը զոր բնաւ չէր ջանար ծածկել :

— Լաւ, զարկէք, զարկէք, ըսաւ Ռիչլիէօ կունակը ծուելով, ես փոխարէն չեմ զարներ, աւա՛ղ, շատ ծեր եմ, զիս պաշտպանող բան մը չունիմ . ուղածնիք ըրէք, կոմսուհի, ըրէք, ա՛լ հիմա անսխալտանգ զուարճութիւն մ'է այդ ձեզի :

— Ընդհակառակը՝ զգուշացէք, կոմսուհի, ըսաւ տ'Էլիւլլօն . ե-



Թէ մօրեղբայրս վերատին կը խօսի իւր տկարութեանը վրայ՝ կորսուած ենք : Ոչ, պարոն գուքս, չպիտի զարնենք ձեզի, վասն զի որքան տկար ալ էք կամ տկար ըլլալ կը պնդէք՝ վաշտով կը հասուցանէք մեզ մեր հարուածները, ոչ, ահաասիկ բուն ճշմարտութիւնը, այն է որ ուրխութեամբ կը տեսնենք ձեր վերադարձը :

— Այո, ըսաւ զուարթ կոմսուհին, և ՚ի պատիւ այս վերագարձին՝ փամփուշտներ կ'արձակեն. գուք ալ գիտէք որ, գուքս . . . :

— Բանէ մը տեղեկութիւն չունիմ, տիկին, ըսաւ մարաջախտը տղու մը պարզմտութեամբ :

— Լաւ, հրախաղութեանց ատեն արձակուած կայծերէն միշտ մէկուն կեղծամը կ'այրի կամ փամփուշտներու գաւազաններէն զլխարկ մը կը պատուի :

Գուքոր ձեռքը կեղծամին տարաւ և զլխարկին նայեցաւ :

— Այսպէս է, ըսաւ կոմսուհին, բայց գուք մեզ կը վերադառնաք, լուռ այս է. ինծի դալով՝ ինչպէս որ Պ. ա'եկիւյլօն կ'ըսէր՝ մեծ ուրախութիւն ունիմ. պատճառը գիտէք :

— Կոմսուհի, կոմսուհի, դարձեալ շարութիւն մը պիտի ըսէք :

— Այո, բայց վերջինը պիտի ըլլայ :

— Ուրեմն բտէք :

— Ուրախ եմ, մարաջախտ, վասն զի ձեր վերադարձը օդին ազէկնալը կ'իմացընէ :

Ռիշլիէօ խոնարհեցաւ :

— Այո, շարայարեց կոմսուհին, գուք կը նմանիք այն բանաստեղծային թուչուններուն՝ որոնք հանգարտութեան ատեն կ'երեխն. ինչ է այն թուչուններուն անունը, Պ. ա'եկիւյլօն, գուք որ ուսանաւոր կը գրէք՝ գիտնալու էք :

— Աղկիւն, տիկին :

— Ճիշդ : Ա՛հ, մարաջախտ, կը յուսամ որ չէք սրդողիւր. ձեզ կը բազմատեմ այնպիսի թուչնոյ մը հետ որ շատ գեղեցիկ անուն չ'ունի :

— Ինչո՞ւ սրդողիմ, տիկին, ըսաւ Ռիշլիէօ գոհունակ կերպաքանքով մը և Ռիշլիէօի գոհունակութենէն միշտ շարութիւն մը

կը հետեւէր. ինչո՞ւ սրդողիմ՝ քանի որ բազմատեմիւնը ճիշդ է :

— Տեսնո՞ք մի :

— Այո, բարի, ընտիր լուրեր կը բերեմ :

— Ա՛հ, ըրաւ կոմսուհին :

— Ինչ լուր է, հարցուց ա'եկիւյլօն :

— Է՛, սիրելի գուքս, ինչո՞ւ այդպէս կ'աճապարես, ըսաւ կոմսուհին. թող որ մարաջախտը ժամանակ ունենայ շինելու :

— Ոչ, կրնո՞ղ տանի զիս՝ թէ որ սուտ եմ. անմիջապէս կ'ընամ բտել. ինքնին շինուած են, և մինչև անդամ հինցած են :

— Մարաջախտ, թէ որ բերածնիդ հին բաներ են . . .

— Հողի՛ս, ըսաւ մարաջախտը, եթէ հաւնիք՝ առէք, եթէ չէք հաւնիր՝ մի առնէք, կոմսուհի :

— Լաւ, այնպէս թող ըլլայ, առնենք :

— Ա՛երեկ թէ, կոմսուհի, թաղաւորը որոգայթին մէջ ինչիւր է :

— Ռորոգայթի՛ն մէջ :

— Այո, բոլորովին :

— Ո՛ր որոգայթին մէջ :

— Այն որոգայթին մէջ զոր իրեն լարած էիք :

— Ե՛ս, ըսաւ կոմսուհին, ևս որոգայթ մը լարած էի թաղաւորին :

— Խօսք է այդ ալ, գուք աղէկ գիտէք :

— Ոչ, վստահ եղէք որ չեմ գիտեր :

— Ա՛հ, կոմսուհի, զիս այսպէս ծաղրենիդ սիրուն բան մը չէ :

— Ճշմարիտ, մարաջախտ, ես այդ բանին մէջը չեմ. կ'աղերսեմ, բացատրեցէք ըսածնիդ :

— Այո, մօրեղբայր իմ, բացատրեցէք, ըսաւ ա'եկիւյլօն՝ որ մարաջախտին երկդիմը ժպիտին ներքէ չար խորհուրդ մը կը գուշակէր. տիկինը կ'սպասէ և գողի մէջ է :

Ծեր գուքսն իւր քեռորդույն դարձաւ :

— Է՛հ, ըսաւ, շատ զուարճալի կ'ըլլայ եթէ տիկին կոմսուհին այս մասին ձեզ իրեն խորհրդակից ըրած չէր, սիրելիդ իմ ա'եկիւյլօն. ա՛հ, այն ատեն իմ կարծածէս աւելի խորախորհուրդ կ'ըլլար :

— Ե՛ս, մօրեղբայր իմ :

— Նա՛ն :

— Անշուշտ դու . անշուշտ նա . համարձակութեամբ ըսէք նա-  
յինք , կոմսուհի . Նորին Աւեհափառութեան դէմ ձեր նիւթած  
փոքրիկ դաւաճանութեանց մէջ ընկեր առ իք զինքը . . այս խեղճ  
դուքսը որ այնքան մեծ դեր մը խաղաց անոնց մէջ :

Տիկին Տիւպարի կարմրեցաւ : Այնքան կանուխ էր որ տակաւին  
երեսը ոչ կարմիր քսեր էր և ոչ ալ պիտակ շիններ էր . ուստի  
կարմրիլը կարելի էր :

Սակայն կարմրիլը վտանգաւոր էր :

— Երկուքդ ալ ձեր գեղեցիկ մեծ աչերը բացած ինձ կը նա-  
յիք , ըսաւ Ռիշլիէօ . ուրեմն ես գիտցընեմ ձեզ ձեր գործերը :

— Գիտցուցէք , գիտցուցէք , ըսին միանգամայն դուքսն ու կոմ-  
սուհին :

— Լաւ ուրեմն , թողաւորը իւր հիանալի սրամտութեամբը գի-  
տած ըլլալու է ամեն բան և վախցած :

— Ինչը գիտած ըլլալու է : Ըսէք նայինք , հարցուց կոմսու-  
հին . վասն զի , մարաջախտ , յիրաւի համբերութիւնս կը հատ-  
ցընէք :

— Ի՞նչ պիտի ըլլայ , այս գեղեցիկ քեռորդուոյս հետ մէկ ըլլալ  
ցուցընելիդ . . .

Տիկին Վոն գունատեցաւ և նայուածքովը գողցես ըսել ուղեց կոմ-  
սուհոյն .

— Կը տեսնես , ես ապահով էի որ տակէն չարութիւն մը պի-  
էի ելնէ :

Կանայք այսպիսի պարագայից մէջ արի են , մարդոցմէ շատ ա-  
ւելի արի են : Կոմսուհին անմիջապէս կոխի սկսաւ :

— Դուքս , ըսաւ , ես կը վախնամ հանելուկներէն՝ երբ դուք  
սպինքի գերը կը կատարէք . վասն զի այն աստն ինձ կը թուի  
թէ՛ քիչ մը առաջ կամ քիչ մը ետքը անպատճառ ձենէ պիտի  
ուտուիմ . աղատեցէք զիս մտահոգութենէս , և եթէ ըրածնիդ կա-  
տակ է՝ ներեցէք որ ըսեմ թէ գէշ կատակ մ'է :

— Գէշ կատակ , կոմսուհի , ընդհակառակը շատ ընտիր է , գո-  
չեց Ռիշլիէօ . ոչ թէ իմա՛ այլ ձերն անշուշտ :

— Ես ասոր մեջ բնաւ գործ չունիմ , մարաջախտ , ըսաւ կոմ-  
սուհին շրթերը կրծելով անհամբերութենէն՝ զոր աւելի երեան  
կը հանէր անոր անհանդարտ փոքրիկ ոտքը :

— Օ՛ն , Օ՛ն , անձնասիրութիւն պէտք չէ , կոմսուհի , շարայա-  
րեց Ռիշլիէօ : Քաջ է , դուք վախցաք որ թագաւորը օրիորդ-աը  
Գալէրնէյին չկատուի : Ո՛հ , մի հակառակիք , այդ ինձի համար  
ապացուցուած բան մ'է :

— Ո՛հ , այդ ճշմարիտ է , չեմ ծածկեր :

— Լաւ ուրեմն , այս բանէն վախնալով՝ ուղեցիք դուք ալ ձեր  
կողմէն կարելի եղածին չափ Նորին Աւեհափառութիւնը խթել :

— Չէ չեմ ըսեր : Խտքը :

— Կու գասք , կոմսուհի , կու գանք : Սակայն Նորին Աւեհափա-  
ռութիւնը խթելու համար՝ որուն մորթը լիջ մը կարծր է՝ շատ  
բարակ խթան (էկիւլոն) մը պէտք էր . . . Հա՛ , հա՛ , հա՛ , շի-  
տալը շատ գէշ բառախաղ մ'էր որ բերնէս թուաւ : Կը հասնի-  
նայք :

Եւ մարաջախտն սկսաւ խնդալ , կամ քրքիջ բառնալ կեղծեց՝  
որպէս զի այն ցնծութեան ջլաձգութեանց միջոցին լաւ մը գիտէ  
իւր երկու զոհերուն տաղնապալից դէմքը :

— Ի՞նչ բառախաղ կայ այդ խտքին մէջ , մօրեղբայր իմ , հար-  
ցուց ա՛նէկիւլոն՝ նախ ինքը սթափելով և միամտութիւն կեղծե-  
լով :

— Չհասկըցա՛ր , ըսաւ մարաջախտը : Ա՛հ , աւելի աղէկ . դար-  
չելի բառախաղ մ'էր , լաւ ուրեմն , ըսել կ'ուզէի թէ տիկին  
կոմսուհին թագաւորին նախանձ աղղել ուղեր էր , և այս բանին  
համար ընտրեր էր գեղեցիկ , հանճարեղ , միով բանիւ բնութեան  
մէկ սքանչելիքն եղող մէկը :

— Ո՛վ է այդ ըսողը , գոչեց կոմսուհին կատղելով ճիշդ այն  
մարդոց պէս՝ որ զօրաւոր են և իրաւունք չունին :

— Ո՛վ է ըսողը . . . Աշխարհ , սիկին :

— Աշխարհ մէկը չէ , դուքս , դուք ալ զլուտք այսպէս ըլլալը :

— Ընդհակառակը , սիկին . աշխարհ ըսելով՝ միայն Աւերայի  
համար հարիւր հազար հոգի կ'իմանանք , Բարիզի համար վեց հա-

րիւր հազար հոգի, Գաղղիոյ համար քոստուհինդ միլիոն. քաջ նկատեցէք որ Լա Հէն, Համպուրլը, Ռօդէրտամը, Լօնտօնը, Պէրլինը չեմ հաշուի գներ, ուր այնչափ լրագիրներ կը հրատարակուին՝ որչափ Բարիդի մէջ խօսք կ'ըլլայ:

— Ուստի Վերսայլի մէջ, Բարիդի մէջ, Լա Հէի մէջ, Համպուրլի մէջ, Ռօդէրտամի մէջ, Լօնտօնի մէջ, Պէրլինի մէջ . . .

— Լա ուրեմն, կ'ըսեն թէ Եւրոպայի ամենէն խելացի և սիրուն տիկինն էք դուք. շորհիւ այն խորամանկութեան որով ցոյց կուտայք թէ սիրահար մը գտած էք ձեզի . . .

— Սիրահար մը, ինչ բանի վրայ կը հիմնեն այս այլանդակ ամբաստանութիւնը, ըսէք, կաղաչեմ:

— Ամբաստանութիւն, ինչ կ'ըսէք, կոմսուհի, հիացում ըսէք: Գիտեն թէ իրօք բան մը չկայ, բայց վարպետութեանը կը հաւնին: Ինչ բանի վրայ կը հիմնեն այս հիացումը: Ձեր հանձարեղ ընթացքին, ձեր հնարագիտութեան վրայ կը հիմնեն. այն բանին վրայ կը հիմնեն որ դուք հրաշալի ճարտարութեամբ մը առանձին մնալ ուղեցիք այն զիշերը՝ յորում ես ձեզի էի, թագաւորը ձեզի էր, Պ. ա' Կիւլյօն ձեզի էր, այն զիշերը յորում ես առաջգուրս ելայ, ետքը թագաւորը, և վերջը Պ. ա' Կիւլյօն . . .

— Լա ուրեմն, աւարտեցէք:

— Այն բանին վրայ կը հիմնեն որ դուք առանձին մնալ կեղծեցիք Պ. ա' Կիւլյօնի հետ՝ այնպէս որ գողցիս ձեր սիրահարն ըլլար. առաւտուն կամաց մը Լիւսիէնէն դուրս հանել տուիք դարձեալ ձեր սիրահարին պէս. և ասոնք այնպիսի կեբպով մը ՚ի գործ գրիք՝ որպէս զի քանի մը ապուշներ, ինձի պէս քանի մը պարզամիտներ այս բանը տեսնելով երթան տանեաց վրայ քարոզեն. այնպէս որ թագաւորը իմացած ըլլալու է, սիրտը վախ մտած ըլլալու է, և ձեզ ձեռքէն չհանելու համար՝ Գալլէրնէյի աղջիկը թողած ըլլալու է:

Տիկին Տիւպարի և ա' Կիւլյօն ինչ ընթացք բռնելիքնին չէին գիտեր:

Սակայն Ռիշլիէօ ոչ նայուածքով և ոչ շարժումով դանտնք չէր նեղեր. այլ ընդհակառակը՝ բոլոր ուշը տուիր էր ընչափոտի տուփէն և շապիկին եղբրին:

— Ասան զի վերջապէս, շարայարեց մարաջախտը մատովը շապիկին եղբրքը հարուածելով, կ'երևի թէ թագաւորը այս աղջիկը թողուլը կ'ստուգուի:

— Գուքս, գիտցած եղէք որ ձեր երեւակայութիւններէն բնաբան մը չեմ հասկընար, և հաւաստուի եմ որ եթէ ձեր ըսածները թագաւորին ըսէին՝ նա ալ ինէ աւելի բան մը չպիտի հասկընար:

— Իրաւ, ըսաւ դուքսը:

— Այո, իրաւ. դուք և աշխարհ ունեցածէս աւելի խելք կ'ընծայէք ինձ. երբէք Նորին Աւհափառութեան նախանձը զրգուել չուղեցի ձեր ըսած միջոցներով:

— Կոմսուհի:

— Կերդնում:

— Կոմսուհի, կատարեալ գիւանադիտութիւնը, և կիններէն աւելի ընտիր գիւանադէտներ չկան, կատարեալ գիւանադիտութիւնը երբէք չխոստովանիր թէ ՚ի զուր խորամանկութիւն ըրած է. վասն զի քաղաքադիտութեան մէջ առած մը կայ, գիտեմ, ես որ գեսպան եղայ, առած մը որ կ'ըսէ. «Երբէք մի յայտնէք մէկու մը այն միջոցը որով յաջողած էք, վասն զի կրնայ ըլլալ որ այն միջոցով վերստին յաջողիք»:

— Բայց դուք . . .

— Միջոցն յաջողեցաւ, այս այսպէս է: Եւ թագաւորը շատ գէշ է բոլոր Գալլէրնէյներուն հետ:

— Շիտակը, դուքս, գոչեց տիկին Տիւպարի, դուք ամեն բան այնպիսի կերպով մը կ'ենթադրէք որ միայն ձեզի յատուկ է:

— Ա՛հ, չէք հաւատար որ թագաւորը Գալլէրնէյներուն հետ տարած է, ըսաւ Ռիշլիէօ կուրէն խոյս տալով:

— Այդ ըսել չեմ ուզեր:

Ռիշլիէօ կոմսուհույն ձեռքը բռնել աղեց:

— Թուշուն մ'էք դուք, ըսաւ:

— Գուք ալ օձ մ'էք:

— Ա՛, շատ աղէկ. ուրիշ անգամ վազելով պիտի դամ որ ձեզի բարի լուրեր բերեմ և այսպէս փոխարինուիմ:

— Մօրեղբայր իմ, կը սխալիք, ըսաւ տ'էկիւյժօն աշխուժիւ, որ Ռիշլիէօի բանեցուցած հնարքին բոլոր ոյժն հասկըցեր էր, տիկին կոմսուհիէն աւելի ձեր յարգը զիտցող չկայ, և ձեր եկած ասանն իսկ ինձ կ'ըսէր կոմսուհին:

— Իբողութիւնն այն է որ, ըսաւ մարաշխտար, ես բարեկամներս շատ կը սիրեմ. ուստի ուզեցի նախ ես ձեզի բերել ձեր յաղթմանակին ապահովութիւնը, կոմսուհի: Գիտէք որ Գայլէրնէյ իւր աղջիկը թաղաւորին ծախել կ'ուզէր:

— Բայց կարծեմ թէ այդ եղած լմնցած է, ըսաւ տիկին Տիւպարի:

— Ա՛հ, կոմսուհի, ի՛նչ վարպետ է այն մարդը: Նա՛ օձ մ'է. երեակայեցէք որ բարեկամութեան և հին գինակցութեան վէպերով զիս քնացուցեր էր: Միշտ սրտէս կը բռնուիմ ես, ասիլէ զատ ի՛նչպէս հաւատայի որ այս գաւառի Արիսդիտը յատկապէս Բարիդ պիտի գայ Ժան Տիւպարիի ոտքն առնելու համար, այսինքն ամենէն խելացի մարդուն: Յիրախ, կոմսուհի, ձեր շահերուն համար ունեցած անձնուիրութեամբս միայն կարող եղայ լաւ գտողութիւն և յստակ միտք ունենալ. սլատիւս վիպայ, կուրացեր էի . . .

— Եւ ձեր ըսածին նայելով՝ վերջացած է, հարցուց տիկին Տիւպարի:

— Ա՛հ, բոլորովին վերջացած է, ես եմ ըսողը: Ա՛յնպէս խստիւ յանդիմանեցի զինքը որ ընելիքը որոշած ըլլալու է այժմ, և ասպարէզը մերն է:

- Իսկ թաղաւորը:
- Թաղաւորը:
- Այո:
- Երեք կէտի վրայ խոստովանցուցի Նորին Աւհափառութիւնը:
- Նախ:
- Հօրը մասին:
- Երկրորդ:
- Աղջկանը մասին:
- Իսկ երրորդ:
- Տղուն մասին . . . : Արդ: թաղաւորը հաճեցաւ կոչել հայ-

ըր . . . հաճոյակատար մը. աղջիկը ծանծաղամիտ. իսկ տղուն գալով՝ Նորին Աւհափառութիւնը բնաւ անուն մը չտուաւ անոր, վասն զի միտքն անգամ չեկաւ:

- Շատ աղէկ, ուրեմն բոլոր սերունդէն ազատեցանք:
- Այնպէս կը կարծեմ:
- Ա՛րարժ որ նորէն իրենց ծակը ուղարկենք զիրենք:
- Ձեմ կարծեր. ջանք կ'ընեն որ այս շփոթէն ազատին:
- Աւստի կ'ըսէք որ այն տղան որուն թագաւորը զօրադունդ մը խոստացեր էր . . .

— Ա՛հ, կոմսուհի, դուք թաղաւորէն աւելի լաւ յիշողութիւն ունիք: Թէև ճշմարիտ է որ սլարոն Փիլիպ շատ աղւոր տղայ մ'է որ ձեզի շատ անուշ կը նայեր: Ի՛հ, հիմա ոչ գնդապետ է, ոչ հարիւրապետ է և ոչ սերականին եղբայրը. բայց թէ որ իրեն բան մը մնացած է՝ այն ալ ձեր իրեն ըրած ուշադրութիւննիդ է:

Այս խօսքերն ընելով ձեր դուքսը կ'ուզէր նախանձի եղունգներով իւր քեռորդույն սիրտը ճանկուտել.

Բայց նոյն միջոցին Պ. տ'էկիւյժօնի մտքէն նախանձ չէր անցներ:

Ա՛ուզէր ձեր մարաշխտարին ընթացքն հասկընալ և անոր վերասարձին բուն շարժառիթը տարրորշել:

Քանի մը խորհրդածութիւններէ ետք՝ մտածեց որ Ռիշլիէօ Հնորհ գտնելու յուսով Աիւսիէն վերագարձաւ:

Տիկին Տիւպարիի նշան մ'ըբաւ զոր ձեր դուքսը հայելիի մը մէջէն տեսաւ կեղծամը շտկելու ատեն, և իսկոյն կոմսուհին հրաւիրեց Ռիշլիէօն որ շօքօլագն իրեն հետ խմէ:

Տ'էկիւյժօն երթալու հրաման խնդրեց խել մը զգուանքներ ընելով իւր մօրեղբօրը՝ որմէ ինքն ալ նոյնն ընդունեցաւ:

Ռիշլիէօ կոմսուհիոյն հետ առանձին մտաց այն աթոռակլին առջև՝ որուն վրայ Չամօր շօքօլագը բերեր գրեր էր:

Ծեր մարաշխտարը թաղաւորին սիրականին բոլոր այս վարպետութիւնը տեսնելով՝ ինքնին կը մոմաւար:

— Քսան տարի առաջ. ժամացոյցին նայելով պիտի ըսէի. «Ժամէ մը նախարար պիտի ըլլամ» և կ'ըլլայի: Ի՛նչ խենդ բան

է կեանքը, շարայարեց միշտ ինքնին խօսելով. կենաց առաջին մասին մէջ մարդ մարմինը մաքրին կը ծառայեցընէ. երկրորդ մասին մէջ՝ միտքը որ միայն ողջ մնացած է՝ մարմնոյն ծառան կ'ըլլայ. այլանդակ բան :

— Սիրելի մարաջախտ, ըսաւ կոմսուհին իւր հիւրին ներքին մեղախօսութիւնն ընդմիջելով, հիմա որ պինդ բարեկամ ենք, և մաշաւանդ հիմա որ միայն երկու հողի ենք հոս, ըսէք նայինք, ինչու այնքան աշխատեցանք որ այն պէրող աղջիկը թագաւորին անկողինը մղէք :

— Երաւ որ, կոմսուհի, պատասխանեց Աիշլիէօ շքօլադի դասարանը շրթանցը դպցընելով, ես ալ այդ կը հարցընէի ինքնին, ես ալ չեմ գիտեր :



### ՃԻՍ

### ՊԵՐԵՊԵՐՁ

Պ. տը Աիշլիէօ Փիլիպի վրայ ինչ մտածելիքը զիտէր, և անոր վերագարձը ստուգիւ կրնար յայտնել. վասն զի առաջօտուն Վիսիէն երթալու համար Վէրսայլէն ելած ատեն, մեծ ճամբուն վրայ անոր պատահէր և տեսեր էր որ Գրիանօնի կողմը կ'երթայ և բաւական մտէն անոր ճամբան կտրելով անոր զէմքին վրայ նկարուած ախրութեան և մասհոգութեան բոլոր երեւոյթները նշմարեր էր :

Փիլիպ արգարև Աէյմնի մէջ մտցուած, Փիլիպ նախ շնորհի յետոյ անտարբերութեան և մոռացութեան բոլոր աստիճաններէն անցնելով, Փիլիպ նախ իւր յառաջադիմութեան նախանձոտ բոլոր սպայից ցոյց տուած բարեկամութենէն՝ յետոյ իւր մեծերուն յայտնած հոգածութենէն իսկ ձանձրացած մինչդեռ ձախորդութիւնն իւր

չնչովը նսեմացուցեր էր այն փայլուն բաղդը, Փիլիպ զըուանք դրացիներ էր բարեկամութեանց պողիլը և հոգածութիւնները խիստ վարմունքի փոխուիլը տեսնելով. և այն փափուկ հողին սկսեր էր ցաւ զլլալ :

Նշխանուհւոյն Գաղղիա մտած ատեն Սթրասպուրկի մէջ ունեցած տեղակալութիւնը կը փնտռէր Փիլիպ, իւր ընտիր բարեկամները, հասարակները, ընկերները կը փնտռէր, հայրենի հանգարտ ու անբիծ տունը կը փնտռէր, այն կրակարանին քով ըլլալ կ'ուզէր որուն քրմապետը Նաթրին էր : Զգացած ամեն վիշտը լուրթեան և մոռացութեան մէջ կը դանէր իւր սիրտին, այն է՝ զործունեայ մաքերուն այս կերպ մը քունին մէջ. յետոյ Գալլէրնէյի անսպաս վիճակը՝ որ իրաց անկու մը և անձանց կործանումը կը հաստատէր, իւր մէջ իմաստասիրութիւն մը կը պարունակէր՝ որ զօրաւոր ձայնով մը երիտասարդին սրտին կը խօսէր :

Սակայն Փիլիպ ամեն բանէ աւելի կը փնտռէր քրոջը թեք՝ որմէ զրկուեր էր, և անոր խրատը որ զրեթէ միշտ ճիշդ կ'երէնէր, խրատ որ աւելի հպարտութեան քան թէ փորձառութեան ծնունդ էր. վասն զի վսեմ հողիները այն նշանաւոր յատկութիւնն ունին որ ակամայ և նոյն իսկ իրենց բնութենէն մղուելով սինլքորին վերեւ կը սառառնին, և շատ անգամ իրենց բարձրութեամբը՝ ճմլումէ, վերքերէ և դարաններէ զերծ կը մնան, որոցմէ ստորին կարգի մարդկային միջատներ միշտ չեն յաջողիլ խոյս տալ՝ որչափ որ ճարտար ալ են տղմի մէջ ծամածուռ երթալու և խորամանկութիւն մտածելու :

Փիլիպ ձանձրութիւն զգալուն պէս՝ վհատութիւնը վրայ հասաւ, և երիտասարդն այնքան թշուառ եղաւ իւր առանձնութեան մէջ՝ որ չկրցաւ հաստատել թէ Անտրէ՝ իւր անձին կէսը կարենայ երջանիկ ըլլալ Վէրսայլի մէջ, մինչդեռ ինքը՝ Անտրէի կէսը՝ այնքան սաստիկ վիշտ կը կրէր ՚ի Աէյմն :

Աստի սեպուհին այն նամակը զրեց զըր զիտենք, և որուն մէջ իւր մտաւալու վերադարձը իմաց կու տար : Այս նամակը մէկու մը զարմանք չտուաւ, և ոչ ալ սեպուհին, ընդհակառակը սեպուհը կը զարմանար Փիլիպի համբերութեամբ սպասելուն, մինչդեռ ինքը կ'այ-

րէք կը մըրկէր, և տասնհինգ օրէ 'ի վեր ամեն անգամ Արշլիէօի պատահած ատենն անոր կ'աղերսէր որ ըլլալիքը շուտով վերջացնէ :

Փիլիպոս նոյն իսկ իրեն որոշած պայմանաժամին հրովարտակը չտանալով մեկնելու հրաման առաւ իւր սպաներէն, առանց դիտել ցոյց տալու անանց արհամարհանքն ու հեղինակութիւնները. սակայն այս արհամարանքն ու հեղինակութիւնները քողարկուած էին այն քաղաքավարութեամբ՝ որ տակաւին գաղղիական յատկութիւն մ'էր այն ատեն, և այն բնածին յարգանքը զոր միշտ կ'ազդէ ազնուասիրտ մէկը :

Հետեւաբար այն ժաման յորում ինքնին որոշեր էր մեկնել, այսինքն մինչև այն ատեն որ սպասեր էր հրովարտակին՝ աւելի փափագելով որ շոքայ քան թէ դայ, ձի հեծաւ և Բարիդի ճամբան բռնեց :

Ընելիք երեք օրուան ճամբորդութիւնը խիստ երկայն երեցաւ իրեն, և քանի կը մօտենար՝ այնքան հօրն իրեն մատին պահած լուծութիւնը, մանաւանդ քրոջը պահած լուծութիւնը՝ որ իրեն խոստացեր էր շաբաթը դոնէ երկու անգամ նամակ դրել, սոսկալի համեմատութիւններ կ'ստանային իւր մտաց սուջէ :

Ըսինք որ Փիլիպոս կէսօրին Աերասլ կը հասնէր՝ երբ Պ. ար Արշլիէօ անկէ գուրս կ'ելնէր : Փիլիպոս գիշերուան մէկ մասը քնացիր էր՝ Պրէօնի մէջ քանի մը ժամ միայն քնանալով, այնքան զբաղած էր մարդին որ Պ. ար Արշլիէօն կառքին մէջ չտեսաւ, մինչև անգամ ծառաներն ալ չճանաչեց :

Հիտակ պարտէզին վանդակին կողմը գնաց՝ ուր մնաս բարեաւ ըսեր էր Անտրէի մեկնած օրը, երբ նորատի աղջիկը բնաւ տիրելու պատճառ մը չունենալով՝ վասն զի բոլոր ընտանիքը կատարեալ երջանկութեան մէջ էր՝ անիմանալի արտօնութեան մը մարդարեակաւն շողիներուն ուղեղն 'ի վեր ելնելը կ'զգար :

Ուստի այն օրը Փիլիպոս անսպաշտ դիւրահաւանութիւն մ'ունեցեր էր Անտրէի ցառոցն համար. սակայն տակաւ առ տակաւ միտքը զօրանալով լուծը թօթափեր էր, և տարօրինակ դիպուածով մը Փիլիպոս էր որ կու գար առանց պատճառի միևնոյն տեղը նոյն վշտերով համակուած, և աւանդ, նոյն իսկ մարին մէջ հաւանական սիրտանք մը չէր գտներ այս անդամադրելի սիրտութեանը՝ որ պատճառ մը չունենալով նախազգացում մը կը թուէր :

Նոյն միջոցին որ իւր ձին կողմնական ծառուղիէն արշտելով խիճերուն վրայ ձայն և կայծ կը հասներ, մէկն անշուշտ այն ձայնն աւանդով նշարիներու ցանկէ մը գուրս ելաւ :

Թիլպէրն էր ձեռքը յոտոց մը : Պարտիզպանն իւր վաղեմի տերը ճանաչեց : Փիլիպոս ևս Թիլպէրը ճանաչեց : Թիլպէր ամեն մ'ի վեր այսպէս կը թափառէր. վշտահար հոգւոյ մը պէս չէր գիտեր թէ ո՞ր գաղաբի :

Մաքէն անցածը կատարելու ճարպիկ ըլլալով՝ այն օրը ետեւ եղեր էր այնպիսի տեղեր ընտրել ծառուղիներուն մէջ՝ ուրիշ կարենայ Անտրէի սենեակը կամ պատահանը նշմարել, և մէկ աչքը միշտ հոն բնել՝ առանց ցոյց տալու ուրիշին իւր զբաղմունքը, դողը և հառաչանքը :

Բան մ'ընել ցոյց տալու համար, ծառաստաններուն և ածուներուն մէջ կը շրջէր, մէկ կողմը ծաղիկով լեցուն ձիւղերը կը կտրէր՝ աւելորդները քշտել պատրուակելով. ուրիշ անգ մը դեռարոյս թմբիներուն ողջ կճեպը կը հասնէր խէժը մաքրել պատրուակելով սակայն միշտ մտիկ կ'ընէր, միշտ կը նայէր, կը փափաքէր, կը զլջար :

Պատանին կարի գունատներ էր նոյն մէկ ամուսնան մէջ. երեսը նայողն անոր երիտասարդ ըլլալը կը հասկնար միայն անոր անցերուն տարօրինակ հուրէն և գոյնին անփայլ ու միօրինակ սպլտակութենէն. սակայն կեղծիքով սրկուած բերանը, շեղ նայածքը, երեսին դեղերներուն դողգոջ շարժնութիւնը հասուն տարիքի տիրազոյն տարիները ցոյց կու տային :

Ինչպէս որ ըսինք, Թիլպէր Փիլիպոս ճանաչեր էր, և ճանաչած ատեն շարժում մ'ըրբեր էր ծառերուն մէջ մանկելու համար :

Բայց Փիլիպոս ձին անոր կողմը մեկից գոչելով.

— Թիլպէր, է, Թիլպէր :

Թիլպէրին առաջին շարժումը փախչելն եղաւ. բոպէ մ'ալ՝ և ահա թալուկը, և այն դառանցանքը՝ որուն կարելի չէ բացատրութիւն մը տալ, սակայն նախնիք ամեն բանի պատճառ մը փորձելով Պան չատուածոյն կ'ընծայէին, անոր վրայ տրբելով խենդի մը

պէս վազցընելով պիտի տանէր զան ծառուղիներէն, անտառակներէն, նշգարիներուն մէջէն, մինչև անդամ ջրի աւազաններուն մէջէն :

Բարեբաղդաբար Փիլիպի արտասանած մէկ մեղրալի խօսքը լսեց և հասկըցաւ վայրենի տղան :

— Ուրեմն չես ճանաչեր զիս, Թիլպէր, դուչեց անոր Փիլիպ : Թիլպէր հասկըցաւ ըրած յիմարութիւնը և յանկարծ կեցաւ : Յետոյ ետ դարձաւ՝ բայց ծանր և զզուշութեամբ :

— Ո՛չ, պարոն ասպետ, ըսաւ պատանին դողալով, ոչ, չճանաչեցի. պահապաններէն մէկը կարծեցի ձեզ, և որովհետև դործիս չէի՝ վախցայ որ կը տեսնեն զիս հոս և պատիժ մը կը նշանակեն ինձի համար :

Փիլիպ այն բացատրութեամբը բաւականացաւ, ձիէն իջաւ, ձիուն սանձը թեւն անցուց, և միւս ձեռքը Թիլպէրի ուսին վրայ դնելով՝ մինչ Թիլպէր յայտնապէս սարսուեցաւ :

— Ի՛նչ ունիս, Թիլպէր, հարցուց :

— Բան մը չունիմ, պարոն, պատասխանեց սա :

Փիլիպ ակնարկեամբ ժպտեցաւ :

— Մեզ չես սիրեր, Թիլպէր, ըսաւ :

Պատանին երկրորդ անգամ մ'ալ սարսուեցաւ :

— Այո, կը հասկընամ, շարայարեց Փիլիպ. հայրս անիրաւ և խիստ վարուեցաւ հետդ. բայց ես, Թիլպէր :

— Ո՛հ, դուք . . . մըմնջեց պատանին :

— Ես քեզ միշտ սիրեցի, միշտ օգնեցի :

— Ճշմարիտ է :

— Ուստի մոռցիր չարը փոխարէն բարւոյն, քոյրս ալ միշտ բարեւէր վարուած է քեզի հետ :

— Ո՛հ, ոչ, այդ այդպէս չէ, աշխուժիւ պատասխանեց պատանին այնպիսի արտայայտութեամբ մը՝ զոր ոչ ոք պիտի հասկընար. վասն զի այն արտայայտութիւնը Անտրէի դէմ ամբաստանութիւնն մը և իրեն համար ջատագովութիւնն մը կը պարունակէր. վասն զի հպարտութեան պէս պայթած ատեն խղճի խայթի մը պէտ կը հեծէր :

— Այո, այո, ըսաւ Փիլիպ ըստ կարգի, այո, կը հասկընամ. քոյրս քիչ մը հպարտ է՝ սակայն սրտով բարի է :

Յետոյ, դադարէ մ'ետք, վասն զի բոլոր այս խօսակցութիւնը միայն անոր համար տեղի ունեցեր էր որ ոչ մնայ այն տեսակցութիւնը՝ զոր վախով պատած ցոյց կու տար իրեն նախազգացում մը :

— Գիտես հիմա ո՞ւր է իմ սիրելի Անտրէս : Ըսէ, Թիլպէր :

Այս անունը դանակի մը պէս զարկաւ Թիլպէրի սրտին. խեղդուկ ձայնով մը պատասխանեց .

— Պարոն, իւր սենեակին ըլլալու է, կարծեմ . . . : Ես ի՛նչ գիտնամ . . . :

— Ամեն ատենի պէս առանձին, և ձանձրանալով, խեղճ քոյրս, ընդմիջեց Փիլիպ :

— Առանձին այս միջոցին, այո, պարոն, ինչպէս որ հաւանանական է՝ վասն զի օրիորդ Նիզօլի փախուստէն ՚ի վեր . . .

— Ի՛նչ, Նիզօլ փախա՞ւ :

— Այո, պարոն. սիրահարին հետ :

— Սիրահարին հետ :

— Գէթ իմ կարծեօքս, ըսաւ Թիլպէր որ չափէն աւելի խօսած ըլլալն հասկըցաւ : Ծառաները կ'ըսէին :

— Ճշմարիտ, Թիլպէր, ըսաւ Փիլիպ հետզհետէ յուզուելով, բան մը չեմ հասկընար : Բերնէգ զօրով խօսք առնելու է : Այսպէս մի վարուիր : Գու խեղցի ես, բնական արժանիք ունիս, մի եղծեր այս բարեմասնութիւնները կեղծ վայրենութեամբ մը, այնպիսի խտտութեամբ մը որ ոչ քեզի և ոչ ուրիշ մէկու մը չվայելէր :

— Սակայն պատճառն այն է որ ձեր բոլոր հարցուցածը չգիտեմ, պարոն, և եթէ դուք ալ մտածէք՝ պիտի տեսնէք որ չեմ կրնար զիտնալ : Բոլոր օրը պարտէզներուն մէջ կ'ըլլատիմ, ես ի՛նչ գիտնամ գլեակին մէջ եղածները :

— Թիլպէր, Թիլպէր, ես կը կարծէի որ աչք ունիս դու :

— Ե՛ս :

— Այո, և նախանձախնդիր կ'ըլլաս անոնց որ իմ անունս կը կրեն, վասն զի վերջապէս, որքան ալ գէշ եղած ըլլայ Գալէրուէյի հիւրընկալութիւնը՝ քեզի արուեցաւ :

— Ուստի, պարոն Փիլիպ, կարի նախանձախնդիր եմ ձեզի համար, ըսաւ ժիլպէր սուր և խիստ ձայնով մը, վասն զի Փիլիպի քաղցրութիւնը և ուրիշ զղացում մը զոր սա չէր կրնար գուշակել այն վայրագ սիրտը կակղացուցեր էր, այո, ձեզ կը սիրեմ. ահա այս պատճառաւ ձեզի կ'ըսեմ թէ օրիորդ քոյրերնիդ շատ հիւանդ է :

— Շատ հիւանդ, քոյրս, դոչեց Փիլիպ պայթմամբ, շատ հիւանդ է, քոյրս շատ հիւանդ է, և դու անմիջապէս չես ըսեր ինձ :

Եւ իսկոյն քայլերն արագելով՝

— Ի՞նչ ունի, տէր Աստուած, հարցուց :

— Ո՛վ դիտէ, ըսաւ ժիլպէր :

— Վերջապէս ի՞նչ եղեր է :

— Միայն թէ, այսօր բուբաստանին մէջ երեք անգամ մարեցաւ. նաև քիչ մ'առաջ տիկին իշխանուհւոյն բժիշկը այցելութեան եկաւ, նոյնպէս Պ. սեպուհը :

Փիլիպ աւելի մտիկ չըրաւ, նախազգացումներն իրացեր էին, և իրական վտանգին առջև բոլոր իւր արիութիւնն ստացեր էր :

Ժիլպէրի ձեռքը թողուց ձին և ծառայից շէնքին կողմը վաղեց :

Իսկ ժիլպէր երբ առանձին մնաց, արտօրնօք ձին ակողմ տարաւ, և խոյս տուաւ այն վայրենի և փասակար թռչուններուն պէս որոնք երբեք չեն ուզեր մարդոց մօտ դանուիլ :

Վ Ե Ր Զ Ե Ռ Ք Ն Ե Ր Ո Ր Ի Կ Է Ա Ս Տ Ո Ր Ո Յ



ՀՀ Ազգային գրադարան



NL0315353

